ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՄՈՏ

ԱՌԱՋԻՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ ՀԵՏ

Գևորգի գրավաճառանոցի ցուցափեղկում դրված են գրքեր՝ համարյա բոլորը հին տարիների և նույնիսկ հին տասնամյակների հրատարակություններ: Նոր գրքեր չկան: Ի՞նչ ժամանակն է գիրք հրատարակելու: Կան միայն մի քանի ժամանակակից բրոշյուրներ՝ նիհար, ինչպես ցուցափեղկի մոտով անտարբեր անցնող մարդիկ:

Ես կանգ եմ առնում ցուցափեղկի մոտ և նայում եմ գրքերին: Իսկ անցորդները զարմացած և նույնիսկ մի տեսակ արհամարհանքով նայում են ինձ: Եվ, իսկապես, վայե՞լ է արդյոք քրքրված հագուստներով և անշուշտ սոված տասնչորսամյա տղային՝ փոխանակ իր օրվա ապրուստի մասին հոգալու, զբաղվել ավելորդ ժամավաճառությամբ՝ գրավաճառանոցի առջև կանգնած…

Բայց ես շուտով դադարում եմ անցորդների հայացքները նկատելուց և ամբողջովին տարվում եմ գրքերը զննելով: Ես տեսնում եմ, որ այն մի ամսում, ինչ հիվանդ պառկած էի, ցուցափեղկում չի կատարվել համարյա ոչ մի փոփոխություն: Ավելացել են միայն երկու-երեք գիրք: Այնուամենայնիվ ես շարունակում եմ կանգնած մնալ և կարդալ բոլոր գրքերի վերնագրերը: Դրանք նման են հին ծանոթների, որոնց ես չեմ հանդիպել երկար ժամանակ:

Ահա Վիեննայի Մխիթարյան միաբանության հրատարակած «Ազգային մատենաշարի» գրքերից երկուսը՝ Խորենացու և Եղիշեի մատյանները: Ահա Ագաթանգեղոսը՝ Թիֆլիսումհրատարակված: «Դավիթ Կոպպերֆիլդ»-ի երեք հատորներից երկրորդը, վրան մի փոքրիկ թուղթ դրած և այնտեղ գրված. «Մեկել հատորներն էլ ունիմ, նեսն են»: Անտոն Մայիլյանի, «Արմեն» վիպակը: Ես չգիտեմ, որ Արմեն՝ ապագայում իմ անունն ու գրական ազգանունն է լինելու — ես դեռ Մկրտիչ եմ: Վահան Թոթովենց — «Ողբ անմահության»: Ով է Թոթովենցը՝ չգիտեմ, բայց «ենց»-ից կարելի է կռահել, որ արևմտահայ է: Ի միջի այլոց, ես թերթել եմ այդ բարակ գրքույկը: Պոեմ է, որն ինձ դուր չեկավ:

Իմ աչքերն ատելությամբ սահում են դաշնակցական մի քանի լղարիկ տետրակների վրայով, որոնք կրում են պետության զինանիշը՝ իրար խաչաձևված բահ, դաշույն և դրոշակ: Իմ պատանեկան հոգու ամբողջ ուժով ես ատում եմ դաշնակներին: Իմ դեռ չհասունացած տասնչորսամյա մաշկի վրա ես խիստ ուժեղ եմ զգում նրանց տիրապետության մտրակը, ականատես և մասնակից եմ լինում իմ ընտանիքի և ազգականների կրած անլուր տառապանքներին: Բայց այդ բոլորը միասին՝ այնքան չեն ստիպել ինձ՝ ատել նրանց, որքան որ մի քանի ամիս սրանից առաջ Մայիսյան բոլշևիկյան ապստամբության արյունոտ ու դաժան ճնշումը նրանց կողմից: Չէ՞ որ Մայիսյան ապստամբությունը ես գիտեմ ոչ թե գրքերից կամ թերթերից, այլ տեսել եմ իմ սեփական աչքերով: Փոքրահասակ պատանու անկապտելի իրավունքով ես ներկա եմ գտնվել թե դաշնակների և թե բոլշևիկների կազմակերպած՝ համարյա բոլոր միտինգներին, լսել եմ սև մորուքավոր և կապույտ ակնոցավոր «գործիչ»-ների հիստերիկ ճիչերը և դեպոյի բանվորների կրակոտ ճառերը: Ես տեսել եմ ապստամբների ձեռքն անցած «Վարդան զորավար» զրահագնացքը՝ կառամատույցի մի ծայրում կանգնած, տեսել եմ ապստամբության ղեկավար Մուսայելյանին՝ զրահագնացքի մոտ շրջելիս: Նա ժպտացել է ինձ, ինչպես, անշուշտ, ժպտացել է բոլոր թշվառ մարդկանց: Ես չեմ մոռանա նրա ժպիտը երբեք: Իսկ այժմ նա չկա, նրան և ուրիշ շատերին գնդակահարեցին դաշնակները: Արտասովոր հուզումն ու ոգևորությունը, որը տիրում էր նաև տղայոց գիմնազիայում՝

ապստամբության օրերին, փոխարկվեց սգավոր խավարի: Արևը,որը մի պահ երևացել էր ամպերի տակից, նորից ծածկվել էր թխպով: Հոռետեսությունն ու հուսալքությունը պաշարել էին մեր հոգիները: Պաշարել էր նաև ատելությունը դեպի դաշնակները: Մոռացած ամեն զգուշություն, մենք բարձրաձայն հայհոյում էինք դաշնակ կառավարությանը, դրա ղեկավարներին, մաուզերիստներին... Էլ ինչո՞ւ սովորել, ի՞նչ ապագայի հույսով: Միևնույնն է, մեռնելու ենք: Շատերի հետ միասին, ես ևս թողեցի դպրոցը: Ի միջի այլոց, չէի էլ կարողանա շարունակել՝ սոված, հյուծված…

Բայց ես նայում եմ ցուցափեղկում դրված գրքերին: Բոլորն իրենց տեղումն են: Ավելացել է Ատրպետի երկերի ժողովածուի իններորդ հատորը: Ատրպետը միակ գրողն է հայ գրականության սկզբից մինչև այսօր, որը հրատարակել է իր երկերը՝ տասը հատորով:

Ահա ևս մի նոր «ենց» — Եղիշե Չարենց: «Կապուտաչյա հայրենիք»: Սա էլ, Թոթովենցի նման, ինձ անծանոթ հեղինակ է և, ինչպես անունն է ցույց տալիս, նույնպես արևմտահայ: Իսկ ինչո՞ւ նա մեր հայրենիքն անվանում է կապուտաչյա, չէ՞ որ մենք սևաչյա ենք, ուրեմն պիտի լինի «Սևաչյա հայրենիք»: Գրել չգիտե,— եզրակացնում եմ ես:

Բայց վերնագրից ավելի ինձ տարակուսում է գրքի շապիկը: Հաստ թղթե կազմով, կարմիր գույնի, դա ոչինչ: Բայց դրա վրա, փոխանակ մարդավարի տպելու վերնագիրը, սոսնձված է թղթի մի կտոր, այն էլ՝ անկանոն կտրատված, և դրա վրա է տպված «Կապուտաչյա հայրենիք»-ը: Եվս մի այդպիսի թղթի կտոր՝ վերևում, այս անգամ՝ վրան տպված «Եղիշե Չարենց»:

— Մուկո՞ւչ…— ձայն է տալիս Գևորգը ներսից և զարմացած մոտենում է խանութի դռանը:— Սա՞ղ ես: Մտքիս մեջ ես քեզի թաղե-պրծեր էի: Էս ի՞նչ հալի ես, հիվանդ խո չէ՞իր:

— Ըպը ի՞նչ էի,— հառաչում եմ ես:

— Նե՞ս ընչի չես մտնի, արի աշեմ,— հրավիրում է նա:— Տիֆ խո չէ՞իր, քիչըմ հեռու կայնի:

— Ես էրկու տարի առաջ տիֆ ընկե պրծեր եմ,— արժանապատվորեն պատասխանում եմ ես,— էլ չեմ ընկնի: Մրսության հիվանդ էի:

— Մրսելն է՞լ է հիվընդություն,— արհամարհաբար դեպի այդ հասարակ բանը, ասում է Գևորգը:— Մարդ էլ էդոր մար պառկի՞:

— Քիչ մնաց մեռնեի,— վիրավորված, որ թերագնահատում են իմ հիվանդությունը, հայտնում եմ ես:

— Քիչ մնալը մեռնել չէ,— դատողաբար վրա է բերում Գևորգը,— սաղ ժողովուրդն էլ, քիչ կմնա, օր մեռնի, էդտի՞ց ինչ:

Ապա, նոր միայն ուշադրություն դարձնելով, հարցնում է.

— Գիրք չե՞ս բերե:

— Չունիմ,— հառաչում եմ ես,— պրծավ, բոլոր գրքերս քեզի եմ ծախե:

— Տիա,— գլխով է անում Գևորգը դեպի դարակները,— բիրադի ինտեղ են, կուզես՝ առածս գնի կեսը տու՝ ետ տար:

— Փարա չունիմ,— տխուր ասում եմ ես:

— Փարե՞ն ինչ է: Ես ունի՞մ, օր դու ունենաս: Դասագիրք բե:

Նա խոսում է «Կայծեր» դասագրքի մասին: Դրա կազմողներից մեկն իմ տանտերն է, իսկ մյուսը՝ նրա բարեկամը և իմ հարևանը: Նրանք երկուսն էլ, 1918 թվի թուրքական արշավանքից դեռ երկու տարի առաջ իրենց ընտանիքներով չվեցին Թիֆլիս՝ իրենց տուն ու տեղը թողնելով մեր ընտանիքի խնամքին: Մնաց նաև «Կայծեր»-ի վերջին հրատարակության ամբողջ տպաքանակը՝ չեմ հիշում որ դասարանի համար: Տատս ամենայն սրբությամբ պահպանում և պաշտպանում էր գույքն ամեն տեսակ ոտնձգություններից, մինչև որ 1918 թվին մենք փախանք և թուրքերը թալանեցին ամեն ինչ, բացի, իհարկե, գրքերից: Նա գրքերը պահպանում է մինչև հիմա էլ, բայց դասագրքերը ես կամաց-կամաց գողանալով նրանից, վաճառում էի և հաց գնում մեր ընտանիքի համար:

— Դասագիրքն ի՞նչ կէնես,— համենայն դեպս հարցնում եմ ես,— մեկ է, օր առնող չկա, սորվող չկա:

— Է, էսօր չկա, էգուց է՞լ չի էղնի,— լավատեսորեն ժպտում է Գևորգը:— Աշխարքը խո միշտ իսպես չի՞ մնա:

Ես բավական ժամանակ կանգնել էի ցուցափեղկի մոտ, բավական ժամանակ էլ արդեն գտնվում էի ներսում, բայց դեռ չէր հայտնվել ոչ մի գնորդ, նույնիսկ սոսկ հետաքրքրվող: Եվ ահա, վերջապես, ներս մտավ մի գյուղացի՝ դատարկ խուրջինն ուսին, ըստ երևույթին իր բերած համեստ մթերքի վաճառքից հետո:

— Երգարան ունի՞ս,— հարցրեց նա դռան մոտից:

— Չկա, հմը մե լավ Դեմիրճյանըմ ունիմ:

— Չեմ հասկնա:

— Երգարանի պես բանմ է.— «Մե դարտակ սենյակ, ես մեջը մենյակ»: Տա՞մ:

— Ասլի Քյարամ ունի՞ս,— հարցրեց գյուղացին՝ առանց նրան պատասխանելու:

— Չկա:

— Աղվան-Օսա՞ն:

— Չկա:

— Լայլի-Մաճնո՞ւն:

— Ըսինք չկա, ղուռումսաղ, դո՛ւս ել,— բարկացավ Գևորգը:

— Աշըղ-Ղարիբ է՞լ չկա,— զգուշության համար մոտենալով դռանը, համառորեն շարունակեց իր հարցուփորձը գյուղացին:

— Էրկու գրվանքա եղ բե՝ տար,— ասաց այս անգամ Գևորգը՝ չգիտեմ, իսկապե՞ս ունենալով այդ գիրքը, թե՞ կատակով:

— Եղ օր ունենամ, էլ Աշըղ-Ղարիբն ինչո՞ւս է հարկավոր,— զարմացավ գյուղացին:— Կուզեմ, օր կարդամ էնոր պես խաղ ըսեմ իմ քամբախ կյանքիս վրա…

Այցելուի գնալուց հետո ես մտա վաճառասեղանի ետևը և սկսեցի աչքի անցկացնել դարակների վրայի գրքերը:

Քիչ հետո ներս մտավ մի նոր այցելու, այս անգամ շլյապայով, ինտելիգենտական սրածայր մորուքով:

— Բարև ձեզ,— ողջունեց նա գրավաճառին: Բարևը, վնաս չունի, բարև,— հառաչեց Գևորգը,— հմը թևիդ տկի կապոցից կէրևնա, պարոն, օր գիրք ես բերե ծախելու: Ըպը քեզի պես պարոնն օր գիրք ծախե, էլ վո՞վ պիտի առնե...

Այցելուն ուսերը թոթվեց և կապոցը դրեց սեղանի վրա: Ես հետաքրքրված շուռ եկա և նույնպես նայեցի: Գևորգը ծուլորեն բաց արեց կապոցը: Հիասթափություն: Այնտեղ՝ միայն մի գրքույկի տաս-տասնհինգ օրինակ.— «Ազրայիլ»:

— Իա՞,— ապշեց Գևորգը,— իդքան ազրայիլ հոգեառ հրեշտակը հավաքե-բերել ես օր ի՞նչ էնեմ: Մե ազրայիլի հերիք է իմ հոգիս առնելու համար, մե հատմ էլ՝ էս անասունինը: Ըպը մնացա՞ծը: Վո՞վ է գրե…

Գրքույկի վրա ազգանուն չկա: Գևորգը շուռ ու մուռ տվեց գրքույկն իր ձեռքին և արհամարհանքով նետեց վաճառասեղանին:

— Մարդն ինչքան պիտի մունտառ էղնի, օր իրան անունն էլ չդնե գրքի վրա,— փնչացրեց նա:

— Պարոն, պարոն, ես եմ դրա հեղինակը, Գևորգ Ասատուր,— վիրավորված սաստեց այցելուն:

— Յա՛... Դո՞ւն ես... Ներող էղի... Շուտ ըսեիր՝ շան լիզու չբանայի վրեդ,— շփոթված ասաց գրավաճառը:

— Գնո՞ւմ եք,— կարճ կապեց Ասատուրը:

— Խաթերդ համար մե հինգ հատ քից մնա, գեղացոցը կխաբեմ, կուտամ ձեռները: Քանի՞ս պիտի հաշվես:

— Այդ դուք պիտի ասեք, պարոն գրավաճառ:

— Ընծի օր մնա՝ քեզի պես լավ մարդու գիրքը մե օչխարմ ածե՝ գառն էլ ետևը: Հմը նեղ վախտ է, գիրք առնող չկա: Հինգ հատին օր քառասուն միլիոն տամ՝ լա՞վ է:

Հեղինակը վիրավորված հավաքեց իր գրքույկները, որ գնա:

— Լավ, ատաշ ջան,— մտերմական դիմումով զիջեց Գևորգը,— հատին տասը միլիոն կուտամ, էլ չխոսի՛ս: Էն էլ վերնագրի համար կառնիմ: Կծախվի: Ազրայիլ... Ուրտից էլ գտե՞ր ես…

Հեղինակը լուռ վերցրեց դրամը և գնաց:

— Ատաշ,— բղավեց Գևորգը նրա ետևից,— շուտ վազզե բազար՝ քանի փարեն չէ էժընցե: Չնեղանաս, պարոն Աստվածատուր, ես քեզի համար կսեմ…

Նրա գնալուց հետո Գևորգը դիմեց ինձ՝ կոնսուլտացիայի համար:

— Դու Աստվածատուր գրող լսած կա՞ս:

— Էնիկ Ասատուր է,— ուղղեցի ես։— Մեծն գրող չէ, հմը մե լավ ոտանավորմ ունի՝ «Հալվունի թուրը»։

— Ատրպե՞տն է վենձ, թե՞ իսիկ։

— Ատրպետը շատ է գրե,— խուսափողական կերպով ասացի ես։

— Զուր տեղն առա հինգ հատ,— հառաչեց Գևորգը։

Բայց նույն րոպեին ներս մտավ մի նոր գյուղացի։

— Եղբայր ջան, Շահ-Սանամն ունի՞ս։

— Արի,— խորհրդավոր շշուկով հրավիրեց գրավաճառը։

Գյուղացին մոտեցավ։

— Շահ-Սանամ չունիմ, մկները տարան։ Հմը…

Նա բերանը մոտեցրեց այցելուի ականջին.

— Հմը «Ազրայիլ» եմ ձեռք քցե։ Մարդու բան չըսես։ Էժան կուտամ։

— Ազրայի՞լ,— աչքերը թարթեց գյուղացին,— հեքիա՞թ է։

— Այ մարդ, չէղնի՞ դու մինչև հիմի Ազրայիլեն խաբար չունիս։ Տե օր իդպես է՝ գնա, դու ի՞նչ կարդըցվոր ես։

— Ազրայիլ հրեշտակի մասի՞ն է,— հարցրեց գյուղացին՝ նորից աչքերը թարթելով։

— Ըպը ի՞նչ է,— գոռաց Գևորգը,— անձա՞խ գլխու ընկար։

«Ազրայիլ»-ը վաճառվեց ձեռնտու գնով։

— Կեցի մե հատմն էլ տամ, տար գեղ, եղով-մածնով կփոխես,— բարեսրտությամբ առաջարկեց գրավաճառը։

Գյուղացին գնաց՝ տանելով երեք «Ազրայիլ»։

— Ափսոս,— ասաց Գևորգը նրա գնալուց հետո,— բիրադի պիտի առած էղնեի ատաշիս քովեն։ Դու էդոր տունը չիտե՞ս։

— Ո՞ւրտից իմանամ,— զարմացա ես։— Ես տեմյօր հիմի չիտեի էլ, թե մեր քաղաքը, զարսի Ատրպետեն ու Մոճոռյանեն, ուրիշ գրող էլ կապրի։ Կէրևա՝ թաժա է էկե…

Գևորգն «Ազրայիլ»-ի մնացած երկու օրինակներից մեկը գցեց ցուցափեղկ՝ ծածկելով Թոթովենցի կեսը և Չարենցի մի անկյունը, ապա նստեց և, ինքն էլ հավատալով իր ռեկլամին, սկսեց կարդալ մյուս օրինակը։

Շարունակելով զբաղվել գրքերով, ես աչքի տակով նայեցի Գևորգին։ Ոչ, նա նման չէ իսկական գրավաճառի։ Երեկ նա գուցե մրգավաճառ է եղել, իսկ վաղը կսկսի ոտի վրահին հագուստներ վաճառել։ Մի՞թե կարելի է նրան համեմատել Օնիկ Ղազարյանի հետ, իսկ նրա անմարդ

գրախանութը՝ Ղազարյանի փոքրիկ, բայց իսկական սալոնի հետ... Կես թզաչափ այն խանութը, որը, նեղ ու երկար, նման էր նրբերշիկի, իսկական կենտրոն էր քաղաքի գրական ինտելիգենցիայի:

Ես այն ժամանակ ավելի փոքր էի, բայց համարյա նույնքան կարդացած, որքան որ հիմա: Կարդում էի խառը, անկանոն, ինչ որ ձեռքս ընկներ.— և՛ սքանչելի «Հասկեր» մանկական ամսագիրը, և՛ Լեոյի «Մելիքի աղջիկը», և՛ Շիրվանզադեի վեպերը, և՛ Ջավադ բեգ Բալուղյանի բանաստեղծությունները…

Օնիկ Ղազարյանի գրավաճառանոցն իմ հաճախակի այցելությունների վայրն էր: Ձեռքս ընկած կոպեկը ես տանում էի այնտեղ և քիթս խոթելով խառնիխուռը շարված գրքերի ու գրքույկների կախարդական շարքերի մեջ, անպայման գտնում էի որևէ արժեքավոր բան:

Օնիկ Ղազարյանը շուտով տեսավ, որ գործ ունի ժամանակից շուտ մեծացած երեխայի հետ և սկսեց վերաբերվել ինձ որպես մեծահասակի: Նա երբեք չէր ասում ինձ՝ «Պապն ու շախկամը» տա՞մ: Ես երեխա չէի: Կամ թե չէ՝ «Արի, թաժա Մոճոռյան է լուս տեսե»: Ես գրական ճաշակից անտեղյակ չէի: Նա հարցնում էր ինձ՝ ինչպես լուրջ մարդը լուրջ մարդուն՝ «Դու այրի Աննա Ռաֆֆու հրատարակած «Կայծերն» ունի՞ս»:

Բայց երբեմն ես զարմացնում էի Օնիկ Ղազարյանին: Մեկնելով նրան մի գրքույկ, հարցնում էի.

— Ի՞նչ աժե:

Նա նայում էր գրքույկին և, փոխանակ գոհ մնալու, որ գնորդ ճարվել դրա համար, հարցնում էր հանդիմանանքի տոնով.

— Էմմանուել քահանա Նազարյա՞նց... Ինչո՞ւդ է պետք…

— Իսկ դուք կարդըցե՞ր եք, պարոն Օնիկ,— հարցնում էի ես:

— Ես ամեն դարտակ բան չեմ կարդա:

— Ափսոս: Աշեցեք, թե ինչ է գրում,— ասում էի ես զուտ գրական լեզվով և բաց էի անում գրքույկը:

«Ոտանավորներ»: Տպագրված է հիանալի թղթի վրա, կապույտ տառերով, կարմիր նկարներով, երեխաների համար: Նպատակն է՝ ոտանավորների միջոցով գիտելիքներ հաղորդել մանուկ ընթերցողներին: Օրինակ, գրված է.

Հիմա, ինչ որ մենք տալիս ենք

Խեղճի, որբի մսխալներով,

Այն է, ինչ որ մենք խլել ենք

Այն թույլերից տաս փութերով:

Թվում է, թե սոցիալական այդ քրթմնջոցին պիտի հետևի արժանի շարունակություն: Բայց, ոչ: Ոտանավորի նպատակն ուրիշ է: «Մսխալ» բառի մոտ դրված է աստղանիշ և գծի տակ տրված է ծանոթություն.— «փութը ունի 40 ֆունտ, ֆունտը ունի 32 լոտ, լոտը՝ 3 մսխալ»…

Այնպես որ, երեխան կարող է նստել և հանգիստ կերպով հաշվել, թե քանի հազար մսխալ ենք մենք խլել խեղճերից ու որբերից:

Կամ թե չէ ոտանավորը կոչվում է «Ռ ունեցող բառեր»: Այնտեղ գրված է.

ԱՌողջ ագՌավ լի է անտաՌ.

ԳոՌոզ աՌյուծ փշրեց մացաՌ.

Նա գոՌում է աՌանց պատճաՌ,

Անմեղ գաՌը լալիս թշվաՌ:

— Հաստատ օր լավ գիրք է,— ծիծաղում է Օնիկը:— Թող մնա քովս, տղոցը կարդամ, էգվան արի տար: Եվ, չնայած գրքի «ունիկում» լինելուն, նշանակում է շատ համեստ մի գին:

Մի ուրիշ անգամ ես նորից մեկնում էի նրան մի ուրիշ անծանոթ գրքույկ:

— Էլի տերտե՞ր ես գտե,— հարցնում էր նա:— Հիմի՞ ինչ կա մեջը: Առողջ ագռավները հիվընդցե՞ր են, թե՞ գոռոզ առյուծը թաժա մացառ է փշրտե:

Եվ, արդեն վստահ, որ ես գտել եմ հետաքրքրության արժանի բան, բաց էր անում գրքույկը:

Գրիգոր ավագ քահանա Մանդակունի: «Զզվանքներ»: Եվ, հակառակ վերնագրի, շապկի առաջին էջի վրա մի սքանչելի երեխա-աղջկա գլուխ: Նույնպիսի մի աղջիկ՝ շապկի չորրորդ էջի վրա: Հեղինակը 40 էջի վրա զետեղել է 112 տասնյակ՝ խնամքով համարակալված: Նա նպատակ է դրել իր գրքույկում թվարկել աշխարհի բոլոր «զզվելի» բաները և ցույց տալ դրանց հանդեպ իր աներկբա վերաբերմունքը: 1120 տողը, իհարկե, քիչ է եղել դրա համար, և նա, այդ գրքույկը համարակալելով Ա տառով, շապկի վրա խոստանում է շուտով հրատարակել նաև Բ-ն:

Բարբարոսներից, բռնակալներից, խստասրտներից,

Վայրենիներից, գոռ գազաններից, մարդակերներից,

Կոշտ կոպիտներից, հակաճառներից, վավաշոտներից,

Ոխակալներից, չափազանցներից, ծայրահեղներից,

Հավատացեք, զզվեցա,

Հոգիս վկա, զզվեցա:

Կրոնավորի երեսպաշտությամբ նա «զզվում» է նաև այնպիսի երկրային բարիքներից, որոնք թվարկում է՝ ախորժակից թուքը կուլ տալով.

Չաղ միս ուտողից, Կախեթու գինին վերան կոնծողից,

Եղոտ փլավը, տապկած հավի միս անուշ անողից,

Բեհեզ հագնողից, փափուկ անկողնում քաղցր քնողից,

Ազապ ապրողից, անձի կուսություն հավատացողից,

Հավատացեք, զզվեցա,

Աստված վկա, զզվեցա:

Լինելով քահանա, նա իր համարակալված տասնյակների մեջ հաճախ է անդրադառնում իր դասի վիճակին և այդ առթիվ հայտնում իր զգվանքները.

Թուրքերից ավել և թե քյուրդերից ու մոնղոլներից,

Հայերի թիվը պակասեցնող մեր խիստ օրենքից,

Որ ցարդ զրկում է կուսակրոնին, այրի հայրերին

Ազգին օգտավետ սուրբ ամուսնության բեղուն պսակից…

— Ծո, իսիկ հանճար է,— ծիծաղում է սովորաբար լուրջ Օնիկը:— Ուրեմն կուսակրոն հայերը բեղուն պսակով հայերու թիվն էնքան պիտի շատըցնեն, օր Հայաստանը դառնա ճանճի փեթակ: Տղեքն օր կարդան՝ կջարդին խնդըլեն:

Ապա, լրջանալով, ասում է.

— Չնեղենաս, հմը ես իսի գիրքը քեզի չեմ ծախե: Ի՜նչդ էլ չեմ իմացե տեյմօր հիմի…

— Էլի ունիք, պարոն Ղազարյան, դարակի վրա լիքն է,— հայտնում եմ ես:

— Օղո՞րթ: Էլիսա՝ տար ձրի, իմ կողմես նվեր…

«Տղեքը», որոնց մասին խոսում է Օնիկը, քաղաքի գրական ինտելիգենցիան է, որը շարունակ խռնված է լինում նրա խիստ փոքրիկ խանութում: Ես հաճախ եմ տեսել նրանց այնտեղ, բայց անունները չգիտեմ: Արդյոք այդ նրանք չե՞ն, որ անցյալում հրատարակել են «Ասպարեզ» և «Երիտասարդ» ալմանախների մի քանի տետրակները... Ճիշտ է, ալմանախները լույս են տեսել ութ-տաս տարի առաջ, բայց հո ապրո՞ւմ են դրանց հեղինակները: Իհարկե, ոչ ամենատաղանդավորները, որոնցից մի քանիսը մահացել են, իսկ մյուսները հեռացել քաղաքից:

Ոչ, ես վաղուց եմ դուրս եկել «Մուկն ու կատուն»-ի տարիքից, ես գիտեմ նույնիսկ, թե ինչ է սիմվոլիզմը: Ես սիրով եմ պահում Վահան Տերյանի «Մթնշաղի անուրջները»: Պահում եմ, իհարկե, իմ հիշողության մեջ, իսկ գիրքը գնացել է հիմա Գևորգի մոտ:

Ալեքսանդրապոլը տվել է Տերյանի պլեադայի տաղանդավոր մի քանի ներկայացուցիչներ, և ես, համաքաղաքացու հպարտությամբ, մտովին թվարկում եմ նրանց անունները և հիշում նրանց տողերը:

Ահա Աֆրիկյանը.

Եվ անտրտունջ, և անդժգոհ մարան մերժված աղոթքները իմ արցունքոտ,

Որպես վերջին հառաչանքներ անվերադարձ, գութին օտար, ցավին ծանոթ,

Այս գունատված ծաղիկների շշուկներն էլ աղոթքներիս այնքան նման,

Իրենց վերջին աղերսանքն են լուռ բուրվառել անգութ աշնան, գունատ աշնան…

Իմ հոգու մեջ մի անհայտ տենչ, մի սուրբ կարոտ, իմ սրտի մեջ դժգույն թախիծ,

Դու չանիծես անարշալույս կյանքս աղոտ, իմ ամոքիչ, իմ կարեկից…

Ոչ, նա չկա Օնիկ Ղազարյանի գրավաճառանոցում հավաքվողների մեջ: Ես գիտեմ, նրան սպանել են, բայց թե երբ, ինչո՞ւ՝ անհայտ է ինձ:

Ահա Արտաշես Տեր-Մարտիրոսյանը.

Այսօր առավոտ ծաղիկներն այնքան գունատ էին, թույլ,

Որ չէր առկայծում ոչ երջանկության, ոչ բախտի նշույլ:

Ծաղիկների մեջ գունատված ու հեզ, թույլ ու հիասթափ,

Քեզ տեսա տխուր, հիասթափ այնպես, այնպես հիասթափ,

Որ էլ չառկայծեց ոչ երջանկության, ոչ բախտի նշույլ,

Ու դրա համար ծաղիկներն այնքան գունատ էին, թույլ:

Նա ևս չկա Ալեքպոլում: Փոխադրվել է Մոսկվա՝ մշտական բնակության, և վաղուց է, ինչ դադարել է գրելուց:

Ահա և Իսահակ Իսահակյանը՝ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի եղբոր որդին, նույնպես սպանված, որին Վարպետն այնպիսի կսկիծով է ողբում՝ նրան նվիրած իր բանաստեղծությունների մեջ: Իսահակ Իսահակյանը թեև գրել է արձակ, բայց նրա արձակը նույնպես բանաստեղծություն է, և ես անգիր գիտեմ նրանից ամբողջ կտորներ.

«Ես գիտեցա Քո հեքիաթի հմայքը, Քո հրեղեն հեքիաթի հմայքը հզոր, իմ անհայտ, անմահ Աղջիկս, և հիմա ես հուսավառ ուխտավոր եմ այս աշխարհի վրա և կարոտս այրում է ինձ:

Քո հեքիաթը հրեղեն է, սերն է Քո հեքիաթը, սերն է Քո հեքիաթը:

Աղջիկս, հրեղեն է իմ սերը:

Աշխարհը Քո հեքիաթի լեզուն է թովիչ, սիրուն լեզուն է թովիչ:

Կյանքը Քո հեքիաթի խոսքերն է խորունկ, անուշ խոսքերն է խորունկ:

Երբ որ ես դեռ վհատ ու մոլոր էի և ինձ համար աշխարհը սուտ էր ու մռայլ՝ և՛ մահն էր ստույգ, և՛ մահն էր հավերժ:

Հիմա պայծառ եմ, հուսավառ, և ինձ համար իմ սերն է հավերժ, Քո հեքիաթը՝ ստույգ, թովիչ է Քո հեքիաթի լեզուն, մարդու կյանքի հետ լռող (երգը երազում), և ես սիրում եմ Քո հեքիաթի լեզուն, աշխարհը սուտ է սիրուն:

Երբ որ ինձ համար կյանքը դառնություն էր, անցավոր, և՛ մահն էր անանց, և՛ մահն էր հավերժ:

Հիմա Քո հեքիաթն է անանց, իմ սերն է հավերժ — խորունկ են Քո հեքիաթի խոսքերը ու միշտ անավարտ — կյանքը անցք է անուշ:

Ե՞րբ գիտեցա Քո հեքիաթի հմայքը, ե՞րբ սիրեցի ես իմ սերը հրեղեն:

Ես հիմա սիրավառ ուխտավոր եմ այս արևի տակ և կարոտս այրում է ինձ:

Իմ հեռավոր, հրեղեն, հրաշք Աղջիկս: Ես չգիտեմ՝ ով ես դու, ես չգիտեմ՝ ուր ես դու, միայն գիտեմ, որ պիտի գաս, և անուշ, սիրուն պիտի լինիս դու: Երեկ անցան կռունկները, կանչեցին, անուշ-անուշ կանչեցին նրանք: Քո անունը կանչեցին նրանք, ու նա ծորող մեղրի պես էր:

Այսօր փչեց հարավ քամին, դաշտերի ձյունը հալեց, և Քո բույրն ու ջերմ շունչն էր շունչը նրա և ես արդեն հարբած եմ, ծարավ:

Հիմա իրիկունը քրոջական է, գթոտ, գարնան իրիկունը զիջող ու առատ, և հեռուներում, հեռու-հեռուներում, անհայտ ճամբաների ու ծովերի վրա կիզվող խոստումներով զրնգում, ծփծփում են ոսկեղեն, լուսեղ քարավաններն ու նավերը բաղդի, և իմ սիրտը բաց է ահա պալատի դարպասների պես և սպասում է Քո հայտնությանը»…

Ահա և, վերջապես Ալեքսանդրապոլի գրական երիտասարդության պարծանքը, «Սայաթ-Նովայի համալսարանական աշակերտ» Հովհաննես Տերենցը — Տեր-Մարտիրոսյանը, նույնպես վաղամեռիկ.

Ես մի խոսնակ թառ ունեի՝ թառիս ոսկի լարը տարան,

Մատիս անգին քար ունեի՝ մատանուս գոհարը տարան,

Շահնշահի հալ ունեի՝ ինձի լալկան աղքատ արին,

Իմ աչքերի քունը կտրավ, ախ, սրտիս դադարը տարան:

Զարկեք թառին առանց թելի՝ միջից խուլ-խուլ ձեներ կուգա,

Վաղվան անուշ երգերի տեղ կրծքես ախ ու վախ դուրս կուգա,

Փայլ կունենա՞ էն մատանին, որի կայծակ ակը չկա,

Իմ աչքերի լուսը կորավ՝ իմ աննման յարը տարան:

Ոչ, նրանք և ուրիշ շնորհալիները, ամենալավերը, չկան Ղազարյանի գրավաճառանոցում: Դարակների մոտ գլուխս կախ գրքեր ընտրելիս ես ականջի ծայրով ուշադրություն եմ դարձնում այնտեղ խռնված երիտասարդների զրույցներին:

— Տղեք, կեցեք ձեզի մե բանաստեղծությունըմ կարդամ, թաժա եմ գրե:

Երբ նա ավարտում է կարդալը, մեկն իսկույն ձայն է տալիս.

— Իդիկ սինվոլիզմ է:

— Այ օղուլ, ո՞ւր է իդտեղ սինվոլիզմ,— հակաճառում է մի ուրիշը:

— Ըպը իսիկ ի՞նչ է...— և, վերցնելով հեղինակի ձեռքից ձեռագիրը, ցույց է տալիս մատով.— «կանանչ տեսիլ»…

— Լավ, ըսենք թե «տեսիլքը» սիմվոլիզմ է,— ստիպված համաձայնվում է հակաճառողը,— ըպը «կանա՞նչը»:

Անկյունում նստած մի երիտասարդ, ըստ երևույթին բանաստեղծություն գրելուց արդեն ձեռք քաշած, ուստի և ուրիշների փորձերին անլուրջ վերաբերվող, ասում է.

— «Կանանչն» էլ է սինվոլիզմ, քանի օր անորոշ կանանչ է: Ռեալիզմն էն կէղներ, որ տեղը-տեղին ըսվեր, թե ինչ կանանչ է՝ թարխո՞ւն, մաղդանո՞ս…

Ես գաղտնի փռթկում եմ:

— Յանի ի՞նչ կէնես,— բարկանում է մի ուրիշը նրա վրա,— մենք իստեղ գրվածք կքննենք, իսկ դու գնացիր-ընկար բոստընները:

Վեճը տաքանում է: Լուռ է միայն Օնիկը, որին, որպես սալոնի տիրոջ, հարկավոր է բռնել չեզոք դիրք և միայն երբեմն, վերջում, ասել երկուստեք ընդունելի մի քանի խոսք:

Լուռ է նաև բանաստեղծը: Սպասելով իր գրվածքի դատավճռին, նա գրպանից սեմիչկա է հանում և սկսում է չռթել: Տալիս է նաև ուրիշներին:

— Տե, տե, խանութը միք մունտրռե,— բարկանում է նրանց վրա Օնիկը,— հերիք չէ բանաստեղծություն կկարդաք, հիմի էլ սեմիչկա՞:

Ոչ ոք ուշադրություն չի դարձնում ինձ վրա, բոլորն ինձ դնում են երեխայի տեղ: Միայն Օնիկն է, որ գիտե՝ ես երեխա չեմ: Նա հասկանում է, որ ես վաղուց եմ ավարտել իմ գործը գրքերի հետ և մնում եմ միայն նրանց գրական վեճը լսելու համար:

Մի անգամ, երբ մենակ էինք, Օնիկն ինձ հարցրեց.

— Դու էլ խո ոտանավոր-մոտանավոր չե՞ս գրե:

Ես սարսափելի կարմրեցի, բայց կմկմացի, որ՝ ոչ: Չգիտեմ, հավատա՞ց Օնիկն ինձ: Որքա՛ն կզարմանար, եթե իմանար, որ ոչ միայն գրում եմ, այլև ունեմ մի քանի տարվա «ստաժ»:

1914 թվի օգոստոսի սկզբի մի օր քեռիս եկավ մեզ մոտ և հայտնեց, որ պատերազմ է հայտարարված: Ես իսկույն նստեցի և գրեցի մի արյունռուշտ բանաստեղծություն՝ «Դեպի դաշտ»: Ես յոթ և կես տարեկան էի և դա իմ առաջին բանաստեղծությունն էր: Գրեցի և համարյա սարսափով նայեցի իմ ձեռքի գործին, կարծես ջին էի ոգեկոչել շշի միջից և այլևս իմ ամբողջ կյանքում անկարող պիտի լինեի նորից խցկել նրան իր տեղը…

Վեց տարի շարունակ ես ամենայն խստությամբ գաղտնի էի պահում բոլորից իմ «հանցանքը»: Իմ գրվածքները՝ բանաստեղծություններ, փոքրիկ պատմվածքներ, միկրոսկոպային վեպեր, ես արտագրում էի իմ ձեռքով պատրաստած ընդհանուր տետրակի մեջ, որին, կոնսպիրացիայի համար, տվել էի շատ փոքրիկ չափ՝ իմ ձեռքից ոչ մեծ: Տետրակը կոչվում էր «Գաղտնարան»: Երբ այն լցվեց, ես պատրաստեցի երկրորդը:

Որքա՛ն անհանգիստ ժամեր եմ անցկացրել վեց տարի շարունակ, վախենալով, որ իմ դպրոցում եղած ժամանակ տնեցիները կարող են գտնել իմ «Գաղտնարանները» և կարդալ: Եվ եթե պարզաբանեմ, որ այնտեղ կային նաև մի շարք սիրային ոտանավորներ՝ գրված իմ երիտասարդ հոգու, խիստ երիտասարդ, ութ-տաս տարեկան, ամբողջ թափով, ապա լրիվ հասկանալի կլինի իմ անհանգստության գլխավոր պատճառը:

Եվ ահա, վեց տարի հետո, 1920 թվին, մեր գիմնազիայի միջանցքի պատի վրա ես կարդում եմ մի շշմեցուցիչ հայտարարություն: Աշակերտական ինքնավարությունը հրատարակելու է ձեռագիր պարբերական... Աշակերտներին խնդրվում է նյութերը զցել այդ հայտարարության տակ կախված արկղը:

Պարբերական... «Տպագրվելու» անսպասելի հնարավորություն... Եվ ինչպիսի՜ հրաշալի հարմարություն՝ նյութերը զցել արկղը... Ես անձամբ ոչ մի գնով չէի տանի հանձնի ոչ մի նյութ: Իսկ այժմ կարելի է կեղծել ձեռագիրը, ստորագրել իմ բազմաթիվ կեղծանուններից որևէ մեկով, դե գտիր, թե ով է դա…

Մի քանի օր շարունակ, ընտրելով այնպիսի պահեր, երբ միջանցքում ոչ ոք չկար, ես արկղ էի լցնում ոտանավորներ, պատմվածքներ, «Հասկերի» ազդեցության տակ գրված հանելուկներ, շուտասելուկներ, ռեբուսներ... Ես «բազմաժանր» գրող էի: Նյութերն ստորագրված էին՝ Հյուլե, Ասուպ, Ալազան, այո, այո, Ալազան, որը կազմված էր իմ Ալեքյան ազգանվան և «ազնվություն» ու «անմահություն» բառերի առաջին երկուական տառերից և այլն:

Մի երկու շաբաթ հետո հայտնի դարձավ, որ պարբերականը «տպում» են, այսինքն՝ արտագրում մի քանի օրինակով, և որ այնտեղ կա մի լավ բանաստեղծություն՝ «Դեպի լույս»: Հեղինակն ուշ էր գցել այդ բանաստեղծությունն արկղը, երբ պարբերականն արդեն սկսել էին արտագրել,ուստի և դրանով դժբախտաբար չէր կարելի բացել այն, ուստի բացել էին գրական բաժինը: Բանն այն էր, որ «Դեպի լույս»՝ դա նաև պարբերականի անունն էր:

Իմ պոետական սիրտը սարսափելի թպրտաց: Դա իմ բանաստեղծությունն էր... Ես մինչև հիմա հիշում եմ դրա առաջին երկու տողը.

Շողշողում է լույսը պայծառ, այնտեղից, տես, այստեղ մթին,

Մենք կգնանք առաջ անվախ, թեև մահ կա ճանապարհին:

Իմ պոետական հոգին, թպրտալուց բացի, կատարեց ևս մի այլ շարժում: Երդվեցնելով իմ ամենամտերիմ ընկերոջը՝ ոչ ոքի չասել այդ մասին, ես հայտնեցի նրան հեղինակի անունը: Հաջորդ երկու օրվա ընթացքում միմյանց երդվել էր գիմնազիայի համարյա ամբողջ աշակերտությունը:

Ավելի ավագ դասարանցիներ գալիս էին զարմացած նայելու ինձ, թե այդ ինչպե՞ս եմ հանդգնել ոտանավոր գրել, երբ իմ կողքին կան ինձնից ավելի պատրաստվածներ:

Պարբերականում զետեղված էր նաև իմ մի այլ բանաստեղծությունը՝ «Զոհերի բողոքը» վերնագրով, գրված հայ ժողովրդի մեծ կոտորածի մասին: Գետը թափված մարդկանց դիերը գիշերները դուրս են գալիս ափ և արդարություն են պահանջում.

Հիշում եմ առաջին տունը.

Շատ չի անցել դեռ այն օրից,

Երբ տաճիկը մահաբեր,

Եկավ երկիր Հայաստանում

Տարածելու իր շանթեր:

Ես հիշում եմ կրկներգը.

Եվ զոհերը ամեն գիշեր

Գետի տակից, ճչալով,

Դուրս են գալիս գետի ափը՝

Ազատություն փնտրելով:

Պարբերականը լույս տեսավ, իսկ ես շարունակում էի արկղը լցնել նորանոր նյութեր՝ հաջորդ համարների համար, որոնք, ի դեպ ասած, լույս չտեսան, որովհետև մեր մտերիմ ուսուցիչ Հովհաննես Պետրոսյանը, աշակերտական ինքնավարության և այլ լավ գործերի, այդ թվում նաև

պարբերականի նախաձեռնողը, բոլշևիկ էր և շուտով ստիպված եղավ թաքնվել, ապա նաև հեռանալ քաղաքից: Իմ այդ նոր նյութերը, որոնց տակ ես այլևս ստորագրում էի իմ իսկական անուն-ազգանունով՝ քանի որ թաքնվելն այլևս հնարավոր չէր— Մկրտիչ Ալեքյան— այդպես էլ մնացին «անտիպ»:

— Միտքդ ո՞ւր է թռե, Մուկուչ,— լսեցի հանկարծ Գևորգի ձայնը:— Պաղե-մնացեր ես ինչըղ օր սախարինով մառոժնի:

Ես սթափվեցի, վար դրեցի ձեռքիս գիրքը, դուրս ելա վաճառասեղանի ետևից:

— Բանըմ չջոկեցի՞ր, Մուկուչ:

— Ետև կուգամ, կջոկեմ,— ասացի ես,— հիվընդությունից էս կողմ խելքս հլը գլոխս չէ էկե…

— Հույս ունենանք, օր գա,— բարեմաղթեց Գևորգը:— Ըսել է՝ գլոխդ կպտըտի՞:

— Ֆոնտիկի պես,— ասացի ես պատկերավոր:

— Տե գնա բանըմ կե,— շտապեցրեց Գևորգը և, իսկույն սթափվելով, նյութական բազա դրեց իր վերացական ցանկության տակ:— Գնա քանիմ հատ դասագիրք բե, կեսը փարա կուտամ, հաց կառնես, կեսն էլ Չարենց-մարենց կուտամ, կկարդաս, դու կարդալ շատ հազ կէնես: Հմը, ճիշտն օր խոսինք, շատ կարդալը մե վախտըմ թող: Էնքան կկարդաս, ինչղ օր դու էլ մե օրմ բանաստեղծ պիտի դառնաս: Աստված չէնե…

Ես դուրս ելա և գնացի տուն, բայց ոչ թե ուղղակի, այլ նախապես մի քիչ շրջելով: Մի ամսում ես այնքան էի կարոտել աշխարհին: Դեռ լավ էր, որ ընդմիշտ չէի հեռացել այնտեղից…

Ես անցա նաև «Ատրպետի բուդկա»-յի մոտով: Տախտակե այդ կրպակը, մերոնց պատմելով, կառուցել էր տվել Ատրպետը՝ իր երկերի ժողովածուի հատորներն ու բազմաթիվ առանձին հրատարակությունները վաճառել տալու համար: Բայց իմ հիշողության մեջ գրքեր այլևս չկային այնտեղ, այլ վաճառվում էին միայն պարենային ապրանքներ: Հաճախ էր մայրս ասում ինձ այսպես.

— Առ էս փարեն, գնա Ատրպետի բուդկեցեն մե էրկու մսխալ սև տաքտեղ բե…

Ես անցնում էի դաշնակցական Ալեքպոլի փողոցներով, հիշում կամ մտածում էի այդ ամենի մասին, մտաբերում էի իմ տեսած կամ կարդացած գրքերը: Բայց «Կապուտաչյա հայրենիք»-ի և դրա հեղինակ Եղիշե Չարենցի մասին չէի մտածում, ոչ:

Ես հաճախ էի լինում Գևորգի գրավաճառանոցում, տեսնում էի, թե ինչպես դանդաղ, երբեմն-երբեմն, ցուցափեղկից անհետանում էին որոշ գրքեր և փոխարինվում նորերով: Բայց Չարենցի գիրքն այնտեղ էր դեռ երկար ժամանակ: «Ազրայիլն» արդեն անհետացել էր, իսկ Չարենցի գրքի կարմիր շապկի ծայրը, երկար ժամանակ դրանով ծածկված, մնացել էր կարմիր, մինչդեռ մնացյալ մասերում դա արդեն գունատ-վարդագույն էր: Բայց ահա գունաթափվեց նաև այդ ծայրը, հավասարվեց ամբողջ շապկի գույնին, իսկ գիրքը դեռ տեղումն էր: Ժողովուրդը, պատերի տակ սովամահ եղող, կռիվներում կոտորվող, դեռ չգիտեր, որ հայ գրականության երկնակամարում երևացել է մի նոր աստղ, մեր հազարամյա դպրության Պառնասում ծնվել է մի նոր մեծ բանաստեղծ՝ Եղիշե Չարենց…

Իսկ ես, տասնչորսամյա պատանիս, բացի դրանից, չգիտեի նաև, որ կանցնի ընդամենը հինգ տարի, և ես ու այդ անծանոթ Չարենցը կդառնանք երկար տարիների մտերիմ բարեկամներ, գրական զինակիցներ՝ մինչև նրա անժամանակ և ողբերգական վախճանը:

ԲՅՈՒԼԵՏԵՆՆԵՐԸ

Տասնյակ հազարավոր հայ որբերի և նրանց որբանոցային կյանքի պատմությունը դեռ չի գրված: Հիշողությունների ձևով, թե ուսումնասիրությունների, տրտում վեպի ձևով, թե թատերական ողբերգության, հարկավոր է արձանագրել մեր պատմության այդ դրվագը, որն ստեղծվել էր Մեծ Եղեռնի հետևանքով: Թող կարդան մարդիկ և մի անգամ ևս ատելության ու թշնամանքի բուռն լիցք ստանանպատերազմների և դրանց հրահրողների դեմ: «Սկաուտ № 89». «Կարմիր և կապույտ փողկապներ», «Մանկություն չունեցող մարդիկ», «Պարոն Պետրոսը և իր նախարարները» — միայն մասնակի սևագրություններ են մեծ էպոպեայի:

Համաշխարհային առաջին պատերազմի ժամանակ մարդկությունը տվեց տասը միլիոն զոհ, որից երկու միլիոնը տվեց միայն փոքրաթիվ հայ ժողովուրդը... Բայց նույնիսկ այդ ահռելի տոկոսը պատկերացում չի կարող տալ աղետի ահռելիության մասին: Հակառակ այն խոսքի, թե «ամենայն տեղ մահը մի է», հազիվ թե ութը միլիոն մարդկանց մահը հնարավոր լինի համեմատել անգամ այն մահերի հետ, որոնցով մեռավ երկու միլիոնը: Խաղաղասեր և ազնիվ մարդու երևակայությունն անզոր է պատկերացնել ֆիզիկական և հոգեկան այն խոշտանգումները, որոնցով ոչնչացվում էր բոլորովին անմեղ մի ժողովուրդ: Թուրք մարդակերների ախտամոլ երևակայությունն ստեղծել էր այնպիսի հրեշավոր հնարքներ, որոնց նկարագրությունն անհնար է կարդալ անգամ: Միայն գերմանական ֆաշիզմը, երեսուն տարի դրանից հետո, կարողացավ մոտենալ թուրք ճիվաղների մակարդակին:

Արևմտյան Հայաստանի ժողովրդի մի բուռն մնացորդներն իրենց կյանքը փրկեցին Արևելյան Հայաստանում, իսկ մի այլ մասը՝ արաբական երկրներում, որտեղից շուտով ցրվեց աշխարհով մեկ:

Ոչնչացված ժողովրդի երեխաների մնացորդները, բարի մարդկանց հովանավորությամբ փրկված, իրենց ապաստանը գտան Մերձավոր և Միջին Արևելքի մի շարք երկրներում բացված որբանոցներում, որտեղից, վերջ ի վերջո, նրանց մի մասը փոխադրվեց Հայաստան:

Մազապուրծ էին եղել համարյա բացառապես փոքրահասակ երեխաներ՝ դեռ գիտակցական տարիքի չհասած: Նրանք չէին հասկացել, թե ինչ էր կատարվել իրենց հետ: Նրանք աղոտ հիշում էին ինչ-որ գյուղ, որն իրենց գյուղն էր, ինչ-որ բարի և չարքաշ մարդկանց, որ նրանց ծնողներն էին, հիշում էին գարու կամ կորեկի հացը՝ իրենց թոնիրներում թխվող, և հարևանների երեխաներին՝ իրենց խաղընկերներին:

Եվ հանկարծ ընդհատվեց մանկականորեն երջանիկ այդ կյանքը և սկսվեց մի բան, որի ամենահեռավոր հուշն անգամ այլայլում է երեխայի դեմքը զարհուրանքից և ստիպում է նրան ճչալ քնի մեջ և արթնանալ լեղապատառ:

Դա նման էր կոշմարի, բայց չափից ավելի երկարաձգված: Նրանք անցնում էին տառապանքի և մահվան ուղիներով, նրանց քարավանները հալչում էին աչքի առաջ: Հայրերին ու եղբայրներին հավաքել և սպանել էին դեռ սկզբից: Իսկ այժմ բռնաբարում և սպանում էին մայրերին ու քույրերին: Երեխաներին այրում էին՝ վրաները նավթ լցնելով կամ խեղդում էին Եփրատի ջրերի մեջ…

Իսկ նրանք, հրաշքով ճողոպրած, հազարներից մեկերը, շարունակում էին քշվել նույն ճանապարհներով՝ սպասելով ոչնչանալու իրենց հերթին: Նրանք աստիճանաբար մոռանում էին իրենց զոհված կամ կորած հարազատների ոչ միայն դեմքերը, այլև անունները: Հափշտակվելով կամ հովանավորվելով ինչ-որ մարդկանց կողմից, այժմ նրանք մոռանում էին նաև իրենց լեզուն՝ խոսելով միայն նրանց լեզվով: Երբեմն, բացառիկ հրաշքով, գտնելով և ճանաչելով իրենց հարազատ քրոջը կամ եղբորը, նրանք այլևս չէին կարողանում փոխանակել ոչ մի բառ, որովհետև նրանցից մեկը խոսում էր իր բռնի ամուսնու լեզվով՝ քրդերեն, իսկ մյուսն իր նոր հոր լեզվով՝ արաբերեն:

Նրանք անցնում էին երկրից երկիր՝ Եգիպտոս, Սիրիա, Հաբեշստան, առանց իմանալու, թե ինչ են Եգիպտոսը, Սիրիան, Հաբեշստանը... Գիտակցական տարիքի դեռ չհասած երեխայի անտարբերությամբ էին նրանք կրկնում այդ անունները, և շատ ավելի մեծ հուզմունքով կամ վշտով՝ Ռագգա, Հալեպ, Գահիրե, Դեր-Զոր, Ռաս-ուլ-Այն... Ռագգան նրանց համար ավելի հիշատակելի անուն էր, որովհետև այդտեղ նրանք կորցրել էին իրենց հորը, որին մորթել էին ընտանիքի աչքի առաջ, իսկ մորը, բռնաբարելուց հետո, կապել էին ոտքերից ու թևատակերից և խորասուզել-հանել ջրի մեջ այնքան անգամ, մինչև որ նա խեղդվել էր: Կորցրել էին իրենց ամենափոքր, ծծկեր եղբորը, որին մի հրեշ նետել էր օդի մեջ և թրով երկու կես արել՝ ցույց տալով իր վարպետությունը: Կորցրել էին իրենց փոքր քրոջը, որին, հինգ ղուրուշով, քարավանն ուղեկցող պահակներից գնել էր մի ծերունի…

Իսկ Գահիրեն ավելի քիչ կարևոր վայր էր, որովհետև ի՞նչ էին կորցրել նրանք այնտեղ: Ընդամենը երկու ընկերոջ, որոնցից մեկին, գետում լողանալիս, հոշոտել էին կոկորդիլոսները, և մյուսին, որն ընկել էր մի ուրիշ որբանոց և տարվել մի այլ կողմ:

Արևմտյան Հայաստան բերված որբերին Թիֆլիսում դիմավորել էր մի բարի, անմոռանալի մարդ՝ արցունքն աչքերին: Անունը Հովհաննես Թումանյան էր: Նրանք չգիտեին, թե ով էր Հովհաննես Թումանյանը: Հասնելով Երևան, նրանք տեսել էին Արարատ սարը: Ու թեև զարմացել էին, թե որքան բարձր էր այն, բայց նրանք չգիտեին, թե ինչ էր Արարատ սարը հայ ժողովրդի համար: Նրանք չգիտեին նույնիսկ, որ դա այն սարն էր, որը նրանք իրենց ծննդավայրում տեսել էին հակառակ կողմից: Փոխադրվելով Ալեքպոլ և ընկնելով Պոլիգոնի, Սևերսկու կամ Կազաչի Պոստի որբանոցները, նրանք չգիտեին, թե ինչու համար են նախկին զորանոցների այդ թաղամասերը կոչվում Պոլիգոն, Սևերսկի կամ Կազաչի Պոստ: Նրանք ոչինչ չգիտեին: Ճիշտ է, նրանք տեսել էին շատ բան, որոնք երբեք չես մոռանա կյանքում, բայց այն էլ չգիտեին, թե ինչու համար տեղի ունեցավ այդ ամենը: Նրանք փոքր երեխաներ էին, նրանք պարտավոր էլ չէին այդ բոլորն իմանալու: Բայց պարտավո՞ր էին արդյոք կրելու…

Ահա այդ որբերի մոտ էր, որ ես ընկա 1922 թվին:

Հիմա, տասնյակ տարիներ հետո, երբ այնքան շեն է մեր երկիրը և քաղաքներում ու գյուղերում, ամեն քայլափոխ վրա, կարելի է հանդիպել ամենատարրականին, բայց և ամենակարևորին ու նվիրականին՝ հացի կրպակների, առանց սոված մարդկանց հերթերի՝ դրանց առջև, կարող է տարօրինակ թվալ, որ Հայաստանի խորհրդային դառնալուց մեկ և կես տարի հետո էլ դեռ հարկ էր լինում ընկնել որբանոց՝ սովամահ չլինելու համար: Բայց դա այդպես էր, և մեր երկրի այդ ծանր ժամանակները ես հանգամանորեն ուսումնասիրել եմ իմ սեփական մաշկով... Կուշտ ճաշելուց, հաճելի կինոնկար տեսնելուց, սիրային ժամադրությունից, նոր գլխարկը հայելու առաջ փորձելուց և գոհ մնալուց, իր զավակների կամ ծնողների հետ զբոսանքից և նման այլ բավականություններից հետո, երբ ընթերցողը ձեռքը վերցնի իմ գիրքը, բոլորովին էլ ավելորդ և անօգուտ չի լինի, եթե նա իմանա, որ ես տեսել եմ թուրքական հրոսակների երկու արշավանք՝ 1918 և 1920 թվերի: Չկա

զարհուրելի ոճիրի մի պատկեր, որ ես տեսած չլինեմ իմ մանկական աչքերով: Դեռ չէր խունացել առաջին արշավանքի արյուն սառեցնող պատկերը, դեռ դրանից հետո իմպերիալիստների ցանկությամբ ստեղծված Հայաստանի հանրապետությունը «երկիր դրախտավայր» չէին դարձրել դաշնակցականները՝ հասցնելով առայժմ դարձնել «երկիր դժոխավայր», երբ մարդակերների հրոսակները վերադարձան և նորից գրավեցին Հայաստանը: Մնացել էր ընդամենը մի վայրկյան, միայն մի վայրկյան, որպեսզի Քրոնոսը պոկեր պատմության գրքի էջերից հայ ժողովրդի էջը և նետեր անցյալի գիրկը՝ շումերների, ասորացիների, բաբելոնացիների, հեթիթների և անհետացած այլ ժողովուրդների մոտ:

Եվ հանկարծ... Եվ հանկարծ, խաղ ու պարով առաջխաղացող թուրք բանակը Սարդարապատում դեմ առավ համաժողովրդական պատնեշին, սոսկալի ջարդ կրեց և ետ շպրտվեց դեպի իր որջը: Ոչ մի թուրք իր քիթը չկոխեց Երևան:

Դա հերոսական էջ էր մեր պատմության մեջ, սակայն կարող էր դառնալ վերջին էջը, դառնալ փառավոր հուշարձան՝ շիրիմի վրա կանգնեցրած: Թուրքական հրոսակները կարող էին վերադառնալ էլի և էլի: Ուժ կունենա՞ր արդյոք մեր ժողովուրդը, արյունաքամ և փոքր, մեն-մենակ և անզեն, նորանոր Սարդարապատներ սարքել նրանց համար: Հրաշք էր հարկավոր…

Հրաշքն անգամ սովորական բան կարող է թվալ պատմական այն կտրուկ շրջադարձի համեմատությամբ, որը տեղի ունեցավ ամենածանր, ամենավերջին պահին: Դեռևս Խաչատուր Աբովյանի ողջունած ռուս ժողովուրդը, այժմ, առավել ևս, խորհրդային ժողովուրդը, իր հովանին փռեց բզկտված արծվի վրա:

Եղավ մի կարճ ժամանակ, երբ Ալեքպոլում և՛ թուրքերն էին գտնվում դեռևս, և՛ բոլշևիկներն էին գտնվում արդեն: Արյունարբու գազանները, որոնք մի օր առաջ կատարում էին իրենց անլուր ոճիրները՝ անպաշտպան մարմնի մեջ դանակների պես խրված, այժմ շրջում էին իրենց արյունոտ ատամները զայրույթից սեղմած: Քաղաքացիական պատերազմների ծանր ճակատներում դեռևս մարտնչող, բայց զորեղ Ռուսաստանը, աստղը կոմունարկայի վրա, շրջում էր Հայաստանով: Թշնամին այժմ նրա հետ էր գործ ունենալու, այդ վիթխարու, և ոչ թե փոքրիկ Հայաստանի: Հայ տղամարդիկ, որոնց դեռ մի օր առաջ աշխատանքի տանելու ստոր խաբեությամբ հավաքելով, կապկպում էին իրար և սպանում կացիններով ու քարերով, այժմ, աշխարհի ամենասքանչելի ժողովրդի՝ ռուսների հետ միացած, զորեղ էին և անխոցելի:

Կարճ ժամանակ անց՝ թուրքերը ետ էին քաշվել իրենց որջը, և Հայաստանում անվերադարձորեն հաստատվել էր խորհրդային իշխանություն: Բայց ի՞նչ էր նշանակում՝ Հայաստան... Այդ նշանակում էր ավերակների կույտ, մերկություն, հիվանդություններ, գործազրկություն... Այդ նշանակում էր նաև ամերիկական այսպես կոչված բարենպաստ կոմիտե, որը, որբանոցներ բացելու և հայ որբերին խնամելու պատրվակով Ամերիկայի դիրքերն էր ամրացնում դաշնակցական Հայաստանում, խորհրդային Ռուսաստանի մոտերքում…

Ահա թե ինչ ժառանգություն էր մնացել խորհրդային կարգերին: Եթե ուզում ես վարկաբեկել որևէ իշխանություն, ապացուցել, թե իբր նա անկարող է երկիր ղեկավարել, տուր նրան մի այդպիսի երկիր: Բայց խորհրդային իշխանությունը տարավ իրեն բաժին ընկած փորձությունը: Նրա գոյության մեկ և կես տարում սովն ու համաճարակները վերացան, մնացին կիսաքաղցածությունն հիվանդությունները: Իսկ մի՞թե անվիճելի չէ, որ լրիվ սոված ժողովրդին կիսակուշտ դարձնելն ավելի մեծ սխրագործություն է, քան կիսակուշտին դարձնել լրիվ կուշտ:

Բայց հայ ժողովրդի սերն ռուսի նկատմամբ շահադիտական հաշիվ չէր կամ նպատակահարմարության գիտակցում: Դա իսկական, անկեղծ սեր էր և հիացմունք ռուսի բարձր արժանիքներով, դա հարազատի, արյունակցի մտերմություն էր: Ինչպե՞ս կարելի էր չսիրել մի ժողովրդի, որն առանց քրթմնջոցի, ընդհակառակը, բարեհոգի ժպիտով և անգամ կատակելով, կտրում էր իր բերանի հացը և տալիս մարդկանց, որոնց երեսն անգամ չէր տեսել կյանքում…

Առավել ևս, դրա կողքին, վիրավորական և ստորացուցիչ բնույթ էր կրում այսպես կոչված ամերիկական օգնությունը: Ռուսի սև հացը, որ ուտում էինք մենք, դա այն ամբողջն էր, ինչ ուներ նա ինքն այդ ժամանակ: Ամերիկական սպիտակ հացը նրա ճոխ սեղանի փշրանքներն էին, որոնց դիմաց նա ուզում էր վարձատրություն, ճիշտ է, շատ փոքրիկ վարձատրություն՝ ընդամենը մեր ազատությունն ու մեր երկիրը: Իսկ երբ դաշնակները վտարվեցին երկրից և խորհրդային իշխանությունը դեռ որոշ ժամանակ ստիպված էր հանդուրժել ամերիկացիների ներկայությունը, նրանք, ակամա հրաժարվելով մաքսիմումից, համաձայն էին առայժմ՝ ավելի փոքր վարձատրության՝ իրենց մի կտոր հացի դիմաց այլասերել որբանոցներում պատսպարված մեր երեխաներին, նրանց դաստիարակել ամերիկյան հպատակության ոգով, դարձնել պոտենցիալ ճորտեր, լրտեսներ, խորհրդային կարգերի թշնամիներ…

1922 թվի մայիսյան մի օր ես ստիպված եղա թակել Կազաչի Պոստի, ահա այդ ամերիկական որբանոցների դռները: Ինձ, արդեն խորհրդային Ալեքպոլից եկածիս, և անշուշտ արդեն «վարակվածիս», չէին ընդունի՝ եթե չլիներ Երզնկայից գաղթած մեր մի հարևանի միջնորդությունն սկաուտապետին, որին նա ճանաչում էր անձամբ:

Եվ ահա, ես մտա այն մեծ կորպորացիայի մեջ, որը կոչվում էր որբություն, և դարձա դրա մի անդամը:

Հետաքրքիր, նշանավոր ժամանակ էր դա: Դեռ գիտակցական տարիքի չհասած երեխաների երբեմնի նախիրն այլևս չկար: Լավ թե վատ, երեխաները հաճախել էին դպրոց, լավ թե վատ, սովորել էին աշխարհագրություն, պատմություն, գրականություն... Մարդկային անասուն-ձագերից նրանք այժմ դարձել էին հայ երեխաներ, և այժմ, իրենց տարիքի համեմատական բարձունքից և գիտելիքների համեմատական լայն տեսանկյունից ջանում էին ետ նայել իրենց զարհուրելի անցյալին և հասկանալ այն, ինչ որ պատահել էր նրանց:

Եթե առաջ Կազաչի Պոստի հասարակությունը կազմում էին միայն սակավաթիվ ուսուցիչներն ու կառավարիչ-կառավարչուհիները, որոնք կոչված էին հսկելու անբան երեխաների կուտակումների վրա՝ ինչպես գառների հոտերի, ապա այժմ այդ հասարակությունն ուներ վեցից-ութ հազար պատանի անդամներ՝ հարցասեր, տագնապած, հուզված, զայրացած, գիտելիքների ծարավ և այդ գիտելիքների միջոցով աշխարհը հասկանալու բուռն պահանջով համակված: Դա՝ դեռ Կազաչի Պոստում: Իսկ կային նաև Պոլիգոնն ու Սևերսկին իրենց ուրիշ հազարավոր որբերով, կային Հայաստանի այլ վայրերի որբանոցները—տասնյակ ու տասնյակ հազարավոր որբ-որբուհիներ…

Ամբողջ Կազաչի Պոստը խլրտում էր աչքի առաջ: Երեկվա երեխաները, հայ պատանիներ դարձած, բացատրություն էին պահանջում մեծերից՝ իրենց ծնողավայրերի, իրենց ծնողների, իրենց ճակատագրի համար: Ո՞վ է մեղավորը, ցույց տվեք մեզ նրանց, շուտով մենք ինքներս հաշիվ կունենանք նրանց հետ…

Վտանգավոր և պատասխանատու տարիքի մեջ էին գտնվում որբերը, այն տարիքի մեջ, երբ որոշվում է մարդու հետագա ամբողջ գիտակցական կյանքը: Նայած, թե որ կողմ շուռ կտաս նրանց

զարգացող ուղեղը, նրանցից կարելի էր պատրաստել և՛ նվիրված խորհրդային քաղաքացիներ, և՛ կատաղի թշնամիներ:

Ես, դեռ տասնհինգ և կես տարեկան պատանի, որին, սակայն, արդեն քսվել էր խորհրդային դաստիարակությունը, զայրույթով էի տեսնում, որ ամերիկացիները և նրանց թևի տակ ծվարած դաշնակները պատանիներին դաստիարակում էին կործանիչ կերպով, աղավաղում, այլասեռում էին նրանց գիտակցությունն ու հոգիները:

Պատանիների դաստիարակությունն ամերիկական որբանոցներում ուներ երեք հիմնական թեզ: Առաջին՝ աշխարհը բաղկացած է ազգերից, որոնցից շատերը մարտնչում են իրար հետ: Թուրքերը ձեր դարավոր թշնամիներն են, նրանք կոտորել են ձեր ժողովուրդը, դուք էլ մեծացեք, որ ոչնչացնեք նրանց ժողովուրդը: Երկրորդ՝ Ամերիկան աշխարհի ամենահզոր, ամենահարուստ, ամենաբարի, ամենաարդար և այլն, և այլն պետությունն է, և դուք նրա շնորհիվ եք կենդանի: Ուրեմն, երբեք չմոռանաք այդ և պատրաստ եղեք վարձահատույց լինելու նրան: Երրորդ՝ բոլշևիկներն աշխարհի ամենավատ մարդիկ են, նրանք ուզում են կուլ տալ ամբողջ աշխարհը, բոլոր մարդկանց դարձնել իրենց ստրուկը: Առայժմ հեռու մնացեք նրանցից և եղեք չեզոք, իսկ երբ մեծանաք…

Առաջին օրերին ես շշմել էի և չէի հավատում աչքերիս: Մեկ և կես տարվա ընթացքում քաղաքում ես արդեն լիովին վարժվել էի խորհրդային կարգերին, դրանք ինձ դարձել էին կեցության միակ ընդունելի և հնարավոր ձևը: Իսկ Կազաչի Պոստում ես նորից նետվեցի մի քանի տարով ետ: Այնտեղ կարծես խորհրդային իշխանության հետքն անգամ չկար: Կրոնի դասեր, դաշնակցական բացեիբաց քարոզներ, փոքրիկ, բայց լիապես դասակարգային հասարակություն՝ իր կեղեքողներով ու կեղեքվողներով, միստր պարոն, պատվելի, է՛յ, սկաուտ, է՛յ, որբուհի, «Մեր հայրենիք թշվառ, անտեր»... Եվ այդ բոլորի վրա իշխում էր ամերիկական դրոշը՝ ինչպես մի փոքրիկ, քառասունիններորդ նահանգի վրա: Ոչ մի կարմիր դրոշ, ոչ մի մուրճ ու մանգաղ, ոչ մի աստղ…

Ես, որ քաղաքում մի սովորական պատանի էի՝ բոլորովին էլ ոչ առավել ինձ նման ուրիշներից, այժմ այդտեղ, Կազաչի Պոստում, զգում էի իմ գերազանցությունը: Բոլորն իմ շուրջը գիտեին, որ աշխարհը բաժանված է ազգերի, բայց ես գիտեի, որ բաժանված է նաև բուրժուաների և պրոլետարների: Բոլորը կարծում էին, թե բոլշևիկներն աշխարհի ամենավատ մարդիկն են, իսկ ես գիտեի, որ, ընդհակառակը, ամենալավերն են: Բոլորը հավատացած էին, որ աստված գոյություն ունի, իսկ ինձ մոտ կային անհերքելի և մերկացնող ապացույցներ, որ նա գոյություն չունի…

Ես ինձ զգում էի ոչ միայն որպես լուսավոր մարդ, այլև լուսավորիչ: Պետք էր զգույշ, շատ զգույշ, որպեսզի ինձ չհայտնաբերեին և փողոց շպրտեին, կատարել իմ լուսավորչի դերը…

Առաջին շրջանում ինձ թվում էր, թե ես միակն եմ Կազաչի Պոստի խավար աշխարհում: Բայց, աստիճանաբար նայելով իմ շուրջը, ես տեսա, որ կան նաև ուրիշները, որոնք նույնպես գիտեն իրերի իսկական վիճակը, որի մասին, նույնպես զգուշությամբ, հաղորդում են որբերին ու որբուհիներին: Դրանք արհեստանոցների բանվորներն էին, դաստիարակներից և ուսուցիչներից ոմանք, որբերից ու որբուհիներից այն սակավաթիվները, որոնք, ինձ նման, քաղաքում տեսել էին խորհրդային կարգերը և ապա դրանից հետո էին ընդունվել որբանոց:

Կազաչի Պոստը մի ամբողջ քաղաք էր: Այնտեղ կային որբանոցների բազմաթիվ շենքեր, ճաշարաններ, բաղնիքներ, դպրոցներ, պահեստներ, գրասենյակներ, որոնք կոչվում էին «օֆիսներ», կար հիվանդանոց, փոքրիկ էլեկտրակայան, ֆուտբոլի դաշտ, կային զբոսանքի հրապարակներ, կային ծառայողների բնակարաններ՝ մի ամբողջ թաղամաս, կար ամերիկացիների ռեզիդենցիա՝ առանձնակի կանգնած մի փոքրիկ, գեղեցիկ շենք…

Եվ կար միայն մի փոքրիկ գրադարան... Ամենանոր հրատարակված գիրքն այնտեղ կրում էր 1920 թվականը և դաշնակցական պետական նիշը: Իսկ եթե կային նոր հրատարակություններ, ապա դրանք իրենց վրա կրում էին արտասահմանյան քաղաքների անուններ: Իսկ լրագրեր չկային բոլորովին, լրագիր կարդալը կտրուկ արգելված էր մեզ: Ի՞նչ էր կատարվում մեզանից մի քանի քայլ այն կողմ, քաղաքում՝ մենք չգիտեինք: Առավել ևս չգիտեինք, թե ինչ էր կատարվում մեր մայրաքաղաք Երևանում, չասած ավելի հեռվի՝ Ռուսաստանի և Մոսկվայի մասին:

Ինձ համար, որ եկել էի ոչ թե Արևմտյան Հայաստանի որևէ լեռնային հետամնաց գյուղից, անգրագետ և անուսում, այլ ծնվել և մեծացել էի Արևելյան Հայաստանի կուլտուրական օջախներից մեկում՝ Ալեքսանդրապոլում, և ինձնից ներկայացնում էի ժամանակից շուտ մեծացած երեխայի ոչ այնքան օրինաչափ տիպ, Կազաչի Պոստը նման էր մի ջրհորի, ուր նետել էր ինձ սովի վախը: Բայց այնտեղ, ինձնից բացի, նետել էին նաև հազարավոր ուրիշներին, և առանց ամոթի զգացումի խաբում, այլասերում էին գիշեր-ցերեկ: Ես մտածում էի ոչ միայն իմ, այլև նրանց մասին: Այդպես շարունակել չի կարելի…

Առաջին շրջանում դեռ միայնակ, ես աշխատում էի մտերիմ խոսակցությունների մեջ բաց անել իմ ընկերների աչքերը, թեկուզ և ինքս էլ կարիք ունեի շատ բան հասկանալու, սովորելու: Որոշ ժամանակ անց գործը հեշտացավ նրանով, որ ես կարողացա ճարել հատուկենտ լրագրեր: Նկատեցի, որ հակառակ արգելքի, ուրիշներն ևս, գլխավորապես տղաները, որոնք կազմում էին Կազաչի Պոստի որբության անհամեմատելի փոքրամասնությունը, ճարում և կարդում էին լրագրեր:

Ինձ համար անձնապես, որպես «ստաժավոր» բանաստեղծի, հետաքրքիր էին նաև լրագրերի գրական նյութերը: «Խորհրդային Հայաստանը» երբեմն-երբեմն տպագրում էր բանաստեղծություններ կամ ֆելիետոններ: Տպագրվում էր Շուշանիկ Կուրղինյանը, որի «Արշալույսի ղողանջներ» ժողովածուին ես վաղուց էի ծանոթ, տպագրվում էր Փալանդուզ Մկոն, որին գիտեի «Խաթաբալա» երգիծաթերթից: Հանդիպում էր նաև մի նոր անուն՝ Ալազան, իսկ մի անգամ կարդացի նաև Նաիրի Զարյանի բանաստեղծությունը: Նրան ես գիտեի, նա Կազաչի Պոստից էր: Այդտեղ էր նաև Գուրգեն Մահարին: Երկուսի մասին էլ հայտնի էր, որ «փանաստեղծություն կքրեն»:

Մահարին ու Զարյանը նույնպես եղել էին որբանոցներում, բայց այժմ դուրս էին գրվել որպես չափահաս տարիքի հասածներ, աշխատում և ապրում էին այնտեղ՝ որպես ոչ թե որբեր, այլ որպես մարդիկ:

Ճիշտն ասած, պարտադիր չէր կարդալ նրանց ոտանավորները՝ համոզվելու համար, որ նրանք «փանաստեղծ» են: Չնայած իրենց հույժ պրոզաիկ աշխատանքին՝ պահեստիհաշվապահներ, նրանք ունեին խիստ պոետական, համենայն դեպս արտասովոր արտաքին: Նույնիսկ այդ միջավայրում, որտեղ հավաքվել էին հայկական բազմաթիվ շրջաններում ծնված և իրենց ֆիզիոլոգիական տիպերով խիստ բազմազան պատանիներ, այդ երկու սկսնակ պոետներն առանձնանում էին իրենց կերպարանքով:

Մահարին ուներ այնքան առատ մազեր, որ նրա դեմքը, դրանց համեմատությամբ, թվում էր գլխի մի երկրորդական դետալ: Ունենալ այդքան մազեր և չլինել բանաստեղծ՝ առնվազն անտակտություն կլիներ նրա կողմից: Նրա մազերը, սակայն, իրար վրա ծանրորեն նստած չէին, այլ բոլորը, առանձին-առանձին, զանազան կողմեր ձգված, կարծես սարսափահար փախչում էին նրա գլխից: Եվ որպեսզի գլուխը չհասներ նրանց ետևից և բռներ, նրանք փախչում էին ոլոր-մոլոր ճանապարհներով, դրա հետևանքով դառնալով խուճուճ: Բայց նույնիսկ այդ խուճուճային-

խուճապային փախուստի մեջ ոչ մի մազ չէր շփվում մյուսների հետ, յուրաքանչյուրը ցցվել էր անհատական կերպով՝ ինչպես սպառնական դիրք բռնած ոզնու փշեր: Մազերից ներքև, դեմքի վրա, իշխում էր մեծահատոր քիթը, իսկ քթի տակ, բանիմաց ժպիտով սեղմվել էր նրա բերանը: Թվում էր, թե դեմքը տեղյակ է գլխի վրա տեղի ունեցող իրադարձություններին և հետևում է դրանց ու ծիծաղում է մազերի վրա, որոնք տասնյակ հազարավոր Պրոմեթեոսների նման գամված էին այնտեղ, միայն այն տարբերությամբ, որ այդ Պրոմեթեոսները, համարյա առանց բացառության, Մահարու հիսնամյակի մոտերքը ազատագրվեցին:

Զարյանն աչքի էր ընկնում իր դեմքի կրկնակի արտահայտությամբ: Մի կողմից նա հավիտենապես զարմացած էր և ինչի էլ որ նայեր, թվում էր, թե հարց էր տալի իրեն.— «ջո՞ւր… մի՞թե ջուր»... Իսկ մյուս կողմից, նրա դեմքի վրա կար պաթետիկ-հաստատական արտահայտություն.— «ջո՛ւր... այո, ջո՛ւր»…

Լրագրերը, որտեղ ես կարդում էի գրական նյութեր, չէին թողնում այն տպավորությունը, թե սկսվել է մի նոր գրականություն: Դրա պատճառը, իհարկե, այն չէր, որ եսդրանք ճարում էի կցկտուր, կարդում էի ոչ բոլոր տպագրված գրական նյութերը: Նոր գրականությունը, իրոք որ, դեռ չէր սկսվել: Թերթերը պարզապես տպագրում էին ընթացիկ «գրական նյութեր»՝ ինչպիսիք միշտ էլ տպագրվել են մամուլում, այն տարբերությամբ միայն, որ ներկա դեպքում անծանոթ և նոր անունները դրում էին դեռ թույլ, իսկ ծանոթ անունները՝ արդեն թույլ...

Եվ հանկարծ, ինչպես շռնդալի նվագ լռության մեջ, հնչեց «Երեքի դեկլարացիան»…

Հունիսյան մի օր ես գնացի Կազաչի Պոստի փոքրիկ հեռախոսակայանը, որը բաղկացած էր մի կոմուտատորից՝ մի աշխատակցով: Հերթապահում էր իմ ընկեր Խորենը՝ Մահարու կրտսեր եղբայրը: Նա խիստ հուզված էր, ավելի ճիշտ՝ ոգևորված: Իմ ներս մտնելուն պես նա հարցրեց.

— Երեքի թեքլարացիան կարդըցա՞ր:

— Ի՞նչ դեկլարացիա,— չհասկացա ես:

Զգուշաբար դռնից դուրս նայելուց հետո նա քաշեց դարակը և հանեց այնտեղից «Խորհրդային Հայաստան»-ի մի համար:

— Առ կարդա, Քուրքեն ի տվե:

Եվ ես այդտեղ կարդացի այն փաստաթուղթը, որն իր վիճելի, ավելին՝ մերժելի մի շարք դրություններով հանդերձ, դարձավ խորհրդային հայ գրականության սկզբնավորության փաստաթուղթը: Եվ դրա տակ ես նորից տեսա «Կապուտաչյա Հայրենիք»-ի հեղինակի անունը:

— Եղիշե Չարենց...— կարդացի ես բարձրաձայն:

— Քուրքեն կասի՝ դա ամենալավ փանաստեղծն ի:

Ես կարդացի երկրորդ ազգանունը՝ Ազատ Վշտունի: Այդ արդեն ծանոթ էր ինձ իր բանաստեղծություններով:

— Քուրքեն կասի՝ դա մեծեն պստիկ, փայց պստիկեն մեծ փանաստեղծն ի:

— Գևորգ Աբով,— կարդացի ես երրորդ ազգանունը:

— Քուրքեն կասի՝ դա պստիկ բանաստեղծն ի:

Ես կարդացել էի նաև այդ «պստիկ» բանաստեղծի «Միայն կինը» ժողովածուն, որն ինձ շատ դուր էր եկել իր արտասովոր, նոր և թարմ տաղաչափությամբ, իր ինքնատիպ ոճով:

Իսկ Չարենցին չէի կարդացել...

Ինչպես Հայաստանում և Անդրկովկասի հայկական շրջաններում, այնպես էլ մեր Կազաչի Պոստում Երեքի դեկլարացիան առաջացրեց անսովոր հուզում, բորբոքեց կրքեր. տեղիք տվեց բազում վիճաբանությունների: Գրականության հարցերը, ոչ միայն անցողիկ շրջանում, երբ դրանք նետված էին ետին պլան, այլև ընդհանրապես առաջին անգամ հայ գրականության գոյությունից ի վեր, դարձան ժողովրդական ամենալայն խավերի կենսական շահագրգռության և քննության նյութ: Այդ տեսակետից դրական դեր խաղացին նաև դեկլարացիայի մերժելի դրույթները: Եթե դեկլարացիան ասած լիներ միայն անվիճելի և հանրածանոթ ճշմարտություններ, ո՞վ գիտե, կառաջացնե՞ր այնպիսի ակտիվություն գրական հարցերի նկատմամբ, ինչպիսին առաջացրեց: Երեքին ոչ միայն հավանություն էին տալիս, այլև հայհոյում: Դեկլարացիայի շուրջը վիճելիս, մարդիկ հասնում էին անձնական վիրավորանքների և, երբեմն, ընդհանուր լեզու չգտնելով, բազմամյա ընկերները խզում էին միմյանց հետ իրենց կապերը…

Եվ ամեն տեղ, ամենից առաջ, հնչում էր նույն անունը՝ Չարենց, Չարենց, Չարենց... Դանդաղել այլևս անկարելի էր, հարկավոր էր կարդալ նրան, գաղափար կազմել, թե ով էր այդ Չարենցը: Այժմ ես անչափ զղջում էի, որ երկու տարի առաջ չէի հափշտակել Գևորգի ցուցափեղկից «Կապուտաչյա հայրենիք»-ը:

Նույն անխուսափելի «Քուրքենի» միջոցով մենք ճարեցինք և կարդացինք Չարենցի «Դանթեական առասպել», «Երեք ռադիպոեմներ», «Սոմա» և «Ամբոխները խելագարված» գրքույկները: Բայց մի՞թե կարելի է ասել՝ «կարդացինք»: Մենք լափեցինք, մենք առանց ծամելու, առանց որոճալու, խոշոր պատառներով կուլ տվեցինք դրանք, նույն կերպ վերընթերցեցինք մի քանի անգամ իրար ետևից, որից հետո միայն ընդունակ դարձանք ուշադիր և մանրամասն կարդալու: Եվ դրանք շշմեցրին մեզ՝ թե՛ իրենց ամբողջությամբ և թե՛ մանրամասնություններով: Մենք, ժամանակից շուտ մեծացած և շատ կարդացած պատանիներս, հնարավորություն ունեինք մտովին համեմատելու նրան բոլոր մյուս հայ գրողների հետ և տեսնելու, թե ինչպիսի նորարար է մուտք գործել հայ գրականություն…

Կազաչի Պոստի գրական երեկույթներում սկսեցին հնչել Չարենցի բոցաշունչ խոսքերը: Իհարկե, դժվար չէր կռահել, որ Չարենցը մեզ համար ոչ միայն նորարար բանաստեղծ էր, որը պարզապես նման չէր մինչ այդ եղած մյուսներին, այլև, առաջին հերթին, հեղափոխական բանաստեղծ, անտանելի կյանքը վերափոխող բանաստեղծ: Իսկ մի՞թե որբանոցային մեր կյանքը՝ ներփակ, դրսի աշխարհից կտրված, կիսաքաղց, անազատ, նույնպես անտանելի չէր: Չարենցը, ուրեմն, մեր բանաստեղծն էր, մեր բողոքը, մեր պայքարը:

Հեռախոսակայանում ավելի և ավելի հաճախ էր Խորենն ուրախացնում ինձ իր դիմումով.

— Առ կարդա, Քուրքեն ի տվե…

Երեքի դեկլարացիան, կախարդական գավազանի պես, միանգամից կյանքի կոչեց նոր գրականությունը: Կարծես ամեն ինչ կազմ ու պատրաստ, սպասում էր հրահանգի: Հնչեց հրահանգը, և թերթերը, նախկին հատուկենտ «գրական նյութերի» փոխարեն, սկսեցին իրար ետևից ու հաճախակի զետեղել բանաստեղծություններ, գրական հոդվածներ, ինֆորմացիաներ…

Դեկլարացիայից մի երեք շաբաթ հետո, մի անգամ, Խորենն ինձ հարցրեց, թեև ավելորդ էր այդ հարցը.

— Դու «Երեքի փյուլեթեն» կարդըցե՞ր ես:

Եվ ժպտաց իր առավելության գիտակցությունից,— նա կարդացել էր:

— Առ կարդա, Քուրքեն ի տվե:

Մինչև այժմ ես կարդացել էի Երեքի այն գրվածքները, որոնք գրված էին դեկլարացիայից առաջ: Իսկ Բյուլետենում զետեղված էին նրանց նոր բանաստեղծությունները: Դրանք ունեին ծրագրային, սկզբունքային նշանակություն: Փոքրիկ թերթը, երկու էջից բաղկացած, ես կարդացի մի քանի անգամ և անգիր արեցի համարյա ամբողջը: Խորենը, աչքերով հետևելով, թե որ բանաստեղծությունն եմ կարդում տվյալ րոպեին, անում էր կոմենտարիաներ.

— Քուրքեն կասի՝ դա ամենալավ փանաստեղծություն ի:

— Կասի՝ լավեն վատն ի, վատեն լավն ի:

— Կասի՝ ոչինչ:

Երեքի բյուլետենը Կազաչի Պոստի կյանքում խաղաց կարևոր դեր՝ ոչ միայն գրական տեսակետից: Մի անգամ, հարկ եղած նախապատրաստությունից հետո, ես ասացի Խորենին.

— Եկ մենք էլ հրատարակենք բյուլետեն:

— Քրակա՞ն:

— Այո, գրական: Նրանք դաշնակցական քարոզ են կարդում Կազաչի Պոստում, իսկ մենք կկարդանք կոմունիստական…

Մի քանի գիշեր, թաքնվելով խուզարկու աչքերից, մենք կազմեցինք մեր Երկուսի բյուլետենը: Պատի լրագրի ձևով դա երկու օրինակ արտագրեց Խորենի եղբայր Սուրենը և մի օր, շատ վաղ առավոտյան, մենք այն փակցրինք դպրոցների միջանցքներում:

Բյուլետենն ունեցավ մեծ հաջողություն: Այնտեղ կային և՛ գրական նյութեր, և՛ Կարլ Մարքսի տասը տողանոց կենսագրությունը, և՛ ինֆորմացիա Կազաչի Պոստի կյանքից…

Բյուլետենի կյանքը տևեց միայն մի ժամ, բայց այդ մի ժամում դա կարդացին հարյուրավոր աշակերտներ, մինչև որ դաշնակ ուսուցիչներից մեկն այն չպոկեց պատի վրայից: Բյուլետենի մյուս օրինակը հաջողեցրինք պոկել մենք ինքներս և պահել:

Մի քանի օր հետո մենք նույն տեղերում փակցրինք Երկուսի բյուլետենի երկրորդ համարը: Դրա հաջողությունը գերազանցեց նախորդին, բայց և քիչ մնաց, որ առիթ դառնար Կազաչի Պոստից մեր վտարվելուն: Հակառակ մեր ձեռք առած նախազգուշական միջոցների, պարզվեց դրանց հեղինակների ով լինելը:

Կազաչի Պոստ ես ընդունվել էի ոչ թե իմ Ալեքյան ազգանունով, որը, չգիտես ինչու, ինձ դուր չէր գալիս, այլ պապիս անունով՝ Հարությունյան Մկրտիչ: Բյուլետենում ես այդ ազգանվան առաջին երեք տառերից և իմ անվան առաջին տառի անունից՝ «մեն», կազմել էի իմ ծածկանունը՝ Հարմեն: Ահա այդ Հարմենն էր, որն ընթերցողների կողմից ընկալվելով որպես սխալ գրված Արմեն, հետագայում դարձավ իմ գրական, ապա նաև քաղաքացիական անունը:

Երկար ժամանակ չէր կարողանում իր համար ծածկանուն ընտրել Խորենը: Բայց մի անգամ, վերջապես, երկու ժամ լուռ մտածելուց հետո, նա բացականչեց.

— Ռադիո…

Հազիվ թե Պոպովն այդքան ուրախացած լիներ ռադիոյի գյուտն անելիս: Խորենը դարձավ Խորեն Ռադիո: Ճիշտ է, հետագայում ոմանք նրան անվանում էին Խորեն Անթել Հելազիր, բայց դա, ինչպես հայտնի է, փաստորեն նույնն է:

Հազիվ թե որևէ մեկը գլխի ընկներ, որ Բյուլետենների Հարմենը կամ Ռադիոն մենք էինք: Բայց, ով պատանեկան ոգևորություն և մասամբ էլ փառամոլություն: Մեր թերթի հաջողությունից հուզված, ինքներս մատնեցինք մեզ:

Մեզ հաջողվեց փրկել նաև Բյուլետենի երկրորդ համարի մի օրինակը: Տարիներ հետո ես դրանք նվիրեցի Կուսպատին:

Բյուլետեններից սկսվեց մեր այն աշխատանքը, որը մեզ՝ մի խումբ սկաուտներիս, հանգեցրեց կոմերիտական բջիջ կազմակերպելու մտքին: Բջիջը կազմակերպվեց, և ընտրվեցի դրա քարտուղարը:

Զգուշության համար մենք բջիջի աշխատանքները տանում էինք բանավոր, իսկ բյուլետենը, դարձնելով զուտ գրական, սկսեցինք հրատարակել «ժուռնալի» ձևով, տետրակի չորս էջի վրա: Այժմ դրա առաջին համարը կոչվում էր Երեքի բյուլետեն, իսկ երկրորդը՝ Չորսի: Երրորդ և չորրորդ աշխատակիցները քաղաքից էին, իմ նախկին դասընկերները, որոնց հետ ես այժմ նորից վերահաստատել էի իմ կապերը: Դրանցից մեկը Օտար կեղծանունով, այժմ մանկավարժական ճակատի աշխատող Հակոբ Մխիթարյանն էր, իսկ մյուսը՝ Հ-Այ ծածկանունով, հետագայում Պրոֆմիությունների խորհրդի նախագահ Հակոբ Այվազյանը:

Այդ Բյուլետենները նույնպես, որոնք ես էի խմբագրում և արտագրում, հանձնել եմ Կուսպատ:

Նոյեմբերի վերջերին, մի օր, երբ ես գնացի հեռախոսակայան, Խորենն արտակարգ տրամադրության մեջ էր:

Ես հարցական և խիստ հետաքրքրված նայեցի նրան: Նա, մեկնելով ինձ քառածալ օրաթերթի դիրքով ինչ-որ ժուռնալ, ասաց.

— Առ կարդա, Քուրքեն ի գրե:

Դա «Մուրճ» ժուռնալի առաջին համարն էր: Ճիշտ է, ամբողջ ժուռնալը «Քուրքենը» չէր «քրե», բայց այնտեղ նյութ ուներ նաև նա:

Խիստ հասարակ թղթի վրա տպագրված, անպաճույճ արտաքինով, բարակ ժուռնալը, այնուամենայնիվ, ինձ վրա թողեց արտակարգ տպավորություն: Դեռ այն բաց չարած, ես զգացի, որ իմ ձեռքում բռնել եմ նոր գրականության առաջին, պատմական հրատարակություններից մեկը: Բայց մի՞թե միայն ես էի զգում այդ: «Մուրճը» մարդկանց վրա թողեց շռնդալի տպավորություն:

Իհարկե, ընթերցողներից նրանք, ովքեր գիտեին Թումանյան, Իսահակյան, Ռաֆֆի, Շիրվանզադե, չէին կարող չտեսնել, թե որքան անարվեստ և պարզունակ են այնտեղ զետեղված ոտանավորները և պատմվածքները: Նույնիսկ ինձ նման անչափահասը ներողամիտ ժպիտով էր նկատում ու նշում հեղինակների կատարած տարրական սխալները՝ ոչ միայն ոճի ու տաղաչափության, այլև լեզվի և

անգամ տարրական քերականության: Բայց դրանք չէին կարևորը, այլ այն, որ ժուռնալի բոլոր էջերից բուրում էր թարմության, նորության շունչը:

Մահարու բանաստեղծությունը կոչվում էր «Պոետ տանկոն»: Իսկ թե ինչու համար՝ ես այն ժամանակ չհասկացա: Տանգոն, ինչպես հայտնի է, պար է, որն այդ տարիներին ուներ վատ համարում: Ինչպե՞ս կարող էր պրոլետարական գրողը գովերգել այդ պարը և տալ դրան այնպիսի ինտիմ և մանավանդ ամպադղորդ ածականներ:

Միայն հետագայում պարզվեց, որ հեղինակն իրար էր շփոթել տանգո և տանկ բառերը: Ոչ թե պարն էր ուզեցել նա գովերգել, այլ սպառազինությունը և դրա միջոցով՝ խորհրդային կարգերի հզորությունը:

Մի ամիս հետո մենք «Քուրքենից» ստացանք «Մուրճի» երկրորդ համարը: Այլևս կասկած չկար, դրսում սկսվել էր գրական մեծ գործ…

Շարունակել մնալ Կազաչի Պոստի ջրհորում այլևս անտանելի էր ինձ համար: Դրսում լիաթոք բաբախում էր խորհրդային կյանքը, այդ թվում նաև գրական կյանքը: Ժողովրդի նյութական վիճակն զգալի բարելավվել էր, ծնողները կամ ազգականները որբանոցներից վերցնում էին երեխաներին, իսկ շատ ուրիշները, չափահաս դարձած, ամուսնանում էին միմյանց հետ և գնում շարունակելու իրենց ավերված օջախը, տոհմը, ժողովուրդը:

1923 թվի փետրվարի մի օր ես հրաժարական ներկայացրի սկաուտապետին և դուրս գրվելով սկաուտանոցից, ընդմիշտ հրաժեշտ տվեցի Կազաչի Պոստին:

Չեմ կարող ասել, թե ինձնից ազատվելը մեծ թեթևություն պատճառեց սկաուտապետին: Խորհրդային իշխանության ամրանալու և որբերի քաղաքական ակտիվության աճման հետևանքով, որի մեջ զգալի աշխատանք ուներ նաև մեր բջիջը, Կազաչի Պոստում կոմերիտականներս արդեն գործում էինք միանգամայն լեգալ: Չնայած նրան, որ ամերիկացիները պայման էին դրել պետության առաջ՝ քաղաքական չեզոքության մեջ պահել որբերին և չխառնվել որբանոցների «ներքին գործերին», խորհրդային կարգերը, առանց ուշադրություն դարձնելու Կազաչի Պոստի շուրջը ցերեկով պահակող սկաուտներին և գիշերով պահակող Ամերկոմյան հատուկ միլիցիայի միլիցիոներներին, մուտք էին գործել և հեղեղել չորս կողմը: Այդ պայմաններում մի կոմերիտականով ավել կամ պակաս՝ ի՞նչ նշանակություն ուներ:

Սկաուտական սիստեմը և ընդհանրապես ամերիկացիների բոլոր ծրագրերն ու հույսերը ի դերև էին ելել, նրանք պատրաստվում էին քոչել-գնալ իրենց Ամերիկան…

Դուրս գալով ամերիկյան Կազաչի Պոստի սահմանից, ես լիաթոք շունչ առա, զգալով, որ սկսվում է իմ կյանքի մի նոր շրջանը…

ՄՈՒՏՔ

Ալեքսանդրապոլը կամ, ինչպես անվանվում էր դա կրճատ ձևով՝ Ալեքպոլը, 1923 թվին ապրում էր ամեն տեսակետից բուռն վերելք: Ճիշտ է, իմ սկաուտ ժամանակ ես երբեմն-երբեմն լինում էի քաղաքում, բայց խիստ քիչ ժամերով, իմ տրամադրության տակ եղած ժամանակն օգտագործելով տարբեր որբանոցներ ընկած իմ եղբորն ու քրոջը տեսնելու, տանը իմ մյուս եղբորը, մորս և տատիս հանդիպելու և ապա սլանալու համար կոմերիտմիության քաղգավկոմ՝ հանձնելու համար մեր

բջիջի արձանագրությունները և ստանալու համար աշխատանքի նոր ծրագիր ու ցուցմունքներ, քաղաքական գրականություն: Շուրջս նայելու և քաղաքը դիտելու ժամանակ չկար:

Եվ միայն հիմա էի ես տեսնում. դա այն քաղաքը չէր, որից ես բաժանվել էի մոտ տասն ամիս առաջ: Փողոցներում չկար երբեմնի թշվառությունը: Ճիշտ է, այնտեղ դեռ շրջում էին բավական թվով անապաստան երեխաներ, բայց նրանք այլևս հաց չէին փախցնում վաճառողների կամ գնորդների ձեռքից և դրանք անգթորեն չէին ծեծում նրանց, ընդհակառակը, իրենք էին կերակրում և համոզում մտնել պետական մանկատներ:

Բացվել էին պետական մանկատներ, բացվել էին դպրոցներ, որոշ չափով կարգի էր ընկել առևտուրը, խանութներում քիչ-միչ կարելի էր ճարել արդյունաբերական ապրանքներ, շուկայում՝ գյուղատնտեսական մթերքներ:

Մինչև 1920 թիվն Ալեքսանդրապոլում լույս էին տեսել երեսունից ավելի թերթեր և պարբերականներ՝ բոլորը քսաներորդ դարում, այսինքն՝ քսան տարվա ընթացքում: Դրանցից շատերը տևել էին շատ կարճ՝ տեղի տալով մի այլ կարճ կյանքի: Դրանով պիտի բացատրել անունների համեմատաբար առատությունը: Իսկ այժմ այնտեղ տպագրվում էր «Շիրակի ռանչպար» ոչ-ամենօրյա թերթը, փոքրադիր, երկու էջից բաղկացած: Այնուամենայնիվ դա իսկական, տպագիր թերթ էր, և որքա՛ն լավ կլիներ զետեղել այնտեղ որևէ բանաստեղծություն…

Ես ոչ միայն երազել էի այդ մասին, այլև արել էի մի գործնական փորձ: Դեռևս Կազաչի Պոստից այդ թերթին ուղարկել էի մի ոտանավոր՝ ստորագրելով Հարմեն ծածկանունով: Սրտատրոփ սպասելով դրա տպագրությանը և հարձակվելով թերթի յուրաքանչյուր նոր համարի վրա, ես, վերջապես, մի օր կարդացի... Կարդացի «Փոստարկղ» բաժնում հետևյալը.

«Արմենին: Ձեզ մոտ գրաբարը ո՞ր դասարանից են անցնում»:

Ես հասկացա: Սկաուտանոցում շփվելով համարյա միայն արևմտահայ պատանիների հետ, ես ակամայից ընկել էի նրանց լեզվի ազդեցության տակ: Փոստարկղի հեղինակը, թերուսության հետևանքով արևմտահայերենը շփոթելով գրաբարի հետ, հարմար էր գտել տափակ սրախոսությամբ իմ մեջ սպանել թերթին աշխատակցելու որևէ նոր փորձ անելու ցանկություն: Եվ դրանից հետո ամեն անգամ տհաճությամբ էի ձեռք վերցնում այդ թերթը, կարծես այնտեղ նորից պիտի տպված լիներ ինձ ուղղված հարցը, որի ինձ վերաբերվելու մասին, ի դեպ ասած, ոչ ոք չիմացավ՝ բացի ինձանից:

Հազիվ մեկ-երկու ամիս էր, ինչ ես դուրս էի եկել Կազաչի Պոստից, երբ այդ թերթը փակվեց և դրա փոխարեն սկսեց հրատարակվել «Բանվոր» թերթը՝ ավելի մեծ դիրքով, չորս էջի վրա, շաբաթական երեք անգամ: Այդ արդեն մեծ թերթ էր, լայն հնարավորություններով լի և, իհարկե, ավելի հաճախակի պիտի տպագրեր գրական նյութեր: Իսկ անձնապես ինձ համար դա մի այնպիսի թերթ էր, որի հետ այլևս չունեի տհաճ հիշողություն:

Կազաչի Պոստի հետ իրենց կապերը խզել և քաղաքում էին ապրում նաև Մահարին ու Զարյանը: Նրանք արդեն բավական անուն հանած բանաստեղծներ էին: Եվ ահա, դեռ նոր էր սկսել հրատարակվել «Բանվորը», երբ նրանք երևացին դրա էջերում:

Ես և Խորեն Աճեմյանը, այսինքն՝ Ռադիոն, նույնպես, որոշեցինք աշխատակցել թերթին: Ճիշտ է, դա առայժմ ծրագիր չէր, այլ երկչոտ ցանկություն կամ նույնիսկ միայն երազանք: Բայց մենք գիտեինք, որ վերջիվերջո փորձելու ենք: Եվ քանի որ երկուսս էլ քաշվում էինք, ապա վճռեցինք գործել համատեղ:

Գրական էջերը տպվում էին կիրակի օրերը, իհարկե, ոչ ամեն կիրակի: Այդ օրերին ես շուտ էի դուրս վազում տնից՝ թերթ գնելու համար:

Մի այդպիսի օր, երբ ես բաց արեցի թերթը, չկարողացա հավատալ իմ աչքերին: Մահարու և Զարյանի հետ միասին ես այնտեղ տեսա նաև Խորեն Ռադիոյի անունը՝ «Գյումրու վաղը» բանաստեղծության տակ ստորագրված... Առանց ինձ ասելու, առանց ինձ հետ համաձայնեցնելու, վերցրել և սուսիկ-փուսիկ մտել էր հայ գրականության մեջ…

Աշխարհը գլխիս մթնեց: Միասին հրատարակել Բյուրլետեններ, միասին երազել տպագիր մամուլի մասին, և հանկարծ նա բարձրանա Պառնաս և ինձ թողնի ստորոտո՞ւմ…

Քիչ հետո ես տեսա դավաճանին: Նա գալիս էր նույնիսկ ոչ թե ուրախությունից անկեղծորեն փայլող դեմքով, այլ քարթու տպագրվողի անտարբեր արտահայտությամբ, պատրաստվելով արժանապատվորեն ընդունելու իմ, ոչ թե նույնպես գրողիս, այլ ընթերցողիս շնորհավորանքները... Բայց, փոխանակ դրա, ես թերթը մեկնեցի նրան և բացատրություն պահանջեցի:

— Անակընկալ և հապճեպ փան էր եղածը,— արդարացավ նա:— Իրիկուն Քուրքեն և Հայաստան (դա Նաիրու անունն էր) ինձի ըսին, որ քրական էջ կիսատ ի մնացե, ազատ տեղ կա: Ես անակընկալ ու հապճեպ քրի այդ փանաստեղծություն, տվի…

Ես բաժանվեցի նրանից և առանձնանալով քաղաքային սարսափելի այգու մի անկյունում, սկսեցի մտածել: Ես զայրացած էի: Ոչ, այլևս համբերել չէր կարելի, ինձ ևս անհրաժեշտ էր գրել «անակնկալ և հապճեպ» որևէ բան, տալ թերթին: Բայց ի՞նչ գրել…

Հակառակի պես ոչինչ չէի գտնում գրելու: Զայրույթը խանգարում էր ոգևորվել, ներշնչվել: Ես, որ «մուսայի» թելադրմամբ կարող էի մի ժամում գրել չորս բանաստեղծություն, այժմ կանգ էի առել-մնացել: Բայց, ոչինչ, եթե ոտանավորը դուրս չի գալիս ինքնիրեն, ապա նրան հարկավոր է դուրս քաշել՝ պոզերից ձգելով, ինչպես կամակոր այծի:

Եվ այսպես, ինչի՞ մասին գրել: Հրմ, «Գյումրու վաղը»... Իսկ ես կգրեմ ավելի մեծ մասշտաբով, օրինակ, տիեզերքի մասին…

Բայց տիեզերքն ինձ տվեց միայն կես ժամվա անպտուղ երկունք: Մի քիչ չփոքրացնե՞լ արդյոք սահմանները, գրել, ասենք թե, միայն աշխարհի մասին…

Բայց, աշխարհը նույնպես, չարդարացրեց իր վրա դրված իմ հույսերը:

Ես սահմանափակվեցի Խորհրդային Միությունով: Բայց դա ևս, մեծ թեմա էր՝ արժանի մի շարք պոեմների, իսկ ես գրելու էի ընդամենը մի բանաստեղծություն:

Շարունակ ավելի նեղացնելով աշխարհագրական սահմանները, ես, վերջապես, հասա Անդրկովկաս: Կանգ առ, այլևս ոչ մի քայլ, այլապես մեկ էլ տեսար՝ դու էլ ես հասել Գյումրի և երգում ես դրա վաղը…

Որքան էլ մկկաց իմ այծը, որքան էլ համառեց շեմքի վրա, բայց ես, վերջապես, դուրս քաշեցի նրան: Ռադիոյի բանաստեղծության տակ, նրա անվան կողքին, փակագծի մեջ, հիշված էր հեղինակի տարիքը՝ «16 տարեկան»: «Երևակայո՜ւմ ես... Իսկ մե՞նք քանի տարեկան ենք՝ տասնվեց և կես…

Ավարտելով իմ «Անդրկովկաս» բանաստեղծությունը, ես այն ստորագրեցի՝ Մկրտիչ Արմեն, 17 տարեկան:

Այժմ մնում էր ամենադժվար մասը՝ այնպես տանել ոտանավորը խմբագրություն, որ ոչ ոք չտեսներ ինձ, չնայեր երեսիս…

Վաղ առավոտյան, ժամը 7-ին, ես մտա խմբագրության շենքը՝ հաստատ համոզված լինելով, որ դեռ ոչ ոք չի լինելու այնտեղ: Եվ, իրոք, ոչ ոք չկար՝ բացի հավաքարարուհուց, որը մաքրում էր սենյակները:

— Մի՞թե ոչ ոք չկա,— զարմացա ես, որ խմբագիրը նստած չէ այնտեղ գիշերվա ժամը չորսից:— Որ այդպես է, ես նյութը կթողնեմ նրա սեղանի վրա, իսկ ինքս կանցնեմ…

Եվ անէացա:

Երկու օր հետո, երբ լույս տեսավ հերթական համարը, ես գնեցի այն, բաց արեցի և միանգամայն վստահ նայեցի երրորդ էջին, որտեղ գրական նյութերն էին տպվում: Լիակատար և անխառն հիասթափություն.— իմ ոտանավորը չկար…

Ինչպե՞ս կարող էր պատահել այդպիսի բան... Անդրկոկասի մասին... Ռադիոյի ոտանավորից ավելի ընդարձակ՝ թե իր թեմայով և թե նույնիսկ ծավալով…

Բայց ուրախությունն իսկույն ողողեց իմ սիրտը.— չէ՞ որ այսօր կիրակի չէ…

Կիրակի օրը թերթը տպվեց ճիշտ ժամանակին: Եվ վաճառքի ելավ նույնպես ճիշտ ժամանակին: Ծավալը, դիրքը, շրիֆտը, ամեն ինչ նորմալ էր: Միակ աննորմալ բանն այն էր, որ իմ բանաստեղծությունը դարձյալ չկար այնտեղ…

Ո՜վ պատանեկան լավատեսություն... Իմ դեմքի մռայլ արտահայտությունը տևեց ընդամենը մի ժամ: Ապա ես ներողամտորեն ժպտացի ինքս ինձ վրա: Ո՞վ է տեսել, որ թերթն ամեն կիրակի գրական էջ տա... Բայց անցավ նաև հաջորդ կիրակին, անցան էլի մի քանի կիրակիներ, բայց իմ ոտնավորը չկար: Միակ մխիթարությունն այն էր, որ գրական էջ ընդհանրապես չկար:

Բայց, ինչ էլ որ լիներ, ես կորցրի իմ հավատը և շարունակ ավելի և ավելի քիչ էի հուսում, թե կտպագրվեմ, մինչև որ բոլորովին դադարեցի թերթի առաջին գնորդը լինելուց:

Մի կիրակի օր, կեսօրից հետո, երբ ես տանը ճաշում էի, մեր բակում լսեցի իմ ընկեր Հակոբ Այվազյանի ձայնը, որ ինձ էր կանչում: Նայեցի լուսամուտից:

— Ներս ինչո՞ւ չես գալիս,— զարմացա ես:

Փոխանակ պատասխանելու, նա գրպանից հանեց ծալծլված մի թերթ, բացեց և պարզեց դեպի լուսամուտը... Ես ինձ լուսամուտից դուրս չնետեցի ոչ թե այն պատճառով, որ մեր բնակարանը երկրորդ հարկումն էր, այլ որովհետև լուսամուտն ուներ վանդակաճաղեր:

Ես սրարշավ վազեցի բակ և խլեցի թերթը: «Անդրկովկաս»: Մկրտիչ Արմեն: 17 տարեկան: Կասկած չկար, այդ ես էի…

Դա 1923 թվի հունիսի 17-ն էր, իմ գրական կյանքի առաջին օրը... Ինչ որ եղել էր դրանից առաջ՝ «Դեպի լույս», «Բյուլետեն»-ներ, «Փարոս», «Պատկոմ», «Նոր սերունդ»՝ դա ձեռագիր և խմորատիպ «նախապատմություն» էր…

Հետևյալ օրն իսկ ես խմբագրություն տարա իմ երկրորդ բանաստեղծությունը՝ «Երկաթները»: Այժմ արդեն, երբ ես ունեի տպված բանաստեղծություն, այսինքն՝ անժխտելի «հանցանշան», իմ նոր

ոտանավորը տարա ոչ թե ժամը 7-ին, այլ՝ 6-ին: Եվ նորից անցան օրեր, երկար օրեր, և նորից չտպվեց իմ բանաստեղծությունը: Եվ, չնայած իմ առաջին փորձին, ես նորից հուսահատվեցի: Ինձ նույնիսկ չուրախացրեց այն, որ երկրորդ բանաստեղծությունից որոշ ժամանակ անց ներկայացրած իմ մի փոքրիկ հոդվածը տպվեց համարյա իսկույն:

Խմորատիպ մամուլը, որի հետ ես մեծամտորեն համարում էի իմ հաշիվներն արդեն փակված, չարախինդ քմծիծաղով կարծես կանչում էր ինձ. «Եկ այստեղ, դու մերն ես, մերն էլ կմնաս, եկ, սիրելիս»... Եվ ես, տխուր, նույն «Երկաթները» բանաստեղծությունը ներկայացրի երիտասարդական ակումբի օրգան «Նոր սերունդ»-ին: Բայց հենց նույն օրը, երբ այդ խմորատիպ պարբերականում լույս տեսավ այն, լույս տեսավ նաև «Բանվոր»-ում:

Դա իմ վերջին աշխատակցությունն էր անտպագիր մամուլին: Ես այժմ երկու ոտանավորով, ինչպես երկու ոտքով, մտել էի տպագրվող հեղինակների շարքը…

Գրելու և տպագրելու գործերի հետ միասին ես գլխովին նվիրվել էի նաև գրական անցուդարձերին՝ աշխատելով իրազեկ լինել ոչ միայն ներկայումս տեղի ունեցողին, այլև այն բոլորին, ինչ կատարվել է իմ Կազաչի Պոստում եղած ժամանակ, և ես բաց էի թողել:

Իսկ կատարվել էր հետևյալը.

1922 թվին, Եղիշե Չարենցն ու Գևորգ Աբովը, որոնք այդ ժամանակ սովորում էին Մոսկվայում, եկել էին Երևան և Ազատ Վշտունու հետ երեքով հրատարակել իրենց դեկլարացիան: Կարճ ժամանակում փոթորկելով գրական կյանքը, կարդալով զեկուցումներ, կազմակերպելով գրական երեկոներ՝ «շեփորահանդեսներ», տպագրելով բանաստեղծություններ հոդվածներ, երկուսը նորից վերադարձել էին Մոսկվա, թեև այս անգամ ոչ-երկար ժամանակով: Բայց կարևորն այդ չէր, այլ այն, որ երեքը շուտով բաժանվել էր երեք մասի:

Դժվար, բայց շնորհակալ խնդիր է խորհրդայինգրականության պատմագրի համար, պարզել նրանց տարաձայնությունների և գժտության բնույթն ու պատճառները: Որպես խիստ կարևոր մոմենտի, իմ կարծիքով, հարկավոր է ուշադրություն դարձնել երկու շատ կարևոր փաստի վրա: Առաջին, այդ երեք գրողները միանգամայն տարբեր էին իրենց ստեղծագործությամբ, տարբեր ոչ միայն ստեղծագործորեն, այլև, ես կասեի՝ սկզբունքորեն, սկսվող գրականությանն իրենց մոտիկության աստիճանով և այլն: Եվ, երկրորդ, չի կարելի չզարմանալ, որ դեկլարացիայից ընդամենը երկու օր հետո տպագրել սկսած իր հոդվածաշարում Չարենցը չի կրկնում դեկլարացիայի համարյա ոչ մի անընդունելի թեզը և, ընդհակառակը, արծարծում է այնպիսի հարցեր և այնպիսի ճիշտ դրումով, որ նրա հոդվածները չեն կորցրել իրենց արժեքն ու նշանակությունը մինչև հիմա:

Նույնպես ուսումնասիրության նյութ է, թե ինչ կերպ էր Չարենցը հասել մտքի այդպիսի պայծառության, ինչ մաս էր կազմում դրա մեջ նրա կարդացածությունը, զարգացած անձնավորություն լինելը, և ինչ մաս՝ ստեղծագործողի ճիշտ բնազդն ու հոտառությունը, այսինքն՝ տաղանդը:

Իսկ Չարենցը հարուստ էր և՛ մեկով, և՛ մյուսով: Զարմանալի է նրա կենսագրությունը: Ծնված լինելով Ղարսում, 1897 թվին, քաղքենիական սովորական ընտանիքում, Եղիշեն առաջին հայացքից ոչնչով չի տարբերվել քաղաքի բազմաթիվ այլ երեխաներից, ինչպես չի տարբերվել նրա ընտանիքն այլ ընտանիքներից: Իսկ եթե եղել է տարբերություն, ապա ոչ-հօգուտ Եղիշեի: Նա եղել է շատերից ավելի աղմկոտ և գլուխցավանքներ պատճառող: Քիչ չեն եղել դեպքերը, երբ հայրն ու ավագ

եղբայրները տնից վռնդել են նրան՝ զանազան արարքների համար: Ազարտային խումար խաղը վերջին տեղը չի գրավել այդ արարքների մեջ:

Սովորական փողոցային տղա՝ կասկածելի ապագայով: Ուստի և ապշեցուցիչ, անհավատալի է թվում այն, որ մի անգամ, շահելով խումարի մեջ որոշ գումար, Եղիշեն դա ոչ թե վատնել է իր ընկերների հետ կեր ու խում անելու վրա, այլ դրանով հրատարակել է իր անդրանիկ գրքույկը՝ «Երեք երգ տխրադալուկ աղջկան»…

Մի՞թե կարող էր սովորական փողոցային տղան վերցնել և հրատարակել գրքույկ: Եվ այն էլ ինչպիսի՜ գրքույկ: Այնտեղ արտասանել հոգեկան սիրո ջերմ խոսքեր «տխրադալուկ աղջկան»: Կամ հենց թեկուզ այդ էլեգանտ բառը՝ «տխրադալուկ»: Ո՞ր փողոցային տղայի բառապաշարում կա այդ: Եվ եղե՞լ է արդյոք հայ լեզվի բառապաշարում՝ մինչև Եղիշեն:

Գրքույկից ստացվում է այն հաստատ տպավորությունը, որ դրա հեղինակը կարդացել է Բլոկին, և ոչ միայն Բլոկին: Բայց ի՞նչ կապ ունի այդ ամենը փողոցային տղայի կյանքի հետ: Ուրեմն, նշանակում է, Եղիշեն ամբողջ ժամանակ ունեցել է նաև մի ուրիշ կյանք՝ առաջինին զուգահեռ: Ո՞վ է նկատել այդ՝ հա՞յրը, մա՞յրը, քո՞ւյրը, թե՞ զույգ եղբայրները: Տարիներ հետո, երբ Մոսկվայում ապրող նրա մի եղբորը՝ հայտնել են, որ Եղիշեն այժմ Հայաստանի մեծագույն բանաստեղծն է, նա ապշած բացականչել է՝ «այդ բոսյա՞կը»…

Այո, հայ գրականության պատմության մեջ, ի թիվս բազմազան այլ կենսագրությունների, եղել է նաև այդպիսին: Բայց միայն անձնակա՞ն կենսագրություններ են դրանք: Չի՞ արտացոլում դրանցից յուրաքանչյուրն իր մեջ հայ ժողովրդի պատմական ճակատագրի կամ հասարակական կյանքի մի կամ մյուս կողմը…

Ժողովրդի հետ կապված, Չարենցի կենսագրությունը ևս, անցել է ժողովրդի ճանապարհներով: Համաշխարհային պատերազմ, ոգևորություն կամավորական շարժումով, գործնական ուսուցում կյանքից, կարմիր բանակ կոմունիստական կուսակցություն... Եվ այդ ամբողջ ճանապարհը՝ զարդարված գրական տրիումֆով.— «Դանթեական առասպել», «Սոմա», «Ամբոխները խելագարված», «Երեք ռադիո-պոեմ»... Եվ դրանցից յուրաքանչյուրն արդյունք ոչ միայն բանաստեղծի հարուստ կենսափորձի, այլև գրական խոր կուլտուրայի:

Ոչ, եթե պետք է զարմանալ, ապա ոչ թե այն բանի վրա, թե ինչպես է Չարենցը գրել իր փայլուն հոդվածաշարը, այլ՝ թե ինչպես է թույլ տվել Դեկլարացիայում այդքան սումբուր…

Երեքի երկրորդ անդամը՝ Ազատ Վշտունին, ունեցել է այլ կենսագրություն և գրական այլ բագաժ: Նա ծնվել է Վանում և նույնպես վաղ հասակից սկսել է գրել: Չգիտեմ որտեղից ինձ հասել էր Վանում հրատարակվող խմորատիպ պարբերականի մի համար, որը ես հետագայում նվիրեցի հանրային գրադարանին: Վերնագիրը՝ «Զգտում», 1911 թե 1912 թվի: Այնտեղ հրատարակված էր Ազատ Վշտունու մի բանաստեղծությունը, որտեղ նա հայտնում էր, որ «ես կձգտեմ նոր օրերու արշալույս»: Ինչ ճանապարհներով է անցել դրանից հետո Վշտունու ստեղծագործությունը՝ դա հատուկ նյութ է: Կարևորը ներկա դեպքում այն է, որ Երեքին հարելիս նա դեռ չուներ հեղափոխական պոեզիայի բագաժ: Երեքից անմիջապես հետո սկսվեց Վշտունու ստեղծագործության մի նոր, հնից որակապես բոլորովին տարբեր շրջան:

Գևորգ Աբովը՝ Երեքից երրորդը, գրականություն էր մտել 1919 թվին իր «Միայն կինը» գրքույկով: Ճիշտ է, այն գրված էր «միայն կնոջ» մասին՝ առանց որևէ հասարակական մոտիվի, բայց բանաստեղծությունների այդ ժողովածուն իր ձևական տաղաչափական նվաճումներով նորություն

էր հայ գրականության մեջ: Այդ տեսակետից նրա գրքույկը հանդիսանում է մեր պոեզիայի զարգացման անհրաժեշտ փուլերից մեկը, նրա մի օղակը, առանց որի շղթան խզված կլինի: Երեքին հարելիս Աբովը ևս չուներ հեղափոխական պոեզիայի բագաժ, իսկ հարելուց հետո, կատարելով մի քանի փորձեր, հեռացավ պոեզիայից:

Երեքի գժտությունից հետո Վշտունին սկսեց հրատարակել «Մուրճ» պարբերականը, որը Հայաստանի պրոլետարական 1923 թվի գրողների միության կազմակերպումից հետո, սկզբին, դարձավ դրա օրգանը, իսկ Վշտունին՝ այդ միության՝ Ասոցիացիայի ղեկավարը:

Եղիշե Չարենցը նախ վերադարձավ Մոսկվա, ապա փոխադրվեց Թիֆլիս, որն Անդրկովկասյան ֆեդերացիայի մայրաքաղաքն էր, և սկսեց խմբագրել «Մարտակոչ» թերթի գրական բաժինը: Այդտեղից էլ, Ա. Մյասնիկյանի նախաձեռնությամբ, 1924 թվի ամռան վերջին, նա մեկնեց արտասահմանյան ճանապարհորդության, որը տևեց տասն ամիս:

Գևորգ Աբովը չհարեց Ասոցիացիային և առժամանակ մնաց մենակ:

Ճիշտ է, «Մուրճ»-ը շուտով դադարեց հրատարակվելուց, բայց մամուլի բուռն զարգացման պայմաններում դա շատ քիչ զգացնել տվեց իրեն: Պրոլետարական գրողներն այժմ հնարավորություն ունեին տպագրվելու շատ թերթերում և պարբերականներում:

«Մուրճ»-ից մի փոքր շուտ, Երևանում սկսել էր հրատարակվել, բացի «Խորհրդային Հայաստան» կենտրոնական թերթից, գյուղացիական «Մաճկալ» թերթը: Թիֆլիսում՝ «Դարբնոց» և «Նոր աշխարհ» պարբերականները: Նույն 1922 թվի վերջերին Երևանում սկսել էր լույս տեսնել «Նորք» հաստածավալ, բայց անկանոն-պարբերական հրատարակությունը: 1923-ի հունվարից՝ «Պայքար» գրական-գեղարվեստական պարբերականը, իսկ Թիֆլիսում՝ «Մարտակոչ» ամենօրյա մեծադիր թերթը: Մարտին Մոսկվայում լույս տեսավ «Քուրա» պարբերականը, մայիս-հունիս ամիսներին Երևանում իրենց գոյությունն սկսեցին կոմերիտականների օրգան «Ավանգարդ»-ը, պիոներների «Պատկում»-ը և երգիծաթերթ «Շեշտ»-ը: 1924 թվի առաջին ամիսներում Հայաստանի մայրաքաղաքը հարստացավ նոր պարբերականներով՝ «Հայաստանի աշխատավորուհի» ամսագիր, «Նոր ակոս» շաբաթաթերթ, երգիծաթերթ «Զուռնա», «Վերելք» անկանոն-պարբերական ժուռնալ... Եվ այդ բոլոր թերթերն ու պարբերականները, գրական, թե ընդհանուր, հրատարակում էին գրողների երկերը, հոդվածները, հաղորդում էին գրական տեղեկություններ և այլն: Ճիշտ է, դրանցից մի քանիսի կյանքը կարճատև եղավ, բայց, դրանց փոխարեն, մյուսները հարատևեցին և մի քանիսը հրատարակվում են մինչև այսօր:

1923 թվի Ալեքպոլը «գավառ» չէր Երևանի նկատմամբ: Նրա «Բանվոր» թերթը կարդացվում էր համարյա «Խորհրդային Հայաստան»-ին հավասար: Երևանը դեռ չուներ Երաժշտական կոմեդիայի թատրոն, իսկ Ալեքպոլն ունեցավ: Մայրաքաղաքից շատ հաճախ Ալեքպոլ էին գալիս արվեստագետներ, գրողներ, քննադատներ: Ալեքպոլի հասարակական և գրական կյանքում տեղի ունեցող շատ երևույթներ ստանում էին հանրապետական նշանակություն: Սակավ չէր պատահում, որ գրական որևէ հարցի քննարկում, սկսվածԵրևանում, իր հետագա զարգացումն էր գտնում Ալեքպոլում կայացած դիսպուտում, որին մասնակցելու համար Երևանից եկած էին լինում զգալի թվով մարդիկ:

Պետք է վերհիշել, որ դա այն ժամանակներն էին, երբ Երևանը չուներ իր պրոլետարիատը, իսկ Ալեքպոլը, հանձինս իր երկաթուղային դեպոյի և մի քանի այլ, ավելի մանր ձեռնարկությունների, հանդիսանում էր Հայաստանի բանվորության կենտրոնը:

Քաղաքի գրական ուժերն այդ թվին հիմնականում նույն Մահարին ու Զարյանն էին, որոնց այժմ միացել էինք մենք՝ Խորեն Անթել Հեռագիրն ու ես: Խորենը, որպես Մահարու եղբայրը, բնականաբար մտերիմ էր նրա և նրա անբաժան ընկեր Նաիրու հետ, իսկ ես դեռ լոկ ծանոթ էի նրանց և ամեն անգամ հանդիպելիս շփոթվում էի՝ ինչպես վայել է աշակերտին՝ վարպետների ներկայությամբ: Գնում էի փողոցով և դեռ հեռվից տեսնում էի Մահարու մազերը՝ ինչպես Լոռվա շարժական անտառ, և որսում էի Զարյանի դեմքի կրկնակի արտահայտությունը.— Փողո՞ց... իսկ ինչո՞ւ փողոց... Փողո՛ց... այո, փողո՛ց…

Ես ուղղում էի գոտիս, հարթում էի խիտ մազերս— ավաղ, կային այդպիսիք— համեստորեն ուղղում կեպիիս թեքությունը և, հասնելով «ընկեր Մահարուն» ու «ընկեր Զարյանին», հանում էի ու ողջունում:

— Արմե՞ն...— ասում էր Նաիրին, և զարմանքը նրա դեմքի վրա հասնում էր իր գագաթնակետին:— Ի՞նչ ես անում:

Ես, շփոթությունից դեռ խոսքեր չգտնելով, կատարում էի ձեռքի մի այնպիսի շարժում, որը հավասարապես կարող էր նշանակել և՛ «ոչինչ», և՛ «ամեն ինչ»:

— Ի՞նչ ես գրում,— հարցը մասնավորացնում էր Մահարին:

— Գրո՞ւմ... էն բանը... բանաստեղծություններ…

— Գրիր, գրիր,— հովանավորաբար խրախուսում էին նրանք և, բավական համարելով իրենց բարեհաճ զրույցն ինձ նման մի մահկանացուի հետ, շարունակում էին քայլել՝ մեկը անտառազարդելու համար նորանոր փողոցներ, իսկ մյուսը ծայրահեղ զարմանքի հայացքներ նետելու դրանց վրա:

Մի անգամ Վշտունին եկել էր Ալեքպոլ՝ զեկուցելու պրոլետգրականության մասին: Զեկուցումից հետո վար էինք իջնում սանդուխքներով: Ես, ժողովրդի հետ խառնված, քայլում էի Մահարու կողքով, որը խոսում էր Վշտունու և էլի մի ուրիշի հետ: Հանկարծ այդ մի ուրիշն ասաց.

— Էսիր, Գուրգեն, ահա երկու անգամ է, ինչ տպագրում եմ ինչ-որ Արմենի բանաստեղծությունները: Ո՞վ է այդ Արմենը, մի ցույց տուր ինձ:

Մազերս բիզ-բիզ կանգնեցին: Ես կատարեցի մի շարժում՝ փոշիանալու համար ժողովրդի մեջ, բայց Մահարին բռնեց իմ թևից:

— Ահա,— ներկայացրեց նա ինձ խմբագրին: Դա Աշոտ Հախումյանն էր՝ նիհարկոտ և անգամ մի քիչ հիվանդոտ տեսքով մարդ: Առաջին անգամն էի տեսնում նրան: Նա ժպտալով բռնեց իմ ձեռքը և միայն դրանից հետո Մահարին հնարավոր գտավ թողնել իմ թևը:

— Վաղը եկ խմբագրատուն,— հրավիրեց Հախումյանը,— մի քիչ զրուցենք քեզ հետ: Հարկավոր է ծանոթանալ…

Ջուրն ընկածն անձրևից չի վախենա: Քանի որ ինձ արդեն հայտնաբերել էին, ինձ համար այլևս միևնույնն էր, ես կարող էի գնալ և՛ խմբագրատուն, և՛ ավելի սարսափելի տեղեր: Ես կարող էի նույնիսկ ծանոթանալ Վշտունու հետ, որը և կատարեցի նույն Մահարու միջոցով:

Հետևյալ օրը գնացի Հախումյանի մոտ: Զրույցից հետո նա ասաց.

— Դու իզուր մինչև հիմա չէիր գալիս հոնորարի համար:

— Ինչի՞...— չհասկացա ես:

— Հոնորարի: Այսինքն՝ դրամի:

Ես սառեցի: Ա՛յ քեզ անհարմար վիճակ: Ես պետք է դրամ վճարեմ իմ բանաստեղծությունների տպագրության համար, իսկ դրամ չունեմ…

Հենց այն է, ուզում էի ներողություն խնդրել խմբագրից և բացատրել, որ պատկոմական կազմակերպությունը, որտեղ ես աշխատում էի որպես հրահանգիչ, ահա մի քանի ամիս է, ինչ ռոճիկ չի վճարել, և որ իսկույն, հենց որ վճարեց, կբերեմ և կմուծեմ բանաստեղծություններիս հոնորարը, երբ Հախումյանն ասաց.

— Բացառության կարգով ես կկարգադրեմ այս անգամ քեզ վճարել այսօրվա կուրսով, իսկ սրանից հետո դու այլևս չուշանաս:

Եվ, տալով ինձ ինչ-որ գրություն, ուղարկեց հաշվապահ-գանձապահի մոտ:

Ես պատրաստ էի գոռալով լաց լինել վիրավորանքից: Բա սա կա՞րգ է: Դու հուզվես և ուրախանաս նոր կյանքի համար, բանաստեղծությամբ արտահայտես քո բուռն, անկեղծ զգացմունքները, իսկ մարդիկ դրա համար քեզ դրամ վճարեն…

Դուրս գալով խմբագրատնից՝ մի քանի տասնյակ միլիոն ռուբլի ձեռքիս, ես չգիտեի, թե ինչ անեմ դրանք, ո՛ր ջհաննամը կորցնեմ: Ծախսել իմ և իմ ընտանիքի կարիքների համար՝ սրբապղծություն էր, իսկ նետել մի կողմ՝ ափսոս էր:

Եվ հանկարծ գտա: Այդ դրամով պետք է գնել միայն թուղթ, թանաք, գրիչ, գրչակոթ և ուրիշ ոչինչ: Գրվածքներից ստացածը ետ պետք է տալ գրվածքներին…

Ես այդպես վարվեցի ոչ միայն այդ անգամ, այլև հաջորդ մի քանի անգամներին: Դրա հետևանքով ինձ մոտ գոյացավ գրենական պիտույքների մի այնպիսի պատկառելի պաշար, որ հարկավոր պիտի լիներ գրել «Շահնամեի» ծավալով գործեր՝ այդ ամբողջը ռեալիզացիայի ենթարկելու համար:

Սակայն մի անգամ, ով գայթակղություն, երբ ես անցնում էի փողոցով՝ հերթական փոքրիկ հոնորարը գրպանումս, և չունենալով դրանից բացի ոչ մի կոպեկ՝ այլ ծագում ունցող, ես լսեցի ծանոթ կանչը.

— Սեմիչկա, սեմիչկա…

Միայն մի պահ տատանվելուց հետո ես վճռեցի.— կգնեմ՝ դրամը փոխարինաբար վերցնելով հոնորարիս գումարից, իսկ հետո, երբ ռոճիկ ստանամ՝ կդնեմ տեղը…

Ես մինչև հիմա հիշում եմ այդ սեմիչկայի համը: Դա բոլորովին էլ ավելի վատ չէր, քան ոչ-հոնորարով գնածներինը: Ոչ դառն էր, ոչ կծու, ոչ թթու: Ուտվում էր: Ցավալի էր, բայց այդպես էր…

Եվ ես, հաշտվելով տհաճ անհրաժեշտության հետ, ռոճիկս ստանալուց հետո «մոռացա» իր տեղը դնել փոխարինաբար ստացած դրամը: Եվ որքան էլ այնուհետև աշխատեցի նորանոր գրվածքներով վարձահատույց լինել ընթերցողներին, իմ ժողովրդին՝ առաջին սեմիչկայի և այնուհետև ձեռք բերած նույնպիսի այլ բարիքների համար, այնուամենայնիվ մնացի որպես հավիտենական պարտապան…

ՊԱՅԾԱՌ ԼԱՊՏԵՐ

Որքան էլ որ Ալեքպոլն ունենար գրական-կուլտուրական նշանակություն Երևանի կողքին, այնուամենայնիվ որոշակի էր, որ նրա տեսակարար կշիռն աստիճանաբար իջնելու է: Հանրապետությունն իր գոյության այդ առաջին շրջանում չէր կարող մասնատել իր ուժերը, զարգացնել կուլտուրայի և արվեստի երկու կենտրոն, այն էլ՝ հավասար տեմպերով:

Անհիշատակելի ժամանակներից ի վեր իր անկախությունը կորցրած և միայն հիմա վերստացած ժողովրդի մայրաքաղաքը մագնիսի պես դեպի իրեն էր ձգում կուլտուրայի և արվեստի ուժերն ամեն կողմից, երկրի և աշխարհի բոլոր վայրերից: Երևանը պատրաստվում էր հայ ժողովրդի և նրա կուլտուրայի համար խաղալ ավելի մեծ դեր, քան խաղացել էին անցյալում Թիֆլիսը, Պոլիսը, Բաքուն, Մոսկվան, Զմյուռնիան և այլ մեծ ու փոքր օջախներ՝ միասին վերցրած: Մեծ անարդարություն էր այն, որ Երևանն անցյալում չէր խաղացել այդպիսի դեր, չնայած որ հանդիսանում էր հայ ժողովրդի ամենահին օրրաններից մեկը:

Մեզ՝ գրողներիս համար, Երևանը սիրելի էր նաև այն պատճառով, որ դա մեր նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանի կյանքի ու գործունեության վայրն էր, իսկ Երևանի բարբառը, Արարատյան դաշտի բարբառը՝ մեր գրական լեզվի հիմքը:

Երևանը ես տեսել էի և նա ինձ վրա թողել էր անջնջելի տպավորություն: Եվ քանի որ ես այն տեսել էի կարճ ժամանակով, իմ մեջ ապրում էր առաջին տպավորությունը, որը չէր թուլացել, ինչպես դա լինում է ավելի մանրակրկիտ կերպով նոր վայրին ծանոթանալուց հետո, երբ դա քեզ համար դառնում է սովորական:

Դեռևս սկաուտանոցից դուրս գալուցս երկու շաբաթ անց, փետրվարի 19-ին, ես նստել էի գնացք, իհարկե, առանց տոմսի, և մեկնել մայրաքաղաք՝ այնտեղի պատկոմական կազմակերպության մեջ աշխատելու համար:

Երևան ես հասա հաջորդ առավոտյան: Քաղաքն ինձ դիմավորեց ծայրեծայր թուխպ երկնքով և մաղող բարակ անձրևով: Մի ուրիշ անգամ դա անձկություն պիտի բերեր իմ հոգուն, բայց այժմ ես թուխպն ու անձրևն ընկալում էի որպես դրախտային եղանակ: Եվ դա միանգամայն հասկանալի է, չէ՞ որ դա փետրվարի 20-ն էր, Ալեքպոլում՝ խորը ձմեռ... Ես աչքերիս չէի հավատում, որ մի գիշերում ցուրտ ձմռանից վերադարձել եմ տաք աշուն…

Առաջին բանը, որն իսկույն գրավեց իմ ուշադրությունը, դա Տիգրան Հախումյանի զեկուցման աֆիշն էր՝ Չարենցի մասին: Դասախոսությունը տեղի էր ունեցել նախորդ երեկոյան: Այդ աֆիշը և դրա թարմ թվականն ինձ իսկույն մտցրին գրական եռուն կյանքի մթնոլորտի մեջ:

Քիչ հետո ամպերը ցրվեցին և երևաց արևը, որն այլևս չթաքնվեց այն ութ-տաս օրերի ընթացքում, որոնք ես անցկացրի Երևանում: Եվ ի՜նչ արև էր դա... Ոչ, ես Ալեքպոլում՝ չէի տեսել այդպիսին…

Շուտով փողոցներում սկսեցին հնչել թերթավաճառների կանչերը՝ «Խորհրդային Հայաստան»... Վաճառում էին նույն օրվա թերթը և ոչ թե նախորդ օրվանը՝ ինչպես Ալեքպոլում…

Պատկոմական կազմակերպության մեջ ինձ՝ Կազաչի Պոստի հռչակավոր սկաուտանոցի կոմերիտական բջիջի նախկին քարտուղարիս, ընդունեցին գրկաբաց: Անմիջապեր կարգադրեցին

տալ ինձ ռոճիկ, այսինքն՝ մթերային «պայոք»՝ որպես հրահանգչի: Խնդրեցին ընդամենը երկու շաբաթով տեղ գտնել ապրելու՝ մինչև որ հանրակացարանում՝ տեղ ազատվի ինձ համար:

Մեր այն բարեկամի տանը, ուր իջևանել էի ես, ինձ կարող էին հյուրընկալել ավելի ևս երկար ժամանակով: Բայց ես ամաչեցի խնդրել նրանց այդ մասին և հառաչելով թողեցի վերադարձա Ալեքպոլ՝ ինձ հետ բերելով Երևանի շլացուցիչ լուսավոր պատկերը՝ իմ հոգում այնպես տպավորված, որ այլևս կյանքում երբեք չպիտի խամրեր դա՝ որքան էլ որ ես հեռու գտնվեի դրանից՝ կամա թե ակամա:

Էլ ինչպե՞ս չնախանձել, որ այժմ այդ Երևանը մագնիսի պես ձգեց-տարավ Ալեքպոլից «Քուրքենին» և Հայաստանին:

Ես և Զարյանը, նախքան նրա մեկնելը, բավական մտերմացել էինք, և այժմ, մեկնելուց հետո, աշխույժ նամակագրության մեջ էինք իրար հետ: Նա ընդունվել էր համալսարան՝ սովորելու, և գրում էր համալսարանի մասին, գրողների միության մասին, որի քարտուղարն էր նա այժմ, իսկ Ալազանը՝ նախագահը:

Մահարին, նախքան իր մեկնելը, Ալեքպոլում հրատարակել էր երկու գիրք: Առաջինը, 1923 թվին, «1920?—1923!» վերնագրով, որ նշանակում էր, թե ես 1920 թվին չգիտեի ինչպես կողմնորոշվել խորհրդային կարգերի հանդեպ, իսկ 1923 թվին կողմնորոշվեցի, և, երկրորդը, 1924 թվին, «Տիտանիկ» վերնագրով: Եվ ահա, Երևան փոխադրվելուց և այնտեղ գրողների միության մեջ մտնելուց ու դրա քարտուղարը դառնալուց կարճ ժամանակ անց նրան վտարել էին միությունից «Տիտանիկ» գրքի «բոսյակային ինտելիգենտշչինայի» համար: Ըստ երևույթին դրա հետևանքով, նա փոխել էր իր բնակավայրը, փոխադրվել էր Թիֆլիս, որտեղ, սակայն, Չարենցն արդեն չկար— շրջում էր Եվրոպայով: Նրա փոխարեն «Մարտակոչի» գրական բաժինը խմբագրում էր Հայաստանի պրոլետարական գրողների միության հիմնադիր, այդ միությունից վշտացած և հեռացած Ազատ Վշտունին:

Այդ տարիներին հայ պրոլետարական պոեզիայի կենտրոնական դեմքն Ալազանն էր: Նա խիստ հաճախ էր տպագրում թերթերում և պարբերականներում իր բանաստեղծությունները, իսկ Վ. Անողոք ստորագրությամբ՝ նաև հոդվածներն ու ակնարկները:

Եվ ահա, մի օր, ես և Խորեն Ձայնասփյուռը գրություն ստացանք Երևանից՝ Ալազանի և Զարյանի ստորագրությամբ: Մեզ հանձնարարվում էր Ալեքպոլում կազմակերպել գրական խմբակ:

Պարզ է, որ խոսքը վերաբերում էր պրոլետարական, այսինքն՝ առաջին հերթին բանվորական գրողների խմբակ կազմակերպելուն: Իսկ այդ ժամանակների գրական մոլորություններից մեկն էլ այն էր, որ իսկական պրոլետարական գրող լինելու համար, պրոլետարիատի շահերն ու հոգեբանությունը, մտքերն ու հույզերը լիապես հասկանալու և արտահայտելու համար անհրաժեշտ էր համարվում անձամբ լինել բանվոր:

Ես և Խորենը բանվորներ չէինք եղել և չէինք: Բայց հո կարելի՞ էր դառնալ: Եվ մենք որոշեցինք դառնալ: Եվ քանի որ Ալազանը գրաշար էր, որպիսի հանգամանքը նա հաճախ էր նշում իր անվան կողքին, փակագծերի մեջ, մենք ևս որոշեցինք դառնալ գրաշար: Իհարկե, կարելի էր դառնալ նաև դեպոյի բանվոր, դա ավելի իսկական էր, բայց, նախ, այնտեղ աշխատանքն անհամեմատ ավելի դժվար էր, և, երկրորդ, դառնալով գրաշար, մենք չէինք կտրվի մամուլից գրականությունից, այլ շարունակ կլինեինք դրանց կողքին:

Ուստի և, մի գեղեցիկ օր, մտնելով քաղգավգործկոմի տպարանը, մենք հազանք կապույտ խալաթներ և պատրաստվեցինք մրոտել մեր դեռևս խիստ սպիտակ ձեռքերը: Գրաշարապետը մեզ պատվիրեց սկսել այն բանից, ինչից սկսում են բոլոր նորեկները՝ ցրել այլևս գործածված շարվածքի տառերն իրենց տեղերը՝ «կասսաները»:

Չպետք է մոռանալ, որ մենք ոչ միայն նորեկ բանվորներ էինք, և մի քանի ամսվա «ստաժ» ունեցող բանաստեղծներ, այլև ընդամենը տասնվեց-տասնյոթամյա պատանիներ՝ այդ տարիքին հատուկ չարություններով ու գժություններով: Մեր շուրջը, գլուխները «կասսաների» վրա խոնարհած, լուռ և լուրջ աշխատում էին գրաշարները: Ինչպե՞ս կարող էի ես այդ գործնական մթնոլորտում ինձ ետ պահել որևէ անհարիր արարք կատարելու գայթակղությունից: Մանավանդ որ միջավայրի պայմանները զրկում էին Խորենին՝ ինձ «պատասխան» տալու հնարավորությունից:

Խորենը, գլուխը շարվածքի վրա խոնարհած, աշխատում էր ջոկջկել տառերը: Ես, հույժ մտազբաղ դեմքով, դիմացի կողմից մոտեցա նրան և, առանց դեմքիս արտահայտությունը փոխելու, նույնպես խոնարհվեցի դեպի ցածրիկ սեղանիկը և կզակի մի միջակ ուժի հարված հասցրի նրա գագաթին: Հակառակ իմ սպասածի, «միջավայրի պայմանները» չխանգարեցին նրան և նա բռունցքի մի հարվածով հավասարեցրեց հաշիվը:

Թեև այդ ամենը տեղի ունեցավ արժանավայել լռության մեջ, բայց և այնպես գրաշարապետը բարձրացրեց գլուխը, նայեց մեզ և առանց բարկանալու, միայն զարմանքով, հարցրեց.

— Յա՛… Համլե՞տ խաղաք կը…

Ես, սարսափելի վիրավորված Խորենի կոպիտ վերաբերմունքից իմ հանդեպ, առավել ևս շփոթված, որ գրաշարապետը նկատեց այդ, հապճեպ հանեցի կապույտ խալաթը՝ շարունակ պահպանելով նույն օրինակելի լռությունը, նորից հագա իմ շինելը և դուրս ելա տպարանից՝ այլևս այնտեղ չվերադառնալու համար: Այդպիսով իմ բանվորական ստաժը կազմեց մի ժամ և քսան րոպե: Իսկ Խորենը, որի հետ ես խռովեցի երկար ժամանակով, մնաց տպարանում, դարձավ գրաշար և շուտով փոխադրվեց Երևան, ապա Մոսկվա՝ այնտեղի հայկական տպարանում աշխատելու համար: Ալեքպոլի գրական նոսրացած շարքերն ավելի ևս նոսրացան, այնտեղ մնացին միայն ղեկավարը և մի անդամ:

Երկուսն էլ ես էի: Տխուր վիճակ…

Ալեքպոլի «Բանվոր» թերթի խմբագիր Աշոտ Հախումյանը, որին նույնպես դիմել էր պրոլետգրողների միությունը՝ գրական խմբակ կազմակերպելու հարցով, օգնեց ինձ, և խմբակը, վերջապես, կազմակերպվեց: Այդ նշանավոր արարողությանը ներկա էին ութը մարդ: Նախագահ ընտրվեցի ես: Իսկ հենց հետևյալ օրը դիմումներ ստացա ևս տասներկու մարդուց, խմբակի մեջ ընդունվելու համար: Ահա թե որքան հասունացած էր Ալեքպոլում գրական խմբակ կազմակերպելու հարցը: Ի դեպ ասած, դիմում ներկայացնողների մեջ էին նաև Սարմենն ու Սողոմոն Տարոնցին:

«Բանվոր» թերթի խմբագրությունն ուներ երեք սենյակ, որոնցից միայն երկուսն էր նա զբաղեցնում, իսկ երրորդն ազատ էր: Դեռևս նույն այդ 1924 թվի գարնանից, խմբագիրն այդ սենյակը տրամադրել էր մեր կազմակերպած մի այլ խմբակին՝ «Ստեղծիր» անունով, որը շատ շուտով քայքայվել էր: Այժմ դա դարձավ մեր նոր խմբակի աթոռանիստ վայրը: Այնտեղ կար մի երկար բազմոց-նստարան, կային մի քանի աթոռներ, սեղան: Լիուլի բավական էր: Մնացյալ մանրամասնությունները՝ տաղանդ և այլն, պիտի բերինք մենք՝ երիտասարդ գրողներս: Բայց թե ի՞նչ էինք անելու այդ

սենյակում, ո՞րն էր լինելու մեր աշխատանքը՝ մենք չէինք պատկերացնում հստակորեն: Ճիշտ է, թերթում տպած մեր ինֆորմացիայի մեջ հաղորդում էինք, որ բացի ինքնակրթական պարապմունքներից մենք զեկուցումներ պիտի տայինք ազատ ունկնդիրների համար, և որ այդ առթիվ «ընկեր Արմենը պատրաստվում է՝ թեմա ունեալով «Բուրժուական և պրոլետարական գեղարվեստը», բայց ի՞նչ կարող էր հաղորդել ուրիշներին հազիվ իր տասնութ տարին լրացրած «ընկեր Արմենը», որն ինքը դեռ այնքա՛ն կարիք ուներ սովորելու:

Քաղաքի դպրոցներում, ակումբներում և այլ վայրերում՝ կային բավական թվով գրական խմբակներ: Բայց դրանք ոչ թե գրողների, այլ գրասեր ընթերցողների խմբակներ էին: Նրանք զբաղվում էին զանազան տիպի պարապմունքներով, որոնց մեջ առաջին տեղն էին գրավում «գրական դատ»-երը: Դրանք կազմակերպվում էին զավեշտական լրջությամբ, դատավորով, մեղադրողով, պաշտպանով, վկաներով, իսկ վերջում հանվում էր դատավճիռ: Հերթով դատական պատասխանատվության էին կանչվում մեր կլասիկ գրողները կամ ժամանակակից երիտասարդները, և բոլոր դեպքերում էլ, անխտիր, նրանց կոչում էին «ընկեր» կամ «քաղաքացի»…

Մի՞թե մենք ևս պիտի զբաղվեինք գրական-դատական պրակտիկայով…

Որոնելով գրական-կազմակերպչական աշխատանքի դեռևս ոչ մի տեղ վերջնականորեն չգտնված ձևերը, մենք, այնուամենայնիվ, սկզբից ևեթ գտել էինք բոլոր ժամանակների լավագույն ձևը՝ ընկերական կոնտակտը: Տարոնցին ու Սարմենը դեռևս գտնվում էին որբանոցներում, որտեղից և դուրս ելան շուտով: Մենք բախտակիցներ էինք և շատ շուտ մտերմացանք իրար հետ: Մենք այցելում էինք միմյանց, հանդիպում որտեղ ասես, շրջում միասին, գնում զբոսանքի, կինո և այլն: Տարոնցին, ամաչկոտ և քչախոս մի պատանի, ինչպես ասվում է՝ «ներհուն», երբեմն-երբեմն հաղթահարելով իրեն, ցույց էր տալիս մեզ իր բանաստեղծությունները, որոնք մենք անխնա քննադատում էինք կամ անխնա գովում: Սարմենը, որն անցյալում որբանոցային խմորատիպ և նույնիսկ տպագիր մամուլում հրատարակված լինելու պատճառով ավելի համարձակ էր, նույնպես կարդում էր իր բանաստեղծությունները՝ ոգևորված, բարձրաձայն, վանկերի պակասության դեպքում ճոճելով բռունցքը և մզզալով պակասող վանկերի քանակի համաձայն, իսկ ավելորդության դեպքում՝ վազեցնելով դրանք շուտասելուկի պես: Իսկ ես, որ «Բանվոր»-ում, «Մարտակոչ»-ում, «Դիրքերում» երկշաբաթաթերթում և այլ տեղերում արդեն տպագրել էի քառասունի չափ ոտանավորներ, իմ նոր ոտանավորներն ընկերներին կարդալ սկսում էի նախանձելի ինքնավստահությամբ, բայց ավարտում էի ամոթահարությունից խզված ձայնով: «Ի՜նչ անպետք բան եմ գրել,— մտածում էի ես,— և ինչպե՜ս չեմ նկատել մինչև հիմա, և ինչպե՜ս նկատվում է բարձրաձայն ընթերցելիս»…

Տարիներ հետո Չարենցն ինձ տվեց նույն խորհուրդը.— «Եթե ուզում ես զգալ բանաստեղծություններից թերությունները՝ կարդա բարձրաձայն, ուրիշների ներկայությամբ»…

Իմ նամակագրությունը Զարյանի հետ շարունակվում էր: Այժմ դա կրում էր ոչ միայն անձնական բնույթ, այլև գրական-կազմակերպչական: Ես հայտնում էի իմ դժգոհությունը, որ գրողների միությունը չի ղեկավարում մեզ, ուղղություն չի ցույց տալիս, չի ուղարկում աշխատանքի ծրագիր և այլն:

Զարյանի պատասխաններից ես տեսնում էի, որ նրանք ևս, Երևանում, դեռ հստակ չէին պատկերացնում իրենց աշխատանքները: Ինչո՞վ կարող էին օգնել նրանք մեզ:

Իսկ ի՞նչ էր ներկայացնում իրենից Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիան այդ ժամանակ: Մի քիչ ավելի ուշ, 1925 թվի փետրվարին, միության նախագահ Ալազանը Բաքվի

«Վիշկա» պարբերականում հայտնում էր, որ միությունն ունի 12 անդամ և 13 թեկնածու: Այլ կերպ ասած, դա համարյա մի այնպիսի փոքրիկ խմբակ էր, ինչպես Լենինականի խմբակը: Բայց այնտեղ գտնվում էին բանաստեղծներ Ալազանը, Զարյանը, Դանչոն, արձակագիրներ՝ Սիրասը, Արաքսը, քննադատներ Վանանդեցին, Դաբաղյանը և մի քանի ուրիշներ: Այդ տեսակետից մենք չէինք կարող համեմատվել Երևանի հետ:

Բայց, չնայած դրան, Լենինականի խմբակն ընդգրկում էր լուրջ և կուլտուրական երիտասարդություն: Ճիշտ է, հետագայում գրականության մեջ մնացին դրա ոչ բոլոր անդամները, բայց ճիշտ նույնը կատարվեց նաև Երևանի խմբակի անդամների հետ: Իրենց հասարակական-կուլտուրական կյանքն այդ խմբակներում սկսած, նրանք, այդ մյուս անդամները, հետագայում դարձան ժուռնալիստներ, խմբագիրներ, հրատարակչության ղեկավարներ, գիտնականներ, առնվազն՝ մանկավարժներ:

Իհարկե, գրողը՝ գրական խմբակի անդամ լինի թե ոչ, զբաղվի պարապմունքներով թե ոչ, իրեն ցույց տա այդ աշխատանքների մեջ լավագույն կողմերից թե ոչ, միևնույնն է, պիտի գիտակցի, որ դրանք բոլորը երկրորդական մոմենտներ են նրա համար: Գրողը պետք է պարզապես գրի և որքան կարող է՝ լավ: Իհարկե, դրա համար հարկավոր է տաղանդ: Իհարկե, հարկավոր է նաև աշխատանք, որովհետև միայն տաղանդի տվածով ապրել չի կարելի: Բայց հարկավոր է էլի մի ուրիշ բան: Դա ճիշտ ուղղությունն է, որը պետք է ընտրի գրողը: Նրան հարկավոր է, ինչպես ասում են՝ «պայծառ լապտեր»:

Մենք, որ մեզանով սկսում էինք ոչ միայն մեր ստեղծագործությունը, այլև նորագույն հայ գրականությունը, դեռևս չունեինք այդ պայծառ լապտերը: Եվ չգիտեինք, որ դա հենց մեր կողքին է, «Բանվոր»-ի այդ երրորդ, ազատ սենյակում, որը տրամադրել են մեզ: Բավական է ձեռքդ մեկնես, որպեսզի վերցնես և վեր բարձրացնես այդ լապտերը…

«Բանվոր»-ի խմբագրատան այդ սենյակի մի անկյունում մի հսկա կույտով բարձրացել էր լրագրերի նախորդ տարիների համարների մի բաբելոնյան աշտարակ՝ ռուսերեն, հայերեն, մեծ, փոքր, տեղական, այլ հանրապետությունների, արտասահմանյան…

Ես իրավունք վերցրի խմբագրից՝ կարգի բերել այդ թերթերը և վերցնել այնտեղից այն, ինչը որ հարկավոր կլինի ինձ համար:

Ես միշտ հատուկ թախիծով եմ թերթում վաղ տարիների լրագրերի կոմպլեկտները: Դրանց մեջ խտացած և քարացած է մի դարաշրջան, որը ես չեմ ապրել, որի ոչ մի դեպքին չեմ մասնակցել կամ անգամ ականատես եղել: Ես այդժամանակ գտնվել եմ Կազաչի Պոստի ներփակ ու նեղ աշխարհում... Մինչդեռ ես, ճաշամանը ձեռքիս, կանգնած եմ եղել ճաշ բաժանողի մոտ՝ ավելցուկ ստանալու, մեծ և իսկական կյանքն անցել է իմ մոտով, ուղղակի կողքով: Եվ այժմ ես նայելու եմ այդ անվերադարձի ստվերին, կիսամաշ հետքին՝ որպես ուշացած և պասսիվ հանդիսատես…

Իսկ եթե այդ կոմպլեկտները պատկանում են շատ ավելի վաղ շրջանի, երբ ես դեռ ծնված էլ չեմ եղել, ապա ես թախծում եմ, թե որքա՛ն կարճատև է իմ կյանքը՝ ոչ միայն դեպի առաջ, այլև դեպի ետ, թե ինչու ես չեմ ապրել իմ ծնունդից առաջ, չեմ գտնվել Կրասնայա Պրեսնյայի բարիկադների վրա կամ գլադիատորների հետ միասին չեմ բացականչել Հռոմի կրկեսում՝ «Մնաս բարով, Կեսար, մահվան դատապարտվածները ողջունում են քեզ»... Ես հասկանում եմ այդ նախադասությունը, հասկանում եմ, թե որքան քիչ է այդտեղ կեսարի փառաբանությունը և որքան շատ է հանդիմանությունը և կյանքի կարոտը... Եվ իմ մարդկային կյանքի կարճատևության մեջ ինձ

մխիթարում է միայն այն, որ ես գոնե ապրում եմ համաշխարհային պատմության ամենահետաքրքիր և ամենակարևոր ժամանակաշրջանում…

Բայց նորից թախիծ ու կարոտ: Ինչո՞ւ հնարավորություն չունեմ միաժամանակ գտնվելու ամեն տեղ, տեսնելու ամեն ինչ, մասնակցելու ամեն ինչի, ապրելու հազար կյանքով, այսինքն՝ ոչ թե հազար, այլ աշխարհի բոլոր մարդկանց կյանքով…

Գուցե ոչ մի սերունդ՝ մինչև այժմ գոյություն ունեցածներից, այնպես չի զգացել իր «փոքրականության», իր «մի հատ» լինելու ողբերգությունը, որքան որ իմ սերունդը: Բայց դա, իհարկե, թախծազվարթ ողբերգություն է, բողոք բնության օրենքի դեմ: Հաշտվելու համար քո «սահմանափակության» հետ, բավական է հիշել՝ «ազատությունը դա անհրաժեշտության գիտակցումն է» փիլիսոփայական միտքը:

Գալով մարդկային կյանքի տևողությանը, ապա դրա կարճ լինելը բոլորովին չէր էլ անցնում մեր մտքով: Կյանքը մեզ թվում էր անսահմանորեն երկար, մենք չէինք էլմտածում, նույնիսկ զգում, թե իբր դա ավարտվելու է երբևէ:

Եվ երբ սթափվում էի իմ մտքերից, պարզվում էր, որ արդեն դասավորել եմ բավական թվով լրագրեր:

Ինձ հայտնի էր, որ Ա. Նորեկ ստորագրությամբ զանազան թերթերում երբեմն-երբեմն հրատարակվող հոդվածների հեղինակը «Բանվոր»-ի այժմյան խմբագիր Աշոտ Հախումյանն էր: Ժամանակին ես կարդացել էի նրա գրախոսականը «Մուրճ» ամսագրի առաջին համարի մասին: Իսկ այժմ գտա մի այլ հոդված, որով նա պատասխանում և հակաճառում էր Ա. Մյասնիկյանի հոդված գրախոսականին՝ նույն «Մուրճ» ամսագրի մասին: Ես հետաքրքրված կարդացի այն, բայց հոդվածն ինձ չհամոզեց, իսկ որ ամենացավալին էր, նույնիսկ մի քիչ հիասթափեցրեց ինձ խմբագրից, որին ես հեղինակություն էի համարում ինձ համար: Հոդվածի մտքերից ավելի, ինձ հիասթափեցրեց նրա մի բացառիկ արտասովոր նախադասությունը: Ինչ-որ հարցում վիճելով Ա. Մյասնիկյանի հետ, նա գրում էր.— «Իհարկե, գրողն այնպես է կապված իր սոցիալական միջավայրին, ինչպես շունն իր տան տիրոջ դռանը»... Ա՜յ քեզ համեմատություն, ա՜յ քեզ միտք արտահայտելու ձև…

Նորեկի հոդվածն իմ մեջ բուռն ցանկություն առաջացրեց անպայման գտնելու և կարդալու Մյասնիկյան-Մարտունու հոդվածը:

Ես բախտ էի ունեցել տեսնելու Մարտունուն և ներկա գտնվելու նրա զեկուցմանը՝ Լենինականի քաղլուսվարի թատրոնում: Հազիվ թե որևէ մարդ, ով տեսել է նրան գոնե մի անգամ, կարողանա մոռանալ նրան երբևէ: Իրոք որ, Չարենցի ասածի նման, նա բրոնզաձույլ մարդ էր, չի կարող լինել ավելի դիպուկ բնորոշում:

Կան գեր մարդիկ, կան հաղթանդամ մարդիկ, կան, վերջապես, ծանրամարմին մարդիկ: Մարտունին դրանցից ոչ մեկն էր, ոչ մյուսը, ոչ երրորդը: Նա մի ձուլածո, մոնումենտալ քանդակ էր, կենդանի քանդակ:

Բայց հարցը միայն արտաքինը չէ: Բացառիկ մարդիկ ունեն այդպիսի ներդաշնակ արտաքին և ներքին: Նրա ձայնը, նրա մտքերը, մտքերն արտահայտելու եղանակները, կեցվածքը բեմի վրա՝ այդ բոլորն ապշեցուցիչ կերպով պարզ էին, բայց ոչ հասարակ: Ունկնդիրները նրա մտքերին ու խոսքերին ապավինում էին՝ ինչպես քամու բերանն ընկածը հզոր կաղնուն: Նա ներշնչում էր և

հարգանք ու սեր, և խորագույն հավատ ու վստահություն, և՛ պատկառանք ու ակնածանք միաժամանակ: Նա ծնված էր ղեկավար լինելու համար, իսկական, արժանի ղեկավար:

Իմանալով այժմ, որ նա հոդված է գրել գրական պարբերականի մասին, ես, մեղքս ի՞նչ թաքցնեմ, անակնկալի եկա: Լսելով նրա բավական ընդարձակ զեկուցումը, ես նրան ընկալել էի որպես միայն քաղաքական խոշոր գործչի և չէի ենթադրում, թե նա կարող է իջնել մինչև գրականությամբ զբաղվելը: «Երևի մի քանի սկզբունքային-գաղափարական կարգի դիտողություններ է արել մեր պրոլետգրողներին»,— մտածեցի ես:

Ես գտա նրա հոդվածը և կարդացի կախարդվածի պես: Իմ առաջին տպավորությունը եղավ այն, թե պայթեց մի վիթխարի ռումբ: Պայթեց այն, ապա երբ իջավ երկինք բարձրացած փոշին, ես հստակորեն տեսա, որ իմ դեմ չկար հեռանկարը փակող պատնեշը, այնտեղ ձգված էր մի լայն ճանապարհ դեպի գրականության ապագան…

Մարտունու հոդվածը միանգամից պատասխան տվեց ինձ հուզող բոլոր հարցերին:

Մի ուրիշ անգամ, մի ուրիշ տեղում, ես հանգամանորեն գրել եմ այդ ապշեցուցիչ հոդվածի և գրական շարժման մեջ դրա ունեցած վիթխարի դերի մասին: Այստեղ այնքանն ասեմ միայն, որ այդ հոդվածը ոչ միայն բովանդակություն տվեց մեր խմբակի աշխատանքներին՝ Լենինականում, այլև առիթ դարձավ «Լենինականի բանվորա-գյուղացիական գրողների «Հոկտեմբեր» միության» ստեղծմանը:

Մարտունու հոդվածի պայծառ լույսի տակ մենք սկսեցինք հստակ տեսնել մեր գրականությունն իր դրական ու բացասական կողմերով, իր աճման թերություններով ու մոլորություններով: Սկսեցինք տեսնել հեռանկարները: Եթե մինչ այդ մենք միայն ընթերցողներ էինք, ովքեր կամ հավանում են իրենց կարդացածը կամ չեն հավանում, ապա այժմ մենք ամեն մի կարդացած տող վերլուծում էինք: Ոչ թե նստում էինք ու հատկապես վերլուծում, այլ վերլուծորեն ընկալում, հասկանում: Ահա թե ինչ կարող է անել մի հոդվածը, մի փայլուն մտքի վառած փայլուն լապտերը…

Մենք այժմ սկսեցինք հասկանալ, օրինակ, թե ինչու մինչև հիմա էլ մեզ դուր չէր գալիս Ալազանի պոեզիան, չնայած որ նա համարվում էր նոր գրականության առաջին ջութակը:

Ալազանը, ինչպես հիշատակեցի, այդ տարիներին հարմարվում էր հայ պրոլետարական պոեզիայի առաջին դեմքը: Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ նա համարյա միակ գրողն էր բանվորական դազգահի մոտից եկած, չհաշված մի քանի երկրորդական դեմքեր, այլև, որ շատ ավելի կարևոր էր, իր գրվածքներում խտացնում էր այն բոլոր բնորոշ գծերը, որոնք հատուկ էին այն ժամանակվա պոեզիային: Դրանք էին պրոլետարական թեմաների այնպիսի ծայր աստիճան վերացականությունը, որ, օրինակ, կարելի էր «Բանվոր» կոչվող ոտանավորի վերնագիրը փոխել «Հոկտեմբեր», «Գործարանը» դարձնել «Մայիսի մեկը», «Մենք»-ը դարձնել «Է՛յ, դուք» — և ոչինչ չէր փոխվի դրանից: Բանաստեղծություններն այն ժամանակ մեծ մասամբ իրենցից ներկայացնում էին ամպագոռգոռ և շռնդալի ածականների կուտակումներ, իսկ երբեմն էլ հանդիպում էին կուրյոզներ: Ասենք թե, թերթում գրված էր.

«Կայարանում Բաքվից նավթ եկավ: Պահեստի ռեզերվուարը ջարդված է վաղուց: Բաքվից էլ հեռագրեցին, թե էդ ցիստերները դատարկեք, ղրկեք շտապ: Հիմի մոլորվել ենք, չգիտենք, թե նավթը ուր լցնենք: Գծին վագոններն ու լոկոմոտիվները կանգնած են խարաբ, ու դեպոներում ոչ երկաթ կա, ոչ գործիք, որ ռեմոնտ անենք, շարժենք»…

Դե ի՞նչ,— կարող է մտածել ընթերցողը,— դա մտահոգված թղթակցություն է մի կարևոր հարցի մասին: Բայց, ոչ, դա բանաստեղծություն էր՝ չափածո տողերով շարված, ես միայն «արձակ» տողերով արտագրեցի դա: Վերնագիրը՝ «Երկաթի կարոտը»: Փակագծի մեջ հիշատակված է՝ «երգ»: Դե փորձիր երգել այդ թղթակցությունը՝ Գ. Վանանադեցու գրած…

1924 թվի վերջին լույս տեսավ Ալազանի «Աշխատանքային» ժողովածուն: Եթե դա որևէ բանով տարբերվում էր նրա նախորդ ժողովածու-տետրակներից և մամուլում տպած բանաստեղծություններից, ապա նրանով, որ այդտեղ ավելի ևս էին խտացել գույները, բնորոշ կողմերը: Ահա մի բանաստեղծություն այդ ժողովածուից.

Արյունի կրկես էր ու խնճույք,

Կրկեսում կանայք կային հերարձակ,

Կրկեսում արյունը մանուկներ էր գրկել,

Կրկեսում բանվորներ կային, մարտնչող, համարձակ:

Արնապարում այդ քանի՜ հայրեր ընկան,

Քանի՜ մայրեր խեղդեց այդ պարը,

Ու մանուկների քանի՞ խմբեր

Գրկեց խոլապարն այդ:

Բայց կյանքը չթողեց նրանց,

Որ բանեն անդուլ, եռանդուն,

Դադրեցին շնչելուց նրանք,

Դեմ տալով մահու գերանդուն:

Բայց այդպես երկար չբանդվեց

Բռնության վանդակում կյանքը,

Այլ կամքը հազարի քանդվեց.

Ու հազարը դուրս ելան մեզից:

Բայց էդպես չմնացինք երկար

Խավարի կամքին գերի,

Արդեն նոր օրերը եկան.

Ու լույսի բալանիք բերին:

Բավական է ինչքան բանդեցին մեզ,

Բավական է ինչքան քանդեցին մեզ:

Օրերում մշուշ ու ցուրտ,

Օրերում համր ու դանդաղ,

Բացվեցին սրտերը մեր հուր,

Կայծերով վառ ու անթաղ:

Դարերի խավարից արնամած,

Դարերի երկունքով մի հրե,

Ծնվեց մի արև լուսավառ,

Հրասիրտ մի արև աներեր:

Դարերի պատնեշը խավար

Պատռել էր կերոնով մի լուսե,

Ու ելեր գալիքի համար

Լուսեղեն դափնիներ հյուսել:

Պայքարների շարք է ելել

Կիսադարյան կյանքն իր դաժան,

Մարտնչել է առնահատուկ

Նա անվհատ ու աներեր:

Ըմբոստ է նա միշտ, կյանքն իրա եղել է պայքար,

Մաշինի բաշին է նա հյուսել իր հյուսեր,

Ձավոդը կերտել է ջղերն իր կուռ ու երկաթ,

Եվ վառել է մտքումն իր կերոն ու լույսեր

Ըմբոստ ես դու հիմա ու բավական ջահել,

Ջահել, բայց լավ ծանոթ ուղիներին այդ խորթ,

Եվ քո անհաղթ ձեռին արևավառ ջահեր

Լույս են տալիս ճամփիդ, դու անվարան ճամփորդ:

Ավաղ, սա մի բանաստեղծություն չէ, այլ իմ կողմից չարասրտորեն իրար միացված 12 բանաստեղծություններից մեկական տներ... Իհարկե, կարելի էր էլի հազար ու մի տեսակ կոմբինացնել վերացական պոեզիայի այդ ստանդարտ մասերը և ոչինչ չէր տուժի դրանից: Եվ չէր էլ օգտվի, իհարկե: Ամեն տեղ գործում էին միևնույն «պրոլետ-սիմվոլները»՝ օրեր, տարիներ, դարեր, գալիք, ժամանակ, հավերժություն, արև, լույս, խավար, կյանք, աշխարհ…

Վերցնենք դրանցից «օրերը»: Քանի՞ տեղով է գործածված այդ վերացական հասկացողությունը ընդամենը հազար տող պարունակող այդ գրքույկում: Ես վերջին անգամ չարաշահում եմ ընթերցողի համբերությունը:

Օրերի հին ուղին թեքեց:

Օրերի դաշտը արյունով ներկեցին:

Օրերի խուճապում շփոթ:

Օրերի մութ գրկում արևը:

Օրերի պարում նա քանի՞ գարուն է թաղել:

Օրերի տերն ենք մենք:

Օրերը մտրակներ ձեռներին:

Օրերը բեկվեցին ու անցան:

Օրերը Հոկտեմբեր գալիքի սուրհանդակով:

Օրերը ճեպում են զվարթ:

Օրերը հաշվում էին արևի թազբեհի վրա:

Օրերը մղձավանջ ու մաղձ լինեն թող:

Օրերը սարսափ ու արյուն:

Օրերը դառնան հարսանիք:

Օրերը մշուշ ու ցուրտ:

Օրերը համր ու դանդաղ:

Օրերը չար ու տանջող:

Օրերում մեր սիրտը մորթենք թող:

Օրերից առաջ գնանք:

Այս օրերի սարսափներից:

Վաղվա օրերի թռիչքում:

Արշավեց օրերի ետևից:

Ընկել էր օրերում անզեն:

Եվ մթնած օրերում թռան:

Ձգում էր օրերին հրեղեն նետեր:

Ու առանք օրերի թամբին:

Սահում էր օրերի աշունը:

Արդեն նոր օրերը երկար:

Հիշում եմ օրերը հին:

Եվ հեծած օրերը նոր:

Արևաշող օրերը քեզ:

Ծերերը օրերն էին հաշվում:

Բայց օրեր չար ու զալում:

Այդ օրերն են իրար գրկած թռչում անհետ:

«Օրերը» — 34 անգամ: «Դարերը» — 14 անգամ: «Գալիքը» — 7 անգամ: «Արևը» — 26 անգամ: «Լույսը» — 8 անգամ: «Խավարը» — 17 անգամ: «Կյանքը» — 15 անգամ: «Աշխարհը» — 2 անգամ և այլն և այլն:

Եվ այդ վերացական պոեզիայի հազար տողի մեջ միայն երկու տող, որ արժեին ամբողջ գիրքը.

Աբարանը չիթ է ուզում,

Սիսյանը մերկ է ու բոբիկ…

Ահա այդտեղից պիտի սկսեր Ալազանն իր պրոլետարական պոեզիան, և ոչ միայն Ալազանը: Բայց ժամանակի գրաքննադատությունը շարունակ գովում և հրահրում էր գրական մոլորությունները, թույլ չէր տալիս նրանց՝ երկար ժամանակ գտնել իսկական ուղին: Իսկ այդ ուղին հստակ ցույց էր տվել Ալ. Մարտունին, ցույց էին տվել ուրիշ բոլշևիկ գրականագետներ, բայց նրանք համարվում էին «հնացած» մարդիկ և նրանց տեսակետները՝ «ետ մնացած»:

Բավական է բերել մի օրինակ՝ ցույց տալու համար, թե ինչպիսի անխիղճ աստիճանի էին հասնում անփորձ երիտասարդ գրողին մոլորության մեջ գցող գովեստները: Մեջ բերելով գրքույկի հետևյալ տողերը՝

Հանդում

Արորը կոտրել է,

Հին չութը

Անզոր է արդեն, իսկ գեղջուկը

Գրազ է եկել,

Հանդերի ամբողջ կրծքովը

Ուզում է ակոսներ բարդել,

գրախոսն ասում էր.

«Եթե Ալազանը «Աշխատանքային» իր այս զրքույկում ուրիշ բան չտար՝ այս պոեմից, սա էլ հենց բավական էր, որ գիրքը կոչվեր աշխատանքային, իսկ ինքը՝ իրոք որ աշխատանքի երգիչ»:

Եվ ապա.— «Գրքում արտասանության համար գեղեցիկ կտորներ կան, իսկ «Յունկերսից ՍԽՀՄ»-ը կարելի է մինչև անգամ վերածել աշխատանքի սիմֆոնիայի, երգել ու նվագել»…

Կարելի է ասել, որ այս և նման տողերը լցրին համբերության բաժակը: Մամուլում ուղղակի ճայթեց խիստ սուր մի բանավեճ այդ գրքի շուրջը:

Լցվեց նաև Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի Լենինականի խմբակի անդամների՝ կարդացած և բանիմաց պատանիների, համբերության բաժակը: Մենք անջատվեցինք ասոցիացիայից և ստեղծեցինք Լենինականի բանվորա-գյուղացիական գրողների «Հոկտեմբեր»

միությունը՝ վերացական պոեզիային կոնկրետ, երկրի հետ կապված պոեզիա հակադրելու բարձր նպատակով:

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԱՅԳԻՆ

1925 թիվ: Լենինական: Վաղ գարնան արևը թույլ տաքացնում է և մեղմ փայլում: Այնքա՛ն հաճելի է՝ նստել արևի տակ... Իսկ որտե՞ղ է դա ամենից հարմար, եթե ոչ քաղաքային այգում:

Ոչ, մեր այգին ստվերաշատ չէ, և դա պետք էլ չէ, որովհետև նույնիսկ ամռան ամիսներին արևը մեզ մոտ շոյում է և ոչ թե ձաղկում: Այգին մեծ չէ, զուգահեռ ձգված ծառուղիները երկար չեն: Եթե վեր կենաս նստարանից ևնայես շուրջդ, ցանցառ ծառերի արանքներով կարող ես տեսնել, թե ովքեր են նստած մյուս ծառուղիներում:

Իսկ նստած են ոչ-շատ մարդիկ: Ահա մի կին՝ իր երեխայի հետ: Կինն անգործ նստած՝ վայելում է արևը, իսկ երեխան վառ-կանաչ թիակով ավազ է հավաքում և լցնում վառ-կարմիր պատգարակի վրա: Ահա և երկու ծերունիներ՝ իրար շատ նման: Տարբերությունը նրանց մեջ միայն այն է, որ մեկի ձեռքում տեր-ողորմյան ձիթապտղի մուգ-սրճագույն կորիզներից է, իսկ մյուսի ձեռքին՝ սաթից: Նրանք անշտապ զրույց են կցել՝ անշուշտ նախահեղափոխական շրջանի ինչ-որ դեպքերի մարդկանց մասին, որոնք արդեն չկան: Ահա և մի երիտասարդ, որը զբաղեցրել է մի ամբողջ նստարան: Մեջտեղում նստել է ինքը, իսկ իր շուրջը դեզերով դարսել է գրքեր, թղթեր... Ես նրան ճանաչում եմ,— պատրաստվում է ընդունվելու Երևանի համալսարանը…

Այգի է մտնում ցարական գեներալ Դիդիմովը՝ դեռ իր գեներալական բաց-կապույտ, երբեմնի փառահեղ շինելով՝ ուսերին գցած: Սա արդեն այգու մշտական այցելուն է, համարյա բնակիչը: Ես գիտեմ նրա մշտական նստարանը: Ահա կմոտենա, կնայի՝ մաքո՞ւր է, համենայն դեպս կսրբի հենց այդ նպատակով վերցրած իր հատուկ թաշկինակով, կնստի, կդնի ակնոցները և կսկսի թերթ կարդալ: Ո՛չ ես և ոչ էլ իմ ընկերներն անբարյացակամություն չենք զգում նրա հանդեպ: Երևի դրա պատճառն այն է, որ նա արդեն ծեր է և նրա երբեմնի գեներալական երկճյուղ, պատկառելի մորուքը լոկ ծերունու մորուք է այժմ: Կանցնի մի տարի և մենք կիմանանք, որ նա լավ մարդ է եղել անցյալում: Հենց նրա հրամանատարության տակ է ծառայել Բուդյոննին Ալեքսանդրապոլում, հեղափոխությունից առաջ: Թիֆլիսում կայացած Համամիութենական Կենտգործկոմի նստաշրջանից հետո գալով Լենինական, Բուդյոննին կայցելի նրան, և կհանձնարարի մարդկանց՝ օգտագործել գեներալի կարողությունները, և նա կդառնա քաղաքային միլիցիայի պետի օգնական: Իսկ առայժմ նա միայն այգու մի անհրաժեշտ, անբաժանելի մասն է:

Այգին երեք կողմից շրջապատված է փողոցներով՝ նույնքան խաղաղ: Մի կողմում՝ քաղաքի միակ փոստի սակավամարդ շենքը, մյուս կողմում՝ միհարկանի տներ, դիմացը՝ դեպի քաղաքի կենտրոնը ձգվող փողոց, որի մի թևի վրա՝ նույնպես միհարկանի տներ, իսկ մյուս թևի վրա՝ Առևտրական դպրոցի եռահարկ հսկայական շենքը: Համենայն դեպս, իր շրջակայքում և ընդհանրապես միհականի Լենինականում դա, ինչպես և մի երկու փողոց այն կողմ կանգնած իգական գիմնազիայի նույնպես եռահարկ շենքը, հսկայական, տպավորություն է թողնում:

Առևտրական դպրոցի շենքում այժմ տեղավորված են քաղգործկոմը, այլ հիմնարկներ, աղջիկների մի դպրոց, այնտեղ է գտնվում նաև քաղաքի երկրորդ դահլիճն իր մեծությամբ՝ Քաղլուսգլխվարի թատրոնից հետո, որի շենքը գտնվում է հենց այգում:

Առևտրական դպրոցի շենքի դիմաց, փողոցի մյուս կողմի վրա, մի փոքրիկ շենքում տեղավորված է «Բանվոր» թերթի խմբագրությունը: Ոչ, մեզ՝ երիտասարդներիս, թերթն այլևս չի հուզում: Նրա ծավալը փոքրացել է և նա համարյա չի տպում ոչ մի բանաստեղծություն: Իսկ մենք այժմ շատ ենք, հենց միայն խմբակի «կորիզը»՝ մեկնկես տասնյակից ավելի…

Ես մենակ եմ նստած այգում: Հակառակի պես այսօր ոչ ոք չի երևում մեր ընկերներից: Իսկ գարունը բացվելուն պես այգին դարձել է մեր գլխավոր հավաքատեղին և անպաշտոն, բայց ոչ պակաս կրակոտ դիկսուսիաների ավարայրի դաշտը: Միայն խիստ անհրաժեշտությունը կարող է մեզ ստիպել՝ գնալ-ներփակվել «Բանվոր»-ի մեզ տրամադրված սենյակում: Ի դեպ, այդ սենյակից մենք կարող ենք օգտվել միայն աշխատանքային օրն ավարտվելուց հետո, այլապես մեր աշխարհասասան վեճերի պատճառով հաջորդ օրվա թերթը լույս չի տեսնի:

Դեռ թույլ է բաբախում կյանքի զարկերակը Լենինականում: Դա առողջ, բայց անդորր կյանքով ապրող մարդու զարկերակ է: Որևէ կառապանի ձիու խրտնելն ու փախչելը դեռ պետք է մեր քաղաքում: Որևէ նորեկ մարդ իսկույն ճանաչվում և նշվում է քաղաքացիների կողմից…

Թվում է, թե միշտ է լինելու այդպես: Մենք դեռ չենք պատկերացնում, թե ինչ հեղաշրջում են մտցնելու մեր քաղաքի կյանքում այն տեքստիլ գործարանը, որը հիմնադրվեց անցյալ տարի, քաղաքի մի հեռու ծայրում, և Շիրակի ջրանցքը, որի կառուցումն ահա ուր որ է կավարտվի քաղաքից ութ կիլոմետրի վրա գտնվող Կապս գյուղի մոտ: Այնտեղ են ջրանցքի գլխավոր կառուցումները և էլեկտրակայանը: Մենք համեմատաբար հաճախ ենք այցելում այնտեղ, դիտում ենք շինարարությունը, անցնում ենք երկար կիլոմետրեր ձգվող գետնուղիներով, որտեղով ջուրն է հոսելու: Մեզ՝ երիտասարդ գրողներիս, տրանսպորտ են տալիս այնտեղ գնալու: Իսկ տրանսպորտը՝ դա «լինեյկա» է կամ կառք: Ավտոմեքենան դեռ հազվադեպ հյուր է Լենինականում…

Հանկարծ այգու լուռ անդորրը խախտվում է աշխարհի ամենագեղեցիկ երաժշտությամբ՝ աղջիկների զվարթ ծիծաղով և խոսակցության ու կանչերի հնչյուններով: Դա աղջիկների դպրոցի աշակերտուհիներն են, որոնք դուրս են ելել մեծ դասամիջոցին՝ նույնպես արև վայելելու, ի միջի այլոց՝ նաև տղաներին նայելու կամ, ավելի ճիշտ, իրենց «նայել տալու» համար: Ես նրանց բոլորի ընկերն եմ, որովհետև նրանցից մեկի անբաժան մտերիմն եմ և մի տեսակ հանդիսանում եմ նրանց դասարանի «փեսան»: Իբրև այսպիսին ես այլևս դադարել եմ նրանց համար «տղա» լինելուց, որի հանդեպ հարկավոր լինի «դիրք պահել», այսինքն՝ սիրամարգի պես ցույց տալ իրենց փառահեղ պոչերը և անցնել՝ իբր թե անտարբեր:

Նրանք շրջապատում են ինձ, կատակում, փաթաթվում, քաշքշում, առավել ևս եռանդագին, որովհետև դիմացի նստարանի վրա նստել են երկու երիտասարդներ և նախանձով նայում են ինձ: Աղջիկները զվարճանում են՝ նրանց խանդը շարժելով, ես գոհ եմ աղջիկների ուշադրության կենտրոնը լինելուց, իսկ «իմ» Քնարիկը կանգնել է մի կողմ, հետաքրքրությամբ զննում է իր հետ վերցրած ինչ-որ տետրակ և ոչ մի ուշադրություն չի դարձնում մեզ վրա: Նա, իհարկե, գոհ է, որ իր ընկերուհիները հավանում են ինձ և այդպես մտերիմ են զգում իրենց ինձ հետ: Իսկ իմ վերաբերյալ նա միանգամայն ապահով է: Թեև նա դասարանի գուցե ամենատգեղ աղջիկն է, բայց բոլորը միասին չունեն նրա հմայքը— բնության զարմանալի խաղ: Իսկ ես ամուր կապված եմ նրա հետ մի ինչ-որ զգացմունքով, որի ինչ լինելը ոչ նա է գիտակցում լրիվ, ոչ՝ ես:

Պատանեկան անմեղ տարիներ... Ի՞նչ նշանակություն ունի մեզ համար աղջկա հանրընդունելի գեղեցկություն ունենալ-չունենալը, երբ բնավորության մի գիծ, քեզ նայելու մի ինչ-որ անկրկնելի յուրահատկություն, ծիծաղի մի ինչ-որ անբացատրելի նոտա կարող են թունդ հանել հոգիդ և

առանձնացնել քեզ համար այդ աղջկան ոչ միայն դասարանի, այլև աշխարհի բոլոր աղջիկների միջից…

Քնարիկը լուռ, միայն քթի տակ ինչ-որ քմծիծաղով, որն այնպե՛ս սազում է նրան, մեկնում է դեպի ինձ իր ձեռքին բռնած տետրակը: Ես գիտեմ՝ բանաստեղծություններ են: Նախքան ուրիշներին ցույց տալը՝ դրանք անպայման պետք է կարդամ ես: Մի նոր, ավելի հախուռն հարձակում աղջիկների կողմից ինձ վրա՝ տետրակը խլելու համար: Ոչ այնքան նրանց ֆիզիկական ուժից հաղթված, որքան որ աղջկական հպումներից և համարյա գրկախառնություններից գլխապտույտի հասած, ես այլևս անկարող եմ պահել տետրակը ձեռքումս: Բայց այդ րոպեին իմ հայացքը հանդիպում է Քնարիկի հայացքին և ես սթափվում եմ: Ես հասկանում եմ, որ եթե պատանիս, տղամարդս, պարտվեմ աղջիկների կողմից, թեկուզ և այդքան բազմաթիվ, ապա կարժանանամ «իմ» աղջկա այնպիսի արհամարհական հայացքին, որ վիրավոր գայլի պես ստիպված պիտի լինեմ ոռնալ ցավից: Իհարկե, ես ունեմ այնքան ուժ, որ կարողանամ ետ վանել դրանցից էլ ավելի շատ աղջիկների գրոհը, բայց դրա համար ստիպված պիտի լինեմ դիմել կոպտության: Իսկ մի՞թե ես կարող եմ կոպտություն անել այդպիսի քնքույշ արարածների հետ… Բայց, մյուս կողմից , փորձիր չանել կոպտություն: Կխլեն տետրակը և ամենագեղեցիկ աղջիկն այն ներս կկոխի իր հագուստի օձիքից դեպի կուրծքը: Ապա, փորձիր կոխել ձեռքդ այնտեղ և հանել…

Չգիտեմ, ում հաղթանակով կավարտվեր այդ պայքարը ֆիզիկական զսպված ուժի և կանացի հմայքների անդիմադրելի թովչանքի միջև, եթե այդ րոպեին աղջիկներից մեկի լսողությունը չորսար դասամիջոցի ավարտի զանգի ձայնը: Նա վախեցած հայտնում է այդ մասին, և ես դեռ ուշքի չեմ եկել, երբ նրանց չքնաղ երամը դուրս է վազում այգուց՝ ինձ թողնելով իրենց արբեցնող հպումների տպավորության տակ դեռ շշմած…

Բայց մի պահ անց ես զգաստանում եմ, նայում շուրջս և բռնում իմ նախկին լուրջ ու խոհական դիրքը՝ դեմքի համապատասխան արտահայտությամբ: Բայց այգում գտնվողներից այլևս ո՞վ կհավատա դրա իսկականությանը: Եթե մինչև աղջիկների գալը նրանք դեռ կարող էին ինձ դնել խելոք ու համեստ պատանու տեղ, ապա, աղջիկների հետ իմ հորթական հրճվանքից հետո նրանք կարող են միայն ծիծաղել իմ լուրջ ու խոհուն ձևանալու վրա՝ արդեն իմանալով, թե ինչ պտուղ եմ ես:

Վեր կենալ և գնա՞լ: Բայց դա հավասար կլինի փախուստի: Ես շարունակում եմ նստած մնալ, բացում եմ Քնարիկի տետրը և սկսում եմ կարդալ: Բայց չեմ կարողանում կենտրոնանալ: Իսկույն մտածում եմ՝ իսկ ինչո՞ւ աղջիկները չէին խլում տետրը հենց իրենց ընկերուհու ձեռքից. որ ավելի հեշտ էր, և սպասում էին, մինչև որ նա ինձ հանձներ այն: Դե, իհարկե, իմ ձեռքից խլելն ավելի հաճելի էր նրանց համար — հասկանում եմ ես և կարմրում բավականությունից:

Հանկարծ այգուց դուրս հնչում են լրագրավաճառների երեխաների սուր ձայները: Ոչ ոք տեղից չի շարժվում: Գիտեն, որ նրանցից մեկնումեկն ուր որ է կմտնի այգի և նստածներին կվաճառի թերթերը:

— Երևանի գնացքը եկավ,— տերողորմյա քաշող մի ծերունին մյուսին հաղորդում է այդ խիստ ուշացած նորությունը:

— Թիֆլիսինը դեռ չի եկել,— նրանից ետ չի մնում մյուսը:

Ես նայում եմ ծառուղով դեպի վեր՝ սպասելով լրագրավաճառին: Իհարկե, եթե նա կես րոպե ևս ուշանա, ես վեր կցատկեմ և վազ կտամ՝ ինքս գտնելու նրան: Մի՞թե ես կարող եմ ծերունիների

նման հանգիստ սպասել: Պարզապես չեմ ուզում բացակայել այգուց, որպեսզի բաց չթողնեմ ընկերներիս, որոնք, ճիշտ է, կարող են գալ և սպասել, կարող են նաև բարձրանալ «Գորկա»՝ ենթադրելով, որ ես և մյուսներն արդեն գնացել ենք այնտեղ:

Ծառուղով գալիս է մի մարդ՝ թերթ կարդալով: Ո՞վ է նա: Լրագրի ետևում նրա դեմքը չի երևում, բայց քայլվածքից նրան կարելի է ճանաչել նույնքան ճիշտ, որքան որ դեմքից: Դա տարօրինակ քայլվածք է: Մարդն առաջ է գցում ոտքը, և երբ նա պետք է իջնի գետնի վրա, հանկարծ խաբս է տալիս օդի մեջ, կտրուկ շուռ է գալիս մի կողմ և նոր միայն իջնում գետին: Ապա նույնն անում նաև մյուս ոտքը՝ խաբս տալով մյուս կողմ: Ֆուտբո՞լ է խաղում, ի՞նչ է: Իհարկե, դա նա է: Բայց ե՞րբ է եկել Թիֆլիսից…

— Ընկեր Մահարի՞…

Թերթը խշշալով վար է իջնում՝ իմ աչքի առաջ բաց անելով Լոռվա շարժական անտառը և դրա տակ «Քուրքենի» կեռքիթ դեմքը:

— Այ փչացած, դո՞ւ ես,— ուրախանում է Գուրգենը: «Փչացած»՝ դա նրա սովորական սիրալիր ածականն է, որը նա տալիս է նույնիսկ ինձ նման դեռևս անմեղ էակների։— Ես քեզ եմ փնտրում:

— Բարով եք եկել,— ողջունում եմ ես:— Ե՞րբ եք եկել:

— Ահա մի քանի օր է:— Ապա, մի պահ մտածելով, ավելի է ճշտում,— այո, մի քանի օր է: Բայց ինձ թվում է, թե արդեն մի ամիս է, որ եկել եմ: Խորենը չկա, Նաիրին …

Նա ընդհատում է: Ես նրան հասկանում եմ: Մեծ վիրավորանք է՝ գրողների միությունից վտարվելը, առավել ևս՝ մանկության ընկերոջ ակտիվ մասնակցությամբ:— Իսկ դու կորել ես, չկաս: Գնում եմ խմբագրություն, Աշոտին եմ հարցնում, իսկ նա ինքն էլ վաղուց չի տեսել քեզ: Դու գարեջուր սիրո՞ւմ ես:

— Երկու անգամ,— ասում եմ ես:

— Ի՞նչ երկու անգամ,— չի հասկանում Գուրգենը:

— Երկու անգամ եմ խմել: Կեսական շիշ...

Նա ծիծաղում է իմ «հարուստ» փորձի վրա և նշանակալից տոնով շտապեցնում է ինձ.

— Գնանք, գնանք…

Երկու ժամ հետո, սեղանի վրա, իմ և Գուրգենի միջև արդեն կանգնել է շշերի մի ամբողջ բարիկադ: Բայց դա ոչ թե անջատում է մեզ, այլ մտերմացնում: Արդեն պատմված են տեղիս գրական կյանքին վերաբերող բոլոր գործերը, արդեն հայտնված է խմբակի անդամների դժգոհությունը կենտրոնից: Ես շարունակում եմ.

— Շատ ուրախ եմ, ընկեր Մահարի, որ դուք վերադարձել եք Լենինական՝ նորից մշտական բնակության: Մենք ձեզ հետ միասին կաշխուժացնենք այստեղի գրական կյանքը: Դուք…

— Այ տղա, փչացած,— ընդհատում է Գուրգենը,— բավական չէ՞ ինձ «դուք» ու «ձեզ» ասես: Վերջ տուր:

«Վերջ տալ» հաջողվում է անսպասելիորեն արագ: Ոչ միայն այն պատճառով, որ ես այլևս երեկվա ամաչկոտը չեմ, այլև որ մենք ահա քանի շշի մեջ օդ ենք լցրել:

Ետ հրելով գարեջրի գավաթը,— այլևս բավական է,— ես ասում եմ դավադրական շշուկով.

— Գիտե՞ս ինչ, Գուրգեն... Ես որոշել եմ հարց դնել խմբակում՝ անջատվելու Երևանի խմբակից, որն իրեն անվանում է Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիա, բայց…

Գուրգենի աչքերն անմիջապես փայլում են: Ես հասկանում եմ, նա իրավունք ունի:

— Դա ձեր գործն է,— այնուամենայնիվ ասում է նա,— ես չեմ ուզում խառնվել դրան, որովհետև ունեմ իմ հաշիվներն Ասոցիացիայի հետ և իմ մասնակցությունը ձեզ՝ կարող է ընկալվել որպես անձնական վրեժխնդրություն…

— Տարօրինակ մարդ ես,— բարկանում եմ նրա վրա հին ընկերոջ պես,— կարծես մենք այստեղ անձնական վիրավորանքներով ենք ղեկավարվելու: Եթե համաձայն ես, որ մեր այսօրվա գրական արտադրանքը ոչ մի կերպ բավարարել չի կարող, որ դա ոչ թե անփորձության հարց է, այլ սխալ գրական տեսակետների, և որ դա…

— Ճառ մի կարդա,— ընդհատում է Գուրգենը,— դու այն ասա, հետևո՞ւմ ես «Աշխատանքային»-ի շուրջը ծավալված դիսկուսիային:

— Իհարկե,— ասում եմ ես,— զարմանալի է նույնիսկ, որ այդպիսի հարց ես տալիս:

— Դա պոեզիա չէ,— ասում է Գուրգենը,— սխալ ճամփով են քշում Ալազանը, Վանանդեցին ու Դաբաղյանը: Նույնիսկ Նաիրին սկսել է փչանալ: Իսկ ինչպե՞ս էր գրում.

Էյ, դու հնացել ես,

Հիմա դու անցել ես,

Արդեն ծերացել ես,

Գյուղակ իմ հին՝

Խառակոնիս...

Կամ թե չէ.

Ահա նրանք եկան,

Քանաքեռից իջան,

Օ, նրանց հետ որքան

Հին ընկերներ կգան,—

Արիս,

Կարո,

Արեն…

— Իսկ Արենը՝ դա Չարենցն է, ես կարդացել եմ ձեռագիրը, նա հետո է փոխել այդպես: Դա կարմիր բանակի մուտքն է Երևան՝ Քանաքեռի կողմից, երբ հեղինակը դեռ չգիտե խորհրդային կարգերի մասին և ասում է նրա դրոշի մասին.

Այդ դրոշի վրա ևս զուր էի գրել

Իմ մթագնած գլխում յոթդլխանի հրեշ…

— Իհարկե, կարդացել ես,— հարցի ձևով ասում է նա:

— Ավելորդ հարց է:

— Եվ հավանել ես:

— Նույնպես ավելորդ հարց է:

Եվ իբրև ապացույց, որ, իրոք, կարդացել եմ, արտասանում եմ բանաստեղծությունը՝ սկզբից մինչև վերջ.— «Հավկիթի երգը»:

— Փչանում է,— հառաչելով, նորից է կրկնում Գուրգենը,— սկսում է թմբուկի ձայներ հանել: Իսկ ի՞նչ խորհուրդ էր տալիս նրան Մյասնիկյանը՝ հավանելով «Մուրճ»-ում տպած նրա բանաստեղծությանը…

Ես վեր եմ ցատկում տեղիցս:

— Մյասնիկյանը... Գիտե՞ս ինչ, Գուրգեն, դա մի այնպիսի նյութ է, որի մասին չի կարելի խոսել գարեջրի սեղանի մոտ: Ես հենց նրա այն հռչակավոր հոդվածի մասին եմ ուզում խոսել քեզ հետ մանրամասն: Դա հոդված չէ, այլ ծրագիր, համաձա՞յն ես:

— Ավելորդ հարց է,— ասում է Գուրգենն իմ տոնով:

— Դե ուրեմն... վերադառնանք այգի:

Մի քանի օր հետո, ապրիլի 25-ին, «Խորհրդային Հայաստան» թերթում լույս տեսավ մի փոքրիկ հոդված՝ «Չափածո հրապարակախոսը և նրա հրապարակախոս պաշտպանը» վերնագրով: Դրա տակ կար ենթավերնագիր, որն իր վրա բևեռեց գրական հասարակայնության ուշադրությունը.— «Լենինականի բանվորա-գյուղացիական գրողների միության կողմից»…

Դա դեկլարացիա չէր սովորական իմաստով: Այնտեղ չէին արտահայտված տեսական հայացքներ, չէր հրապարակված մեր ստեղծագործական պլատֆորմը: Ավելի ճիշտ, դա արված էր մասամբ և կողմնակիորեն, Ալազանի գրքույկի մասին մեր կարծիքը հայտնելու կապակցությամբ: Շեշտն այնտեղ դրված էր գեղարվեստականության վրա: Չի կարելի չափածո տողերով հրապարակախոսություն անել և անունը դնել գրականություն:

Հոդվածի վերջում նորից էր հիշատակված մեր նոր անունը.

«Ի վերջո Լենինականի Բանվորագյուղացիական Գրողների Միությունը՝ անջատված ճյուղը Երևանի ասոցիացիայի, խնդրում է մեր բոլոր մարքսիստ քննադատներին»... և այլն:

«Անջատված ճյուղը Երևանի ասոցիացիայի»... Դա, ինչպես շուտով իմացանք, պայթել էր դրական ռումբի պես: Դրա հենց հետևյալ օրը նույն թերթում լույս տեսավ Ասոցիացիայի հայտարարությունը, որով նա, ոչ ավել և ոչ պակաս, ժխտում էր Լենինականում որևէ խմբակ

ունենալու փաստը… Մոռացել էին նույնիսկ, որ Ալազանը Բաքվի «Վիշկա» պարբերականում տպած իր հոդվածում հիշատակում էր հենց հակառակը, նշում էր Ասոցիացիայի Լենինականի խմբակը... Բայց, «Վիշկան» դեռ մամուլի տակ էր և լույս տեսավ որոշ ժամանակ անց: Իսկ առայժմ կարելի էր ժխտել և հանձն առնել միայն այն փաստը, որ խմբակի անդամներից որպես Ասոցիացիայի անդամ «հաստատված է միայն ընկ. Արմենակը»՝ այն էլ «մի շարք նկատառումներով»…

«Արմենակը»՝ դա ես էի... Այնքան էին իմ վրա բարկացել, որ... որ մոռացե՞լ էին իմ անունը: Ոչ, ինչպես հետո իմացանք տպարանից, գրել էին արհամարհաբար «Արմենուկ», բայց գրաշարը, տեղյակ չլինելով ծնունդ առած գրական ռապպական բարքերին և ծանոթ չլինելով այդպիսի անվան, շարել էր Արմենակ…

Մեր անջատումն այնպես էր ցնցել Ասոցիացիային, որ նրա ղեկավար ընկերները, չբավարարվելով թերթում արած իրենց հայտարարությունից, մայիսի 1-ին բաց թողեցին մի փոքրիկ միօրյա թերթ՝ «Պրոլետգրող» վերնագրով, որի առաջնորդողը և ամենամեծ հոդվածն ուղղված էին մեր դեմ:

Պրոլետարական գրական շարժումը մի նոր աստիճանի բարձրացնելու հետ միասին, որին ձեռնարկել էր մեր նոր միությունը, սկսվում էր նաև մեր գրական շարժման խորշելի ուղեկցի՝ խմբակային պայքարի կյանքը... Երկու ամիս հետո Մահարին նույն թերթում տպեց կիսապաշտոնական մի հոդված, որի վերնագիրն էր. «Ինչու անջատվեցինք»: Եվ քանի որ նա ինքն անձամբ ոչ ոքից չէր անջատվել, այլ նրան «անջատել» էին Ասոցիացիայից, ապա դրա ղեկավարները նորից խիստ զայրացան և պատասխան հոդված տպագրելով, շեշտեցին այդ հանգամանքը:

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԱՅԳԻՆ

Բոլորովին պատահական չէ, որ պրոլետգրականության այդ նոր շարժումն սկսվեց հատկապես Լենինականում: Լենինականը, նախկինում՝ Ալեքսանդրապոլը, իսկ ավելի նախկինում՝ Գյումրին, հնուց ի վեր հռչակված է եղել որպես բանաստեղծների ու գուսանների օրրան և միշտ էլ պահպանել է այդ տրադիցիան:

Բայց ավելի կարևոր ազդակն այն էր, որ խորհրդային շրջանի ամենաառաջին երկու մեծ կառուցումները Հայաստանում, հիմնադրվել էին Լենինականում: Դրանք տեքստիլ գործարանն ու Շիրակի ջրանցքն էին:

Հայաստանի բնակիչներից ամենաառաջինները լենինականցիներն էին, որոնք ոչ միայն կարդում էին թերթերում՝ խորհրդային շինարարության մասին, այլև տեսնում էին իրենց աչքի առաջ, իրենք էին մասնակցում դրան: Ոչ մի տեղ այնքան առարկայորեն չէր մարմնավորվել բանվորագյուղացիական դաշինքը, պրոլետարիատի և գյուղացիության շահերի միասնությունը, որքան որ այդ կառուցումներում: Շիրակի ջրանցքը պատրաստվում էր ջուր մատակարարել գյուղերի դաշտերին, և էլեկտրականություն՝ քաղաքին ու նրա գործարաններին: Տեքստիլ գործարանը պատրաստվում էր զարկ տալ բամբակագործությանը՝ գյուղում և մանվածքային ու գործվածքային արտադրությանը՝ քաղաքում: Տեքստիլ գործվածքները հավասարապես հարկավոր էին թե գյուղի և թե քաղաքի բնակչությանը:

Երեկվա անգրագետ, հետամնաց գյուղացիներն այսօր դարձել էին շինարար բանվորներ և փորում էին ջրանցքի հունը կամ բարձրացնում էին տեքստիլ կոմբինատի գործարանների կորպուսները:

Ամբողջ մեր փոքրիկ երկիրը լարված հետևում էր կառուցումների ընթացքին և սրտատրոփ սպասում դրանց ավարտմանը: Ամենից ավելի այդ լարումն ու սպասումը, աշխատանքային էնտուզիազմն ու շինարարական ռոմանտիկան զգացվում էին Լենինականում, վարակել էին բոլոր բնակիչներին: Ամեն մեկն իր գիտեցած ու կարողացած ձևով կառուցում էր ջրանցքն ու գործարանը: Կարելի է ասել՝ քաղաքն ապրում էր այդ երկու շինարարություններին կից:

Ահա թե ինչով էր պայմանավորված մեր նոր միության անդամների «ջրանցքային» պոեզիան: Մամուլը ջերմ գնահատական տվեց մեր գրական արտադրանքին: Իմ և Մահարու գրած «Խաբսի Կապսի ջրանցքը» սատիրական ագիտպիեսը մի քանի տարի շարունակ չէր իջնում ակումբային, գյուղական և այլ մասսայական բեմերից:

Այդ բոլորը լավ: Բայց հարկավոր էր տպագրել մեր գրական երկերը: Իսկ ո՞վ կհրատարակեր մեզ՝ եթե նույնիսկ երեք տարի գոյություն ունեցող Ասոցիացիան «Մուրճ»-ի կարճատև հրատարակումից հետո դեռ չուներ իր օրգանը: Թերթերում և պարբերականներում հրատարակվելը կարող էր կրել առիթից-առիթի բնույթը: Մի՞թե դա բավական էր: Մենք ուզում էինք տպավորություն թողնել, բոլորին իմացնել, որ մենք «հոկտեմբերյաններ» էինք, ուզում էինք պանծացնել մեր միության անունը: Բայց ինչպե՞ս վարվել: Հո չէ՞ր կարելի թերթերում տպած մեր ոտանավորների վերևում, մեր ազգանվան կողքին, գրել՝ «Հոկտեմբեր», ինչպես Ալազանն էր գրում՝ «բանվոր»:

Բոլոր մտքերը մեզ բերում էին մի եզրակացության՝ հարկավոր էր ունենալ մեր հրատարակչությունը և օրգանը: Իսկ մի՞թե դա հեշտ բան էր այն երիտասարդների համար, որոնք հաճախ «սեմիչկայի» փող անգամ չունեին՝ այգում զրուցելիս երբեմն «չրթելու» համար…

Ելքը գտնվեց անսպասելիորեն շուտ և հեշտ: Այդպես պատահում է վեպերի մեջ՝ հաճախ, իսկ կյանքում՝ հազարից մի անգամ:

Շիրակի ջրանցքի վարչությունը, թեև ջրանցքի շինարարությունն արդեն ավարտվելու վրա էր, իր տրամադրության տակ ուներ դեռ չօգտագործած գումար, որը նախատեսված էր ջրանցքը մասսայականացնելու, դրա մասին ագիտացիա անելու և կուլտուրական այլ ձեռնարկումների համար: Այդ գումարը պահված էր՝ ջրանցքի բացման կապակցությամբ օգտագործելու համար, և դրվել էր Աշոտ Հախումյանի տրամադրության տակ:

Հախումյանն Ասոցիացիայի անդամ էր: Բայց ահա մի քանի տարի էր, ինչ նա աշխատում էր Լենինականում: Այդ փաստը խոսում էր ինքն իր մասին: Չի կարելի մի քանի տարի ապրել Լենինականում և չդառնալ դրա պատրիոտը: Նա, այդ նիհար և նույնիսկ հիվանդոտ մարդը, սերտ կերպով կապված էր քաղաքի խոշոր շինարարությունների հետ, կապված էր նաև մեզ՝ գրողներիս հետ: Խիստ թույլ բան էր Ասոցիացիայի անդամությունը՝ դիմադրելու համար այդպիսի կապերի: Ուստի և, նա իր տրամադրության տակ դրած այդ գումարը որոշել էր օգտագործել մեր, Ասոցիացիայից անջատվածներիս և նոր միություն կազմակերպածներիս գրվածքները տպագրելու համար: Այդպիսով նա իրեն ենթարկել էր Աշոտուկ կամ, լավագույն դեպքում, Աշոտակ դառնալու վտանգին:

Չորս և կես տարվա ընթացքում, 1922-1925, պրոլետարական գրողները հրատարակել էին հազիվ մեկկկես տասնյակ գրքույկ, որոնցից 5-ը՝ Ալազանինը, 4-ը՝ Վշտունունը, 3-ը՝ Մահարունը, 2-ը՝ Աբովինը և 1-ը՝ Զարյանինը:

Ուստի և, իսկական հեղեղի տպավորություն թողեց մարդկանց և, առաջին հերթին, մեր «հակառակորդների» վրա, երբ մի երկու ամսում մեր միությունն իրար ետևից հրապարակ հանեց

Մահարու, իմ, Գեղամ Սարյանի, Սարմենի հինգ գրքույկները, որոնցից յուրաքանչյուրի վրա գրված էր մեր միության անունը և դրված էր գրքույկի հերթական համարը:

Ասոցիացիայում գլուխ էին կոտրում՝ հասկանալու, թե այդ ի՞նչ միջոցներով ենք մենք պահում «մեր» «հրատարակչությունը»: Իսկ մենք, կարծես դիտմամբ, «ջգրացնելու» համար, դեռ հայտարարություն տվեցինք, թե պատրաստվում ենք հրատարակելու մեր միության «Ջրանցք» օրգանը, «պատասխանատու խմբագիր՝ Արմեն»…

Մեր մյուս խնդիրը նոր գրողներ հայտնաբերելն էր: Մենք դրանց փնտրում էինք ամեն հնարավոր և անհնար վայրերում, ամեն խոսակցի մենք այժմ նայում էինք ծուռ-ծուռ և կասկածանքով՝ թաքնված գրող չէ՞ արդյոք:

Մենք գտանք մի շարք նոր մարդկանց: Ովքե՞ր էին դրանք: Մի՞թե դա կարևոր է: Արդեն իսկ այդ հարցը՝ «ովքեր էին դրանք» ապացուցում է, որ կարևոր չէ, քանի որ նրանք չեն մնացել մեր գրականության մեջ:

Բայց մենք գտանք մեկին, որը... որը Գեղամ Սարյանն էր:

Մի օր Սողոմոն Տարոնցին ինձ ու Մահարուն հայտնեց, որ ճանաչում է Իրանից եկած մի ուսուցչի, որը մի ժամանակ բանաստեղծություններ է գրել:

— Իսկ հիմա չի՞ գրում,— հետաքրքրվեց Սարմենը:

— Դա կարևոր չէ,— ասացի ես,— եթե գրել է երբևէ, կգրի նաև հիմա, եթե նույնիսկ տաղանդ չունենա:

— Իսկ որտե՞ղ կարող ենք տեսնել նրան,— հարցրեց Մահարին:

— Իր ազատ ժամերին նստած է լինում այգում,— հայտնեց Սողոմոնը:

Մենք պայմանավորվեցինք՝ հետևյալ օրը, երեքով, Մահարին, Տարոնցին և ես, գալ այգի և «հավաքագրել» նրան:

Մեզանից ո՞վ չէր լինում այգում: Լինում էինք և՛ մեր աղմկոտ գրական վեճերը կցելու համար, և՛ պարզապես ընկերական զրույցի, և՛, առնվազն, սիրային հանդիպման: Բայց այն, ինչ մենք տեսանք ի դեմս Գեղամ Սարյանի, ծայր աստիճան զարմացրեց մեզ: Նստարանի վրա, արևկող անողի ծույլ տեսքով, կիսափռվել էր անորոշ տարիքի մի մարդ…

Եթե Գեղամն այսօր, չնայած ժամանակից շուտ սպիտակած իր մազերին և ժամանակից շուտ կուտակված տարիքին, երիտասարդ է և աշխույժ, ապա դրա պատճառն այն է, որ նա այդ դատարկ բաները՝ ծերություն, ծուլություն և այլն, ունեցել-պրծել է իր երիտասարդ ժամանակ:

— Ընկեր Գեղամ,— դիմեց Սողոմոնը,— ծանոթացեք մեր գրողներ ընկեր Մահարու և ընկեր Արմենի հետ…

Նույնիսկ տարրական քաղաքավարությունը չկարողացավ ստիպել նստածին՝ փոխել իր դիրքը: Համարյա առանց նայելու, նա երկարեց իր ձեռքը՝ նույնիսկ չմտահոգվելով՝ հասա՞վ դա մեզ, թե ոչ: Եվ ասաց իր անուն-ազգանունը՝ այնքան դանդաղ, որ այդ ժամանակամիջոցում Սարմենը կհասցներ արտասանել մի ամբողջ բանաստեղծություն.

— Գեղամ Բաղդասարյան:

Մենք նստեցինք նրա մոտ:

— Ներեցեք, ընկեր Բաղդասարյան,— բուն արմատից բռնեց Մահարին,— մեր լսածով դուք անցյալում բանաստեղծություններ եք գրել…

— Գրել եմ...— պատասխանեց իրանցին ֆլեգմատիկ տոնով:

— Եվ տպվե՞լ:

— Տպել եմ,— արձագանքեց նա:

— Իսկ, ներեցեք, ընկեր Բաղդասարյան, հիմա չէ՞իք ուզենա գրել:

Գեղամը նայեց երկնքին: Այնտեղ մի փոքրիկ ամպ ծածկել էր արևը: Նա ճանճ քշելու ձևով մի շարժում արեց ձեռքով՝ ամպը հեռացնելու համար, ապա, երբ արևը նորից տաքացրեց նրան, նա բավականությունից մի թեթև ժպտաց ինքն իր մեջ, ապա առանց ժպիտի պատասխանեց երեք բոպե առաջ տրված հարցին.

— Կուզենայի:

— Իսկ ինչո՞ւ չեք գրում, ո՞վ է խանգարում ձեզ,— զարմացա ես:

Նա ուզեց նայել ինձ, շուռ տվեց հայացքը, բայց, նախքան ինձ հասնելը, նրա հայացքը հանդիպեց ավելի մոտիկ նստած Մահարուն, և նա, ալարելով այլևս շարունակել հայացքի ճանապարհը, կանգ առավ Մահարու վրա և պատասխանեց նրան.

— Ուսուցչություն եմ անում, զբաղված եմ:

— Արտասանեցեք ձեր հին գրածներից որևէ բան,— խնդրեցինք մենք:

Գեղամը հառաչեց, տխուր նայեց արևին, կարծես ուզում էր ասել՝ ներիր ինձ մի բոպե, սրանց ճանապարհ դնեմ, հետո կշարունակենք մեր տաքացնել-տաքանալու աշխատանքը: Մտածեց բավական երկար, բայց մենք չէինք զգում ժամանակի անցնելը, որովհետև զբաղված էինք մի շատ հետաքրքիր երևույթ դիտելով: Գեղամ Բաղդասարյանի աչքերը մեր աչքի առաջ փոխվում էին: Աչքերի հետ մեկտեղ ամբողջապես փոխվում էր ինքը: Մենք այժմ տեսնում էինք, որ նա երիտասարդ է՝ քսանչորս-քսանհինգ տարեկան: Ապա տեսանք, որ նա, թեև շարունակ նույն անշարժությամբ նստած, բայց կարծես փոթորկալի շարժվում է մեր աչքի առաջ իր մարմնի բոլոր անդամներով, իր բոլոր դիմագծերով:

Ոչ, Սողոմոնը սխալ էր ասել մեզ, թե Գեղամն Իրանից եկել է մի քանի տարի առաջ: Գուցե, մասամբ, և եկել էր, բայց լրիվ եկավ միայն այդ բոպեին…

Երբ Իրանի ծուլության վերջին պատառը նա դուրս մղեց պրծավ իր միջից, նա այնքան նման դարձավ մեզանից յուրաքանչյուրին, որ մենք տրորեցինք մեր աչքերը: Նա սկսեց արտասանել իր մի լավ բանաստեղծությունը.— «Երբ իմ տունը կգաք դուք և տանը չեմ լինի ես»…

Դեռ հազիվ էր նա արտասանել առաջին տողերը, երբ մեզ համար դարձավ միանգամայն պարզ.— այստեղ գտնվողներիս մեջ նա առաջին բանաստեղծն էր, գուցե առայժմ Մահարուց հետո: Երևի մեր բոլորի սրտով մի պահ անցավ նախանձը— իզուր գտանք սրան— բայց երկրորդ բոպեին բուռն ուրախությունը փայլեց բոլորիս դեմքի վրա:

Իսկ Գեղամ Բաղդասարյանն արտասանում էր և արտասանում: Մի փոքրիկ բանաստեղծությանը հաջորդում էր երկրորդը, ապա երրորդը, իսկ նա դեռ շարունակում էր հիացնել մեզ: Ե՞րբ վերջացրեց նա՝ մենք այդ չլսեցինք, այլ տեսանք: Նա հանկարծ նայեց արևին, կարծես ուզում էր ասել՝ «վերջապես, պրծանք», և նորից, ոչ թե աստիճանաբար, այլ այս անգամ արդեն միանգամից, նորից մեր դեմ նստած էր, ավելի ճիշտ՝ կիսափռված էր Իրանի զավակը:

Հիացմունքի խոսքերից առաջ մեզ բոլորիս պաշարեց նույն շահագրգռությունը.

— Իսկ չէի՞ք ուզենա մտնել մեր գրական կազմակերպության մեջ, ընկեր Բաղդասարյան…

— Կարելի է... Ի՞նչ կա որ:

— Այդ դեպքում մենք ձեզ անբաղդացնենք,— հանկարծ ասաց Մահարին՝ զարմացնելով ինձ ու Սողոմոնին: Նույնիսկ Գեղամի անդրդվելի դեմքի վրա խաղաց հետաքրքրության պես մի բան:

— Բաղդասարյան ազգանունը շատ երկար է և բանաստեղծական չէ,— բացատրեց Գուրգենը,— մենք կվերցնենք ձեր «բաղդը» և դուք կմնաք որպես Գեղամ Սարյան…

Գեղամը նայեց արևին, կարծես խորհրդակցեց նրա հետ, ապա, այնքան ժամանակում, որքանում Սարմենը կարտասաներ երկու բանաստեղծություն, ասաց.

— Կարելի է... Ի՞նչ կա որ:

Դա Գեղամ Բաղդասարյանի արտասանած վերջին խոսքն էր: Այնուհետև սկսվեց Գեղամ Սարյանը…

Մեր միության աշխատանքների մի այլ գրական բնագավառը զեկուցումներն էին և երեկույթները: Զեկուցումները կատարում էի ես, իսկ արտասանում էինք բոլորս: Ըստ այն ժամանակվա սովորության, համարյա ամեն զեկուցման կամ երեկույթի մասին մենք տպում էինք թռուցիկներ, որոնք լրագրավաճառ երեխաները բաժանում էին հանդիպած մարդկանց: Եվ, դարձյալ, ըստ այն ժամանակվա սովորության, դահլիճը լիք-լցված էր լինում ունկնդիրներով: Գալիս էին ոչ միայն գրականությամբ հետաքրքրվողները, այլև այնպիսիք, ովքեր մեզ վրա նայում էին որպես ըմբշամարտիկների: Դժբախտաբար, նրանք հեռանում էին լրիվ բավարարված: Գրական հարցերին նվիրված ոչ մի հավաքույթ չէր անցնում առանց սուր, երբեմն շատ սուր վեճերի:

Գևորգ Աբովը, որը Երեքի քայքայումից հետո մնացել էր Երևանում, ինչպես ասացի, չէր հարել Ասոցիացիային և բավական լարված փոխհարաբերության մեջ էր դրա հետ: Նա էր խմբագրում «Խորհրդային Հայաստան» թերթի գրական բաժինը և նա էր տպագրել մեր դեկլարացիան և տպագրում էր մեր հոդվածներն ու բանաստեղծությունները: Ու եթե մենք մի կողմից ինքներս էինք օգտագործում նրան, ապա, մյուս կողմից, նա ինքն էր ուզում օգտագործել մեզ՝ նոր միություն ստեղծած գրողներիս, հենվելու համար մեր միության վրա և կազմակերպչորեն հակադրվելու համար Ասոցիացիային:

Եվ ահա, մեզ հետ կոնտակտի մեջ մտնելու համար նա եկավ Լենինական:

Աբովը Լենինական եկավ՝ դեմքի վրա ունենալով առնվազն պետական հեղաշրջում կատարել պատրաստվողի խորհրդավոր արտահայտություն: Պահպանելով կոնսպիրացիայի բոլոր կանոնները, նա ասաց, որ ուզում է տալ մի հրապարակային զեկուցում պրոլետգրականության մասին: Դավադրողի շշուկով նա ասաց, որ հարկավոր է թռուցիկներ տպագրել և հայտարարել նաև թերթում:

Աբովին ես առաջին անգամն էի տեսնում, իսկ Մահարին ծանոթ էր դեռ իր Երևանում եղած ժամանակներից: Ուստի և, թողնելով նրանց՝ միասին շարունակելու համար «դիվային ծրագիր» կազմելը, ես գնացի դահլիճ գտնելու և թռուցիկներ պատվիրելու: Զեկուցումը նշանակված էր հաջորդ օրը՝ կիրակի: Տեղեկանալով, որ Լուսբաժնի դահլիճն այդ երեկո ազատ է, ես կազմեցի թռուցիկը և հանձնեցի շարելու:

«Կիրակի, ամսի այսինչին, երեկոյան ժամի այսինչին, Լուսբաժնի դահլիճում, տեղի կունենա գրական երեկույթ»... և այլն:

Դեռ նոր էին սկսել թռուցիկը տպագրել, երբ զանգ տվեցին տպարան և հաղորդեցին, որ կիրակի երեկոյի համար դահլիճն արդեն զբաղեցրին ավելի կարևոր երեկույթի համար: Ես դադարեցրի տպագրությունը և սլացա նոր դահլիճ որոնելու: Շուտով գտա բանվորական ակումբը և հեռախոսով հայտնեցի տպարան՝ կարող եք շարունակել թռուցիկների տպագրությունը՝ փոխելով միայն երեկույթի վայրը: Ես դուրս եկա և հանգիստ քայլերով գնում էի փողոցով, երբ աչքս ընկավ մի հայտարարության՝ պատի վրա: Կիրակի երեկոյան բանվորական ակումբն զբաղված էր, ինձ սխալ էին ասել…

Ես սլացա ետ:

— Լավ որ եկաք,— ուրախացավ վարիչը,— մենք մոռացել էինք, ակումբը վաղը երեկոյան զբաղված է:

Հարկ եղավ երկրորդ անգամ զանգ տալ տպարան և նորից վազվզել՝ դահլիճ որոնելու: Բայց այս անգամ ես հեշտությամբ չգտա: Իսկ գտածս էլ մի բանի նման չէր: Քաղաքի կենտրոնից հեռու, մի երկրորդական դպրոցի դասարաններից մեկն էր դա՝ համեմատաբար ամենամեծը: Այս անգամ ամենամանրակրկիտ տեղեկանալով և համոզվելով, որ դասարանը կիրակի երեկոյան ազատ է, ես հաղորդեցի տպարանին, որ թռուցիկը, վերջապես, կարելի է տպել: Գնացի տպարան՝ անձամբ հսկելու տպագրությանը: Հազիվ էի հասել, երբ շնչասպառ ներս ընկավ դպրոցի աշխատակիցը: Ես գունատվեցի: Բայց, պարզվեց, որ ոչ թե դասարանն զբաղված է լինելու կիրակի երեկո— այդպիսի վտանգ չկար— այլ որ ամբողջ դպրոցում չկա արհեստական լուսավորություն, որովհետև դրա կարիքը երբեք չի զգացվել:

Ես միայն մի րոպե մնացի անորոշության մեջ, ապա նույնիսկ ուրախացա. ավելի լավ, կփոխենք թռուցիկի վրա միայն ժամը: Ցերեկն ավելի շատ մարդիկ կհավաքվեն, քան երեկոյան:

Հետևյալ առավոտ Լենինականի բնակիչները մեծ զարմանքով և քահ-քահ ծիծաղելով կարդում էին մեր թռուցիկներն այն մասին, որ այսինչ դպրոցում, ցերեկվա ժամը 12-ին տեղի է ունենալու գրական երեկույթ... Ընդ որում, թռուցիկի վրա ամենամեծ տառերով տպված էին հենց այդ երկու բառերը՝ «ցերեկ» և «երեկույթ»…

Ես և Գուրգենը սաստիկ զայրացանք, որ նույնիսկ մեր միության անդամները լրիվ չէին հավաքվել: Իսկ հասարակությունը ներկա էր այն ամենամինիմալ քանակով, որից այն կողմ սկսվում են կոտորակային թվերը: Ցերեկային երեկույթը չկայացավ և Աբովը Լենինականից մեկնեց նույն օրը՝ անշուշտ ստանալով մեր միությունից ամենանմխիթար տպավորություններ: «Ինչ լավ է,— երևի մտածեց նա,— որ ես դրանց նախագահը չեմ»…

Բայց, դրա փոխարեն, մենք կազմակերպեցինք մի այնպիսի երեկո, ինչպիսիք շատ քիչ են հանդիպում նույնիսկ շատ բաներ տեսած այնպիսի քաղաքներում, ինչպիսին Լենանականն է: Ներկա դեպքում «մենք»՝ նշանակում է ոչ թե միությունը, այլ ես և Մահարին:

Զանազան ակումբներում և նույնիսկ թատրոնի շենքում սովորական գրական երեկոներ կամ «Խաբսի-Կապսի ջրանցքի» ներկայացումներ կազմակերպելուց հետո, մի անգամ, երկուսով նստած, մենք մտածում էինք, թե ինչպիսի մի նոր երեկո կազմակերպենք:

— Բառի բուն իմաստով նոր,— ասաց Գուրգենը,— նորություն:

Ի նշան համաձայնության ես ճոճեցի գարեջրի գավաթը:

— Նախ՝ վերնագիրը,— ասաց Գուրգենը,— «երեկույթ»՝ դա արդեն շաբլոն է: «Համերգ»՝ նույնպես: Եկ անվանենք…

Նա այդտեղ պաուզա տվեց կես ժամի չափ, մինչև որ հանկարծ բացականչեց.

— Թամաշա…

Այդ բառը մենք գրեցինք մեր ակտիվի մեջ:

— Այո, բայց,— համարյա իսկույն նորից թախծոտելով, ասաց Գուրգենը,— դա Չարենցի «Կապկազ-թամաշա» պիեսի վերնագիրն է և ծանոթ է բոլորին: Հարկավոր է էլի մի բառ՝ որպես երեկոյի գրական բաժնի վերնագիր: Ի՞նչ դնենք…

Այս անգամ ընդմիջումը տևեց մի շաբաթ: Երկուստեք առաջարկվեցին և միահամուռ մերժվեցին մի քանի տասնյակ բառեր, մինչև որ Գուրգենը նորից ունեցավ Քրիստափոր Կոլոմբոսի խնդության մի պահ ևս.

— Դիվերտիսմենտ...— համարյա գոռաց նա:

— Համաձայն եմ,— իսկույն ասացի ես հիացած:— Շատ լավ բառ է, հնչուն և բոլորի համար անհասկանալի: Նույնիսկ ես չեմ հասկանում:

— Դու՝ ոչինչ,— ձեռքը թափ տվեց Գուրգենը,— կարևորն այն է, որ ժողովուրդը չհասկանա: Հակառակ դեպքում, եթե իմանան, որ դա նույն համերգն է, կհիասթափվեն, չեն գա…

— Չեն հասկանա,— հանգստացրի ես:— Բայց գոնե դու ինքդ վստա՞հ ես, որ դիվերտիսմենտ նշանակում է համերգ:

— Կարծեմ,— միանգամայն վճռական կերպով ասաց Գուրգենը:— Եթե չեմ մոռացել: Բայց ի՞նչ կարևոր է դա: Ի միջի այլոց, այդ բառը հարկավոր է ավելի բարդացնել…

Եվս երկու օր անցավ «բարդացնելու» վրա, մինչև որ ստացվեց: Աֆիշը ստացավ հետևյալ ձևը.

«Հայ բանվորա-գյուղացիական գրողների «Հոկտեմբեր» միություն»: Այսինչ օրը, այսինչ ժամին, Քաղլուսգլխավարի թատրոնում կազմակերպվում է Թամաշա: Առաջին բաժին՝ Նեո-դիվերտիսմենտ: Երկրորդ բաժին՝ «Խաբսի-Կապսի ջրանցք»: Մասնակցում են...»:

Այդտեղ տրված էին ոչ թե դերակատարների անունները, որոնք, միևնույնն է, ոչ ոք չէր լսել, այլ դերերի անունները՝ դաշնակ ղեկավարների, մաուզերիստների, ապա նաև մեր ժամանակների իրական մարդկանց: Իսկ այնուհետև՝ ամենաանխիղճ սուտը և մեր աֆիշայի «մեխը».

«Գործողության ժամանակ ջուրը բեմից հոսելու է դահլիճ»:

— Գուրգեն, լսիր, չի կարելի խաբել մարդկանց:

— Ինչպե՞ս չխաբել, դո՞ւ ինչ ես ասում: Ո՞վ կուզենա հանուն ճշմարտության ոտից-գլուխ թրջվել: Չպետք է հանել այդ բառերը…

— Իսկ ո՞վ է ասում, թե պետք է հանել,— վիրավորվեցի ես:— Ընդհակառակը, ուզում եմ ասել, որ, գուցե, իսկապես, իրականացնենք այդ կետը: Ես այսօր կխոսեմ հերթապահ հրշեջի հետ:

— Հարցը կլուծենք տեղնուտեղը,— խուսափողական պատասխանեց Գուրգենը:

Ես այդպիսի անշլագ միայն երեք անգամ եմ տեսել կյանքում: Մեկը պատկանում էր կրկեսի մի հայտնի արտիստի, մյուս երկուսը՝ մեր «Թամաշային»:

Դեռ նշանակված օրվանից առաջ վաճառվել էին բոլոր տոմսերը: Դեռ նշանակված ժամից շատ վաղ հավաքվել էին հանդիսականները: Անամպ և տաք երեկո էր: Շատերը եկել էին համապատասխան հագուստներով, այսինքն՝ թիկնոցներով, անձրևանոցներով, հովանոցներով, ոմանք նույնիսկ կրկնակոշիկներով: Տոմս չունեցողներն ավելի շատ էին, քան ունեցողները: Նրանք ստվար բազմությամբ, գոռում-գոչումով մեզ էին փնտրում և գտնելիս քիչ էր մնում ծեծեին: Սա կեղեքման հին տարիները չեն, որպեսզի մարդկության մի մասն առոք-փառոք նստի դահլիճում, իսկ մյուս մասը չունենա կանգնելու տեղ անգամ: Վաճառեցեք իսկույն կանգնելու տոմսեր, հին ռեժիմի անիծյալ կողմնակիցներ: Եվ դեռ գրողներ են անվանում իրենց…

Մենք բավականությունից պատրաստ էինք համբուրելու մեզ հայհոյողներին: Վերջապես մեր փափուկ սիրտը չդիմացավ և մենք թողարկեցինք կանգնելու այնքան տոմսեր, որ նստողներին բեմից կարող էր չսպառնալ ոչ ջրի մի կաթիլ, ոչ էլ տեսնելու որևէ բան:

Թատրոնի շենքի առաջ նվագում էր մեր վարձած փողային նվագախումբը: Ֆոյեում՝ լարայինը: Կես ժամ հետո մենք փոխեցինք դրանց տեղերը: Ինչո՞ւ էինք անում դա: Մի այլ դեպքում այդպիսի միջոցի դիմում են ավելի շատ ժողովուրդ հավաքելու համար: Իսկ մենք չգիտեինք ուր փախչենք հավաքված ժողովրդի ձեռքից:

Մենք դա անում էինք՝ լրիվ արդարացնելու համար «Թամաշա» անունը:

— Դուք ինչո՞ւ եք դեսերտը գցել ներկայացումից առաջ,— հետաքրքրվում էին ոմանք:

— Որովհետև դա սովորական դեսերտ չէ, այլ նեո-դեսերտ,— նրանց անտեղյակության վրա դեմքը ծռմռելով, բացատրում էր Գուրգենը:

Երեկոն անցավ բացառիկ հաջողությամբ: Նույնիսկ նստածները կարողացան տեսնել որոշ բան: Բայց երբ վար իջավ ներկայացման վերջին վարագույրը, ամբողջ դահլիճը թնդաց աղաղակից.

— Ջո՛ւր… Ջո՛ւր... Ջո՛ւր ենք ուզում…

Մեզ, կուլիսների ետևում գտնվողներիս, այնպես թվաց, թե հրդեհ է բռնկվել կամ, ավելի շուտ, անապատում քարավանը մեռնում է ծարավից:

— Արմեն, գնա հանգստացրու ժողովրդին,— իբրև մի շատ հասարակ հանձնարարություն, ասաց ինձ Գուրգենը:

— Դու ուզում էիր հարցը լուծել տեղնուտեղը,— հիշեցրի ես:— Տեղնուտեղը հենց սա է, որ կա: Լուծիր…

— Ես հենց լուծում եմ,— հնարագիտորեն ասաց նա։— Լուծումը հենց այն է, որ գնաս և բացատրես ժողովրդին, որ ջուրը հարկավոր է բույսերին, և անթույլատրելի բան է դա իզուր շռայլելը։

Իսկ ժողովուրդը դեռ շարունակում էր անջուր տոչորվելը։ Երկար մտածելու ժամանակ չկար։ Ես նետվեցի բեմ և մոտեցա վարագույրին՝ առանց ինձ հաշիվ տալու, թե ինչ եմ ասելու։

Ես հազիվ էի հայտնվել վարագույրի արանքից, երբ լսվեց մի վախեցած, ընդհանուր ճիչ, կարծես ես ինքս ջուր լինեի։ Մարդիկ առաջին շարքերից նետվեցին ետ, իսկ ավելի սառնարյունները բաց արեցին հովանոցները։

— Ընկերներ...— ասացի ես։

Ինձ արձագանքեց արդեն դատարկված դահլիճը։

Այդ «Թամաշա»-ն իր «նեո-դիվերտիսմենտ»-ով, բարեբախտաբար, այդպես եզակի էլ մնաց մեր գործունեության մեջ։

ԻՍԱՀԱԿՅԱՆ ԵՎ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ

Չի կարելի գրել կյանքի բոլոր կողմերի մասին միաժամանակ։ Բայց չէ՞ որ հարկավոր է, որ ընթերցողը պատկերացնի այդ բոլոր կողմերը միաժամանակ։ Մենք ոչ միայն երիտասարդ գրողներ էինք, այլև պարզապես երիտասարդներ։ Մեզանից շատերի վրա ընկած էր իր ընտանիքը պահելու վաղահաս պարտականությունը։ Եվ այլն։

Ընթերցողի համար դժվար է այդ բոլորը պատկերացնել միաժամանակ։ Եվ ոչ թե նրա համար, որ նա զուրկ է պատկերացնելու ընդունակությունից, այլ գուցե նրա համար, որ գրողն է զուրկ պատկերացում տալու շնորքից։ Կամ, գուցե, գրողն է՞լ մեղավոր չէ և մեղավորը գրականությո՞ւնն է, որը մեզ սովորեցրել է ամեն ինչով իրար հետ կապակցված կյանքից ջոկել-առանձնացնել դրա մի որևէ կողմը, որևէ «թեմա», և գրել միայն այդ մասին…

Ինչպես էլ լինի, դժվար է պատկերացնել կյանքն իր բոլոր կողմերով։ Եվ գուցե դա անհրաժեշտ էլ չէ։ Գուցե հարկավոր է շեշտել միայն ամենակարևո՞ր…

Իսկ ամենակարևորն այն էր, որ մենք դեռ այն հասակում էինք, երբ շատ բան մեր կյանքի մեջ մտնում էր առաջին անգամ։ Մեզանից մեկն առաջին անգամ էր գարեջուր խմում, մյուսն առաջին անգամ էր սիրահարվում, երրորդն առաջին անգամ էր կարդում Շեքսպիրին և, ընկալելով դա որպես հայտնագործություն ոչ միայն իր համար, այլև ամբողջ աշխարհի, ամեն քայլափոխին և ամեն մարդու մոտ հիացմունքով և մանավանդ եռանդով աշխատում էր հավատացնել և հավաստիացնել, որ Շեքսպիրը հանճարեղ դրամատուրգ է…

Բայց դա ի՞նչ։ Մեր կյանքի երիտասարդությունը համընկել էր մեր հանրապետության, մեր ժողովրդի, նոր աշխարհի երիտասարդության հետ։ Այն, ինչ որ մենք գրում՝ էինք, ոչ միայն մեզանից յուրաքանչյուրի գրական արտադրանքի սկիզբն էր, այլև նոր գրականության սկիզբը։ Մենք, ինչպես տարեսկզբին աշխատող բանվորներ, բաց էինք անում և՛ օրվա «բալանսը», և՛ շաբաթվա, և՛ ամսվա, և՛ եռամսյակի, և՛ տարվա…

Սա այսպես է երևում այսօր, երբ նայում ես ետ։ Իսկ այն ժամանակ դա շատ սովորական էր ու հասարակ, առօրյա էր և ոչնչով աչքի չընկնող։ Այսինքն, այնքան էլ սովորական չէր կամ հասարակ,

առօրյա չէր կամ աննշան, բայց դա ոչ թե նրա համար, որ մենք գիտակցում էինք մեր գործի պատմականությունը, այլ որ երիտասարդներ էինք և ամեն ինչ ընկալում էինք թարմորեն և որպես թարմություն:

Ընկերների հետ պայմանավորված ժամից ավելի շուտ ես գալիս էի մեր միության սենյակը, բաց էի անում դուռն ինձ մոտ գտնվող բանալիով և մտնում ներս: Նստում էի՝ մենակությունից լրջացած, կենտրոնացած: Քիչ հետո բանաստեղծություն գրելս գալիս էր: Բայց նույն րոպեին գալիս էր նաև Քնարիկը:

— Ո՞ւր էիր չքացել երեկ,— առանց բարևելու, հարցնում էր նա,— ես ձայն տվեցի քեզ ձեր դարպասից ներս, մի քանի անգամ և գնացի:

Ապա, կարծես կարեկցաբար.

— Թե՞ խլացել էիր…

— Ոչ,— վեր էի ցատկում ես,— դու էիր ոտքերից զրկվել, որ չէիր գալիս ներս:

— Ի՞նչ գործ ունեմ ձեր տանը, ես հո քո սիրեցյալը չե՞մ,— ասում էր Քնարիկը՝ միայն իրեն հատուկ այնպիսի առեղծվածային քմծիծաղով, ակնոցների տակից այնպես ուղիղ նայելով իմ աչքերի մեջ, որ ես կորցնում էի բան հասկանալու կարողությունը: Ինչո՞ւ ասաց նա այդ՝ ինչ ուզում ես՝ հասկացիր: Չէ՞ որ դա հիմարություն է, հո միայն սիրեցյալները չէ՞, որ գնում են իրար մոտ: Բայց ինչո՞ւ ասաց նա ինձ այդ հիմարությունը: Հանդիմանո՞ւմ է ինձ, որ նա իմ սիրեցյալը չէ, ինձ վրա՞ է ծիծաղում, որովհետև նա համարյա թե արդեն իմ սիրեցյալն է, ակնարկո՞ւմ է արդյոք, թե իբր ես մի ուրիշին եմ սիրում և այդ մի ուրիշն է գալիս մեր տուն…

Մի խոսքով, ինչ ուզում ես՝ հասկացիր:

Քնարիկի ամեն մի խոսքը խորհրդավոր է և առեղծվածային: Ես այնքա՛ն հաճախ եմ գլուխ կոտրել դրանց վրա.…

Իսկ ինչպիսի՜ ստախոսն է նա... Գուցե նա երեկ չի էլ անցել մեր տան մոտով, բայց ես չեմ կարող ապացուցել այդ: Ապացուցել՝ ոչ միայն նրան, այլև ինձ: Ես միայն կռահում եմ: Բայց կռահում եմ նրա ստերի մի չնչին մասը: Ավելի մեծ քանակությամբ ստեր՝ ես կուլ եմ տալիս: Դրանց մի կեսի սուտ լինելը պարզվելու է հետագայում կամ հասկանալու եմ հետագայում, իսկ մյուս կեսն այդպես էլ մնալու է ինձ համար որպես հալած յուղ…

Նա ստում է առանց գործնական նպատակի, ներքին պահանջից դրդված: Եվ ինչպիսի՜ ստեր... Ինչպիսի՜ գրող դուրս կգար նրանից, եթե ստեր սարքելու իր մեծ ընդունակությունը գործադրեր սյուժեներ կառուցելու վրա…

Բայց սրանք այսօրվա մտքեր են: Այն ժամանակ ես չգիտեի, թե նրա ասածների խոշորագույն մասը ստեր են: Նրա մայրը, տիպիկ հայուհի և իմ տատիս քաջ ծանոթ ընտանիքից, ինձ համար դեռևս լեհուհի էր, որին փախցրել էր նրա հայրը և ամուսնացել հետը: Ու թեև նրանց առջնեկը Քնարիկն ինքն էր, բայց, բանից պարզվում էր, որ նա ունեցել է նաև իրենից մեծ եղբայր, որը քսան տարեկանում ինքնասպանություն է կատարել անհաջող սիրո պատճառով:

Իսկական տաղանդ էր հարկավոր՝ հիպնոսելու և հիմարացնելու համար ինձ նման ունկնդրին և մոռացնել տալու համար տատիս քանիցս արած պատմությունները նրա մոր ծնողների մասին: Կամ անկարող դարձնել կատարելու մի թեթև հաշիվ և տեսնելու, որ նրա խեղճ մայրը, աղջկա ստի

պատճառով, ստիպված է եղել վեց տարեկան հասակում ամուսնանալ և յոթ տարեկան հասակում տղա ունենալ…

Ներս է մտնում Սարմենը: Քնարիկն անմիջապես շուռ է գալիս դեպի նա և հանդիմանությամբ հարցնում.

— Դու ինչո՞ւ երեկոյան այդքան շուտ փախար…

Ես սնանում եմ վիրավորանքից: Իսկ ինչո՞ւ ինձ չէր ասում, որ երեկոյան նա դուրս է եկել առանց ինձ, մինչդեռ երեկ չէ մյուս օրն ինձ հավատացնում էր, թե մնալու է տանը և օգնելու մորը՝ լվացքն արդուկելու: Ես հետո կհարցնեմ Սարմենին, անշուշտ այստեղ էլ մի սուտ կա: Բայց օգուտն ի՞նչ հարցնելուց: Սարմենն ամենայն անկեղծությամբ կասի, որ նրա երեսն անգամ չի տեսել, բայց ես չեմ հավատա և կմտածեմ, թե Քնարիկն է պատվիրել նրան՝ ոչինչ չասել ինձ...

Միաժամանակ, բայց ոչ միասին, ներս են մտնում Մահարին ու Տարոնցին: Սողոմոնը միակն է մեր մեջ, որ դեռ դուքով է խոսում Գուրգենի հետ: Ոչ մի կերպ չի կարողանում վերջ տալ, քաշվում է: Դուք-ն ի՞նչ, նա համեստագույն աշակերտի պես է պահում իրեն Գուրգենի մոտ: Իսկ Գուրգենը, ոչ թե գոռոզամտությունից, այլ ռեակտիվ պարզ օրենքի համաձայն, իրեն կլասիկի պես է պահում նրա հանդեպ:

Գալիս է Գեղամ Սարյանը՝ Գեղամ Բաղդասարյանի տղա՞ն, թե՞ թոռը,— այնքան երիտասարդացած և աշխույժ է նա:

Մտնում են նաև ուրիշները, որոնց անունները մնացել են մեր արխիվներում պահպանված նրանցից մի քանիսի անկետաների շնորհիվ: Դա այն անկետաներն են, որոնք, դեռևս մեր Ասոցիացիայի խմբակ եղած ժամանակ մենք ուղարկել էինք Երևան: Այդ ազգանունները վերականգնում են իմ աչքի առաջ նաև դրանց տերերին: Իսկ «Հոկտեմբերի» նոր անդամները, անկետա չլրացրած, դուրս են թռել իմ հիշողությունից: Բայց որ նրանք բոլորը տղաներ էին և աղջիկ չկար նրանց մեջ՝ դա հաստատ եմ հիշում, որովհետև միակ աղջիկը Քնարիկն էր:

— Դուք ուշադրություն դարձրի՞ք «հրաբուխ» բառի վրա,— հարցնում է մեզանից մեկը:

Բոլորս գիտենք, թե ինչի մասին է խոսքը, ում ո՞ր բանաստեղծության՝ վերջերս տպագրված: Դրանից էլ սկսում ենք մեր հավաքույթը, մի՞թե միևնույնը չէ, թե ինչից:

Հավաքույթից հետո մենք չենք ցրվում՝ ինչպես իրար հետ ուրիշ առնչություն չունեցող մարդիկ: Մենք բոլորս մտերիմ ենք իրար—նախանձելի կոլեկտիվ:

Բաժանվելով փոքր խմբերի, մենք գնում ենք տարբեր ուղղություններով, տարբեր գործերի՝ կինո, այգի և այլն: Իհարկե, մեր միջև կան ընկերական նախասիրություններ, բայց դրանք շեշտված չեն: Հաջորդ հավաքույթից հետո տարբեր կողմեր գնացող փոքրիկ խմբերը կարող են բոլորովին տարբեր կազմ ունենալ, քան այսօր: Բայց ես և Գուրգենը հատկապես իրար հետ ենք մտերիմ:

Մի առավոտ ես արթնացա կոշմարային երազից հետո: Ես ոչ սնահավատ էի, որ կարևորություն տայի այդ երազին, ոչ էլ նախապաշարված, որ դա համարեի մի ինչ-որ վատ բանի կանխագուշակություն: Պարզապես տհաճ, կոշմարային երազ, որն առավոտից ի վեր փչացրել էր իմ տրամադրությունը: Ուստի և, մի երկու ժամ հետո այգի մտնելիս, ես ունեի ծայրահեղ կերպով թթված տրամադրություն և, անշուշտ, նույն աստիճանի թթված դեմք:

Ես նկատեցի Գուրգենին՝ մենակ նստած: Մոտեցա, բարևեցի: Նա չպատասխանեց:

— Ի՞նչ է պատահել,— զարմացա ես։

— Մի կոշմարային երազ եմ տեսել,— արտասանեց նա։

— Դու է՞լ...— համարյա բղավեցի ես։

Այս անգամ նրանն էր զարմանալու հերթը.

— Ուրեմն դու է՞լ... Ա՛յ քեզ զուգադիպություն…

Մենք նայեցինք իրար։ Մենք դեռ չէինք տեսել միմյանց այդքան մռայլ։

— Քայլենք,— հառաչեց Գուրգենը՝ վեր կենալով։

Մենք ուղղվեցինք դեպի այգու շարունակությունը կազմող բլրակը՝ «Գորկան»։ Չէինք խոսում։ Չէինք մտածում։ Չէինք տեսնում անգամ գետինը, որին նայում էինք՝ հայացքներս կախ։

— Սպասիր,— ասացի ես՝ կանգ առնելով,— ո՞ւր ենք գնում։

— Իսկապես, ո՞ւր ենք գնում,— կրկնեց նույն հարցը Գուրգենը։— Դիմացը դատարկություն է, ոչ գարեջրի պավիլյոն, ոչ…

— Այդպե՞ս ես հասկանում դու կյանքի ունայնությունը,— բարկացա ես։— Այս տրամադրության մեջ, երբ մեզ վրա դեռ թարմ է կոշմարի տպավորությունը, երբ ինչ-որ մի ներքին...

— Զահլա մի տանիր,— ընդհատեց Գուրգենը,— ինչքա՞ն փող ունես, բեր միացնենք։

— Մի շշի գին էլ չկա,— ասացի ես շտապ, և շարունակեցի կիսատ խոսքս,— երբ ինչ-որ մի ներքին ձայն ասում է ինձ…

— Գլուխը քարն է տվել ներքին ձայնը,— նորից ընդհատեց Գուրգենը,— սպասիր տեսնենք ինչ է ասում իմ գրպանի ներքին ձայնը…

Դա ձայն չէր, այլ հազիվ լսելի փսփսոց.— մենք, համարյա միաժամանակ, հանեցինք համարյա հավասար քանակի ողորմելի գումարներ։

— Նույնիսկ դաշնակների բանկում ավելի շատ կարելի էր գտնել դրամ,— գլուխն օրորեց Գուրգենը։

— Բայց մի շշի համար դա բավական է,— մխիթարեցի ես։

— Իսկ ի՞նչ է մի շիշը... Նորմալ վիճակում դա գուցե ոչինչ, բայց դու մոռանում ես կոշմարը…

— Կոշմարները,— ուղղեցի ես,— իմը և քոնը։

— Պետք է խմել,— եզրակացրեց Գուրգենը,— կարծես մինչև հիմա մենք այն էինք ասում, թե պետք է ուտել։

— Մտածիր,— ասացի ես անտարբեր, կարծես հարցն ինձ չէր վերաբերում,— կարիքն ստեղծում է հնարքներ։

— Գրչակ է այդ կարիքը։ Ավելի լավ կաներ՝ եթե դրամ ստեղծեր։ Մե՞ծ բան է՝ հնարքներ ստեղծելը, դա ես ինքս էլ կանեմ։

— Արա, արա, ես սպասում եմ,— ասացի ես՝ բարեսրտորեն չշտապեցնելով նրան:

Բարձրաձայն մտածելով, նա առաջադրեց և հենց ինքն էլ մերժեց բազմաթիվ վարիանտներ, այդ թվում նաև այնպիսի հեշտ ու հնարավորները, ինչպես օդից չերվոնեցներ ստեղծելը, մեր ունեցած կոպեկները ռուբլիների վերածելը և այլն:

Եվ վերջապես կանգ առավ ամենաանհնար վարիանտի վրա.

— Պետք է ապառիկ խմել:

— Ֆանտազիա չունես,— հանդիմանեցի ես,— կարող էիր ասել՝ բոլորովին ձրի խմել:

— Ձրի չի կարելի, բայց ապառիկ... Դու ճանաչո՞ւմ ես Փափանենց Գրիշին:

— Լսել եմ:

— Գինեվաճառ է: Ես նրա հետ ծանոթ եմ:

— Մի՞թե կարող եմ կասկածել:

— Դու ինձ չըմբռնեցիր: Ես մի քանի անգամ իմ հորեղբոր համար գինի եմ վերցրել նրանից:

— Ուրեմն հորեղբորդ համար է՞լ,— հետաքրքրվեցի ես:

Բայց Գուրգենն ինձ չլսեց, նա զբաղված էր մտքում ինչ-որ հաշիվներ անելով:

— Ապա, հաշվիր,— ասաց նա ինձ հանկարծ,— չորս բաժին խորոված…

Ես հաշվեցի:

— Շնորհակալություն: Իսկ հիմա ավելացրու երկու կիլո հաց...

Ես դա էլ հաշվեցի և ավելացրի նախորդ գումարին:

— Ճիշտ է,— բացականչեց Գուրգենը,— մեր գումարը կբավականացնի մեկ կիլո հացի և երեքհարյուր գրամ երշիկի համար: Գնանք…

«Խմել չկարողանալու վշտից ուտել է ուզում»,— եզրակացրի ես, բայց քայլեցի:

Գավառական քաղաքի մի զարմանալի կոլորիտ ունեին այն ժամանակ հին Գյումրու բնակարանային թաղամասերի փողոցները: Միհարկանի, քարաշեն, փակ դռներով ու լուսամուտներով, դրանք անմարդ էին կամ, ավելի շուտ, սակավամարդ: Թվում էր, թե դրանք նիրհում են արևի տաք, բայց ոչ շոգ լույսի մեջ: Որտեղից որտեղ այդ ցերեկ օրով ծուղրուղու էր կանչում մի աքաղաղ, և թախիծը պաշարում էր հոգիդ, իսկ աչքիդ առաջ կանգնում էր մի եռուն, աղմկալի տեսարան: Որտե՞ղ էր դա՝ հեռավոր մայրաքաղաքներո՞ւմ, թե՞ ընդամենը ութ կիլոմետր այն կողմ՝ Կապսում…

Փողոցների մի անկյունում կա մի խանութ՝ երկփեղկանի, ամեն մի փողոցի վրա մի լայն փեղկ: Բայց երկուսն էլ ծածկված են: Ճիշտ է, կողպեք չկա կախված այնտեղ, դա նշանակում է՝ ներսում մարդ կա, բայց վաճառքի համար խանութը փակ է: Ցուցանակի վրա գրված է՝ «Գինեվաճառ Գ. Փափանյան»: Նաև ռուսերեն՝ «Պապանյան»:

— Գ. Մահարուն. ձեր «Ծրագիրը» չի տպվի, թույլ է,— ձևացնելով թերթի փոստարկղի բաժնի հայտարարություն, ասում եմ ես:

Բայց Գուրգենն ավելորդ է գտնում պատասխանել իմ ծաղրին, մոտենում և թխկթխկացնում է փեղկը:

Ոչ մի արձագանք:

Ես թևիս տակից իջեցնում եմ լրագրի մեջ փաթաթած լավաշն ու երշիկը և սկսում եմ հետաքրքրությամբ կարդալ լրագիրը՝ այդպիսով ակնարկելով, որ պարունակությունն արդեն կորցրել է իր արժեքը և եթե մնացել է որևէ հետաքրքիր բան՝ դա մի շաբաթվա հնություն ունեցող լրագիրն է:

Բայց այդ բոպեին Գուրգենն ընդհատում է թակելը և հաղթական հայացք է նետում ինձ:

Փեղկի մի տախտակը, որի ետևում խանութի ապակեպատ դուռն է, ետ է ծալվում և ներսից դեպի փողոց է ձգվում քնահարությունի՞ց, թե՞ հարբածությունից ուռած մի դեմք: Մենք ստվերի պես ներս ենք սահում նեղ ճեղքով: Փեղկը նորից ծածկվում է մեր ետևում:

Մեր առջև կանգնած է հաղթանդամ, ավելի ճիշտ՝ հաստափոր մի մարդ և հարցական նայում է մեզ: Խանութում կիսախավար է, լույսը ներս է սպրդում միայն փեղկի առանձին տախտակների միջև եղած բարակ ճեղքերից:

— Բարև, Գրիշ եղբայր,— ողջունում է Գուրգենը:

— Յա, Գուրգեն ջան, դո՞ւն ես,— ուրախանում է գինեվաճառը:

— Ինչո՞ւ համար ես փակել խանութդ:

— Փակ չէ, ախպոր տղա, ում օր բան է պետք՝ մտնելու ձևը կիմանա: Շոգ է, ըսի մե քիչըմ քնիմ: Կտեսնի՞ս ինչը հով է նեսը…

Գուրգենն անցնում է «բուն նյութին»:

— Խմելու ենք եկել:

— Հասկըցանք:

— Նիսիա:

— Է, թող էղնի նիսիա, Գուրգեն ջան, էդիկ էլ խո՞սք է:

Խանութն իրավունք ունի գինի վաճառել միայն տուն տանելու համար և ոչ թե տեղում խմելու: Ուստի և Գրիշը մեզ ներս է տանում մի փոքրիկ դռնով՝ խանութի ներսի սենյակը: Դա արդեն լուսավոր է, ունի երկու լուսամուտ, որոնք բացվում են ինչ-որ բակի վրա: Ուժեղ գալիս է գինու հոտը, որ արձակում են մի տասնյակի չափ տարբեր մեծության տակառներ՝ պատերի տակ պառկած: Շատ փոքրիկ և շատ ցածրիկ մի սեղանակի վրա դեռ մնում են մեզանից առաջ եղած հաճախորդների այցելության հետքերը՝ դեռ գինոտ բաժակներ, ուտելիքի մնացորդ... Գրիշն այդ բոլորը հավաքում է և բերում մաքուր բաժակներ:

— Թևիդ տկինը զակուսկի՞ է,— հարցնում է նա ինձ:— Դիր վար:

— Հա, իսկապես,— հիշում է Գուրգենը,— ծանոթացիր, ընկերս է, գյումրեցի է:

— Ի՞նչ կսե: Ումոնցի՞ց ես:

Ես հայտնում եմ հորս մականունը:

– Իա՛,— զարմանում է Գրիշը,— էլիսա դու Գրիգորի տղե՞ն ես: Քանի հլը սաղ էր՝ էնիկ էլ քովս կուգար: Ապրիս, հորդ հիշատակը չես մոռցե…

Գրիշը մի մեծ տակառից ռեզինե խողովակով գինի է քաշում շշերի մեջ: Մենք նրան ևս հրավիրում ենք՝ մեզ հետ սեղան նստելու:

— Նստի՞մ օր,— մի պահ միայն, տարակուսում է նա:— Տիա նոր նստած էի տղոց հետ, հլը ոտքը դուս չէին դրե՝ դուք էկաք…

Մենք երեքով նստում ենք ցածրիկ սեղանակի շուրջը, գետնահուպ աթոռակների վրա: Գրիշը գինի է լցնում բաժակները: Նախքան բաժակ վերցնելը նա դիմում է Գուրգենին.

— Ինչքան օր միտքս կուգա՝ առաջի անգամն է, օր նիսիա կխմես: Ամոթ էլ կէղներ, օր չխմեիր: Էլ ի՞նչ գրող՝ առանց նիսիայի: Կեցիք ձեզի մե բանըմ ցուց տամ, տղեք…

Նա գնում է դրսի սենյակ, այսինքն՝ բուն խանութը, և վերադառնում նիսիայի դավթարը ձեռքին: Բաց է անում և լուռ ցույց է տալիս: Մենք ցնցվում ենքանսպասելիությունից և բուռն հուզմունքը պաշարում է մեզ: Մենք այնտեղ տեսնում ենք Ավետիք Իսահակյանի սեփական ձեռքով կատարած մակագրությունն իր նիսիայի կողքին.

Խարխուլ մակույկով հանձնվիր ծովին,

Քան թե հավատա կնոջ երդումին…

Մենք պատրաստ ենք համբուրելու Գրիշի աչքերը, որ տեսել են կենդանի Իսահակյանին, մեր մեծ բանաստեղծին, որը տասնհինգ տարի առաջ նստել է ահա այստեղ, գուցե հենց այս աթոռակներից մեկի վրա, և գինի է խմել նիսիա... Այժմ նա արտասահմանում է, վաղուց, շատ վաղուց, ու թեև ողջ-առողջ է, բայց մեր ժողովրդի համար դարձել է լեգենդ, ըղձալի Աբու Լալա Մահարի, որը, չգիտես ինչու, դեռ չի վերադառնում և կարոտի մեջ է պահում մեզ…

Մի երկու ժամ անշտապ զրուցելուց և ժամանակ անցկացնելուց հետո, երբ վեր ենք կենում, մենք հպարտությամբ ենք գրանցում մեր նիսիան այն դավթարում, որտեղ կա մեր մեծ բանաստեղծի ստորագրությունը: Ո՞վ գիտե, կգա ժամանակ, կգտնվի այդ դավթարը, մարդիկ կկարդան և կասեն. «Ահա սա վարպետն է, իսկ սրանք՝ նրա բազում աշակերտներից երկուսը»...

— Գուրգեն, երբևէ տեսնելո՞ւ ենք Իսահակյանին…

— Երանի տեսնենք...— շշնջում է Մահարին:— Գոնե մի անգամ, աչքի ծայրով…

Երբ մենք դուրս ելանք Փափանենց Գրիշի մոտից, մեր կոշմարի հետքն անգամ չէր մնացել: Մենք զվարթ էինք և մեր շուրջը զվարթ էր քաղաքը…

Բայց, բարձր տրամադրության մեջ անգամ, մենք զգում էինք, որ քաղաքը համարյա դատարկ է սպասողականորեն: Թվում էր, թե բոլոր բնակիչները գնացել են Շիրակի ջրանցքն ու տեքստիլ գործարանը կառուցելու: Այ, երբ ավարտեն գործարկեն, այն ժամանակ այնպիսի աշխույժով կլցվի

քաղաքը, այնպե՛ս կփոխվի մեր հին և գավառական Ալեքսանդրապոլը, կդառնա իսկական Լենինական…

Մի քանի օր հետո, երբ ես և Գուրգենը, ըստ մեր ամենօրյա օրակարգի, հանդիպեցինք այգում, նա հանկարծ հարցրեց.

— Ուզո՞ւմ ես տեսնել Շուշանիկ Կուրղինյանին…

— Իսահակյանից հետո ամենից շատ նրա մասին եմ երազում,— ասացի ես։

— Մի օր գնանք տեսնենք,— հանգիստ առաջարկեց Գուրգենը։

— Ի՞նչ ես դուրս տալիս։

— Ես քեզ լուրջ եմ ասում, փչացած, նա Լենինականումն է։

Ես շարունակում էի կասկածով նայել նրան։ Ես դեռ այն տարիքում էի, երբ ամեն մի ճանաչված գրող թվում է վաղուց մահացած և գիրք դառած անուն։ Ես չէի կարողանում հավատալ, որ կարող է գոյություն ունենալ կենդանի մարդ Իսահակյան, կենդանի մարդ Կուրղինյան... Նույնիսկ նրանց կենսագրության այդ տվյալները— այն, որ նրանցից մեկը վաղուց գտնվում էր արտասահմանում, իսկ մյուսը՝ Ռոստովում, ինձ թվում էր նրանց անվան հետ կապված լեգենդի մի մասը։ Եվ հանկարծ, Շուշանիկ Կուրղինյանը՝ Լենինականում, և մենք կարող ենք տեսնել նրան…

Իհարկե, պակաս հուզված չէր նաև Գուրգենը, իսկ նրա հանգիստ տոնը մի պոզա էր, որով ուզում էր ցույց տալ իր գերակշռությունը, որ ինքն ինձնից շուտ էր տեղեկացել այդ մասին։ Դե ի՞նչ, նա լրիվ իրավունք ունի, ես ավելի կզոռոզանայի։

Գյումրուհի Փոփոլճոնց Շուշանիկը, ամուսնանալով Կուրղինյան ազգանունով մի մարդու հետ, բնակության համար փոխադրվել էր Դոնի Ռոստով՝ դեռ իմ ծնվելուց առաջ։ Նրա բանաստեղծությունների միակ ժողովածուն՝ սքանչելի «Արշալույսի ղողանջներ»-ը, լույս էր տեսել հենց նույն այդ քաղաքում։ Կարող էր թվալ, թե նա ընդմիշտ խզել էր իր կապերն իր ծննդավայր քաղաքի հետ։ Բայց ո՞ր իսկական գյումրեցուն չի կանչում, չի ձգում հավետ նրա կոլորիտային, անկրկնելի Գյումրին…

Մենք վերցրինք բանաստեղծուհու հասցեն և գնացինք երկուսով։ Դա գտնվում էր ոչ թե քաղաքի կենտրոնական փողոցների վրա, որոնց երկհարկանի շենքերը ցույց են տալիս մեծ քաղաքների շենքերին նմանվելու իրենց անհույս և թախծոտ ցանկությունը։ Դա Գյումրու ամենատիպիկ, ամենակոլորիտային թաղամասում էր, որտեղ գտնվում էր Յոթն Ախպրանց խանը, այսինքն՝ իջևանը, որն այժմ չկար, որտեղ բնակարաններն ունեին այնպիսի ճարտարապետություն, կարմիր ու սև քարերով կառուցված այնպիսի պատեր, լուսամուտների ու դռների շրջանակներ, իսկ ներսում՝ այնպիսի կենցաղ, որպիսին չկար Հայաստանում այլևս ոչ մի տեղ, չկար արդեն Լենինականում ևս ոչ մի տեղ։ Ըստ երևույթին դա ոչնչով չէր տարբերվում Պոլսի բնակարանային որևէ թաղամասից, մենք այդ զգում էինք այնքան վառ ու հստակ, որ մոռանում էինք, որ գտնվում ենք Լենինականում։

Բայց Կուրղինյանն իջևանել էր ոչ թե հնամյա այդ տներից մեկում, այլ նոր տարիներում կառուցված մի խիստ անշուք տնակում՝ Գյումրի-չայ սակավաջուր առվակի համարյա անմիջապես ափին։

Մի տարօրինակ զգացում պաշարեց մեզ, երբ մոտեցանք այդ տանը: Մենք, որ սովոր էինք մտնել գրադարան և ասել՝ «Ունե՞ք Շուշանիկ Կուրղինյանի գիրքը», այժմ չհավատացինք մեր սեփական ձայնին և ականջներին՝ երբ հարցրինք.

— Այստե՞ղ է ապրում Շուշանիկ Կուրղինյանը…

Եվ որ ամենաանհավատալին է, մեզ պատասխանեցին՝ «Այո»:

Երբ մենք մտանք ցածրիկ առաստաղով սենյակը, բանաստեղծուհին նստած էր մի անշուք բազմոցի մեջ: Ես անմիջապես ճանաչեցի նրան՝ գրքերում և պարբերականներում տպված նրա լուսանկարներից: Նա ուներ գյումրուհու բացառիկորեն տիպիկ դեմք: Ըստ երևույթին նա գեղեցիկ չէր եղել երբեք, բայց ի՞նչ նշանակություն ուներ դա հայ գրականության ամենատաղանդավոր կին-գրողի հոգու առկայությամբ:

Մեր ներս մտնելիս Կուրղինյանը տեղից վեր չկացավ: Իհարկե, մենք ինքներս թույլ չէինք տա նրան՝ այդ անել, բայց, հարցն այն է, որ նա փորձ անգամ չարեց վեր կենալու: Սակայն մենք դեռ չէինք հասցրել զարմանալ կամ վշտանալ այդ սառը ընդունելության համար, երբ նա հանցապարտի տխուր հայացքով նայեց մեզ և ասաց.

— Ներեցեք, տղաներ, ես չեմ կարող վեր կենալ…

Ծանր տեսակի պադագրա հիվանդությամբ նա ընդմիշտ գամված էր այդ բազմոցին…

Բայց մենք չէինք տեսնում այդ, չէինք տեսնում նրա ոչ հիսուն տարիները, ոչ ֆիզիկական կերպարը: Մեր աչքի առաջ մենք տեսնում էինք մեր սքանչելի բանաստեղծուհուն…

Նա մեզ երկարեց իր ձեռքը: Մենք ուզեցինք համբուրել այն: Նա վախեցած ետ քաշեց:

Մի քանի րոպե մենք դեռ ոչինչ չէինք գտնում խոսելու: Ահա նա՝ սիրո նուրբ երգչուհին և ցարիզմը խորտակելու ցասկոտ կոչ նետող մունետիկը միաժամանակ…

Հինգ թվի հեղափոխությունից երկու տարի հետո տպած իր գրքում նա, սիրո շշունջները կրծքի տակ սեղմած, բարձրացրել էր ամազոնուհու իր ձայնն ի պաշտպանություն շահագործվողների: Ահա նրան էինք մենք տեսնում մեր աչքերի առաջ:

Քաշվելով և անհարմար զգալով, մենք հայտնեցինք, որ երիտասարդ բանաստեղծներ ենք, ընդ որում մի այնպիսի զզվանք զգացինք մեր հանդեպ՝ այդ ասելիս, կարծես կատարել էինք մի մեծ անտակտություն: Ինչպե՞ս կարելի է բանաստեղծ անվանել իրեն՝ այդպիսի մեծ, իսկական բանաստեղծուհու ներկայությամբ…

Բայց Շուշանիկ Կուրղինյանն ուրախացավ մեր հայտնածի վրա և այնուհետև զրույցը գնաց այնպիսի թեթևությամբ, որ մենք բոլորովին չնկատեցինք, թե ինչպես մենք զվարթացել ենք նորից, այսինքն՝ խախտել պաշտամունքի ակնածական լրջությունը:

Կուրղինյանը խոսում էր հասարակ բաների մասին: Մենք նայում էինք նրան՝ երկար, անթարթ, և մեզ թվում էր, թե դա բանաստեղծության աստվածուհին է վար իջել Ոլիմպոսից և խոսում է մարդկանց հետ մարդկային լեզվով: Ոչ մի վայրկյան մենք չէինք կարողանում մոռանալ, որ մեզ հետ խոսում է նա ինքը՝ Շուշանիկ Կուրղինյանը…

Քիչ հետո, աննկատելիորեն, մենք անցանք գրական հարցերի: Նա տրտնջաց, որ մեր քննադատներից մեկը իր մասին գրել էր, թե նրա քնարը վաղուց է լռել: Հայտնեց, որ ունի շատ բանաստեղծություններ, միայն թե անտիպ:

Ես հիշեցի նաև նրա տպագրածները՝ բացի նրա միակ ժողովածուից, պարբերականներում, հիշեցի նաև հեղափոխությունից հետո, մի երկու-երեք տարի առաջ Թիֆլիսի «Կարմիր աստղ» թերթում տպագրածները: Իհարկե, այս վերջինները թույլ բանաստեղծություններ են և դրանց մեջ չի երևում մեծատաղանդ Կուրղինյանը: Լռել է նրա քնարը, այո.. Բայց մի՞թե հեղափոխությունը չհասկանալուց կամ դրանից հիասթափվելուց է դա, ինչպես պնդում են անխիղճ մարդիկ: Նրանց համար կան միայն կատեգորիաներ՝ բանաստեղծուհի, պոեզիա, հեղափոխություն... Բայց նրանց համար չկան անձնավորություններ, անձնական ճակատագրեր, անձնական և ուրույն ուղիներ՝ գրականության մեջ, անձնական և ուրույն ճանապարհներ դեպի հեղափոխություն: Նրանց համար չկան ոչ սեռեր, ոչ ընտանիքի հոգսերով ծանրաբեռնված կնոջ վիճակ: Նրանց հաշիվներից դուրս է մնում նաև պադագրան՝ որպես սոցիալ-հասարակական բնույթ չունեցող կատեգորիա, և դրա նման ուրիշ «սուբյեկտիվ» պատճառներ: Նրանք պոետին վերցնում էին «մաքուր» վիճակում, զտված ամեն մի «երկրորդական» բանից՝ սեռից, ընտանեկան կամ առողջական վիճակից, անձնական ճակատագրից, վերցնում էին որպես աբստրակցիա, որպես գրականության պատմության «միավոր»…

Իսկ մեր առջև նստել էր ոչ միայն «միավորը», այլև իր տղայի և աղջկա մայրը, իր ամուսնու այրին, իր հիվանդության կրողը, Փոփոլճոնց Շուշանիկը, որը վերադարձել էր Գյումրի…

Հազիվ կես ժամ էր, ինչ նստած էինք, երբ դուռն աղմկով բացվեց՝ կարծես քամուց, և արևոտ շեմքի վրա երևաց մի երիտասարդ ամազոնուհի՝ մտրակը ձեռքին: Գուրգենը, բնականաբար, հայացքը գամեց նրա վրա: Նայեցի նաև ես: Դա կարծես Շուշանիկ Կուրղինյանի երբեմնի մարտնչող հոգին էր կանգնել այնտեղ…

Աղջիկը զվարթ մտավ ներս՝ բերելով այնքան եռանդ, որ ամեն ինչ կարծես շարժման մեջ մտավ: Շուշանիկ Կուրղինյանը սիրով նայեց նրան, ժպտաց: Աղջիկը տնեցի էր: Բանաստեղծուհին ծանոթացրեց նրան մեզ հետ և առաջարկեց նստել:

— Ոչ,— ասաց նա,— ձին սպասում է դռանը, ես մտա միայն մի րոպեով...

Գուրգենը կլանված նայում էր նրա մտրակին և մարմնի այլ մասերին: Աղջիկը պատշաճության համար նստեց մի պահ և Գուրգենն իսկույն խոսակցություն սկսեց նրա հետ.

— Ասացեք խնդրեմ, ի՞նչ գույնի է ձեր ձին…

Իսկ մինչ այդ Շուշանիկ Կուրղինյանը պատմում էր ինձ, թե ինչպես էր գրել իր «Այդ մենք ենք գալիս» բանաստեղծությունը.

— Դա 1905 թվին էր: Ես և ամուսինս անցնում էինք փողոցով, երբ դիմացից երևաց մի սև ամբոխ: Բանվորներ էին: Ես զարմացա, որ նրանք այդքան շատ էին և այդ ժամին գտնվում էին ոչ թե գործարաններում, այլ փողոցում, միասին: Ես հարցրի ամուսնուս՝ այս ի՞նչ բան է: Նա պատասխանեց՝ գործադուլ: «Իսկ ինչո՞ւ են անում գործադուլը»: «Իրենց իրավունքները պաշտպանելու համար»: Ես այն ժամանակ դեռ լավ պատկերացում չունեի դասակարգային պայքարի մասին... Եկա տուն և գրեցի այդ բանաստեղծությունը…

Ես Շուշանիկ Կուրղինյանին պատմեցի մեր «Հոկտեմբեր» միության մասին: Ասացի, որ կաշխատենք միջոցներ գտնել և վերահրատարակել նրա «Արշալույսի ղողանջները»: Խնդրեցի գիրքը: Խոստացավ տալ մի քանի օր հետո, վերցրել են կարդալու:

Իմանալով, որ ես կոմերիտական եմ, Կուրղինյանը խոսեց իր որդու մասին: Նա շատ էր անհանգստանում և ուզում, որ որդին պիտանի մարդ դառնա: Խնդրեց ինձ՝ աջակցել, որ նա մտնի կոմերիտմիության մեջ:

Բանաստեղծուհու մոտից մենք գնացինք անմոռանալի տպավորությամբ: Անցել են տասնամյակներ, և, իրոք, ես հիշում եմ նրան՝ ինչպես երեկ տեսած լինեմ: Ես նրա մոտից դուրս եկա՝ նրա վրա սիրահարված: Ճիշտ է, դա նման չէր Գուրգենի զգացմունքին՝ երիտասարդ ամազոնուհու հանդեպ: Դա երիտասարդ գրողի իսկական սերն էր ծերացող մեծատաղանդ բանաստեղծուհու ոչ միայն պոեզիային, այլև անձնավորությանը: Նշանակալից է այն, որ կյանքի կատաղի ջրապտույտներում կորցնելով շատ ու շատ նամակներ, գրություններ, փաստաթղթեր, ես մինչև վերջ կարողացա պահել Շուշանիկ Կուրղինյանի ինձ գրած երկու փոքրիկ տոմսակները, որոնք երեսուներկու տարի հետո հանձնեցի Գրականության թանգարանին:

«Հարգելի ընկ. Մկրտիչ Արմեն. Ուղարկում եմ որդուս ձեզ մոտ. հատկապես խնդրում եմ աջակցել նրան, խրախուսել, հնարավորություն տալ՝ ինձ նման չդառնալ... Հար. Շ. Կուրղինյան, 7 օգոստոսի, 1925»:

«Հարգելի ընկ. Արմեն. Ուղարկում եմ ձեր խնդրած գիրքն ու ոտանավորները. եթե ուշ է՝ վերադարձրեք: Հար. Շ. Կուրղինյան»:

Ոչ, ուշ չէ, անմոռանալի Շուշանիկ Կուրղինյան, հիանալի բանաստեղծուհի և հմայիչ մարդ: Քանի դեռ կա թեկուզ մի շահագործող այս մոլորակի վրա, ցասումով լի քո բանաստեղծությունները կզինեն մեր հոգին իրենց բարձր արվեստով: Եվ դրանց կողքին կապրեն քո զարմանալի լիրիկական, կանացիորեն քնքուշ բանաստեղծությունները.

Լեռ քարափին արծիվ նստավ,

Արծիվ նստավ ու երգեց,

Ձորի միջին աղջիկ տեսավ,

Սիրուն տեսքեն զարնվեց…

ԱՇԽՈՒԺՈՒԹՅՈՒՆ

«Հոկտեմբեր» միության ստեղծումը դրական դեր խաղաց նաև մի ուրիշ տեսակետից: Նա վերջ դրեց այն «մոնոպոլիստական» վիճակին, որը մինչ այդ գոյություն ուներ: Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիան այժմ ուներ իր մրցակիցը և դուրս գալով հարաբերական հանգստի վիճակից, աշխուժացրել էր իր աշխատանքները: Ճիշտ է, այդ աշխուժացման գլխավոր հոսանքը գնում էր նոր անդամներ հավաքագրելու, հանրապետական միության իր անունն արդարացնելու ուղղությամբ, բայց դա ևս ուներ իր դրական կողմերը: Ի հայտ էին բերվում ընդունակ երիտասարդներ: Իսկ այն, որ դրանք միավորներ էին և ոչ թե բանակներ, ապա դա միանգամայն օրինաչափ էր գրականության համար.— գալիս են շատերը, մնում են միավորները:

Լենինականը, որպես հանրապետության երկրորդ քաղաք, չէր կարող չշարունակել իր վրա բեռած ունենալ Ասոցիացիայի ընկերների ուշադրությունը: Երկրի բոլոր վայրերում, Երևանից հետո, միայն Լենինականում կարելի էր ունենալ գրական քիչ թե շատ շոշափելի խմբակ: Մյուս վայրերում կարող էին գտնվել միայն մեկական, երկուական մարդ: Ահա թե ինչու Ասոցիացիայի համար ծանր էր Լենինականը «կորցնելը»: «Ետ գրավելու» համար այն, այժմ Երևանից ավելի հաճախ էին գալիս գրական զեկուցումներ տալու, մեզ հետ նիզակ նիզակի խփելու: Միաժամանակ փորձեր էին արվում կազմակերպելու մասնաճյուղ, խմբակ:

Մի քիչ առաջ անցնելով դեպքերից, ասեմ, որ դա, վերջապես, հաջողվեց Ասոցիացիային: Մի գեղեցիկ օր մենք տեղեկացանք, որ մեր կողքին գոյություն ունի Ասոցիացիայի մասնաճյուղ, որի ղեկավարն էր… մեր «Հոկտեմբեր»-ից սուսիկ-փուսիկ հեռացած Սարմենը…

Գրական երկու միություն՝ մի քաղաքում... Բայց, ինչպես երևում էր, դա էլ քիչ էր: Շուտով ինձ կանչեցին կոմերիտմիության գավկոմ: Ես լսել էի, որ այնտեղ աշխատում է ագիտպրոպ բաժնի նոր վարիչ, բայց դեռ չէի տեսել նրան: Այժմ նա ուզում էր խոսել ինձ հետ:

Ես մտա նրա սենյակը: Նա լուրջ էր, եթե չասենք՝ մռայլ: Չեմ կարծում, թե դա նրա դեմքի սովորական արտահայտությունն էր: Ավելի շուտ դա ինձ համար էր…

— Նստիր,— ասաց նա, բայց ոչ թե հրավիրելու տոնով, այլ որպես ղեկավար ցուցմունք:

Ենթարկվելով միութենական կարգապահությանը, ես նստեցի:

— Դու Մկրտիչ Արմե՞նն ես:

— Այո:

— Ո՞ր թվից ես կոմերիտական:

— 1922:

— Սոցիալական ծագո՞ւմդ:

Ես պատասխանեցի:

— Սոցիալական դրությո՞ւնդ:

Ես պատասխանեցի ավելի դժկամ, հաստատ իմանալով, որ դրանք ձևական հարցեր են: Չի կարող պատահել, որ նախքան ինձ կանչելը նա նայած չլինի իմ անձնական գործը…

— Կանոնավոր վճարո՞ւմ ես անդամավճարները:

— Այդ ամենը գրված է իմ քարտում,— չզսպեցի ես ինձ:

— Ինձ համար կարևորը մարդն է և ոչ թե քարտը, մի սովորեցնի ինձ: Դու ղեկավարում ես բանվորա-գյուղացիական գրողների «Հոկտեմբեր» միությո՞ւնը:

— Ղեկավարում եմ:

— Կա՞ն այնտեղ ուրիշ կոմերիտականներ:

— Կան:

— Ուրեմն լսիր: Քաղաքում, կոմերիտմիության քաղգավկոմի նախաձեռնությամբ, կազմակերպվում է Երիտասարդ գրողների գվարդիա…

Ես ճոճվեցի նստած տեղումս: Երրորդ միություն... Խե՜ղճ Լենինական...

— Խմբակի ղեկավարը ես եմ,— համեստորեն հայտարարեց նա:— Դուք, որպես կոմերիտականներ, պարտավոր եք հեռանալ «Հոկտեմբեր»-ից և մտնել այդ միության մեջ: Գնա և պատրաստվեցեք: Ազատ ես:

— Ներեցեք, բայց մենք ըստ երևույթին չենք անի դա,— հանգիստ արտասանեցի ես:

— Ինչպե՞ս թե...— անսպասելիությունից ուղղակի սառեց դեռ չկազմակերպված խմբակի ղեկավարը:— Ի՞նչ է, դու ուզում ես, որ քո հարցը դնենք որպես անկարգապահի և քեզ հեռացնե՞նք միությունից:

— Դուք դա ըստ երևույթին չեք անի,— նույնպես հանգիստ ասացի ես:— Կուսակցության 13-րդ համագումարն անցյալ տարի և Կենտկոմն այս տարի իրենց որոշումների մեջ նշեցին, որ պրոլետարական գրականության հարցերում ոչ մի խմբակ իրավունք չունի հանդես գալ կուսակցության անունից, և որ այդ բնագավառում պետք է լինի ազատ մրցակցություն:

— Այո,— կմկմաց ապառնի խմբակի ղեկավարը՝ ոչինչ չգտնելով ինձ հակաճառելու: Բայց և իսկույն գտավ:– Իսկ եթե քաղաքում կա նաև կոմերիտական գրական խմբակ, ի՞նչ կերպ պետք է վարվեն կոմերիտական գրողներն այլ խմբակներում:

— Մրցեն իրար հետ,— անդրդվելի հանգստությամբ պատասխանեցի ես:

Գրական գվարդիայի հրամանատարը խոսք չգտավ բարկությունից և, չկարողանալով «խոսել ինձ հետ» այժմ, խոստացավ դա անել հետո:

Երիտասարդ գվարդիայի ղեկավարն ստիպված եղավ ճարել ուրիշ «գվարդիականների»: Դրանք մեզանից վատ տղաներ չէին և ունեին ընդամենը մի փոքրիկ թերություն՝ ոչ մի կապ չունեին գրականության հետ:

«Գվարդիայի» կազմակերպման և կազմալուծման ժամկետներն այնքան սերտորեն մոտ էին իրար, որ գործունեության համար տեղ էլ չէր մնացել դրանց արանքում:

Իսկ մինչ այդ, կյանքը շարունակում էր ընթանալ իր հունով: Գրական գործերով տարված, ես մոռացել էի, որ մեր բավական բազմանդամ ընտանիքի միակ կերակրողն եմ ես և պետք է ապրուստի միջոցներ գտնեմ: Հույս դնել պատահական և փոքրիկ հոնորարների վրա՝ չէր կարելի: Իսկ քաղաքում աշխատանք չկար: Այդ այն ժամանակներն էին, երբ մեր երկրում դեռ գոյություն ունեին աշխատանքի բորսաներ և երբ կային աշխատանք չունեցող մարդիկ:

Բնական է, որ ես դեմ չէի նաև շրջանում աշխատելու: Ես ունեի դրա փորձը, եղել էի գավառամասի պատկոմական շտաբի պետ, խրճիթ-ընթերցարանների վարիչ հրահանգիչ, շրջիկ կինոյի ղեկավար և այլն: Ուստի և, մի օր, իմանալով, որ գավառամասերից մեկում ազատվում է աշխատանքի մի տեղ, ես շտապեցի այնտեղ, խնդրելու, որ ինձ ընդունեն:

Դա Զագսի վարիչի պաշտոնն էր... Ես, որ մի կարգին սիրահարված էլ չէի եղել կյանքում, այսինքն՝ ինքս սիրել էի ուժեղ, բայց ոչ փոխադարձաբար, այժմ պետք է ամուսնացնեի ուրիշներին: Ի՞նչ արած, կարելի է և ամուսնացնել:

Բայց ինձ վիճակված չէր օրինականացնել ոչ մի ընտանեկան դաշինք: Գյուղ հասնելուս պես պարզվեց, որ մի ուրիշ երիտասարդ, ինձնից ոչ պակաս փորձված՝ այդ բնագավառում, արդեն ընդունվել է սիրո միաբանությունները գրանցելու աշխատանքին:

Ինձ մնում էր վերադառնալ՝ բավարարվելով դաշտի ծաղիկները դիտելով և դրանցով զբաղվելով: Դա հեշտ էր՝ մանավանդ նրա համար, որ ես հետիոտն գնացել էի և հետիոտն էլ վերադառնում էի: Բայց այժմ ես չէի շտապում և քաղաք հասա վաղ երեկոյան:

Դեռ նոր էի հասել քաղաքի կենտրոնին և պատրաստվում էի թեքվել դեպի մեր տուն, երբ հանդիպեց մի ծանոթ կոմերիտական և բացականչեց.

— Ո՞ւր ես կորել: Ասոցիացիան երիտ-ակումբում ջարդում էր ձեզ, ձերոնք քեզ էին փնտրում ամբողջ ժամանակ, իսկ դու…

Ես այլևս չլսեցի շարունակությունը և սլացա:

— Ո՞ւր ես վազում,— լսեցի իմ ետևից,— ամեն ինչ վերջացավ…

Եվ, իսկապես, երբ ես շնչասպառ, հևալով, հասա տեղ, ակումբից դուրս էին գալիս դիսպուտի վերջին ունկնդիրներն ու մասնակիցները՝ մի ինչ-որ տարօրինակ մարդու շրջապատած: Մեր միության անդամներից մի քանիսը, դանդաղ քայլերով, արյերգարդային անհույս մարտ էին մղում այդ մարդու հետ: Գուրգենը, որ քայլում էր նրա կողքով, ժպտում էր իր մեֆիստոֆելյան քթի հովանու տակ՝ ձևացնելով չպարտվածի ստոյիկյան հանգստություն: Նկատելով ինձ, նա ներքին կարգով խիստ զայրացավ, որ ուշացել եմ, բայց արտաքին կարգով ժպտաց և ինձ ծանոթացրեց Երևանից եկած տարօրինակ մարդու՝ այդ օրվա զեկուցողի հետ: Դուրս եկավ, որ դա Գուրգեն Վանանդեցին էր: Արտաքինը, դե, մարդու արտաքին, ուրիշներից մի քիչ լավ կամ մի քիչ վատ՝ ի՞նչ նշանակություն ունի: Դրա մեջ չէր նրա տարօրինակությունը, այլ դիմագծերի արտահայտությունների և մարմնի բոլոր անդամների շարժումների: Թվում էր, թե նա մի բարդ ապարատ էր, որի մեխանիզմը փչացել էր անհույս կերպով: Դրա հետևանքով նա ծիծաղելու բոլոր առիթներին մռայլվում էր, մռայլվելու առիթներին ծիծաղում, և ընդհանրապես ամեն ինչ անհարիր էր նրա մոտ: Քայլելիս նա թվում էր անշարժ, իսկ երբ կանգ էր առնում՝ հակաճառելու համար իր ուղեկիցներից մեկին, նրա ամբողջ դեմքն ու մարմինը շարժման մեջ էին մտնում՝ ինչպես վազող մարդու մոտ, և այն էլ՝ հուզված վիճակում վազող: Հետագայում ես համոզվեցի, որ նրա նույնիսկ այդ տարօրինակությունները չնչին բաներ էին նրա բնավորության կամ վարմունքի տարօրինակությունների համեմատությամբ: Ես նույնիսկ չեմ կարող ասել, թե նրա շուրջը պտտվում էին անեկդոտներ: Այն ամենը, ինչն ուրիշի նկատմամբ կարող էր լինել անեկդոտ, ամենաստույգ դեպքեր էին՝ նրա կյանքից վերցված:

Հազիվ էր Մահարին արտասանել իմ անունը, երբ Վանանդեցին լայն տարածեց թևերը և հավերին «քշա» անելու ձայնով ասաց բոլորին.

— Գնացեք, գնացեք... Գուրգեն, դու էլ գնա, թե չէ կխանգարես, դու խորամանկ ես: Ես առանց քեզ էս միամիտի հաշիվը կմաքրեմ: Գնանք, Արմեն, չհավատաս՝ ինչ որ ասում եմ Մահարուն: Ես նրա՛ն կխաբեմ և ոչ թե քեզ…

Եվ այս բարդ դիպլոմատիան՝ առանց կողմերից ծածկելու, բոլորի ներկայությամբ, ընդ որում՝ միանգամայն լուրջ: Իմ ամբողջ զայրույթը, հակամարտության ոգին, որով ես մոտեցել էի ակումբին, իջավ անմիջապես՝ տեղի տալով զվարթ հետաքրքրությանը և միաժամանակ մի տեսակ համակրանքին դեպի այդ դեֆեկտավոր երեխան:

— Ո՞ւր ենք գնում,— հարցրի ես ճանապարհին։

— Էրթանք, էրթանք,— շտապեցրեց նա կարսեցու իր առոգանությամբ, առանց քայլերը դանդաղեցնելու կամ ինձ նայելու։— Ես քեզի ընթրիք պիտի պատվեմ, օր սիրտդ փափկի, զիջես։

Ես բարձր ծիծաղեցի, բայց նա միանգամայն լուրջ էր։

— Կտեսնի՞ս ինչքան ընդհանուր բան կա մեր մեջ,— շարունակեց նա,— դու՝ գյումրեցի, ես՝ կարսեցի, համարյա մե բարբառով կխոսինք։ Իհարկե, կգտնինք ընդհանուր լեզու…

Երբ մենք բավական քայլել էինք, նա հանկարծ կանգ առավ և ասաց.

— Հա, ես չիտեմ, թե ուր կէրթանք, քաղաքի հետ լավ ծանոթ չեմ։ Դու տար ինձ մե մոտիկ ճաշարանը։

Մենք վերադարձանք և մտանք մի փոքրիկ, մասնավոր ճաշարան։ Դա պատկանում էր ներգաղթած մի հայի։ Ես մի երկու անգամ եղել էի այդտեղ։ Պատրաստվում էին ազգային շատ համեղ կերակուրներ, որոնք մինչ այդ Լենինականում անծանոթ էին։ Մատուցվում էին, սակայն, միկրոսկոպային փոքրիկ բաժիններով, և դա համարվում էր եվրոպական նրբաճաշակություն։ Նույնիսկ ափսեները, որոնցով մատուցվում էին, միայն մի քիչ էին մեծ մուրաբայի ռոզետկաներից։ Դժբախտաբար, եվրոպական այդ նրբաճաշակությունը չէր պահպանված ճաշերի արժեքի նկատմամբ։

Մենք նստեցինք։ Մոտեցավ մատուցող-գանձապահ-ճաշարանատերը.

— Ի՞նչ կհրամայեք…

— Ի՞նչ ունիք,— հարցրեց Վանանդեցին։

— Փիլավ՝ ա լա Ստամբուլ, և քեպապ՝ ա լա մեր ճաշարան։

— Ի՞նչ կուզես, Արմեն,— հարցրեց Վանանդեցին։

— Ինձ համար միևնույնն է։

— Էրկու փլավ բեր…

Հազիվ էր ճաշարանի պերսոնալը հեռացել, երբ իմ սեղանակիցը ձայն տվեց նրա ետևից.

— Ո՞ւր վազեցիր, սպասե, մի կարգին ընտրենք։ Հը՞, Արմեն, քյաբաբն ավելի լավ չէ՞.

— Ընկեր Վանանդեցի, ընտրեցեք ըստ ձեր ճաշակի։ Ինձ համար միևնույնն է։

Պերսոնալն ամենայն համբերությամբ սպասում էր։

— Օր էդպես է՝ էրկու քյաբաբ բե…

— Երկու քեպապ,— բղավեց պերսոնալը դեպի խոհանոց" խոհարարին՝ կարգադրություն անելու տոնով, և շտապեց խոհանոց՝ կատարելու կարգադրությունը, որովհետև խոհարարն էլ էր ինքը։

Վանանդեցին մինչև իսկ վեր ցատկեց տեղից.

— Է՛յ, ընկեր, քաղաքացի, պարոն... Վո՞վ ըսավ, թե մեզի քյաբաբ է հարկավոր: Կեցի մե լավըմ մտածենք:

Մի քանի անգամ ևս տանել-բերելով համբերության այդ մարմնացումին, Վանանդեցին, այնուամենայնիվ, կանգ առավ քյաբաբի վրա:

Մինչև ուտելիքի մատուցվելը նա լուռ նստել էր և չէր արտասանում ոչ մի բառ՝ վախենալով, որ իմ «նախաքյաբաբյան» տրամադրությունը նպաստավոր չլինի իր համար: Բայց հենց որ ուտելիքը մեջտեղ եկավ՝ նա աշխուժացավ: Սպասելով, մինչև որ ես վերցնեմ առաջին պատառը և կուլ տամ, նա դրանից հետո ասաց անմիջապես:

— Արմեն ջան, դու ձեր միությունը պիտի քայքայես:

Ես թեև ամեն տարօրինակություն սպասում էի իմ նոր ծանոթից, բայց և այնպես նայեցի ապշած. այդ մեկը չէի սպասում:

— Իսկ ինչո՞ւ համար, ընկեր Վանանդեցի:

— Դու գիտե՞ս, օր Ասոցիացիան համագումար պիտի կանչե:

— Գիտեմ: Դեռ անցյալ տարի էիք մտադիր:

— Անցյալ տարի մենք դիտմամբ էինք գրե թերթում, օր մեր թշնամիները տրաքին: Հմը էս տարի իսկական է: Չե՞ս հավատա:

— Ինչո՞ւ չէ: Ես անցյալ տարի էլ էի հավատում:

— Ձեր միությունը կուզե՞ մասնակցել մեր համագումարին:

— Իմ կարծիքով՝ այո:

— Մենք էլ կուզենք: Հմը, մարդու բան չըսես, իդիկ մեր գաղտինքն է, Ալազանն էլ, Զարյանն էլ, բոլորս էլ շատ կուզենք: Մենակ թե...

Նա ծիծաղեց քթի տակ: Ըստ երևույթին, դա այն ծիծաղն էր, որը մի ուրիշ մարդ իր մեջ է պահում՝ խնամքով թաքցնելով: Եվ շարունակեց.

— Մենակ թե դուք մեր համագումարին պիտի մասնակցեք ոչ թե իբրև կազմակերպություն, այլ անհատական կարգով:

— Շա՛տ հարկավոր է մեզ ձեր համագումարը,— զայրացա ես:— Այդ դեպքում չենք մասնակցի:

— Չէղավ, Արմեն: Իսկ քյաբա՞բն ընչի չես ուտե: Կեր, կեր, հետո կխոսենք…

Կես ժամ հետո մենք դուրս ելանք, բնականաբար առանց ընդհանուր լեզու գտնելու և խռովածի պես, գնացինք, ես՝ տուն, նա՝ հյուրանոց:

Հետևյալ առավոտյան ես նրան տեսա այգում՝ Մահարու և մի քանի ուրիշ «հոկտեմբերյանների» հետ զրուցելիս: Տեսնելով ինձ, Վանանդեցին սիրալիր ժպտաց և բարևելուց հետո հարցրեց գործնական.

— Ուրեմն միությունը ե՞րբ պիտի քայքայես:

— Բավական է հիմար-հիմար դուրս տաս,— զայրույթից դու-ի անցնելով, ասացի ես, բայց ևս իսկույն զգալով իմ անտակտությունը, ուղղեցի.— դուրս տաք:

— Իա՞,— անկեղծորեն զարմացավ Վանանդեցին՝ առանց վիրավորվելու:— Համ քյաբաբը կերար, համ միությունը չե՞ս քայքայե…

Ես ձեռքս կոխեցի գրպանս:

— Փարա չեմ ուզե,— հասկանալով, որ ուզում եմ վճարել քյաբաբի համար, ձեռքերը թափ տվեց Վանանդեցին,— ես ձեր միության քայքայվելը կուզեմ:

— Ինչպես և ես՝ ձերը,— ստիպված եղա պատասխանել ես:

Վանանդեցին նույն օրը վերադարձավ Երևան և, ինչպես հետագայում պարզվեց, ամբողջ ճանապարհին շարունակել էր զարմանալ ինձ վրա, իսկ տեղ հասնելիս եկել էր արդեն այն հաստատ համոզման, որ ես կատակ էի արել և, իհարկե, վերջ ի վերջո պիտի ենթարկվեի նրա հորդորներին և քայքայեի միությունը…

Այս ամենից հետո չպետք է կարծել, թե Վանանդեցու մտավոր ընդունակությունները ոչ միայն տարօրինակ էին, այլև «մի քիչ ավելին»: Ընդհակառակը, նա խելոք մարդ էր՝ կարդացած, ըմբռնած: Նրա գլխավոր թերությունը, եթե դատելու լինենք դրա օբեկտիվ նշանակության տեսակետից, ոչ թե նրա տարօրինակություններն էին, այլ նրա խորը, ես կասեի՝ օրգանական, ձախությունը, անուղղելի ռապպականությունը:

Հայ բանվորա-գյուղացիական գրողների «Հոկտեմբեր» միությունը ոչ միայն չէր քայքայվում կամ մասնատվում տարբեր խմբավորումների միջև, այլև աճում էր ու զարգանում: Նրան սպասում էր ուրիշ ապագա:

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Գրական-ստեղծագործական և գրական-կազմակերպչական ինչ հարցի մասին էլ որ խոսենք՝ այդ տարիների հետ կապված, ընդ որում, տանք Չարենցի անունը, թե ոչ, միևնույնն է, Չարենցը ներկա է այնտեղ, ներկա է իր ստեղծագործությամբ, իր առողջ տեսակետներով՝ գրականության մասին, իր կազմակերպչական ձեռներեցությամբ, իր անձնավորությամբ…

Ամեն մարդ, որ գրականության մեջ էր կամ նոր էր մտնում գրականություն, կամա թե ակամա իր վերաբերմունքը պետք է ցույց տար մեր մեծ բանաստեղծի հանդեպ: Կամ դու բարձր ես գնահատում նրա արվեստը և աշխատում ես սովորել նրանից, կամ, «ֆուտորիստ» համարելով նրան, որակելով «մանր-բուրժուական», անտես ես առնում, որ Չարենցը մի նոր աստիճան ու մակարդակ է մեր գրականության համար: Կամ դու բաժանում ես նրա հայացքները՝ Հայաստանում պրոլետարական գրականության կոնկրետ թեմաների և արտահայտության ձևերի վերաբերյալ, կամ, հավատարիմ մնալով ժամանակավոր մոլորություններին, կասեցնում ես քո անձնական և ընդհանուր գրականության ստեղծագործական աճը…

Լենինականի բանվորա-գյուղացիական գրողների «Հոկտեմբեր» միությունը նույնպես, ցույց տվեց իր վերաբերմունքը Եղիշե Չարենցի նկատմամբ: Դա շիփշիտակ, աներկբա և ոչ մի տարակարծության տեղիք չտվող վերաբերմունք էր: Մենք թերթի միջոցով հաղորդեցինք.

«Հայ բանվոր և գյուղացի գրողների «Հոկտեմբեր» միությունը պոետ Եղիշե Չարենցին ընտրեց միության պատվավոր նախագահ»:

Դրանով ասված էր ամեն ինչ. մենք Չարենցի հետ էինք:

Այն ժամանակ, երբ մենք Չարենցին ընտրում էինք պատվավոր նախագահ, նա չկար Հայաստանում: Նա, ինչպես ասացի, նախորդ տարվա աշնանից ի վեր ճանապարհորդում էր Եվրոպայով: Նրա ճանապարհորդությունը նման էր ստեղծագործական մի փառավոր, հաղթական երթի: Չարենցն անցնում էր քաղաքից քաղաք, երկրից-երկիր՝ իր ետևում թողնելով դրական այնպիսի խոր հետք, ինչպես օվկիանոսային նավն է թողնում անծայրածիր ջրերը ճեղքելիս:

Տրապիզոնը Չարենցին և մեր գրականությանը տվեց «Լենինն ու Ալին», Պոլիսը՝ «Ստամբուլ»-ը, Բեռլինը՝ «Երեք փոքրիկ պոեմ «Լենին» շարքից, Փարիզը՝ «Մյուր դե Ֆեդերե», Վենետիկը՝ «Էլեգիա՝ գրված Վենետիկում»... Փարիզում Չարենցի ակտիվ մասնակցությամբ հիմք դրվեց «Ղեկ» պարբերաթերթի հրատարակությանը, որը, դժբախտաբար, գլուխ չեկավ: Հրավիրվեցին աշխատակցելու նաև պրոլետարական գրողներ: Հրավեր, «Ղեկի» բլանկի վրա տպագրված և Չարենցի կողմից ստորագրված, Լենինականում ստացավ նաև Մահարին: Բայց որքա՜ն մեծ եղավ իմ զարմանքը՝ երբ ստացա նաև ես: Մի՞թե Չարենցը որևէ բան կարդացել էր նաև իմ ոտանավորներից…

Իսկ մինչ այդ՝ Հայաստանում գնում էր գրական եռուն պայքար: Դա, գլխավորապես, գնում էր Պրոլետարական գրողների ասոցիացիայի և մեր «Հոկտեմբեր»-ի միջև, բայց դրանով չէր սահմանափակվում ամբողջ պայքարը: Բացի Ալազանից, Զարյանից, Վանանդեցուց, Դաբաղյանից, Արաքսից և ուրիշներից, որ Ասոցիացիայի մեջ էին, և Վշտունուց, որ նրանց կողմն էր, բացի Մահարուց, Սարյանից,Տարոնցուց, Սարմենից, ինձանից և ուրիշներից, որ «Հոկտեմբեր»-ի մեջ էինք, բացի Գևորգ Աբովից, որ մենակ էր, կային նաև այլ գրողներ, մեծ մասամբ՝ մեզանից ավելի փորձված, նույնիսկ վարպետ, որոնք կազմում էին նոր գրականության այսպես կոչված «ուղեկիցները»: Դրանք էին Դերենիկ Դեմիրճյանը, Ստեփան Զորյանը, Միքայել Մանվելյանը, Վահան Թոթովենցը և ուրիշներ: Ճիշտ է, նրանք չէին «պայքարում»՝ բառի անմիջական իմաստով, բայց նրանք գրում էին և տպագրում, և պրոլետարական գրողների խմբավորումների միջև պայքար էր գնում նաև նրանց վերաբերմամբ ունենալիք հարցի շուրջը:

Այժմ, երբ Չարենցը դեռ արտասահմանում էր, գրական պայքարն ստանում էր ավելի և ավելի բուռն բնույթ: Նրա բացակայությամբ կազմակերպվել էր մեր «Հոկտեմբեր» միությունը, վերացել էր կազմակերպչական մոնոպոլիայի ժամանակավոր վիճակը, և հարցերի տարբեր դրումներն այժմ ստացել էին իրենց ոչ միայն ստեղծագործական և տեսական, այլև կազմակերպչական մարմնավորումը:

Մենք լսել էինք, որ Չարենցը շուտով վերադառնալու է: Եվ ահա, վերադառնալով, նա Հայաստանում պիտի գտներ գրական-սկզբունքային երկու որոշակիորեն տարբեր կողմեր, որոնք ունեին իրենց առանձին կազմակերպությունները: Եվ, նա, անխուսափելիորեն, պետք է կողմնորոշվեր նաև ինքը: Մեզ համար՝ «Հոկտեմբեր»-ի անդամներիս, միանգամայն պարզ էր, թե որը պետք է լիներ այդ կողմնորոշումը: Փաստորեն դա արդեն կար վաղուց: Մեծամիտ և մանավանդ սխալ բան կլիներ ասել, թե նա լինելու էր մեզ հետ: Փաստն այն էր, որ դա մենք էինք նրա հետ: Նորը, սակայն, այն էր, որ այժմ, վերադառնալով, նա պետք է գտներ արդեն պատրաստի մի գրական կազմակերպություն, որի պատվավոր նախագահն էր ինքը, և մինչ այդ իր տարած ստեղծագործական ու տեսական պայքարն այժմ վարելու էր կազմակերպված ձևով, իր հետևորդների միության վրա հենված: Մենք կասկած անգամ չունեինք, որ Չարենցն առանց

այլևայլության իր վրա էր վերցնելու մեր միության ոչմիայն պատվավոր, այլև գործնական նախագահությունը, ղեկավարությունը:

Մենք սպասում էինք մեր գրական վարպետին և ղեկավարին:

Եվ ահա, հուլիսի 30-ին, Մահարին հայտնեց մեզ.

— Տեղեկություն եմ ստացել, որ վաղը Չարենցը Թիֆլիսից անցնելու է Երևան…

Արտասովոր հուզումը պաշարեց մեզ: Վաղը ցերեկը մենք կգնանք կայարան և կտեսնենք նրան…

Մեզանից միայն Մահարին էր ծանոթ Չարենցին, մյուսներս չէինք էլ տեսել նրան, բացի, կարծեմ, Սարմենից: Ինչպիսի՞ մարդ էր նա, ի՞նչ արտաքինով, ի՞նչ շարժումներով, ի՞նչ բնավորությամբ... Մենք շատ էինք լսել նրա մասին, բայց գիտեինք, որ մեր լսածների մի զգալի մասը լավ կամ վատ անեկդոտներ են: Ձեռքի տակ եղած միակ ստույգ աղբյուրը Մահարին էր, որին մենք առաջ էլ էինք հարցուփորձում մեր մեծ բանաստեղծի մասին: Իսկ այժմ նրա վրա տեղացինք նորանոր հարցերի տարափներ.

— Գուրգեն, հաղթանդա՞մ մարդ է Չարենցը:

— Չէ՛, որտեղից:

— Իսկ ինչո՞ւ է գրում իր մասին.

Ահա թե ինչու

Վիթխարահսկա, որպես Էյֆելյան

Աշտարակը մեծ,

Անցած ու գալիք դարերի շեմքին

Հզոր, բարձրաբերձ

Կանգնել եմ ամբողջ հասակովս մեկ

Եվ երգում եմ ես…

— Բոլորովին նման չէ Էյֆելյան աշտարակին, բոլորովին,— ծիծաղում էր Գուրգենը:

Բայց մենք նրան չէինք հավատում, որովհետև, ճիշտ է, նա տեսել էր Չարենցին, բայց չէր տեսել Էյֆելյան աշտարակը:

Թեև գնացքը գալու էր ցերեկը, բայց մենք, դեռ առավոտից, գտնվում էինք կայարանում: Պրովինցիալ քաղաք՝ իր պրովինցիալ կայարանով... Քաղաքացիները սովորություն ունեին գնացքների ժամանած ժամանակ գալ կայարան, թեկուզ և ոչ ոքի էլ չդիմավորեին կամ ճանապարհ դնեին, այլ հենց այնպես, շարժում և եռուզեռ տեսնելու համար…

Քառասուն օր առաջ, մեծ հանդիսավորությամբ, որպես համաժողովրդական տոն, կատարվել էր Շիրակի ջրանցքի բացումը: Քաղաքը դեռ չգիտեր, թե ինչպիսի հեղաշրջում է բերելու ջրանցքը քաղաքի և շրջակա գյուղերի կյանքում: Իսկ քաղաքի հյուսիսում, Ձիթողցոնց Զաբոր կոչվող զբոսավայրում, արագ բարձրանում էին Իվանովո-Վոզնեսենսկ քաղաքի տեքստիլագործների

նվիրած տեքստիլ գործարանի կորպուսները և արդեն աշխատում էր մի միկրոսկոպային փոքրիկ մանվածքային գործարան՝ բանվորուհիներ պատրաստելու մեծ գործարանի համար:

Այո, հին Գյումրուն վիճակվել էր խորհրդային շրջանի առաջին երկու մեծ կառուցումների վայրը դառնալու բախտը: Բայց դրանցից մեկը դեռ բացված չէր, իսկ մյուսի բացումից անցել էր ընդամենը քառասուն օր: Ի՞նչ կարող էր փոխվել քառասուն օրում: Կանգնած էր դեռ էլի հին Գյումրին և թվում էր, թե ոչինչ չի խռովելու նրա անդորրը:

Դեռ նվում է այնտեղ զուռնան,

Դեռ դհոլը սիրտ է հուզում.

Թող հոգիդ դառնորեն ոռնա,

Միևնույնն է, կմեռնի անլեզու…

Բոլորս այսօր «Չարենցյան» տրամադրության մեջ ենք, արտասանում ենք նրա բանաստեղծությունները: Արտասանելով շրջում ենք կառամատույցով: Այստեղ է մեր միության ակտիվը, այսինքն՝ համարյա ամբողջ միությունը: Այստեղ է նաև Սարմենը, որը կամաց-կամաց թեքվում է դեպի Ասոցիացիան, դա արդեն նկատելի է: Նրանից բացի, Երևանում Ասոցիացիային է հարել նաև Գևորգ Աբովը, որը Չարենցին մեր կողմից պատվավոր նախագահ ընտրելուց հետո հույսը կտրել է մեզանից: Ի՞նչ արած, գրական պայքար է: Եթե մի կողմ թողնենք զանազան անձնական և կողմնակի մոմենտները, ղեկավար դառնալու փառասիրությունը և այլն, մնացյալում պայքարն առողջ է, սկզբունքային և երկուստեք օգտակար:

— Ես գիշերը բանաստեղծություն եմ գրել Չարենցի գալու առթիվ,— հայտնում է Սարմենը,— հենց որ գնացքից իջավ՝ պիտի արտասանեմ:

— Ժամանակ չի լինի,— զգուշացնում է Գուրգենը,— գնացքը կանգնելու է հինգ րոպեով:

— Հինգ րոպեում ես պոեմ կարտասանեմ,— հոխորտում է Սարմենը:

«Նիրհուն» Սողոմոն Տարոնցին՝ քչախոս ու լուրջ, ձեռքն է շարժում խրատական հանգստացուցիչ ժեստով, այսինքն՝ սպասեցեք... հարկավոր չէ շտապել... ամեն ինչ իր տեղին…

— Գալիս է,— հանկարծ բացականչեց Գեղամ Սարյանը՝ թազբեհը դնելով գրպանը: Դա միակ մնացորդն է նրա երբեմնի արևելյան սովորույթներից: Դանդաղ քաշում է այն՝ զբոսնելիս, թե հավաքույթի ժամանակ, և հանկարծ, առանց ընդհատելու հատերի հույլ չխկչխկոցը, ասում է դրա դանդաղ ընթացքին այնքա՛ն անհարիր բաներ.— «պետք է արագացնել տեմպերը»... «հարկավոր է ետ չմնալ ժամանակից»...

— Գալիս է,— բացականչում են նաև բոլոր մյուս երիտասարդ գրողները և հավաքվում-կուտակվում իրար վրա:

— Ո՞ր վագոնումն է, Գուրգեն…

— Չգիտեմ... Այս գնացքումն է... Չարենց,— հանկարծ բղավում է նա՝ դեպի մեր առջևով սահող վագոններից մեկը, և վազում: Մենք նույնպես, արշավում ենք դեպի այդ վագոնը:

Գնացքի երկայնքով շարվել են դիմավորողները և չդիմավորողները: Չարենցի գալու մասին գիտենք միայն մենք, իսկ մյուսներն սպասում են ուրիշ մարդկանց: Այն վագոնից, որտեղ մեր մեծ բանաստեղծն էր, իջնում են մեծ մասամբ տղամարդիկ: Դրանցից ո՞ր մեկն է Չարենցը…

Մահարին մոտ վազեց և գրկեց մի մարդու: Ա՜յ քեզ բան... Մեր մեջ այդ մարդուց ավելի փոքրամարմին է միայն Գեղամ Սարյանը…

Չարենցը և Մահարին համբուրվեցին: Մենք շրջապատեցինք նրանց և սկսեցինք անհամբեր սպասել: Մի երկու խոսքից հետո Գուրգենը մեզ ներկայացրեց նրան.

— Ծանոթացիր, Չարենց, մեր երիտասարդ գրողները:

— «Հոկտեմբե՞րն» է,— զվարթ հարցրեց Չարենցը:

— Դու արդեն գիտե՞ս մեր միության մասին,— ուրախացավ Մահարին:

— Կարդացել եմ թերթերում: Մալադեց, տղաներ:

— Իսկ դուք մեր պատվավոր նախագահն եք, ընկեր Չարենց,— հաղորդում է մեզանից մեկը:

— Դա չեմ լսել,— ծիծաղում է Չարենցը:

Մենք մեկառմեկ սեղմում ենք նրա ձեռքը, իսկ Մահարին տալիս է մեր անունները.

— Արմեն: Բանաստեղծ և բայևոյ տղա:

— Շատ ուրախ եմ:

— Գեղամ Սարյան: Երևակայիր, շատ լավ բանաստեղծ է:

— Սողոմոն Տարոնցի: Մշեցի բանաստեղծ:

— Սարմեն: Բանաստեղծ և...— Գուրգենը մի կարճ վայրկյան պաուզա է տալիս,— և հոգով «հոկտեմբերական»:

— Շատ ուրախ եմ: Իսկ մարմնո՞վ:

— Մարմինն Ասոցիացիան է կերել:

Եվ մենք այդտեղ, առաջին անգամ, լսում ենք Չարենցի յուրահատուկ, անվրիպորեն վարակիչ, «կլոր» ծիծաղը.

— Հո՛-հո՛-հո՛..

Չարենցն շտապում է դեպի բուֆետ: Ես և Մահարին ուղեկցում ենք նրան, իսկ մյուսները պատշաճ են համարում սպասել կառամատույցի վրա: Ճանապարհին Գուրգենը ցույց է տալիս շրջապատը և հարցնում է.

— Մի՞թե սա է երկիրը Նաիրի…

Չարենցը նորից է ծիծաղում: Մտնում ենք ներս, մոտենում ենք վաճառասեղանին:

— Ահա մի քանի օր է, ինչ Թիֆլիսում էի,— ասում է Չարենցը,— ուզում էի էլի մի քիչ մնալ, բայց առանց Ալեքսանդր Ֆյոդորովիչի՝ քաղաքն ինձ համար մի տեսակ դատարկվել է…

Նա մռայլվում է՝ հիշելով այդ տարվա մայիսին, իր բացակայությամբ, ինքնաթիռային աղետի հետևանքով մահացած Ալ. Մարտունուն:

— Ի՞նչ տամ ախպեր տղոցը,— հարցնում է գյումրեցի բուֆետպանը:

— Մի ռյումկա օղի,— պատվիրում է Չարենցը:

Մենք ոչինչ չենք վերցնում:

Չարենցը մի ումպով դատարկում է շատ փոքրիկ գավաթով օղին, և Գուրգենն ասում է նրան.

— Դե, ի՞նչ ծրագիր ունես, Չարենց:

— Գրական մեծ գործ ենք սկսելու, տղաներ,— պատասխանում է Չարենցը:— Մի քիչ սպասեցեք, գնամ Երևան, շուտով կգամ, նորից կխոսենք, մանրամասն…

Նա նայում է ժամացույցին: Պետք է գնալ: Մենք ուղևորվում ենք դեպի կառամատույցը, և Գուրգենը հասցնում է ճանապարհին հաղորդել նրան մի շարք տեղեկություններ գրական անցուդարձերի մասին:

— Այդ բոլորը լավ,— ասում է Չարենցը,— միայն թե ամենակարևորն ստեղծագործությունն է: Առանց դրա ամեն ինչ՝ հեչ: Ի՞նչ նոր ստիխներ ես գրել, Գուրգեն…

Ես բոլորովին չեմ վշտանում, որ Չարենցը համարյա ոչ մի ուշադրություն չի դարձնում ինձ վրա: Ես և մյուսները նրա համար դեռևս ոչ թե կոնկրետ երիտասարդ գրողներ ենք, այլ երիտասարդ գրողների աբստրակտ, նրան անծանոթ կատեգորիաներ: Չարենցի ուշադրությունն ու բարեկամությունը չի կարելի հայցել, դա պետք է նվաճել, նվաճել գրական շնորհքով՝ եթե ունես:

Ոչ, ես չեմ վշտանում, այլ լցվում եմ ավելի մեծ վճռականությամբ՝ դառնալ իսկական գրող: Դու, սիրելի բանաստեղծ, դեռ կասես ինձ՝ «մալադեց»,— վճռում եմ ես՝ երիտասարդական ինքնավստահությամբ:

Քիչ հետո, երբ գնացքը տարավ Չարենցին դեպի մեր արևաշող Երևանը, մենք սթափվեցինք և նայեցինք իրար: Մի՞թե, իսկապես, տեղի ունեցավ այդ ամենը, մի՞թե, իրոք, մենք տեսանք Եղիշե Չարենցին, ծանոթացանք նրա հետ…

Ես նայում էի գնացքի ետևից, երազում շատ բանի մասին: Բայց ես չէի կարող պատկերացնել անգամ, որ կանցնի ընդամենը մեկ և կես ամիս, և ինձ համար այնքան անսպասելի հանգամանքների բերումով միանգամից կսկսվի իմ և Չարենցի անխախտ բարեկամությունը, որը կտևի մինչև վերջ:

Չարենցի արտասահմանից վերադառնալուց հետո կտրուկ շրջադարձեր էին տեղի ունենալու ոչ միայն «Հոկտեմբեր» միության ընդհանուր կյանքի, այլև դրա անդամներից յուրաքանչյուրի անձնական կյանքի մեջ:

Սկսվում էր «Նոյեմբեր»-ը…

ԵՐԵՎԱՆ

Դեռ Լենինականի պատերի վրա մնում էին Շիրակի ջրանցքի բացման առթիվ փակցրած լոզունգների մնացորդները: Թվում էր, թե այդ բացումը մի տոնական օր էր, որը եկավ ու անցավ, և ամեն ինչ նորից շարունակում է իր սովորական գոյությունը: Ճիշտ այդպես էլ, Չարենցի անցնելը Լենինականի վրայով՝ արտասահմանից Երևան, որոշ ժամանակ մեզ համար դեռ մնում էր որպես մի նշանավոր հանդիպում բանաստեղծի հետ, մի հաճելի դեպք, որը, սակայն, նույնպես զնացել-անցել էր անհետևանք, և մեր գրական-կազմակերպչական կյանքը շարունակում էր ընթանալ իր հին հունով:

Օգոստոսի վերջերին «Խորհրդային Հայաստան»-ի հինգ համարներում լույս տեսավ Չարենցի «Մյուր դե Ֆեդերե» պոեմը՝ նվիրված բանաստեղծի ուսուցիչ և հովանավոր, խորհրդային հայ գրականության ուղեցույց-բարեկամ՝ Մյասնիկյանի հիշատակին:

Իսկ ըստ բանավոր լուրերի, Չարենցը Երևանում հրապարակորեն պատմել էր իր արտասահմանյան տպավորությունները և նույնը պատրաստվում էր անել Լենինականում:

Մի քանի օրից Չարենցը եկավ Լենինական: Հենց նույն օրը, ցերեկով, Քաղլուսգլխվարի թատրոնում կայացավ նրա դասախոսությունն իր արտասահմանյան ճանապարհորդության մասին:

Մենք՝ երիտասարդ գրողներս, հազիվ կարողացանք մի «քանի րոպեով խոսակցել Չարենցի հետ՝ զեկուցումից առաջ: Իսկ այժմ, դահլիճում նստած, մենք լսում էինք նրան:

Նախագահում էր Աշոտ Հախումյանը: Նրա բարեհամբույր դեմքի վրա թառել էր այնքա՛ն նրան հատուկ ժպիտը: Նա գոհ էր, որ Չարենցը մեզ մոտ է և մենք լսում ենք նրան:

Իսկ Չարենցը... Մեր ուշադրությունը շարունակ նրա վրա էր բևեռված, և մենք որքան լսում, այնքան էլ նայում էինք նրան: Մանրիկ մարդ է՝ ոչ-առատ գանգուր մազերով, զարմանալի խոհուն և իմաստալի աչքերով, մանկակա՞ն, «թե՞ կանացի թարմ շրթունքներով և մեծ քթով: Նրա մազերը բաց-շագանակագույն են, մաշկը՝ սպիտակ, և նա, եվրոպական կոստյումով, թողնում է ինչ-որ եվրասիական տպավորություն: Հիասթափության նմանվող առաջին տպավորությունը, որ մենք նրանից ստացել էինք առաջին անգամ նրան տեսնելիս, արդեն վաղուց փոխվել էր մի այլ տպավորության՝ նրա օգտին: Եվ, իսկապես: Մեծ տաղանդն աչքի ընկնող արտաքինի մեջ՝ կլիներ այնքա՛ն բնական: Զարմանալին ու տպավորիչը հենց այն էր, որ ահա այս փոքրիկ մարդը, որը բեմի վրա կանգնած, իր մի քիչ ճղճղացող ձայնով խոսում է մեզ հետ՝ սովորական զրույց անողի պես, Չարենցն է, մեր գրականության պարծանքը, մեր բազմադարյան մշակույթի խոշորագույն վարպետներից մեկը, հեղափոխության «երգիչը, որին հավասար միայն մեկը կա ամբողջ Խորհրդային Միության մեջ…

Ես մտովին շարունակում եմ թվարկել նրա արժանիքները՝ կարծես ավելի ուժեղացնելու համար կոնտրաստը նրա արտաքինի և էության միջև:

Բեմի վրա Չարենցն իրեն զգում է այնպես ազատ, ինչպես իր տանը: Ահա նա փնչաց շոգից և, հանելով բաճկոնը, «կախեց աթոռի թիկնակից, մնաց ժիլետով: Ահա նա սկսեց քայլել բեմով՝ կարծես զբոսանքի է ելել բոլորիս հետ մեկտեղ՝ մեր քաղաքի փողոցներով, պատմելու համար մեզ որոշ բաներ և թարմ օդ շնչելու: Նրա քայլվածքը մի տեսակծուռ-ծուռ է: Թվում է, թե նրա մի ոտքը մի քիչ թույլ է և ստիպված է շտապել մյուսի ետևից:

Ի՞նչ պատմեց Չարենցն այդ օրը՝ ոչինչ չեմ հիշում: Եվ դա, ըստ երևույթին, ոչ թե գլխավորապես այն պատճառով, որ անցել են երկար տարիներ, այլ որ ես շատ ավելի զբաղված էի նրան դիտելով և նրա մասին մտածելով, քան թե նրան լսելով: Ժամանակի ջնջածն ուրիշ բան է, այն, թե եղա՞ն արդյոք ուրիշ խոսողներ կամ հարց տվողներ: Գուցե ողջունեցի՞ն մեծ բանաստեղծին՝ քաղաքի աշխատավորության կողմից: Ավելի հավանական է, որ բացի Աշոտ Հախումյանի նախագահական բացման հակիրճ խոսքից և Չարենցի զեկուցումից՝ ուրիշ ոչ ոք չխոսեց: Բայց հիշում եմ, որ եղավ մի պահ, երբ Չարենցը նորից նստեց սեղանի ետևում, նախագահի կողքին: Ուրեմն, խոսում էր մի ուրիշը:

Օգտվելով այդ պահից, ես արագ վեր կացա, ելա ֆոյե, անցա կուլիսների ետևը: Զեկուցումից առաջ Չարենցը ցանկություն էր հայտնել կարդալ իմ բանաստեղծությունները, և ահա, ես ջոկել էի մի քանի հատ անտիպներից և պատրաստվում էի տալ նրան:

Ես մտա բեմ, մոտեցա նրան և շշնջացի.

— Ընկեր Չարենց…

Չարենցը ետ նայեց:

— Վերցրեք:

— Տուր: Կկարդամ և անպայման կգրեմ: Հասցեդ նշե՞լ ես:

— Այո…

Զեկուցումից հետո Մահարին մոտեցավ Չարենցին և հայտնեց.

– Մայրս քեզ է սպասում տանը, գնանք: Դու դեռ չես կերել տիկին Անուշի համեղ ճաշերը…

— Գնանք, գնանք,— երեխայի պես ուրախացավ Չարենցը: Ես իսկույն հեռու քաշվեցի, որպեսզի ինձ էլ չհրավիրեր Գուրգենը: Պիտի ամբողջ ժամանակ ինձ ճնշված զգայի սեղանի շուրջը՝ ինչպես միշտ:

Նույն օրը Չարենցը վերադարձավ Երևան: Նրա վերադառնալուց հետո «Հոկտեմբեր» միության կյանքն այլևս չընթացավ իր սովորական հունով: Բոլորիս պաշարել էր մի անսովոր խռովք: Այդպես լինում է կամ մի բանից հիասթափվելուց հետո, կամ մի նոր շրջադարձից առաջ: Ամեն ինչ, որը մինչ այդ մեզ թվացել էր բնական ու նորմալ, այժմ .թվում էր անարդարացի և աննորմալ: Ասոցիացիան Երևանումն է, իսկ մենք՝ Լենինականում: Ասոցիացիան պատրաստվում է համագումար հրավիրել, իսկ մենք... Երևանը մեր կուլտուրայի և գրականության կենտրոնն է, այնտեղ են դրվում և լուծվում հարցերը, այնտեղ են տպագրվում գրքերը, թերթերը, պարբերականները... Իսկ այստե՞ղ…

Մահարին թողնում էր այս աշխարհից վերացածի տպավորություն: Եվ մի օր էլ, չհամբերեց, մեկնեց Երևան: Ընդմիշտ:

— Չարենցի մոտ...— ասաց նա:— Գրական մեծ գործ է ծավալվելու: Հարկավոր է լինել իրադարձությունների կենտրոնում…

Իսկ մի՞թե, առավել մեծ չափով, ինձ ևս չէր կլանել նույն ձգտումը: Բայց ես չէի կարող գնալ: Երանի թե մարդ ամեն անգամ կարողանա անել այն, ինչ ցանկանում է: Բայց ես ունեի ընտանիք, որին պարտավոր էի պահել: Ես ճանապարհի դրամ անգամ չունեի՝ Երևան գնալու…

Մահարու գնալուց հետո, երբ մնացի ավելի մենակ, անձկությունն ու թախիծն ավելի ևս պաշարեցին ինձ: Այնտեղ, Երևանում, որտեղ կատարած իմ կարճատև այցելությունից հետո աչքերիս առաջից չէր հեռանում նրա արևոտ և մարդաշատ փողոցների պատկերը, դարբնվում են նոր դեպքեր և իրադարձություններ, եռում է գրական կյանքը, իսկ ես գտնվում եմ այդ ամենից հեռու…

Ես ամեն օր դուրս էի գալիս շրջելու և ամեն օր իմ ոտքերն ինձ բերում էին կայարան: Բայց ես կանգ չէի առնում այնտեղ, այլ քայլում էի զույգ ռելսերի միջով դեպի այնտեղ, որտեղ Երևանն էր... Զուտ պատահականություն կարելի էր համարել այն, որ ես չէի ընկնում գնացքի տակ: Ես չէի լսում և տեսնում ոչինչ, այլ զգում էի լոկ այն, որ այս ճանապարհը տանում է դեպի մայրաքաղաք: Իսկ երբ, վերջապես, սթափվում էի, ես իմ շուրջը տեսնում էի Շիրակի դաշտն իր թախծոտ գեղեցկությամբ: Եվ վերադառնում էի քաղաք:

Չարենցն իր խոսքը պահեց և շուտով ես նրանից ստացա մի մեծ նամակ՝ տասնմեկ էջի վրա: Առաջին իսկ տողերը թունդ հանեցին իմ հոգին: Նա հավանել էր իմ բանաստեղծությունները... Ճիշտ է, ես տեսնում էի, որ նա դրանք գովում է ավելի, քան արժեն իրականում, բայց դա վերագրում էի ինձ քաջալերելու նրա ցանկությանը: Հենց դա ևս, հուզում և ոգևորում էր ինձ: Ուրեմն ես ավելորդ մարդ չեմ գրականության մեջ, ուրեմն կարող եմ մնալ, շարունակել գրել:

Բայց, դրա փոխարեն, դառն էր ինձ համար նամակի երկրորդ կեսը, ավելի ճիշտ՝ երեք քառորդը: Չարենցն ինձ հայտնում էր, որ տեղեկություն ունի Վանանդեցուն գրած իմ նամակի մասին: Ես դա գրել էի խիստ զայրացած, լսելով, որ Երևանում Վանանդեցին, այնուամենայնիվ, պարծեցել էր, թե «քայքայել է» մեր միությունը: Եվ Չարենցն իմ գլխին սարքել էր մի իսկական բաղանիք: Սակայն, ինձ մի լավ քրտնեցնելուց հետո, նա ասում էր նաև պաշտպանական խոսքեր.

«Բայց ես քեզ չեմ մեղադրում, սիրելի Արմեն: Մեղավորը գրական այն մթնոլորտն է, որը հնարավոր է դարձնում այդպիսի նամակներ գրելը: Եվ եթե, իրոք, ուզենան քո հարցը դնել և քեզ պատժել կոմերիտմիության գծով, ապա ես կպահանջեմ, որ ինձ ևս դատեն քեզ հետ միասին, որովհետև գրական մթնոլորտի հարցում մեղավոր ենք մենք բոլորս»…

Իսկ կյանքը շարունակում էր իր ընթացքը: Անձնապես ինձ համար դա նշանակում էր, որ իմ և իմ ընտանիքի ապրուստի հարցը մնում էր դեռ չլուծված: Վերջին տարում համարյա բացառապես նվիրվելով գրականությանը, ես մոռացության էի տվել այդ հարցը, չէի աշխատում որևէ տեղ և, ճիշտն ասած, քաղաքում աշխատանք էլ չկար: Մի երկու ամիս աշխատեցի որպես «Խորհրդային Հայաստան» թերթի Լենինականի լրատու, բայց դա ինձ չէր տալիս որևէ մինիմում: Ուղարկում էի գավառական մասշտաբի մի տասնյակ ահեղացունց լուրեր, դրանցից տպվում էին միայն երկուսը, եթե, իհարկե, տպվում էին: Այն դեպքից հետո, երբ աշխատանքի համար մի անգամ գյուղ գնալով, ես բաց էի թողել գրական կարևոր դիսպուտը, ես երկար ժամանակով կորցրել էի քաղաքից դուրս աշխատելու որևէ ցանկություն: Իսկ հիմա, կարիքից դրդված, պատրաստ էի գնալ աշխատելու թեկուզ աշխարհի ծայրը…

Սեպտեմբերի սկզբներին նամակ ստացա Մահարուց: Իսկ նամակի մեջ՝ Հայաստանի պրոլետարական գրողների «Նոյեմբեր» միության դեկլարացիան ու պլատֆորմը: Գուրգենը գրում էր, որ այդ փաստաթղթերն ուղարկում է Չարենցը և խնդրում է ինձ ու «Հոկտեմբեր»-ի մյուս անդամներին՝ ուշադիր կարդալ և հավանության դեպքում ստորագրել:

«Իմ կարծիքով,— գրում էր Մահարին,— փաստաթղթերը կազմված են շատ լավ: Միակ բանը, որը դուր չի գալիս ինձ, դա մեր միության վերանվանումն է: Մի՞թե դա անհրաժեշտ է: Մտածիր այդ մասին»…

Ես մտածեցի այդ մասին: Միությունը վերանվանելու անհրաժեշտություն, իհարկե, չկար: Բայց և այնպես վերանվանել հարկավոր էր: Դա հարկավոր էր նրա համար, որ չստացվեր այն թյուր տպավորությունը, թե Չարենցն էր միացել մեզ հետ, երբ փաստն այն էր, որ մենք էինք միացել Չարենցի հետ: Ուրիշ ոչ մի պատճառ՝ ոչ միության համահայաստանյան դառնալը, ոչ նոր ընկերների հարելն այդ միությանը, չէին կարող հիմնավորել «Հոկտեմբեր»-ը «Նոյեմբեր» դարձնելը: Բայց եղած միակ պատճառն էլ բավական էր, որ ես համաձայնվեի անվանափոխության հետ և ստորագրեի: Ներկայացուցչական կարգով ստորագրեցին նաև մեր միության անդամներից չորսը: Պատասխան–նամակի հետ միասին ես դեկլարացիան ու պլատֆորմը ետ ուղարկեցի Երևան:

Սեպտեմբերի 13-ին «Խորհրդային Հայաստան»-ում լույս տեսան խորհրդահայ գրականության զարգացման տեսակետից այնքան կարևոր նշանակություն ունեցող այդ պատմական փաստաթղթերը: Բացի Չարենցից, դա ստորագրել էին «Հոկտեմբեր» միության վեց անդամներ՝ Մահարին, ես, Սարյանը, Տարոնցին, երկու ուրիշները, որոնց գրական կյանքը կարճատև եղավ: Ստորագրել էին նաև ուրիշ ինը մարդ:

Այդպիսով, Հայաստանի պրոլետարական գրական երկրորդ կազմակերպության ստեղծումն արդեն կատարված փաստ էր... Հիմա գրական-տեսական և գրական-կազմակերպչական պայքարն սկսվելու էր ավելի մեծ թափով: Երևանում դրան մասնակցելու էին Չարենցն ու նրա շուրջը համախմբված մարդիկ: Իսկ ե՞ս…

Ես չէի մնալու մինչև իսկ Լենինականում... Աշխատանքի համար ես մեկնելու էի թեև ոչ աշխարհի, բայց հանրապետության ծայրը... Մեղրիից եկած մի դպրոցի վարիչ ուսուցիչներ էր հավաքագրում, և ես, առանց այլևայլության, տվեցի իմ համաձայնությունը: Ստացա ճանապարհի ծախս, ծանոթացա իմ ապագա երկսեռ կոլեգաների հետ:

Ես որոշեցի մեկնել ոչ թե նրանց հետ, այլ մի գնացք ավելի առաջ, որպեսզի ցերեկը հասնեի Երևան, կարգավորեի մի անձնական գործ: Նախորդ տարի, Լենինի մահվան առթիվ, Լենինականում իմ խմբագրությամբ լույս էր տեսել պատանեկական բանաստեղծությունների մի ժողովածու ՝ «Լենինը պատկազմում» վերնագրով: Դրա տպաքանակի մի մասն իր ժամանակին ես ուղարկել էի Պետհրատ՝ նրա գրախանութներում կոմիսիոն հիմունքներով վաճառելու համար: Այժմ պետք է ստանայի հասանելիք դրամը: Իսկ երեկոյան կողմ, հաջորդ գնացքով, ամբողջ խմբի հետ, կարող էի շարունակել ճանապարհը:

Բացի այդ գործից, ես ունեի ևս մի պատճառ՝ շատ ավելի կարևոր: Երկար ամիսներ անծանոթ և հեռավոր վայրում փակվելուց առաջ ես ուզում էի մի անգամ ևս տեսնել Երևանը:

Եվ մի թաքուն հույս ունեի տեսնել նաև Չարենցին... Բայց կհասցնեի՞ արդյոք իմ տրամադրության տակ եղած այդ սուղ ժամերին կատարել դա…

Նշանակում է՝ ես դեռ գաղափար չունեի, թե ինչ էր նշանակում Աբովյան փողոց…

Աբովյան փողոցը եղել է, կա և երևի դեռ երկար ժամանակ կմնա Երևանի գլխավոր փողոցը: Մանավանդ այն տարիներին դա գլխավոր էր ոչ միայն իր աշխարհագրական դիրքով և տեղագրությամբ, այլև նրանով, որ այդ փողոցի վրա էին գտնվում համարյա բոլոր կարևոր հիմնարկները, զվարճատեղերը, խանութները, ճաշարանները... Այդ փողոցն էին ժամադրավայր

ընտրում մարդիկ, այդ փողոցում էին հանդիպում նաև պատահաբար: Ուստի և, անակնկալ ոչ մի բան չկար այն երջանիկ պատահականության մեջ, որ կայարանից գալով Աբովյան, ես, համարյա իսկույն, տեսա Չարենցին, որ քայլում էր Մահարու հետ:

— Նայիր, Չարենց,— ձեռքով ցույց տալով, բացականչեց Մահարին,— Արմենը…

— Այ տղա, ինչ լավ արիր, որ եկար,— ուրախացավ Չարենցը։— Ճիշտ ժամանակին: Մալադեց:

— Ես միայն այսօր ցերեկն եմ այստեղ...— առանց կարողանալու հառաչս թաքցնել, ասացի ես: Բայց Չարենցն այլևս չէր լսում ինձ: Բռնելով իմ ու Գուրգենի թևերից, նա մեզ տարավ քաղաքային շատ փոքրիկ պուրակում գտնվող գարեջրի պավիլոնը: Մենք նստեցինք և անմիջապես սկսեցինք խոսել «Նոյեմբեր»-ի գործերի մասին…

Այո, ուրիշ տեմպ էր Երևանում... Նույնիսկ առաջին, կցկտուր հաղորդումների մեջ ես նկատում էի գրական կյանքի մի այլ բաբախ, քան Լենինականում…

Որքան էլ ուշադիր էի լսում խոսակցությունը և մասնակցում դրան, ես անկարող էի հաճախակի հայացքներ չնետել իմ շուրջը: Ինչպես մի ճամբորդ, որն անապատների ամայությունից հետո ընկել է արևդարձային փարթամ բուսականության մեջ, ես շունչս պահել էի զմայլանքից: Լենինականը երբեք աչքի չի ընկել իր բուսականությամբ, բայց այդ տարիներին հատկապես, նա առավելապես կանաչազուրկ էր: Մեր փողոցներում ու բակերում չէր կարելի տեսնել համարյա ոչ մի ծառ, իսկ մեր այգին այնքան փոքր էր, որ տակետակ հագեցած էր քաղաքի և՛ փոշիով, և՛ աղմուկով, և՛ անհանգստությամբ: Իսկ այստեղ՝ Երևանում, բնությունը շռայլ էր ու ճոխ: Այժմ, տարիներ հետո, երբ անդրադառնում եմ այն Երևանին, ես գիտակցում եմ, որ նրա բուսապատումն էլ մի բանի նման չէր այն ժամանակ: Բայց, ամեն ինչ հարաբերական է: Ես Երևանն ընկալում էի Լենինականի համեմատությամբ: Եվ Երևանը շռայլորեն փարթամ էր ոչ միայն համեմատությամբ, այլև՝ անհամեմատ: Եվ այդ շռայլությունն այն ֆոնն էր, որի վրա ես հիշում եմ մեր երեքի առաջին լուրջ, երկար և գործնական խոսակցությունը գրական հարցերի մասին: Թող չթվա ո՛չ չափազանցություն և ո՛չ էլ մանավանդ, ինքնամատակարարման կարգով անձի մեծարում, եթե ասեմ, որ դա պատմական խոսակցություն էր մեր գրականության հետագայի համար: Հարցն այստեղ ոչ ես էի, ոչ Մահարին և ոչ էլ անգամ Չարենցը: Հարցն այն գործն էր, որ սկսվում էր Չարենցի ղեկավարությամբ:

Չարենցը գրականության մարդ էր ոտից-գլուխ, իր ամբողջ էությամբ: Նրան անհնար էր պատկերացնել գրականությունից դուրս: Մարդը կարող է պոզայի վերածել ծխախոտ ծխելը, բայց ոչ հաց ուտելը: Գրականությունը Չարենցի համար հանապազօրյա հաց էր: Եթե որևէ մեկը մեղանչի՝ ասելով, թե գրական կազմակերպություն ստեղծելը Չարենցին հարկավոր էր «դիրքի» կամ «փառքի» համար, գրական անունը՝ փառասիրության համար, նա պարզապես հասկացած չի լինի, որ գրականությունը, գրական ստեղծագործությունը, գրական շարժումը, Չարենցի գոյության միակ հնարավոր ձևն էին կյանքում և նա այլապես չէր կարող պատկերացնել իրեն և ոչ էլ մենք կարող էինք պատկերացնել նրան:

Չարենցը հաղորդեց, որ նա նամակագրության մեջ է Հայաստանի զանազան շրջաններում ապրող գրողների հետ և նրանցից շատերը խոսք են տվել համագործակցել «Նոյեմբեր»-ին:

Պուրակի դիմաց, փոքրիկ հրապարակից այն կողմ, կանգնած էր «Պրոլետար» կինոյի միհարկանի ցածրիկ շենքը: Դրա վրա գտնվում էր աշտարակի հեռավոր նմանություն ունեցող մի ցածրիկ գմբեթ, և դրա ճակատին ամրացված էր քաղաքի ժամացույցը՝ ջարդված ապակով: Ես նայեցի այն

կողմ: Եթե, ինչպես քաղաքացիներն էին սրախոսում, ագռավները չէին կանգնել սլաքների վրա և տեղից խախտել դրանք, ապա ուրեմն իմ գնալու ժամանակն էր…

Ես հառաչեցի և վեր կացա:

— Ո՞ւր,— խիստ զարմացավ Չարենցը:

— Գնամ, ընկեր Չարենց, հարկավոր է ավարտել մի փոքրիկ գործ և մեկնել Մեղրի…

Չարենցը շատ լուրջ զայրացավ.

— Եղբայր, մենք երեխանե՞ր ենք, ի՞նչ է: Լուրջ գո՞րծ ենք անում, թե՞ խաղ: Խոսեցինք, խոսեցինք, և դարձյալ՝ Մեղրի: Դու ոչ մի տեղ չես գնա:

— Ընկեր Չարենց...— սառեցի ես,— ախր ես ընտանիք ունիմ, ինձ աշխատել է հարկավոր…

— Անգործ չես մնա:

— Բայց ես ապրելու տեղ չունեմ Երևանում…

— Բաց երկնքի տակ չես մնա:

— Ընկեր Չարենց,— փորձեցի առաջադրել իմ ամենալուրջ պատճառաբանությունը,— ես կանխավճար եմ վերցրել…

Հազիվ էի արտասանել այդ խոսքերը, երբ Չարենցի կոկորդից հորդեց երեխայական անզուսպ և վարակիչ ծիծաղը.

— Հո՛-հո՛-հո՛… Կանխավճար... Հո՛-հո՛-հո՛... Գուրգենին կասենք, որ քեզ սովորեցնի ստացած կանխավճարների հանդեպ հետագա վերաբերմունք ցույց տալու ձևը... Հո՛-հո՛-հո՛...

Ապա, հանկարծակի լրջանալով.

— Դու ոչ մի տեղ չես գնա: Չէ՞ որ, սուկին սին, դու գենիալնի տղա ես…

Եթե Չարենցն ինձ մեծարեր մի աստիճան ավելի ցածր տիտղոսով, անվաներ, օրինակ, տաղանդավոր, ո՞վ գիտե, գուցե հավատայի և սկսեի շփանալ: Բայց «գենիալնի՞»... Այսինքն՝ «հանճարեղ».… Ես դեռ չգիտեի, որ գրական տիտղոսները Չարենցի մոտ ունեին թարս դասավորություն: Նախ գալիս էին հանճարեղ սկսնակները, ապա տաղանդավոր գրողները, և, վերջում միայն, իսկական շնորհքով օժտված դասական գրողները…

Չարենցը մի պահ մռայլվեց: Ես զգացի, որ գրական հաճելի մթնոլորտից նա դուրս ելավ դեպի իրականության պրոզան:

— Ի՞նչ ընտանիք ունես,— հարցրեց նա:

Ես պատասխանեցի: Նա մի պահ մտածեց, ապա կանչեց մատուցողին և վճարեց:

— Վեր կաց, Գուրգեն,— ասաց նա՝ վեր կենալով ինքը,— հարկավոր է աշխատանք ճարել էս սուկին սինի համար…

Նա դրեց իր եվրոպական շլյապան, վերցրեց ասիական թազբեհը, որից չէր բաժանվում համարյա երբեք, և, քաշելով, քայլեց մեր երկուսի մեջտեղով: Դանդաղ քայլերով, շարունակելով զրույցը, նա

մեզ տարավ Նալբանդյան փողոց և մտցրեց մի սևաքար ոչ մեծ շենք: «Լուսավորության ժողովրդական կոմիսարիատ»՝ կարդացի ես դռան վրա:

Մոտեցանք դռներից մեկին, որի վրա գրված էր Ասիա: Այդ անհասկանալի բառը նշանակում էր Անապաստանների սոցիալ-իրավական պաշտպանություն: Իսկ դա, իր հերթին, նշանակում էր անապաստան երեխաներին՝ «խուժաններին» փողոցներից հավաքող, մանկատներ տանող և նրանց մասին հոգացող բաժին:

Մտնելով ներս, մենք տեսանք մի հաղթանդամ և գեղեցիկ երիտասարդի՝ լայն կրծքով, լայն դեմքով, այնպիսի չքնաղ գանգուրներով, որպիսիք ես տեսել էի միայն անտիկ արձանների մարդկանց գլխներին: Անմիջապես ճանաչեցի նրան՝ պարբերականներում մի ժամանակ հաճախ տպագրվող նրա լուսանկարներից: Դա Հայաստանի կոմունիստական պատանեկական կազմակերպությունների հիմնադիր, Հայաստանի պատկոմական շտաբի առաջին պետ, խորհրդահայ մանկական առաջին «Պատկոմ» ամսագրի խմբագիր, իսկ հետագայում նաև մանկական դասագրքերի խմբագիր, կինոռեժիսյոր և այլն, Ստեփան Մանուկյանն էր:

Չարենցն ու Գուրգենը բարևեցին նրան, իսկ երբ նրանք ներկայացրին ինձ, ես քիչ մնաց պատվի առնեի իմ դեռ ոչ վաղուցվա պատկոմական սովորության համաձայն, որպես իմ պետի:

— Ստեփան, սա գենիալնի պոետ է, և ես ուզում եմ պահել նրան Երևանում: Գտիր մի աշխատանք:

Ստեփան Մանուկյանն այն մարդկանցից էր, ովքեր բոլոր հարցերը լուծում են ոտի վրա: Ոչ միայն դրա փոխաբերական իմաստով, այսինքն՝ առանց դեսուդեն գցելու, այլև բառացիորեն, ոտքի վրա կանգնած:

— Ի՞նչ կա որ,— ասաց նա միանգամայն պարզ ու հասարակ,— թող աշխատի ինձ մոտ:

— Որպես ի՞նչ:

Ստեփանը նույնիսկ ուսերը շարժեց այդպիսի երկրորդական հարցը ճշտելու Չարենցի ցանկության վրա:

— Հենց թեկուզ որպես իմ բաժնի քարտուղար:

— Ուզո՞ւմ ես մեր Ստեփանի հետ աշխատել,— դիմեց Չարենցն ինձ:

— Ինչո՞ւ չէ:

— Ընդունված ես,— հայտնեց Ստեփանն ինձ դու-ով, այդ ժամանակվա ընդունված ձևով, բայց ինձ թվաց, թե նա կռահեց իմ երբեմնի պատկոմական աշխատող լինելը և ինձ հետ խոսեց որպես պատկոմապետ:

— Երբվանի՞ց,— հարցրեց Չարենցը:

Ստեփանը կախարդիչ տարակուսանքով նորից շարժեց ուսերը.

— Ուզում է՝ թող հենց հիմա նստի: Սա է գրասեղանդ, Արմեն:

— Նու, նետ,— ձեռքով ինձ մի կողմ հրեց Չարենցը՝ իր պաշտպանության տակ առնելու ձևով:— Մենք դեռ գործեր ունենք կարգադրելու: Դու, Ստեփան, նրան էսօրվանից մտցրու շտատի մեջ, իսկ նա կգա հետո, մի օր կգա:

Ստեփանը գլուխն օրորեց, ծիծաղեց, որ այդպիսի տարրական և բնական բանը Չարենցն ասում է պնդելու նմանվող եռանդագին տոնով, կարծես կարող են լինել նաև առարկողներ:

Չարենցն ինձ թեթևակի հրեց առաջ և նույնպես դուրս ելավ՝ մոռանալով նույնիսկ շնորհակալություն հայտնել Ստեփանին: Ի դեպ, ես պատկերացնում եմ, թե որքան պիտի զարմանար ու տարակուսեր Ստեփանը, եթե Չարենցը, այնուամենայնիվ, հայտներ շնորհակալություն:

Փողոցում, շեմքի մոտ, նա կանգ առավ, ուշադիր նայեց երեսիս, ապա, ուսերը ետ ցնցելով, բարձր ծիծաղեց՝ կարծես մի հաջող խաղ խաղալուց հետո.

— Պրծա՞նք էս մի գործը: Իսկ հիմի՞ ինչ ես ուզում՝ փո՞ղ:

Նա ձեռքը տարավ գրպանը:

— Ընկեր Չարենց,— բողոքեցի ես:

— Սպասիր,— բարկացավ նա,— ես փող չեմ բաշխում քեզ, այլ կանխավճար եմ տալիս կանխավճար... Հո՛-հո՛-հո՛…

— Կանխավճա՞ր... Ինչի՞ դիմաց…

Չարենցը նայեց Մահարուն.

— Գուրգեն, ինչի՞ դիմաց եմ տալիս կանխավճարը…

Ապա, ինքն էլ գտնելով, ասաց.

— Հայ գրականության դիմաց: Այն գործերի, որ պիտի գրես:

— Ես էլ գրական զանազան ծրագրեր ունեմ,— համառոտ և խրթին ասաց Գուրգենը:

Չարենցը կատարյալ երեխայի նման հրճվեց դրամ ուզելու պարզ միտքն այդպես սրամիտ արտահայտելուց, հրճվեց այնպես, ինչպես մի մարդ, որն ինքն անկարող է նույնն անել և գոհանում է ուրիշներինը լսելով:

«Կանխավճարելով» նաև Գուրգենին, նա խրատեց.

— Չխմեք…

— ...առանց ինձ,— նրա ասածը յուրովի լրացրեց Գուրգենը:

Չարենցը բռնկվեց մի այնպիսի բարձր «հո՛-հո՛-հո՛»-ով, որ անցորդները կանգ առան և զարմացած նայեցին նրան, բայց և իսկույն քայլեցին՝ առանց բան հասկանալու, սակայն իրենք ևս արդեն վարակված այդ տարօրինակ ծիաղով:

Երրորդ հարցի՝ գիշերելու տեղի մասին Չարենցը ոչինչ չասաց և ես ոչինչ չհարցրի՝ արդեն համոզվելով, որ իրոք, դուրսը չեմ մնալու: Մենք երեքով նորից գնացինք Աբովյան, շրջեցինք մի քիչ, ապա Չարենցն առաջարկեց գնալ միասին ճաշելու:

Լենինականի սակավամարդ փողոցներից հետո Երևանի փողոցները և մասնավորապես Աբովյանն ինձ վրա թողնում էին այն տպավորությունը, թե քիչ առաջ տեղի է ունեցել մի բազմամարդ միտինգ, իսկ այժմ ժողովուրդը ցրվել է և զբոսնում է:

Ունիվերմագի կողքին, այնտեղ, որտեղ այժմ ամառային «Մոսկվա» ռեստորանն է, այն ժամանակ գտնվում էր դարձյալ ամառնային մի ճաշարան: Դա մի բավական ընդարձակ բակում էր՝ շատ քիչ բուսականությամբ: Կար նաև փայտաշեն ծածկած մաս: Ճաշարանը Երևանի ինտելիգենցիայի ժամադրավայրն էր և մի տեսակ ակումբը: Ընդհանրապես այդ տարիներին ճաշարաններում և կաֆեներում սնվողների տոկոսը ժողովրդի մեջ անհամեմատ ավելի բարձր էր, քան հիմա: Դա բացատրվում էր նրանով, որ մեր ժողովրդի ճնշող մեծամասնությունն այն ժամանակ կազմում էր որբանոցներից աճած և դուրս եկած երիտասարդությունը, որը դեռ չէր կարգավորել իր կենցաղը, ամուրի էր կամ չուներ տանը ճաշ պատրաստելու հարմարություններ:

Երբ մենք փայտյա ճաղերով դռնակից մտանք ճաշարանի բակը, շատերը դարձան մեր կողմը և նայեցին Չարենցին: Մինչդեռ մենք առաջանում էինք սեղանների միջով՝ ազատ տեղեր գտնելու, այս ու այն կողմից ողջունում էին Չարենցին զանազան կերպ՝ ամեն մեկն ըստ իր կուլտուրական մակարդակի, բնավորության, մտերմության աստիճանի՝ նրա հետ:

— Բարև ձեզ, ընկեր Չարենց:

— Բարև, Չարենց, այսօր մի քիչ շուտ ես եկել ճաշելու:

— Չարենց, իմ ողջույնները: Ինչո՞ւ երեկ երեկոյան չկայիք, լավ ներկայացում էր:

— Օ՜, քայլում է «Նոյեմբեր»-ը: Գուրգե՞ն, ինչպե՞ս ես այն օրվանից այս կողմ, գլուխդ հո չէ՞ր ցավում:

— Եղիշ ջան, պինդ կաց, դու տաղանդավոր գրող ես, արևս վկա:

— Հավատում է, հավատում է, մի երդվիր,— հանգստացնում էր Գուրգենը:

Կարող է թվալ, թե Չարենցին «Եղիշ»-ով դիմողները նրա ամենամոտիկ ընկերներն էին: Բայց իրականում այդ նրանք էին, որոնց հետ բանաստեղծը երբեք ծանոթ էլ չէր: «Եղիշ»-ով նրանք ուզում էին ցույց տալ մարդկանց՝ իրենց «դոստ» լինելը նրա հետ: Ոչ նրա ամենամտերիմ ընկերներս, ոչ անգամ նրա կինը, չէինք դիմում նրան այլ կերպ, քան Չարենց:

Երբ մենք տեղ գտանք և նստեցինք՝ ես նայեցի իմ շուրջը: Քանի՜-քանիսին ես ճանաչեցի նրանց տպագրված հին ու նոր լուսանկարներից: Իսկ մյուսներին ճանաչեցի ճաշելու ընթացքում հարցնելով.

— Գուրգեն, ո՞վ է այն կանգնածը:

— Ո՞րը: Դու մի՞թե չես ճանաչում Լևոն Քալանթարին:

— Իսկ աջակողմյան չորրորդ սեղանի մոտի նստածնե՞րը: Չեմ ուզում ցույց տալ, որովհետև այս կողմ են նայում:

— Հենց դա է Դանչոն՝ Ալազանի եղբայրը: Իսկ հետինները՝ տպարանի բանվորներ են՝ իր նման:

Չարենցը մի փոքր նման է երես տված երեխայի: Նա շատ մարդկանց, այդ թվում նաև իրենից ավագներին, դիմում է դու-ով, հետևերը խոսում է անչար ծաղրով: Բայց ոչ մի չափով դա չի գալիս մեծ գրող լինելու նրա գիտակցությունից, այլ գալիս է կարսեցի չար տղայից, որը, վերջապես, մեծ

գրող դառնալու շնորհիվ, հնարավորություն ունի մի քիչ ծիծաղել այդ մարդկանց վրա, որպիսի ցանկությունն առաջ էլ ունեցել է, իհարկե:

— Մամիկոն,— ձայն է տալիս նա մեր մոտով դեպի ելքի դուռը քայլող Մամիկոն Գևորգյանին,— թատրոնի դիրեկտոր մարդ ես, հրամայիր, թող լավ թատրոններ խաղան:

Մամիկոն Գևորգյանն արժանապատիվ շարժումով կանգ է առնում, թեթև խոնարհվում է դեպի սեղանը, պահպանելով էտիկետը՝ նախ ասում է՝ «հարգանքներս», ապա, լուրջ տոնով այդ ողջույնից հետո արտասանում է ավելի աշխույժ.

— Մենք պետք է ապրենք ձեր աղոթքներով: Պիես գրեցեք մեզ համար:

— Որ պիես գրելը հեշտ բան է՝ նստի ինքդ գրի, ինչո՞ւ ես դիրեկտորություն անում,— բարձրաձայն, մի քիչ նույնիսկ կռվարար տոնով, դիմադարձում է Չարենցը:

Մամիկոն Գևորգյանը, գլուխն արժանապատիվ դանդաղությամբ շուռ տալով, նայում է, թե ով լսեց այդ դիալոգը, ապա, նայելով բոլորին ընդհանրապես, ուսերն է շարժում ժպտալով, այսինքն թե՝ ի՞նչ խոսես այս մեծացած երեխայի հետ, նա մեր բոլորի Չարենցն է, նրան մեծահոգաբար ներելի է ամեն ինչ ասելը:

— Լսում եմ, ընկեր Չարյանց,— դիմում է օֆիցիանտը՝ մոտենալով:

— Այ տղա, էլի քու սեղանի՞ն ենք նստել,— զարմանում է Չարենցը՝ «տղա» անվանելով քառասուն տարեկան մի մարդու:— Վեր կացեք գնանք, Գուրգեն, Արմեն, ուրիշ տեղ ճարենք:

— Ինչո՞ւ, իմ սեղանը վա՞տն է,— հարցնում է օֆիցիանտը՝ աչքով անելով Մահարուն:

— Դու ինքդ ես վատը: Ինչո՞ւ այն երեկո խաբեցիր, թե էլ գինի չկա:

— Չխաբեցի, ընկեր Չարյանց, երեխաներիս ազիզ արևը վկա,— երդվում է անզավակ օֆիցիանտը:— Պրծել էր:

— Դու մեղավոր չես,— արդեն հաշտ, ասում է Չարենցը:— Անպայման էն «կլուբի մեյմունն» էր քեզ աչքով արել: Ես այլևս նրա հետ ընթրելու չեմ գա:

— Ես նրա երեսին էլ մտիկ չեմ արել, ընկեր Չարյանց, երեխաներիս…

— Այ տղա, հերիք չէ՞ երդվես, ի՞նչ ունես ուտելու…

Չարենցն ուտում է չափազանց քիչ: Ես նայում եմ նրան և զարմանում: Բայց նրան չճանաչողների համար ավելի զարմանալին այն է, որ նա նաև խմում է շատ քիչ: Միայն նրա շուրջը հյուսված քաղքենիական անեկդոտների մեջ է, որ նա կոնյակը խմում է թեյի բաժակներով: Երկու փոքրիկ գավաթ, և ահա, երրորդի վրա նա հարբած է, թեև երբեմն էլ ձևացնում է, թե հարբած է: Կամ, առնվազն, չափազանցում է:

Այս բոլորը ես ասում եմ ոչ առաջին օրվա տպավորությունների հիման վրա և ոչ էլ հետին թվով՝ նրան թերություններից զտելու ցանկությամբ: Ես այս ասում եմ տասներկու տարվա մեր մտերիմ բարեկամության ընթացքում բազմիցս հաստատված իմ համոզման հիման վրա:

Ճաշից հետո մենք գնում ենք ինչ-որ տեղեր, հանդիպում ենք ինչ-որ մարդկանց հետ, խոսակցում ենք ինչ-որ հարցերի շուրջը, բայց ամեն տեղ հարցերի առանցքը գրականությունն է և «Նոյեմբեր»-ը:

Երեկոյան մեզ միանում է նաև Ստեփան Մանուկյանը, կարծեմ էլի մի երկու մարդ, և մենք շարունակում ենք զրույցը: «Խորհրդային Հայաստանի» վաղվա համարում դա պիտի ստանա ինֆորմացիայի այս ձևը.— «Երեկ երեկոյան կայացավ Հայաստանի պրոլետ-գրողների «Նոյեմբեր» միության Երևանի կազմակերպության ընդհանուր դռնփակ ժողովը»…

Երբ ուշ երեկոյան ավարտվեց մեր «ընդհանուր դռնփակ ժողովը» և մենք նորից մնացինք երեքով, Չարենցն ասաց նշանակալից տոնով.

— Գնանք... Հարկավոր է նշանավորել Արմենի Երևան փոխադրվելը…

Գուրգենն «ըհըմ» արեց իր մեծածավալ և իր տակ շատ բան թաքցնող քթով, ժպտաց և շուռ եկավ՝ հաստատ իմանալով, թե որ կողմն ենք գնալու:

Մենք ցած իջանք Աբովյանով, շարունակեցինք մեր ճանապարհը դրա շարունակությունը կազմող Շահումյանով: Կեսգիշերին մոտ էր: Դեռ նոր էինք հասել Պետթատրոնի դռանը, երբ վճիտ ջրի նման հոսեց սրնգի նվագը: Դա կույր սրնգահար Ասոն էր, որի մասին գրել է Վահան Տերյանը.

Այնտեղ նահիրյանն է նազում,

Ասող լացացնում է մեյին…

Ոչ ոք ինձ չասաց նրա մասին, բայց անկարելի էր չճանաչել նրան: Չարենցը մոտեցավ, տվեց նրան մի խոշոր թղթադրամ՝ նախապես անվանելով իրեն, այլապես Ասոն դրամ չէր վերցնի, նա դրամի համար չէր նվագում, այլ իր համար: Լուռ կանգ առավ՝ երեխայի ցավակցոտ հետաքրքրությամբ նայելով սրնգահարի դատարկ ակնակոպիճներին:

Տախտակե փեղկերով փակվող խանութների ցուցափեղկերի երկու կողմերում սովորաբար լինում են քառանկյունի ոչ խորը նիշեր, որպեսզի, խանութը բաց անելիս, ետ ծալած և տախտակ-տախտակի վրա դասավորած փեղկերի շերտը տեղավորեն դրա մեջ: Ահա այդպիսի մի նիշի մեջ էր կանգնում Ասոն ամեն գիշեր, իր սովորական տեղում, իր սովորական ժամին, սև վերարկուով, և եթե նվագը չլիներ, նրան կարելի էր կամ չնկատել, կամ դնել ստվերի, կամ, ով գիտե, ուրվականի տեղ:

Չարենցը նրա հանդեպ խոր հարգանք էր տածում՝ ոչ միայն որպես սրնգահար Ասոյի, այլև որպես Տերյանի բանաստեղծության մեջ անմահացածի:

Երկու քայլ ևս գնալով, մենք թեքվեցինք Խորհուրդների փողոց կոչվող խիստ նեղ նրբանցքը և մոտեցանք մի դարպասի: Չարենցն սկսեց թակել և միաժամանակ բղավել.

— Ուստա Կարո…

Նրան միացավ նաև Գուրգենը:

Բավական անց, մենք դարպասի փեղկերի արանքից տեսանք, թե ինչպես դեպի մեզ է գալիս մի մարդ՝ ճանապարհին թևը կոխելով բաճկոնի մեջ: Երբ նա դարպասը բացեց, ես մեր առջևում տեսա բացառիկ հարգանք ու պատկառանք ներշնչող բարձրահասակ ու տարիքոտ մի մարդու, մի իսկական ժողովրդական ուստայի: Ես կարդացել էի Իսահակյանի «Ուստա Կարո» վեպի հատվածները և այժմ ինձ թվում էր, թե հենց նրան է նկատի ունեցել իմ մեծ հայրենակիցը:

— Չարե՞նց...— արտասանեց ուստան՝ հայրական ներողամտությամբ և արժանապատվորեն դանդաղ:

— Գնանք, ուստա Կարո ջան,— ասաց Չարենցը, և էս չէի կարող չնկատել հարգանքի ակնհայտ շեշտը նրա ձայնի մեջ: Ցերեկվա չար տղայի հետքն անգամ չկար:

— Դե որ էդպես է՝ մինչև դու գինի-մինի առնես՝ ես տղաներին զարթնեցնեմ,— ասաց ուստա Կարոն և դիմեց Մահարուն՝ կարծես որպես ավելի չափահաս մարդու, որին ավելի վստահելի է հանձնարարել լուրջ գործերը.— մի տասնհինգ րոպե, Գուրգեն…

Քանի որ խանութներն արդեն փակ էին, Չարենցը մոտակա ճաշարանից գնեց օղի, գինի, հաց, երշիկ: Երբ մենք վերադարձանք՝ նրբանցք, դարպասի մոտ արդեն պատրաստ էր դաուլ-զուռնայի ամբողջ եռյակը, որի մյուս երկու անդամները երիտասարդներ էին: Ուստա Կարոն վարժ աչքով մի թռուցիկ հայացք նետեց իմ ու Գուրգենի թևերի տակ գտնվող փաթեթներին և հանդիմանական տոնով հարցրեց Չարենցին.

— Բա գինին ինչո՞վ եք խմելու:

Եվ, առանց սպասելու պատասխանի, դիմեց իր երիտասարդներից մեկին.

— Մտիր մեր տուն, մի քանի հատ բաժակ բեր: Առ բլանիքը: Մուղաթ ժաժումաժ եկ՝ տնեցիներին չզարթնեցնես…

Մենք իջանք Շահումյանով, անցանք Ղանթարի, այսինքն՝ Երևանի արևելյան ծածկած շուկայի մոտով և թեքվեցինք աջ՝ դեպի Հրազդանի ձորը:

— Փչի,— ասաց Չարենցն ուստա Կարոյին:

Ուստան ձայն չհանեց:

— Տո փչի՝ ասում եմ քեզ:

— Չի կարելի, կեսգիշերն անցել ա, մարդիկ քնած են:

— Տո փչի,— կրկնեց Չարենցը համառ:

Ոչ, նա չէր հրամայում պատկառելի ուստային, այլ, փոքրամարմին, քայլում էր նրա կողքով՝ ինչպես կամակոր երեխա, և պահանջում, որ նա «փչի»: Իսկ Կարոն, այլևս առանց պատասխանելու, լուռ քայլում էր:

— Տո քեզ եմ ասում, ուստա Կարո, փչի, ես պատասխանատու եմ:

— Լավ չի՞ ըլնի, որ դու քու ոտանավորների համար պատասխան տաս, ես՝ իմ զուռնի:

Չարենցը մի պահ մտածեց, երևի ինքն էլ եկավ այն եզրակացության, որ «լավ կըլնի», և իսկույն դադարեց կամակորելուց:

Տարիներ հետո, մի անգամ, ես հարցրի Չարենցին.

— Դու դաուլ-զուռնա սիրո՞ւմ ես, նա հուզո՞ւմ է քեզ, Չարենց:

— Ոչ,— ասաց նա անմիջապես, առանց մի վայրկյան անգամ մտածելու:

Իհարկե, նա չէր կարող սիրել մեր արդեն պրիմիտիվ այդ երաժշտական գործիքները, հուզվել դրանց նվագով: Նա գիտեր բարձր երաժշտություն և կատարելագործված գործիքներ, շատ էր

սիրում հաճախել կլասիկ երաժշտության համերգներ, իսկ Բեթհովենի նկարը միշտ կախված էր նրա գրասեղանի մոտ: Ու թեև նվագել չգիտեին ոչ ինքը և ոչ կինը, բայց նա գնել էր դաշնամուր՝ անշուշտ իր զավակներին երաժշտական կրթություն տալու ակնկալումով: Բայց հենց որ նա զվարճանալու ցանկություն էր ունենում — իսկ դա, հակառակ տարածված թյուր պատկերացման, լինում էր սակավ — նա հիշում էր դաուլ-զուռնան և իր մշտական ուստա Կարոյին: Եվ մեր մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցը վերածվում էր կարսեցի Եղիշե Սողոմոնյանին, որը մեծացել է, վայելուչ կոստյումներ է հագնում, բայց հոգեպես իբր թե մնացել է նույն Աբգար-աղայի տղան:

Այժմ նույնպես, երբ մենք անցանք Հրազդանի կամուրջը և անմարդության մեջ հնչեց դաուլ-զուռնայի ձայնը, Չարենցը, որ զբաղված էր լուրջ խոսակցությամբ ինձ ու Գուրգենի հետ, բառը թողեց կիսատ և բղավեց հարբածի գոհունակ ձայնով.

— Վա՛յ-վա՛յ…

Մենք իջանք կամուրջից, քայլեցինք գետափով, ընտրեցինք մի հարմար տեղ և նստեցինք: Գետն ուժեղ խշշում էր, առավել ևս գիշերվա լռության մեջ: Մեր գլխավերևում, աստղերի ցոլքի տակ, հազիվ գծագրվում էին ծառերի սաղարթները: Մեր տակ կանաչ խոտն էր:

Փռեցինք լրագրերը, վրան դրեցինք ուտելիքը, ուզեցինք բաց անել շշերը, և նոր միայն հիշեցինք, որ խցանահան չունեինք: Ուստա Կարոն, ուր այդ պահին նվագում էր, ավելի ուժեղ փչեց մի քանի նոտա՝ իր վրա հրավիրելով մեր ուշադրությունը: Եվ երբ մենք նայեցինք նրան, նա գլուխը շուռ տվեց դեպի աջ և զուռնայի մի շարժումով դեպի ներքև՝ ցույց տվեց իր բաճկոնի գրպանը: Ես ձեռքս կոխեցի այնտեղ, հանեցի դանակը, որի վրա կար խցանահան:

Անմոռանալի գիշեր էր դա: Ի՜նչ անսպասելի շուռ եկավ իմ բախտի անիվը: Ես այս րոպեին պետք է լինեի Երևանից արդեն մի քանի ժամ հեռավորության վրա, գնացքում, հեռու Մեղրիի ճանապարհին... Առավոտյան մենք պետք է ճանապարհը շարունակեինք սայլերով, ապա այնտեղ, որտեղ սայլերն էլ չէին կարող անցնել՝ էշերով... Եվ ահա՝ մի խուլ, հետամնաց գյուղ, իսկ ես՝ այնտեղ ուսուցիչ... Ստանում եմ Երևանի թերթերը՝ երեք օրվա ուշացումով, կարդում եմ այնտեղ Չարենցի ու Մահարու բանաստեղծությունները, «Նոյեմբեր» միության հերթական ժողովի ինֆորմացիան... Իսկ ե՞ս... Իսկ ես հառաչով ասում եմ իմ կոլեգա ուսուցիչ-ուսուցչուհիներին, որ ես էլ մի ժամանակ բանաստեղծություններ էի գրում և տպում, նույնիսկ գրական միություն էի ղեկավարում... Ոմանք հավատում են, ոմանք՝ ոչ: Իսկ երբ պատմում եմ իմ ծանոթությունը Չարենցի հետ՝ ինձ հավատացողները նույնպես, միահամուռ մտնում են չհավատացողների շարքերը... Ի՞նչ ճշմարտություն պիտի սովորեցնեմ աշակերտներին, երբ ինքս ստեր եմ փչում…

Ես վախեցած շարժվում եմ տեղումս, կարծես այդ բոլորն այլև անցյալ չէ, այլ պիտի լինի, և ես իմ շարժումով անզոր փորձ եմ անում ետ վանել դա:

Ես մթության մեջ շնորհակալությամբ եմ նայում Չարենցին, որ ինձ պահեց Երևանում: Ես ինչպե՞ս կարող էի չմնալ Երևանում... Այդ միտքը հիմա ինձ թվում է վայրենի անհեթեթություն…

Բայց նույն պահին իմ աչքի առաջ կանգնում են համակրելի, համեստ դեմքերն այն ուսուցիչ-ուսուցչուհիների, որոնց հետ ես այժմ պիտի լինեի միևնույն վագոնում: Նրանք բոլորը երիտասարդներ էին և ընտրել էին մի այնպիսի կարևոր, բայց աննկատելի, անշնորհակալ գործ, ինչպիսին էր գյուղական ուսուցչի պարտականությունը…

Վաղվանից նրանք, համբերատարորեն, օրը-օրի վրա, լուռ համառությամբ, կսկսեն գիտության լույս սրսկել գյուղի կիսամերկ երեխաների հոգում՝ կաթիլ առ կաթիլ... Իսկ ես — ինչպիսի

անպատկառություն — կդառնամ գրող և իմ ընթերցողները կլինեն այդ հիանալի ուսուցիչների սովորեցրած աշակերտները, այն ուսուցիչների, որոնց ես լքեցի այնքա՛ն անազնվորեն…

Հատկապես դրանցից մեկը, մի լավ աղջիկ, ամաչելով կարմրելով, ասաց ինձ, թե որքա՛ն լավ կլիներ, եթե ես ու ինքն աշխատեինք միևնույն գյուղում… Եվ ես, ոչ պակաս հուզմունքով, պատասխանեցի, որ կխնդրեմ այդ մասին տեղում, լուսաբաժնում... Ի՞նչ պիտի մտածի նա հիմա իմ մասին…

— Ի՞նչ ես լռել, Արմեն,— լսեցի Չարենցի ձայնը,— ստաքան վերցրու…

Երբ խոսում է Չարենցը, դու չես կարող ասել, թե դա լեզվի այն խստապահանջ վարպետն է: Նրա խոսքերը լիքն են ոչ-հայկական կամ գավառական բառերով: Բայց «ստաքան», «չալել» և նման բառեր սովորաբար չկան նրա լեքսիկոնում, և երևան են գալիս միայն դառլ-զուռնայի ներկայությամբ, աքսեսուարը լրացնելու համար:

— Խիղճս ինձ տանջում է, Չարենց, գոնե կանխավճար վերցրած չլինեի, ազնիվ կոմերիտականի խոսք... Ի՞նչ պիտի մտածի իմ մասին մեզ հավաքագրողը…

— Ոչինչ, դրամը ետ կուղարկես և նամակ կգրես: Գիտե՞ս ազգանունը:

— Այո: Քոթանջյան:

Չարենցը, որն ինձ հետ խոսելիս ձգվել էր դեպի սփռոցը՝ հաց վերցնելու, կտրուկ շուռ եկավ դեպի ինձ.

— Ի՞նչ-ի՞նչ... Քոթանջյա՞ն... Աշո՞տ…

— Այո:

— Ճիշտ են ասում ռուսները՝ աշխարհը նեղ է…— մտածկոտ և նկատելիորեն տխրած, ասաց Չարենցը.— Կարինեի եղբայրը…

Ինչպե՞ս չէի մտածել ինքս այդ մասին... Չէ՞ որ ես մինչև անգամ անգիր գիտեմ բանաստեղծությունը.

Թե Կարինե Քոթանջյանին տեսնեք Ղարսի փողոցներում,

Ասեք նրան՝ Չարենցն ասավ՝ մնաս բարով, մնաս բարով…

Մի նշանակալից պաուզա, ապա նորից Չարենցի զվարթ ձայնը.

— Դե ուրեմն բոլորովին չմտածես, ես ինքս կգրեմ նրան:

— Ես մենա՞կ եմ խմելու բոլորը, ի՞նչ է,— լսվեց Գուրգենի ձայնը:

— Վայ, սուկին սին,— լուրջ վախեցավ Չարենցը և խլելով «սեղանի» վրայից 22երը, ստուգեց, թե որևէ բան թողե՞լ է Գուրգենը մեջները:— Տո, ձեռք էլ չես տվել: Դե, վերցրու: Բարի գալուստ Արմենին:

— Ձեր կենացը,— ասացի ես:

— Բռոս, բռոս, խմիր:

Ուստա Կարոն մերթ նվագում էր, մերթ ընդհատում և անշարժ նստած նայում էր մեզ, իսկ նրա երիտասարդ աշխատակիցները կիսաձայն զրուցում էին իրար հետ՝ իրենց ինչ-որ նյութի մասին, և ամեն ընդմիջման ժամանակ շարունակում էին այդ խոսակցությունը:

Մեր ետևում Հրազդանի ձորի ծառաշատ և անմարդաբնակ լանջն էր, իսկ դիմացի լանջի վրա, ջրի մոտից սկսած մինչև վեր, որտեղ քաղաքի փողոցներն էին արդեն, թույլ պլպլում էին Զորագեղ միհարկանի թաղամասի մի քանի կրակներ, բոլորն էլ բնակարաններից: Տեսնես ո՞վ է գիշերով աշխատում այնտեղ՝ խմոր է շաղախում կամ ավարտում է ուշացած լվացքը…

Մի անգամ, նվագից հետո անշարժ նստած, ուստա Կարոն դիմեց Չարենցին.

— Բա ի՞նձ խի գինի չես տալիս:

Չարենցը, որն ուներ այդ սովորությունը, իր անսահման պարզության մեջ ոչ ինքն էր հիշում, որ պետք է հյուրասիրել, ոչ էլ սպասում էր, որ իրեն հյուրասիրեն, խիստ զայրացավ.

— Դու ղոնա՞խ ես, ի՞նչ է, ուստա Կարո, որ քեզ հյուրասիրեմ: Խմե՞լ ես ուզում՝ պաժալուստա…

— Էդ օրենք չի,— դատողաբար ասաց ուստան,— կարգ կա, կանոն կա: Դե լցրու տենամ...

Բայց ուստա Կարոն խմել չէր ուզում: Վախենալով, որ Չարենցը կարող է հարբել, նա ուզում էր կրճատել խմիչքի պաշարը:

— Տղերքի համար էլ լցրու…

Այդպես, ամեն մարդ, իր գիտեցած ու կարեցած ձևով, խնայում և պահպանում էր հայ ժողովրդի մեծ բանաստեղծին…

— Ի՞նչ կասեք, եթե գիշերն այլևս քաղաք չգնանք, այլ մնանք այստեղ,— գյուտ արածի նման, հանկարծ բացականչեց Չարենցը:

— Ես ուրիշ կերպ չէի էլ պատկերացնում,— տարակուսանքով դեպի Չարենցի ավելորդ հարցը, ասաց Գուրգենը:

— Դե որ էդպես է՝ քնենք, ուշ է, մանավանդ, որ խմիչք էլ չկա: Իսկ դո՞ւք, ուստա Կարո:

— Դուք ձեր հարմարությանը նայեք, Չարենց, մեր գործը դժվար չի, ուր որ դուք՝ ընտի էլ մենք:— Ապա, դիմելով իր օգնականներին.— քնեք, տղերք: Դաուլին մուղաթ կացեք՝ նամ չառնի…

Եվ մենք քնեցինք Հրազդանի ափին, գետի խշշոցի տակ, աստղերի դարավոր, դրա համար էլ թախծոտ ցոլքի տակ:

Ես երկար ժամանակ քնել չէի կարողանում: Այն ամենը, ինչ տեղի էր ունեցել ինձ հետ այդ ոչ-լրիվ մի օրվա ընթացքում, թվում էր ոչ թե իրական, այլ հնարովի, ինչպես մատից ծծած գրվածք…

Վաղ առավոտյան, երբ ցուրտն արթնացրեց մեզ, ուստա Կարոն արդեն նստած էր և ծխում էր: Չարենցը շուռ եկավ փորի վրա, վեր ձգեց գլուխը, նայեց ինձ ու Գուրգենին, և նորից, ինչպես մանկական չարաճճիությունից սթափված, ծիծաղեց՝ ծիծաղեցնելով նաև մեզ: Ապա օրորեց գլուխը և ասաց քթի տակ.

— Հալլա-հալլա…

— Դու էլ բան հնարեցիր,— խիստ բարկացած, նրա վրա հարձակվեց ցրտահար եղած Գուրգենը և ցատկեց ոտքի։— Գնանք չայ խմենք, թե չէ սառեցի։

Երբ մենք արդեն քայլում էինք, Չարենցը խնդրեց ուստա Կարոյին.

— Մի հատ «Առավոտ լուսո»…

Եվ մենք Երևան մտանք Ներսես Շնորհալու երգով, որի խոսքերը կրկնում էինք բոլորս՝ նույնիսկ աշխարհի ամենաբաղաձայն մարդիկ՝ ես և Չարենցը։

Մեծ բանաստեղծի հետ արդեն մտերմացած և մի քիչ ավելի համարձակ դառած, ես մոտեցա նրան և, նվագի մեջ լսելի լինելու համար բարձր ձայնով, ասացի ականջին.

— Այնուամենայնիվ դուք ձեր խոստումը չկատարեցիք և ես մնացի բաց երկնքի տակ…

Չարենցն ուզեց բարձր ծիծաղել իմ կատակի վրա, բայց ավելի մեծ մի զգացում ետ պահեց նրա ծիծաղը։ Նա ուշադիր նայեց ինձ և ասաց.

— Մալադեց, Արմեն, քեզանից գրող դուրս կգա…

Մենք մտանք քաղաք։ Զբոսանքը մնաց ետևում։ Սկսվում էր ստեղծագործական և աշխատանքային օրը, տարին, կյանքը...

ՉԱՐԵՆՑԻ ՀԵՏ ՄԻ ՀԱՐԿԻ ՏԱԿ

Նույն օրվանից էլ հենց, ես ու Չարենցն սկսեցինք ապրել մի սենյակում միասին։ Արտասահմանից վերադառնալուց հետո նա դեռևս բնակարան չուներ և ժամանակավորապես տեղավորվել էր իր մանկության ընկեր Գրիշա Ադամյանի սենյակում, որի տերը մի երկու ամսով մեկնել էր հանգստանալու։ Իսկ Չարենցի կինը, որը հեռակայում էր Լենինգրադի ինչ-որ ինստիտուտում, գնացել էր հերթական քննությունները հանձնելու։

Սենյակը Սպանդարյան փողոցի վրա էր, երկհարկանի մի տան երկրորդ հարկում։ Այդ տան կողքին հետագայում կառուցվեց այն շենքը, որտեղ Չարենցն ստացավ իր բնակարանը՝ Նալբանդյան փողոցի վրայի իր ավելի փոքր բնակարանից հետո։ Այդպիսով, Չարենցի առաջին և վերջին բնակարանները Երևանում գտնվում են կողք-կողքի…

Շենքը, որտեղ ապրում էինք մենք, փեթակի նման լիքն էր բնակիչներով։ Փողոցից դեպի բակ էր տանում մի փոքրիկ դարպաս՝ երկրորդ հարկի տակով։ Մտնելով բակ, տեսնում էիր, որ շենքն ունի նաև թևային կորպուսներ, ուրեմն՝ պայտաձև է։ Երկրորդ հարկի ամբողջ երկարությամբ մի պատշգամբ իրար էր կապում բոլոր երեք կողմերի բնակարանները, որոնց և՛ լուսամուտները, և՛ դռները բացվում էին հենց այդ պատշգամբի վրա։ Փայտե սանդուխքները բակից, մի քանի տեղով, բարձրանում էին դեպի պատշգամբ։

Ադամյանի սենյակը գտնվում էր փողոցային կողմի կորպուսում և լուսամուտներ ուներ թե պատշգամբի և թե փողոցի վրա։ Դա ամուրի մարդու սենյակ էր՝ մի թախտով, պահարանով, սեղանով և մի երկու աթոռով։ Ինձ համար՝ միանգամայն հասկանալի էր, որ Չարենցը պիտի քներ թախտի վրա, իսկ ես՝ հատակին։ Բայց, երեկոյան, միանգամայն անսպասելի կերպով, առաջացավ բարդություն։

— Արմեն,— ասաց Չարենցը,— փռիր անկողինդ թախտի վրա, իսկ ես կքնեմ հատակին:

— Ի՞նչ եք ասում,— համարյա սարսափեցի ես,— դուք՝ հատակի՞ն…

— Տո փռի…

— Ընկեր Չարենց…

— Տո փռի՝ ասում եմ քեզ:

— Չի կարող լինել այդպիսի բան, կտրուկ հրաժարվեցի էս:

Չարենցն զգաց, որ անհնար բան է առաջարկում, և իսկույն գտավ ելքը.

— Գիտե՞ս ինչ, հատակի վրա ավելի հով է, պաժալույ: Դու էլ քնիր հատակին, ես էլ…

Մենք փռեցինք անկողինները, սկսեցինք զրուցել:

— Պատմիր, Արմեն, թե ով ես դու, ինչ ընտանիքից, ինչ ես արել մինչև հիմա, մի խոսքով՝ ամեն ինչ: Եվ մանրամասն: Իմ քունը դեռ չի տանում: Գուրգենն ինձ որոշ բան պատմել է, բայց դա քիչ է:

Առաջին րոպեներին ինձ համար անբացատրելի էր այն կլանված հետաքրքրությունը, որով Չարենցը լսում էր ինձ: Բայց քիչ հետո նա ինքը բացահայտեց իրեն: Երբ ես պատմում էի Կազաչի Պոստի մասին, ապա կոմերիտմիության, գյուղերում տարած իմ պատկոմական և քաղլուսավորական աշխատանքի, նա իմ պաուզաներից մեկում տխուր հառաչեց և ասաց բարի նախանձի ակնհայտ շեշտով.

— Իսկական նոր մարդու կենսագրություն... Նոր մարդ՝ իր կյանքով, կենցաղով և հոգեբանությամբ... Իսկ ես՝ հնի բեռը մեջքիս…

Ես համարյա վեր ցատկեցի տեղից.

— Ընկեր Չարենց... Դո՞ւք... Մեր նոր գրականության հիմնադի՞րը…

Բայց ես կտրուկ ընդհատեցի իմ ասելիքը: Իմ այն զարմանքին, որ մեր նոր գրականության պայծառ արեգակն իրեն համարում է բավականաչափ «հին մարդ», փոխարինեց իմ ապշությունը, որ ես ահա գտնվում եմ նրա հետ նույն հարկի տակ, նույն հատակի վրա պառկած: «Սա Չարենցն է,— մտածում էի ես՝ անթարթ նայելով նրան,— այն Չարենցը, որն ինձ համար, ինչպես և բոլորի, միայն պոեզիա էր և ոչ թե ապրող մարդ: Ես երազում էի գոնե մի անգամ տեսնել նրան՝ առանց անգամ հանդգնելու երազել նրա հետ խոսելու մասին: Եվ ահա, դեպքերի գլխապտույտ առաջացնող արագ շրջադարձով, ես նրա հետ եմ, մի հարկի տակ, նույն հատակի վրա պառկած… Դեռ տասնինն տարին չլրացրածի իմ պատանեկական երևակայությունը չէր կարող որպես իրականություն ընկալել այդ ամենը:

Չարենցը քնեց, իսկ ես դեռ երկար ժամանակ նայում էի նրան և փորձում ընտելանալ այն մտքի հետ, որ քնած այդ փոքրամարմին մարդը հենց նա է՝ մեծ բանաստեղծը…

Առավոտյան առաջացավ կենցաղային կարգի մի նոր բարդություն: Ըստ իմ սովորության ես արթնացա շատ շուտ, և, իսկույն վեր կենալով, վերցրի հատակի խոզանակը՝ զգուշությամբ մաքրելու համար հատակը, որը, ճիշտն ասած, բավական կեղտոտ էր:

Դեռ նոր էի վերցրել խոզանակը, երբ Չարենցն աչքերը բացեց.

— Վար դիր, Արմեն:

— Ես շատ զգույշ կմաքրեմ, ընկեր Չարենց, փոշի չի բարձրանա բոլորովին, դուք քնեցեք:

— Տո վար դիր՝ ասում եմ քեզ, դու իմ ծառա՞ն ես, ի՞նչ է: Ես կմաքրեմ:

— Իսկ ի՞նչ տարբերություն:

Չարենցը վեր կացավ, նստեց.

— Այ տղա, քեզ ասում եմ վար դիր:

— Եկեք այսպես անենք,— ելքը գտա ես,— մի օր ես կմաքրեմ, մի օր՝ դուք:

— Դա ուրիշ բան,— իսկույն համաձայնեց Չարենցը և, նորից պառկելով, իսկույն քնեց:

Քիչ հետո, ավարտելով իմ գործը, ես նստեցի և նամակ գրեցի տուն՝ Լենինական: Պատմելով, որ ես Երևանում եմ մնալու մշտական, նամակիս վերջում, ոչ առանց մեծ հպարտության, հայտնեցի, որ ապրում եմ մեր մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցի հետ միևնույն սենյակում: Բայց այդ գրելուց հետո չհավատացի իմ գրածին, ետ նայեցի՝ ստուգելու համար, թե այդպե՞ս է իրոք: Չարենցը քնած էր անխռով:

Պատշգամբի վրա բացվող լուսամուտի մոտ, որը շատ ցածրիկ էր, երևաց մի մարդ՝ ծնկներից մինչև գլուխը: Մարդը բավական տարիքոտ և բավական չաղ, խիստ կախ ընկած ներքին շրթունքով, նայեց ներս, զարմացական հայացք գցեց ինձ վրա և ուզում էր ինչ որ բան հարցնել, երբ այդ րոպեին իմ ետևում լսվեց արթնացած Չարենցի չարաճճի, մանկական բացականչությունը.

Վիշ-վիշ-վիշ,

Կապելու գիժ

Կարա-Դարվիշ…

— Էլի՞ սկսեցիր, Չարենց,— առանց բարկանալու, ասաց Կարա-Դարվիշը։— Բարի լույս:

— Բարի լույս, վիշ-վիշ: Ծանոթացիր մեր գենիալնի երիտասարդի հետ:

Պատշգամբում կանգնած մարդը, իմանալով, որ ես ընդամենը «գենիալնի» եմ և ոչ թե շնորհալի կամ գոնե տաղանդավոր, բավական անտարբեր մեկնեց իր ձեռքը լուսամուտից ներս և ետ քաշեց ավելի շուտ, քան ես կհասցնեի բռնել այն:

— Արշալույսն արդեն վե՞ր է կացել,— հետաքրքրվեց Չարենցը:

— Եվ արդեն գնացել է տնից,— ավելացրեց Կարա-Դարվիշը:

— Այ տղա, էս ինչքա՞ն եմ քնել,— վեր ցատկեց տեղից Չարենցը:

Արշալույս Տեր-Հովնանյանը, որի մոտ իջևանել էր Թիֆլիսից եկած Կարա-Դարվիշը, ապրում էր կողքի սենյակում: Նա ուներ մի պատկառելի մայր՝ Զանգեզուրի հագուստներով: Երբ Չարենցը դուրս ելավ նախասենյակ՝ լվացվելու, պառավն այնտեղ էր և Չարենցը խորին հարգանքով բարևեց նրան:

Մեր հարկի մի այլ սենյակից հանկարծ լսվեցին դաշնամուրի այնքան հաճելի հնչյուններ: Չարենցը, որ փռնչացնելով լվացվում էր, մի պահ ընդհատեց իր գործը, լուռ օրորեց գլուխը: Տեսնելով ինձ դռան մեջ կանգնած, ասաց.

— Մալադեց աղջիկը: Սա՝ դեռ սովորում է: Պատկերացնո՞ւմ ես՝ երբ ավարտի:— Ապա, ավելի ընդարձակելով իր մտքերը, ասաց.— Երևան... և դաշնամուր... Երկիր ենք դառնում: Զամեչատելնո…

Չարենցը հագնվեց և մենք դուրս ելանք նախաճաշելու:

Ի՜նչ սքանչելի էր Երևանը վաղ առավոտյան... Ճիշտ է, նա այսօրվա Երևանը չէր, այլ դեռ «մայրագյուղը», բայց նրա ամեն ինչից զգացվում էր ոչ միայն բնության, այլև վերածնված ժողովրդի և նրա պետության վաղ առավոտը... Տրամվայ չկար, ավտոբուսներ չկային, ավտոմեքենաներ կային չափազանց քիչ, իսկ Աբովյանով ընդհանրապես արգելված էր որևէ տրանսպորտի երթևեկությունը: Ժողովուրդն այնտեղ քայլում և զբոսնում էր ոչ միայն մայթերով, այլև փողոցի մեջտեղով: Ծնկներից հետ շալվարները վեր քշտած մարդիկ, մեծ մասամբ տարիքոտ, բեխավոր, ըստ երևույթին՝ կոտորածներից ճողոպրած մշեցիներ, ջրում էին փողոցը՝ ջուրը դույլերով վերցնելով մայթերի կողքով անցնող առվակներից և շպրտելով փողոցի երեսն ի մեկ:

Մայթերով անցնում էին մարդիկ՝ այդ ժամին արդեն ոչ-սակավաթիվ, բայց նրանցից յուրաքանչյուրի ոտնաձայնը հնչում էր հստակ և առանձին-առանձին: Երևանի կյանքը դեռ չէր ստեղծում բազմաթիվ ձայներից ու հնչյուններից բաղկացած այն հաճելի ժխորը, որը կոչվում է քաղաքի սիմֆոնիա: Երևանի փողոցներով անցնում էին աշխարհով մեկ ցրված հայ ժողովրդի ի մի հավաքված զավակները, որոնք բազմաթիվ տասնամյակներից ի վեր փոքր բնակչություն ունեցող Երևանը դարձրել էին բազմամարդ, առանց, սակայն, որևէ չափով ընդարձակելու դրա գրաված տարածությունը:

Քայլում էին մարդիկ, որոնք իրենց կյանքի ամբողջ նախորդ մասն անց էին կացրել այլ վայրերում և իրենց բոլոր ուժերը նվիրել էին դրանց— ոչ իրենց հայրենիքին: Դրանց մեջ քիչ չէին համաշխարհային անուն հանած գիտնականներ, արվեստագետներ…

Այդ վաղ առավոտյան, մտնելով որևէ մրգավաճառի փոքրիկ կրպակ, կարելի էր տեսնել որևէ պրոֆեսորի կամ ինժեների, որը, արկղների մոտ հարմարված, փռել էր լրագիրը, վրան դրել էր հաց, պանիր ու խաղող, և նախաճաշում էր ճիշտ այնպես, ինչպես կողքի կրպակում իր ուսանողները կամ գծագրիչները... Իսկ հաջորդ առավոտյան, նայած ախորժակին, նա կարող էր մտնել Աբովյանի վրա գտնվող «Նորք» կամ մի այլ կաթնատուն և ուտել մածուն բուլկիով: Այդ օրն այդպես վարվեցինք նաև մենք: Ապա դուրս ելանք փնտրելու Մահարուն: Օրը կիրակի էր և շատերն էին ելել փողոց զբոսանքի:

Մահարու փոխարեն մենք տեսանք Նաիրի Զարյանին: Նա գալիս էր երկու երիտասարդների ուղեկցությամբ: Երբ մոտեցանք, Չարենցն առաջ հրեց ինձ դեպի նա և ասաց.

— Ծանոթացիր, Նաիրի, իմ փոխարինողի հետ…

Իր հերթին, Նաիրին ծանոթացրեց երկու երիտասարդներին.

— Իսկ դու, Չարենց, ծանոթացիր իմ փոխարինողների հետ:

Ոչ մեկը, ոչ մյուսը, այդ ժամանակ չգիտեին, որ երկուսն էլ սխալվում են: Ոչ ոք մեր պոեզիայում մինչև հիմա չդարձավ Չարենցի փոխարինողը, չգերազանցեց նրան: Էլ չեմ խոսում այն մասին, որ արվեստի մեջ ոչ ոք չի կարող փոխարինել մյուսին, որովհետև հաջորդ որևէ արժեք չի կարող արժեքազրկել նախորդին՝ ինչպես դա լինում է տեխնիկայի մեջ, երբ ավելի կատարելագործված գործիքը կամ մեքենան գալիս է իսկապես որ փոխարինելու ավելի պրիմիտիվը: Ի դեպ, մի քանի տարի չափածոյով զբաղվելուց հետո ես անցա արձակի: Նաիրու «փոխարինողները» ևս Վահան Հովսեփյանն ու Վահան Գրիգորյանը, խիստ պրիմիտիվ ոտանավորների հեղինակներ, չարդարացրին նրա հույսերը՝ մեկը շուտով թողնելով պոեզիան, մյուսը՝ մնալով այնտեղ:

Ես և Նաիրին միմյանց բարևեցինք բավական սառը,— չէ՞ որ մենք գրական հակառակորդներ էինք,— իսկ նրա ուղեկիցներն ու ես՝ սիրալիր: Տարբեր ժամանակներում նրանք եղել էին Լենինականում, մենք ծանոթացել էինք և իսկույն մտերմացել: Երկուսն էլ տպարանի բանվորներ էին:

«Արմենուկ»-ի պատճառով ես բարկացած էի Նաիրու վրա, ուստի և, ուզում էի մի սուր կատակով վարձահատույց լինել: Բայց հարմար բան գտա, դժբախտաբար, միայն այն ժամանակ, երբ արդեն բաժանվել էինք նրանից.

— Հետաքրքիր է,— ասացի ես,— մի՞թե նրա համար պահանջվում է երկու փոխարինող, երբ ձեզ բավական է միայն մեկը…

Այնպիսի մի հո՛-հո՛-հո՛ լսվեց Աբովյանում, որ փողոցների անկյուններում նստած կոշիկ սրբողները նույնիսկ, մի պահ ընդհատեցին իրենց աշխատանքը: Չարենցը, ինչ հանկարծակիությամբ որ սկսել էր ծիծաղել, նույն հանկարծակիությամբ էլ ընդհատեց և կտրուկ շուռ գալով դեպի ինձ, մատը դրեց կրծքիս.

— Դու գենիալնի տղա ես, քեզանից դուրս կգա շնորհալի բանաստեղծ:

Դրանից հետո նա ավելի բարձրացրեց իմ աստիճանը և այժմ, ուրիշներին ներկայացնելիս, ինձ այլևս չէր անվանում հանճարեղ, այլ արդեն տաղանդավոր: Ինձ անչափ ճնշում էին նրա որակումները, մանավանդ, երբ նա ավելացնում էր, որ ես, իբր թե, փոխարինելու և գերազանցելու եմ իրեն: Մարդիկ տարօրինակ հայացքով էին նայում ինձ և ես մազաչափ չէի վիրավորվի, եթե նրանք քմծիծաղեին:

Իսկ երբ մենակ էինք մնում, Չարենցն ինձ ասում էր.

— Ճիշտ այդպես էլ Դավիթ Բուրլյուկն է ծանոթացրել Մայակովսկուն ուրիշների հետ, ապա, մենակ մնալիս, խնդրել է.— տես, ինձ խայտառակ չանես, դարձիր տաղանդավոր... Հիմա ես քեզ նույնն եմ ասում, Արմեն, չխայտարակես ինձ, սուկին սին, թե չէ կասեն, որ Չարենցը չունի գրական ոչ մի հոտառություն…

Չարենցն այդ ժամանակ խմբագրում էր «Խորհրդային Հայաստան» թերթի գրական բաժինը: Խմբագրությունը տեղավորված էր Աբովյանի և Սվերդլովի փողոցների անկյունում, երկրորդ հարկում: Այնտեղ էր նաև «Մաճկալի» խմբագրությունը: Երբ մենք հասանք այդ անկյունը, մեր դեմ դուրս եկավ Մահարին: Օրվա մյուս մասը մենք անցկացրինք երեքով:

Երկուշաբթի օրը ես նորից վեր կացա Չարենցից շուտ և նորից կամացուկ վերցրի հատակի խոզանակը: Չարենցի մի աչքն իսկույն կիսաբաց եղավ, և նա, առարկություն չվերցնող տոնով, ասաց.

— Չհամարձակվես, այսօր հերթն իմն է…

Ես վար դրեցի խոզանակը և պատրաստվեցի դուրս գալ տնից: Ինձ թվում էր, թե Չարենցը նորից քնել է: Գուցե այդպես էր, բայց երբ մոտեցա դռանը, նա ձայն տվեց.

— Ո՞ւր ես ծլկվում:

— Աշխատանքի:

— Ի՞նչ աշխատանքի,— չհասկացավ Չարենցը:

— Ստեփան Մանուկյանի մոտ:

— Իսկ ինչո՞ւ,— անկեղծ զարմանքով հետաքրքրվեց Չարենցը:

— Ինչպե՞ս թե ինչու,— իմ հերթին զարմացա ես,— չէ՞ որ ես նրա քարտուղարն եմ:

— Բռոս,— բարկացավ Չարենցը,— դեռ գրական կարևոր գործեր ունենք: Կգնաս հոկտեմբերի մեկից, ես նրա հետ կխոսեմ: Ռոճիկիդ մասին մի անհանգստանա: Հանիր գլխարկդ և, խնդրում եմ, եթե դժվար չէ քեզ, տուր այստեղ թութունիս տուփը…

Նույն օրը, աշխատանքային ժամերից հետո, երբ խմբագրություններում ոչ ոք չկար, Չարենցն ինձ ու Գուրգենին տարավ «Խորհրդային Հայաստան»՝ մեր միության գործերի մասին խորհրդակցելու: Դուռը բաց արեց իր մոտի բանալիով, մենք մտանք, նստոտեցինք աթոռների վրա, և նա, առանց նախաբանի, հայտնեց.

— Տղաներ, Լուկաշինն իմ խնդրանքով մի գումար է բաց թողել մեր միությանը: Կբավականացնի և՛ հրատարակչական գործ սկսելու, և՛ համագումար անցկացնելու համար…

Չափ չկար մեր ուրախությանը: «Հոկտեմբերի» փորձից մենք արդեն գիտեինք, թե ինչ է նշանակում միության համար նյութական բազա ունենալը կամ չունենալը:

— Այնպես որ, լավ-լավ բաներ գրեցեք, սուկին սիններ:

Նա հանկարծ լրջացավ և նույնիսկ մռայլվեց.

— Վաղը, տղաներ, քսանվեց կոմիսարների մահվան տարեդարձն է: Մտածեցեք, գուցե մի-մի լավ բանաստեղծություն գրեք այդ մասին «Խորհրդային Հայաստան»-ում տպելու համար:

Մենք խոստացանք մտածել:

— Իսկ հիմա, տղաներ, մի որևէ բանով զբաղվեցեք մինչև որ ես մի քանի րոպեով աչքս կպցնեմ: Իսկ հետո կգնանք միասին ման գալու…

Եվ պառկեց բազմոցի վրա: Պառկեց և անմիջապես քնեց:

— Դա նրանից է,— կամացուկ բացատրեցի ես Գուրգենին,— որ հատակի վրա չոր է, իսկ թախտին բարձրանալ կտրուկ հրաժարվում է: Ասենք՝ թախտն էլ մի առանձնապես փափուկը չէ…

— Եկ հենց հիմա փորձենք գրել Շահումյանի և ընկերների մասին,— առաջարկեց Գուրգենը:

Մենք նստեցինք գրասեղանների ետև, վերցրինք թուղթ, գրիչ, և սկսեցինք: Մի ժամ հետո Գուրգենը հայտնեց.

— Սկիզբն արդեն կա, ես երեկոյան կհանձնեմ ավարտած-պատրաստ։

— Իսկ իմն արդեն պատրաստ է,— կամացուկ հայտնեցի ես։

— Չի կարող պատահել,— եղավ պատասխանը։ Դա Մահարին չէր ասողը, այլ Չարենցը, որը կամ խիստ զգաստ էր քնում, կամ աննկատելի արթնացել էր.— Ապա, մի տուր տեսնեմ…

Նա վերցրեց իմ բավական երկար բանաստեղծությունը, կարդաց կեսը և հիասթափված բացականչեց.

— Դու դա վաղուց ես գրել, միստիֆիկացիայի մի ենթարկիր ինձ։

— Ընկեր Չարենց, կոմերիտականի ազնիվ խոսք…

— Այո, սա առաջին ձեռագիր է,— ինձ ընդհատելով, վճռականորեն ասաց Չարենցը՝ հմուտ աչքերով դիտելով ուղղումները։ Ապա ավարտեց ընթերցումը և նայեց ինձ ինչպես ֆենոմենի։

Ահա այդքան համեստ, օրգանապես համեստ մարդ էր Չարենցը։ Նա ինքը ֆենոմեն չէր, ոչ։ Եվ նրա սքանչելե «Լենինն ու Ալին» ֆենոմեն չէր։ Նա նույնիսկ նոր մարդ էլ չէր։ Այդ մենք էինք ֆենոմենը, այդ մենք էինք նոր հոգեբանության տերերը, նոր գրականության ստեղծողները, որոնց մոտ, իրականում, եթե անգամ կար որևէ արժեք, ապա դա արդյունք էր նրա անզուգական տաղանդի բարերար ազդեցության…

Հետևյալ օրը մեր բանաստեղծությունները լույս տեսան թերթի քսանվեց կոմիսարներին նվիրված համարում։

Բախտը, կարելի է ասել, ժպտում էր «Նոյեմբեր» միությանը։ Սեպտեմբերի 24-ին թերթում լույս տեսավ լուր այն մասին, որ մի քանի տարի առաջ հրատարակվող «Նորք» պարբերականը նորից շարունակելու է հրատարակվել, և որ կոլեգիայի անդամ է նաև Չարենցը։ Թերթում չէր հիշատակված, սակայն, որ Չարենցը ոչ միայն խմբագրական կոլեգիայի անդամ էր, այլև պարբերականի պատասխանատու քարտուղարը և դրա գրական-գեղարվեստական մասի, այսինքն մեծ մասի «տերն ու տնօրենը»։

— Տղաներ, մեր օրգանի հարցը լուծվեց,— կատակով մի օր ասաց Չարենցը։— Համարյա բոլոր «պոչվեննի» գրողները մտնում են «Նոյեմբերի» մեջ, բնական է, որ նրանք էլ երևալու են «Նորք»-ում։

— Իսկ եթե ասոցիացիականները հանկարծ մի լավ բան գրե՞ն,— չարացրեց նրան Մահարին։

— Չեպուխա ես ասում, Գուրգեն։ Եթե գրեն՝ կտպագրեմ հենց քու ստիխներից էլ առաջ։ Բայց չեն…

— Չե՞ն գրի։

— Կարող են և գրել,— բարկացավ Չարենցը,— բայց չեն տպի «Նորք»-ում, կտեսնես։ Նրանք դրա վրա նայում են արդեն որպես մեր անպաշտոն օրգանի։ Դե ի՞նչ, մարդիկ իրավացի են, ես ոչնչով օգնել չեմ կարող։

Եթե «Հոկտեմբեր» միության ստեղծումը դրական դեր խաղաց մեր գրականության համար՝ սկսելով այն ազատ մրցումը, որի մասին խոսվում էր կուսակցության կենտկոմի որոշման մեջ, ապա «Նոյեմբերն» այդ դերը խաղաց առավել ևս մեծ չափով։ Մեզանից յուրաքանչյուրն ուզում էր ավելի և ավելի լավ գրել՝ ոչ միայն իր ներքին մղումից դրդված, այլև նրա համար, որ կային

«հակառակորդներ» և չէր կարելի հաշվի չառնել, թե ինչպես էին նրանք արձագանքելու մեր ամեն մի թերությանը:

Եվ մեր բարեբախտությունն էր, որ մեզանից յուրաքանչյուրի ստեղծագործական կազմավորման այդ շրջանում մենք ունեինք Չարենցի նման գրական ուսուցիչ և բարեկամ:

Եթե ասեմ, թե նա մեզ աճեցնում էր «ամենայն քնքշությամբ ու խնամքով»՝ պարզապես անարգած կլինեմ նրա հիշատակը: Նրա ներքին զգոնությունը մարդկանց նկատմամբ չէր դրսևորվում որպես արտաքին քնքշություն: Չարենցն իր փոխհարաբերությունների մեջ մարդկանց հետ արտակարգ կերպով շիփշիտակ էր, չուներ ոչ դիվանագիտություն, ոչ այսպես կոչված, նրբանկատություն: Հարկավոր էր վարժվել նաև Չարենցի տերմինալոգիային: Ինչպես որ շնորհալի գրվածքը նա, բանաստեղծական ոգևորությամբ կարող էր անվանել հանճարեղ, այնպես էլ քո թերություններից նույնիսկ ամենափոքրը կարող էր մինչև հոգու խորքը զայրացնել նրան, առիթ դառնալ հանդիմանությունների մի ամբողջ տարափի՝ քո գլխին:

— Այ տղա, էս ի՜նչ անպետք բան ես գրել...— բարեկամական նախատինքի հանգիստ տոնով սկսում էր նա իր «լվացքը»:— Ոչ լեզու, ոչ պատկերներ, թյո՛ւ, մարդու զզվանք է գալիս: Նայիր, օրինակի համար, սա…

— Թող, Չարենց, հավատում եմ,— ասում էիր դու՝ աշխատելով խլել նրա ձեռքից ձեռագիրը: Բայց նա ետ էր հրում քո ձեռքը և կարդում.— «վազզում էր ինքը»... «Ի՜նքը»... Պոշլյա՛կ: Չէ՛ մի, «ինքը»: Բա հո պապը չէ՞ր վազելու: — Պետք է լինի՝ «վազզում էր նա»— գյուտ արածի պես ասում էի ես:

— Ավելի վատ քեզ համար՝ եթե գիտես, բայց չես գրել, շտապել ես: Եվ հետո, ինչո՞ւ համար է «վազել»-ը քեզ մոտ երկու «զ»-ով: Դա դուք եք վազզում՝ գյումրեցիներդ: Իսկ մենք վազում ենք:

Զարմանալի էր, որ դու չէիր զգում ոչ մի անախորժ բան՝ վիրավորանք, անհարմարության զգացում, շփոթություն, այլ քահ-քահ ծիծաղում էիր: Նա մի անգամ էլ էր նայում ձեռագրիդ՝ ընդհանուր հայացքով, ծռմռում էր քիթը՝ «անմշա՛կ... փինթի՛...» ապա, ինչպես եթե մի կեղտոտ բան բռնած լիներ, զզվանքով ձգում էր դեպի քեզ.

— Վերցրո՛ւ:

Միայն ամենահարազատ մարդկանց միջև է հնարավոր այդպիսի փոխհարաբերություն և այդպիսի տոն: Ես իմ գրական ողջ կյանքում, դրանից առաջ թե հետո, չեմ տեսել ավելի հոգատար ու սրտացավ գրական բարեկամ, «քնքույշ» ուսուցիչ ու խմբագիր, քան Չարենցն էր:

Իհարկե, Չարենցն ամեն դեպքում էլ մեր հանդեպ լինելու էր այդքան խիստ, բայց այժմ, երբ կար «հակառակորդ»՝ առավել ևս: Մեզ հարկավոր էր ապուցուցել մեր գրական արտադրանքով, որ կանգնած ենք ստեղծագործական ճիշտ դիրքերի վրա, մեզ հարկավոր էր ցրել Ասոցիացիայում գտնվող գրողներից ընդունակների տեսական և ստեղծագործական մոլորությունները, շղթայազերծ անել նրանց գրական կարողությունները: Մի բան, որը, իրոք, հաջողվեց «Նոյեմբեր»-ին, եթե անգամ Ասոցիացիայի դրոշակակիր Ալազանն իջավ իր ռապպական դիրքերից և հարեց Չարենցի ու «Նոյեմբեր»-ի տեսակետներին: Բայց դա եղավ տարիներ հետո:

Գրական կազմակերպությունների ազատ մրցումը, իհարկե, ուներ նաև իր ծայրահեղությունները և սխալ կողմերը: Այսպես, օրինակ, երկու միություններն էլ ուզում էին քանակապես մեծանալ, և ոչ միայն մեծանալ, այլև ծավալվել Հայաստանով մեկ, ամեն տեղ ունենալ իրենց «մասնաճյուղերը»՝ արդարացնելու համար «Հայաստանյան» կոչումը: Հաճախ հնարավոր էր լինում գտնել միայն մի

մարդու, և նա տեղի գրողների թե՛ նախագահն էր, թե՛ միակ անդամը, իսկ մի բառով ասած՝ մասնաճյուղն էր և նվազագույն դեպքում՝ խմբակը…

Բայց կային նաև շրջաններ, որտեղ մի կամ մյուս միությունն ուներ հոծ բազմություն: Օ՜, եթե նրանք բոլորը գրողներ լինեի՜ն... Ընդ որում, հանրապետությունը բաժանված էր գրական «ազդեցության գոտիների», ավելի ճիշտ՝ կետերի: Այն վայրում, որտեղ «Նոյեմբերն» էր ուժեղ, ոչ մի ասոցիացիական, Երևանից, չէր կարող քիթ խոթել առանց վտանգի, որ կատաղի դիսպուտում կարյունոտի այդ քիթը, իհարկե, ոչ բառացի իմաստով, բայց համարյա բառացի իմաստով: Իսկ որտեղ Ասոցիացիայի բանակն էր խարսխվել՝ մենք ինքներս չէինք կարող մտնել…

Վաղարշապատը, օրինակ, «պատկանում» էր մեզ: Մի անգամ, երբ մեր միության «կորիզը»՝ Չարենցը, ես և Մահարին գնացել էինք այնտեղ, մեր այնտեղի խմբակի նախագահը ծանոթացրեց մեզ խմբակի անդամների առողջ, ուժեղ, մարտականորեն տրամադրված երիտասարդների, ուղղակի ֆիզկուլտուրնիկներ: Ինչպիսի՜ բերդեր կարելի էր գրավել այդ բանակով, բացի, իհարկե, գրականության բերդից…

— Ծանոթացեք խնդրեմ, ընկեր Չարենց, Արմեն, Մահարի, մեր ընկերների հետ: Սա՝ Արամայիս Մայիսի, բանաստեղծ:

— Շատ ուրախ ենք:

— Դիկկենս Ղարաթոսունյան, դրամատուրգ:

— Մարլեն Բոցունի, տեսաբան:

— Խելառ Խաչո, քննադատ:

— Իսկ սա Ցիցերոնց Աղասին է…

Իսկ որակումը չկա:

— Գրո՞ղ է,— զգուշությամբ հարցրեց Չարենցը:

— Ոչ, խոսող է:

Այո, կար նաև մի այդպիսի խիստ անհրաժեշտ կատեգորիա՝ խոսողներ: Դրանք միությունների գրոհային ջոկատների ամենագրոհայիններն էին:

Չարենցն ու ես շարունակում էինք ապրել նույն սենյակում, իսկ մեր տանտերը չկար ու չկար: Սովորականի պետ ես ամեն անգամ արթնանում էի Չարենցից մի քիչ ավելի վաղ, ավելի շուտ՝ ինքս էի ակամայորեն արթնացնում նրան, թեկուզ և շարժվում էի խիստ զգույշ և կամացուկ: Ի դեպ՝ նա ինքն էլ երկար քնողներից չէր:

Մեր կենցաղը դասավորվել էր հետևյալ կերպ: Դեռ երրորդ օրը, երբ ես նորից վեր կացա և վերցրի հատակի արդեն ծանոթ խոզանակը, Չարենցը բողոքեց.

— Այսօր հերթն իմն է:

— Ոչ, Չարենց, երեկ էր ձեր հերթը,— ասացի ես,— իսկ այսօր նորից իմն է:

— Իսկապես որ,— ասաց նա՝ քունը գլխին, և նորից նիրհեց: Բայց հանկարծ աչքերը բաց անելով, բղավեց.— ի՞նչ ես ինձ խաբում, ճիշտ է, երեկ էր իմ հերթը, բայց ես բաց թողեցի, սենյակը մաքուր էր:

Ես դադարեցրի աշխատանքը: Քիչ հետո, երբ երկուսս էլ վեր էինք կացել և պատրաստվում էինք դուրս գնալու, նա, ոչ այնքան քննադատական, որքան որ ներողամիտ հայացքով նայեց հատակին և ասաց.

— Եկ այսօր էլ չմաքրենք, դեռ բավական մաքուր է…

Եվ բարձր ծիծաղեց.

— Հալլա՛-հալլա …

Առավոտները մենք գնում էինք նախաճաշելու՝ համարյա միշտ միասին, իսկ երբեմն էլ Մահարու հետ: Վերջինս այդ արարողությունը սովորաբար կատարում էր տանը, և Չարենցը նախանձով էր խոսում նրա հետ՝ հիշելով տիկին Անուշի համեղ ճաշը՝ դեռ Լենինականում:

Չարենցը ծանոթներ շատ ուներ, բայց համարյա իր ամբողջ օրն անցկացնում էր իր գրական ընկերների հետ: Օրվա ընթացքում մենք մի քանի անգամ բաժանվում էինք միմյանցից, բայց առօրյա կյանքի գետակներն ու առվակները մեզ նորից իրար մոտ էին բերում գլխավոր գետում՝ Աբովյանի վրա:

Մեր ամբողջ օրն անցնում էր մարդկանց մեջ: Իսկ ինչպիսի՜ մարդիկ չկային այնտեղ... Կարելի էր ասել, որ առանց Երևանից և անգամ առանց Աբովյանից դուրս գալու, կարելի էր ուսումնասիրել մեր այն ժամանակվա կյանքն իր անցյալի և ներկայի դրվագներով: Նահանգական հետամնաց Երևանը դառնում էր մի ամբողջ ժողովրդի մայրաքաղաք, նրա հազարամյա կուլտուրայի հավաքավայրը: Երկհարկանի ոչ-մեծ շենքերում տեղավորվել էին կառավարությունը, համալսարանը, կոնսերվատորիան, կենտրոնական թերթերը, կուսակցության ու կոմերիտմիության կենտրոնական և Երևանի կոմիտեները, Ժողտնտխորհը և բազմաթիվ այլ հիմնարկներ ու հաստատություններ: Տափակ կտուրներով հողաշեն տնակներում կամ, լավագույն դեպքում, քարե կամ աղյուսե տնակներում ապրում էին մեր կուլտուրայի և արվեստի լուսատու աստղերը՝ Ալեքսանդր Թամանյանը, Թորոս Թորամանյանը, Ալեքսանդր Սպենդիարյանը, Մարտիրոս Սարյանը, Հրաչյա Աճառյանը, Մանուկ Աբեղյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Ռոմանոս Մելիքյանը, Սպիրիդոն Մելիքյանը, Արուս Ոսկանյանը և բազմաթիվ ու բազմաթիվ ուրիշները: Չէր կարելի դուրս գալ Աբովյան և ամեն քայլափոխի վրա չհանդիպել գործնական քայլերով շտապող կամ զբոսանքի ելած այն մարդկանց, որոնցով պարծենալու էր հայ ժողովուրդն ընդմիշտ:

Աբովյանը նման էր մի փոքրիկ հայելու, որն իր մեջ արտացոլում էր ամբողջ Երևանի, ապա և Հայաստանի պատկերը: Հանրապետության, ուրիշ հանրապետություններից աշխարհի բոլոր ծայրերից Երևան էին հորդել մարդիկ: Եկել էին գյուղացիներ՝ սնագործություն անելու: Դրանք վաղը դառնալու էին շինարար բանվորներ: Եկել էին լենինականցիներ, որոնք քաղաքային արհեստների տեր և քաղաքային կյանքի սովոր, դեռ չէին վարժվել այն բանի հետ, որ Երևանն առաջ էր անցել իրենց քաղաքից: Եվ քանի որ լեռը չէր գնացել Մուհամմեդի մոտ, ապա Մուհամմեդն էր եկել լեռան մոտ: Եկել էին երիտասարդներ ուրիշ հանրապետություններից՝ իրենց մայրենի լեզվով ստանալու բարձրագույն կրթությունը: Եկել էին այնպիսի մասնագիտությունների տեր մարդիկ, որոնց ներկայությունը հին Երևանում կլիներ միանգամայն անիմաստ:

Բնիկ երևանցիների քանակը կորել էր եկվորների մեջ: Նրանք, ուրախացած ու զարմացած, նայում էին, թե ինչ էր կատարվում իրենց շուրջը:

Նոր մարդկանց մեջ, սակայն, կային այնպիսիք, որոնք ոչ մի տեղից չէին եկել, այլ ծնունդ էին առել տեղում, խորհրդային մի քանի տարիների ընթացքում:

Երևանը նման էր ուռճացած մի պտուղի, որը չէր կարող չճեղքել իր պատյանը, իր միհարկանի, ցեխաշեն կամ աղյուսաշեն կեղևը, և հորդել դուրս՝ լայն ու վեր: Մեծ քաղաք էր գալու Արարատյան դաշտ, փռվելու և բարձրանալու էր այնտեղ վեհատես: Գյուղական Հայաստանը, որ կենտրոնացած էր պրովինցիալ մանրիկ քաղաքների շուրջը, այժմ ունենալու էր իր փառահեղ կենտրոնը: Քյավառից եկող գյուղացին, էշն առաջն արած, հասնելով Քանաքեռի բարձրավանդակի եզրին՝ Երևանի վերին պռունգին, իր ոտքերի տակ փռված պիտի տեսներ քարաշեն ու բազմահարկ Երևանի ասֆալտապատ լայն պողոտաները՝ տրամվայի վագոններով, ավտոմեքենաներով, ճոխ խանութներով, զվարճատեղերով... Ի դեպ, այն ժամանակ քյավառցին էլ գալու էր ոչ թե էշն առաջն արած, այլ՝ ավտոբուսով, եթե ոչ գնացքով:

Ահա թե ինչու մենք այն ժամանակ այնքան սիրում էինք մեծ քաղաքների երգիչ Էմիլ Վեռանին: Չարենցն ու ես շատ հաճախ էինք զրուցում և մեր հիացմունքն արտահայտում մեծ բելգիացու պոեզիայի հասցեին:

Չարենցը տեսել էր Մոսկվան, ապրել էր այնտեղ, տեսել էր նաև Եվրոպայի մայրաքաղաքները: Ես տեսել էի միայն Մոսկվան: Մնացյալը տեսել էի կինոնկարներում և գրքերում: Ինձ վիճակված էր ամբողջ կյանքում մնալ քաղաքապաշտ, հետևաբար և Էմիլ Վեռհարնի հավիտենական երկրպագուն:

Չարենցը սիրում էր Երևանը՝ բուռն, անհանգիստ սիրով, որն ընդհանրապես հատուկ էր նրան: Նա, որ տեսել էր Փարիզը, Բեռլինը, Հռոմը, Վենետիկը, Բրյուսելը և այլ քաղաքներ, ապրել էր Մոսկվայում, Թիֆլիսում և այլուր, ոչ միայն չէր հիասթափվել մեր փոքրիկ, հետամնաց քաղաքից՝ ինչպես դա հատուկ է թեթևսոլիկ մարդկանց, այլ, ընդհակառակն, ավելի ուժեղ էր սկսել սիրել՝ իր բոլոր ուժերը նվիրելով Երևանը մեր ժողովրդի արժանի մայրաքաղաքը դարձնելուն:

Լսելով, որ Ալեքսանդր Թամանյանը կազմում է Երևանի նոր նախագիծը, Չարենցը մի անգամ ասաց թերահավատ.

— Ի՞նչ նախագիծ պիտի կազմի նա: Շատ էլ որ խոշոր ճարտարապետ է: Բայց ի՞նչ կապ ունի հայ ճարտարապետության, հայ կուլտուրայի հետ: Նա միշտ ապրել է Հայաստանից դուրս…

Շատ ժամանակ հարկ չեղավ, որ Չարենցի թերահավատությունը վերածվեր խոր հիացմունքի և ակնածալի զարմանքի՝ մեր հանճարեղ ճարտարապետի նկատմամբ: Թամանյանի առաջին իսկ շենքերի նախագծերը, ինչպես և այդ շենքերն իրենք, դեռ կիսավարտ, գերեցին մեր մեծ բանաստեղծին:

— Անի...— ասաց նա մի անգամ,— իսկական Անի... Թորոս Թորամանյան, միայն թե ավելի ուժեղ: Այ տղա, տեսնո՞ւմ ես ինչ է նշանակում հանճար: Ո՛նց է ըմբռնել մեր դարավոր ճարտարապետության ոգին…

Եվ, մի պահ լռելուց հետո, ավելացրեց.

— Իսկ ի՞նչ նշանակություն ունի Հայաստանից դուրս ապրելը։ Մի՞թե մեր Մարտիրոսը նույնպես չի ապրել Հայաստանից դուրս։ Բայց ինչպիսի՜ հայկական նկարիչ... Այդպիսին չենք ունեցել։ Ոչ Մարտիրոսը, ոչ Թամանյանը, ոչ Սպենդիարյանը մեղավոր չեն, որ ապրել են Հայաստանից դուրս։ Ի՞նչ պիտի անեին նրանք գավառական Երևանում։ Այ, հիմա՝ ուրիշ բան։ Մագնիսի պես ձգում է բոլորին…

Եթե չեմ սխալվում, մեր կուլտուրայի խոշոր վարպետներից Չարենցն անձնական ծանոթություն չուներ միայն Թամանյանի ու Սպենդիարյանի հետ, բայց երկուսին էլ սիրում էր հոգու ամբողջ ուժով և սիրում էր առաջին հերթին նրանց այն արվեստի համար, որոնք նրանք ստեղծում էին արդեն Հայաստանում։ Մի օր Չարենցը, մեծ հայտնագործություն կատարածի պես, ասաց ինձ.

— Դու գիտե՞ս, որ Թամանյանը մտերիմ է եղել Հովհաննես Թումանյանի հետ։

Հայ ժողովրդի պոեզիայի հանճարի հետ մտերիմ լինելը և նրա կողմից արժեքավորված լինելը մի այնպիսի անխախտ արգումենտ էր Չարենցի աչքում, որ նա սկսեց հիանալ Թամանյանի ոչ միայն ներկա գործունեությամբ, այլև՝ անցյալ։ Հետագայում նա ծանոթացավ ճարտարապետի կենսագրությանը և տեսավ, որ Թամանյանն անցյալում ևս կտրված չի եղել հայ կուլտուրայից։

Ինչպես Թամանյանի, այնպես էլ Սպենդիարյանի մահը ցնցող տպավորություն թողեց Չարենցի վրա։

Մի երկու տարի հետո, գարնան մի կիրակի, երբ ըստ իմ սովորության գնացել էի շրջելու հին Երևանը և վերադառնում էի կենտրոն, Նոր Ազատության փողոցում տեսա Չարենցին, որը գալիս էր դիմացից՝ մեր գրողներից մի քանիսի հետ։ Տեսնելով ինձ, նա զվարթ ծիծաղեց՝ կարծես ասելով, թե միանգամայն բնական է իմ այդ թաղամասերից գալը, ապա, համարյա բարկացած, ասաց.

— Ապա, գնանք՝ մի ցույց տուր, թե որոնք են այն փողոցները, որ նկարագրել ես «Զուբեիդա»-ի մեջ։ Մենք հենց գնում էինք գտնելու առանց ուղեցույցի։ Լավ որ հանդիպեցիր։

Նրա տոնը նշանակում էր նաև՝ «տեսնենք ճի՞շտ է, կա՞ն այդպիսի փողոցներ, թե՞ փչել ես»։

Թեև ես գալիս էի ճիշտ նույն թաղամասերից, բայց նորից շուռ եկա և քայլեցի նրանց հետ։ Ես նրանց ցույց տվեցի Ռումմի փողոցը, Դավա Յաթաղը և մի շարք այլ վայրեր, որոնք նկարագրել էի մի երկու ամիս առաջ տպագրված իմ պատմվածքի մեջ։ Միաժամանակ ես զարմանում էի իմ մտքում, թե մի՞թե Չարենցը մինչև հիմա չի տեսել այդ բոլորը։ Նայեցի նրա աչքերին և, ինքս էլ չգիտեմ, թե ինչից, հասկացա, որ այդ վայրերը ծանոթ են նրան, թեև դրանցից մի քանիսով, ինչպես պարզվեց շուտով, նա, իրոք որ, անցնում էր առաջին անգամ։ Նա այդ շրջագայությունը ձեռնարկել էր մասամբ թարմացնելու համար իր տպավորությունները, բայց, առավելապես, մյուս գրողներին ցույց տալու համար այդ բոլորը։

Դրանից հետո դարձյալ մի քանի անգամ նա ցանկություն հայտնեց շրջել հին Երևանի թաղամասերով, և մենք շրջեցինք՝ ընտրելով նորանոր, նրան անծանոթ վայրեր։ Իսկ ես իմ հինգ մատի պես գիտեի Երևանի բոլոր ծակուծուկերը։

Մի անգամ, կանգ առնելով Գետառ-չայի ափին, նա սկսեց երկար նայել։ Քաղաքի հին թաղամասերով անցնող այդ նվազաջուր առվակն այդտեղ ուներ մի մարդահասակ բարձրության դիք ափեր։ Ափերի վրա կանգնած էին միհարկանի կավածեփ տնակներ՝ նեղլիկ լուսամուտներով, փոքր դռներով և երբեմն նույնիսկ պատշգամբներով, որոնք կախված էին աղբաջրի փողրանք հիշեցնող այդ առվակի վրա։

— Սա ինձ հիշեցնում է Նեապոլը,— բացականչեց Չարենցը:

Ես ապշած նայեցի նրան:

— Այ տղա, սխալ չհասկանաս,— ծիծաղեց նա,— ոչ թե նման է, այլ հիշեցնում է: Խոսքը վերաբերում է կոլորիտին…

Եվ, իրոք, ես ինքս էլ, առաջին անգամը չէր, որ իմ շրջագայությունների ժամանակ կանգ էի առել այդտեղ և առվակի այլ հետաքրքիր մասի մոտ և հիացմունքով նայել դարերով խտացած այդ կոլորիտին:

— Նայիր...— ձեռքն առաջ մեկնեց Չարենցը,— ինչպիսի՜ կոլորիտ... Ճիշտ է, աղքատ, հետամնաց, բայց որքա՜ն ուժեղ... Այ, երբ այս տեղով անցնեն նոր Երևանի փողոցները, այս կոլորիտը, իհարկե, կանհետանա: Ու որպեսզի մենք չափսոսանք դրա համար, հարկավոր է, որ նոր Երևանը նույնպես ունենա իր կոլորիտը, չդառնա անգույն քաղաք…

Ասացի, որ Չարենցը շատ էր սիրում Էմիլ Վեռհարնին: Սքանչելի թարգմանել էր նրա մի քանի բանաստեղծությունները: Ուրախանում էր, որ ես էլ եմ անչափ սիրում նրան:

— Վեռհարնը քաղաքների երգիչ է,— ասում էր նա:— Իսկ ո՞ւմ է ավելի հարկավոր քաղաքների երգը, ո՞ւմ են ավելի հարկավոր մեծ քաղաքներ, արդյունաբերություն, տրանսպորտ, քան մեր գյուղական Հայաստանին: Սրանք ի՞նչ քաղաքներ են, որ մենք ունենք…

Մեր զրույցների ժամանակ մենք հաճախ էինք անդրադառնում այդ հարցին: Մի անգամ, երբ անցնում էինք Աբովյանով, նա ասաց.

— Այ, քո «Խորտակվող հոգիների փողոցում» պատմվածքի հերոսը դեպի գյուղ գնալիս, երևակայում է ապագա Կոմունաշենի մասին, պատկերացնում է այդ քաղաքը նույնիսկ տրամվայ է անցկացնում այնտեղ: Եկ տեսնենք Երևանում ինչպե՞ս ենք տրամվայ անցկացնելու:

— Իհարկե, առաջին հերթին Աբովյանով,— ասացի ես:

— Նեղ են մեր փողոցները,— ձեռքը թափ տվեց Չարենցը:— Եվ փոքր է մեր քաղաքը: Այ, ի՞նչ լավ կլինի, եթե Նաիրյան մեր երկրում հանկարծ ծնունդ առնեն Մոսկվայի ու Փարիզի պես քաղաքներ…

Երազանքից վերադառնալով դեպի իրականություն, նա ասաց.

— Մեր բոլոր քաղաքների մեջ ամենից առաջ պետք է կառուցել Երևանը:

Երբ, տարիներ հետո, Մոսկվայում լույս տեսավ իմ «Երևան» էպոպեան, Չարենցը անմիջապես կարդաց այն, և, ինչպես հատուկ էր նրա արագ ոգևորվող խառնվածքին, արտակարգ չափազանցություններով սկսեց գովել դրա արժանիքները: Ապա, առանց որևէ մեղմ անցումի, անսպասելիորեն անցավ նախատինքի.— մի բան, որը նույնպես հատուկ էր նրան.

— Դու լավ ես ներկայացրել հին Երևանի կոլորիտը, բայց, այ տղա, ինչո՞ւ ես դրա մեջ ափսոսանք մտցրել: Մի՞թե պետք է ափսոսալ, որ անհետանում է հին Երևանը:

— Չեմ ափսոսում,— հակաճառեցի ես,— ինձ միայն ցավ է պատճառում այն, որ դրան փոխարինում է դատարկ կոնստրուկտիվիզմը: Մի՞թե այդպիսի նոր Երևան էինք մենք ծրագրում և երազում:

Ինձնից շատ ավելի Չարենցն ինքն էր ատում անբովանդակ կոնստրուկտիվիզմը, որի ավերածությունները Երևանում, բարեբախտաբար, երկար չտևեցին, սակայն իրենց ետևից թողեցին այնպիսի հետքեր, ինչպես, օրինակ, այժմյան ռուսական թատրոնի շենքը:

— Կոնստրուկտիվիզմը փրփուր է, որ բերել են ալիքները,— ասաց նա:— Դա կգնա, իսկ, այ, սա, կմնա…

Նա ցույց տվեց կառուցվող կառավարական շենքը՝ Լենինի հրապարակի վրա:

— Կմնա օպերայի և բալետի թատրոնի շենքը, կմնան…

Նա սկսեց թվարկել այն նորակառույցները, որոնք էպոխա են կազմում Հայաստանի ճարտարապետության զարգացման պատմության մեջ:

— Այ, սրանք պետք է հակադրել հին Երևանին, ոչ թե կոնստրուկտիվիզմը,— ավարտեց նա:

Մի անգամ ես ու Չարենցը գնացինք շրջելու Քանաքեռի խճուղիով: Աբովյան փողոցից բարձրանալով դեպի բարձրավանդակ տանող ճանապարհի ոլորանները, մենք նայեցինք ներքևում փռված մեր քաղաքի տեսարանին: Չարենցը կանգ առավ, նայեց երկար, շատ երկար:

Այսօր այնքան էլ հեշտ չէ պատկերացնել, թե ինչ տեսարան էր բացվում ներքևում: Այնտեղ փռված էր հողաշեն, միհարկանի, փոշոտ ու ցեխոտ Երևանն իր նեղ փողոցներով, անբարեկարգ, առանց քաղաքային տրանսպորտի, առանց գործարանների... Փռված էր դարերի ընթացքում համարյա մեռյալ կետի վրա կանգ առած մի փոքրիկ քաղաք, որը կարող էր այդ կետի վրա մնալ դարձյալ դարեր, եթե չլիներ հեղափոխությունը:

Շարունակելով նայել քաղաքին, Չարենցն ասաց.

— Մի անգամ, դաշնակների օրոք, ես նորից ահա այսպես բարձրացել էի այստեղ՝ նայելու քաղաքին: Հանկարծ նկատեցի, որ իմ առջևով գնում էին դաշնակցական կառավարության երկու կարևոր անդամներ, երկու մինիստրներ: Նրանք կանգ առան: Կանգ առա նաև ես հետաքրքրված, թե ինչ են ասելու նրանք: Նրանցից մեկը ձեռքը երկարեց դեպի Երևանը և ասաց մելամաղձոտ ձայնով.

— Հոս մայրաքաղաք չըլլար, ջանըմ, մայրաքաղաքը հոն էր, հոն…

Դառնալով դեպի ինձ, Չարենցն ասաց.

— Ես ապշեցի այդ խոսքերի վրա: Ինչպե՞ս կարելի է երկիր կառավարել, մայրաքաղաք կառուցել՝ առանց հավատալու, որ դա «կըլլա»...

Եվ, նորից շրջվելով դեպի Երևանը, ասաց հուզված ձայնով.

— Ոչ, այստեղ մայրաքաղաք «կըլլա», անպայման «կըլլա»... Կլինի…

Ես այստեղ, խոսելով Չարենցի ու Երևանի մասին, առաջ անցա տարիներով: Իսկ այդ ժամանակ, երբ մենք դեռ ապրում էինք մի սենյակում, Երևանի բազմաթիվ փողոցներում, առանց այն էլ նեղ, դիզված էին շինանյութեր և առաջին հերթին քար, քար քար... Քաղաքը փոխում էր իր արտաքին տեսքը: Նա ոչինչ չուներ ափսոսալու: Ամենախնայողական հաշիվներով անգամ, բնակելի ֆոնդի իննսուն տոկոսը հարմար չէր բնակության և ենթակա էր քանդման: Ոչ մի հին գեղեցկություն, ոչ մի

փառահեղ շենք չէր խանգարում նոր քաղաքի հատակագիծը կազմելուն: Մայրաքաղաքը բարձրանում էր համարյա դատարկ գետնի վրա…

Երեկոները մենք վերադառնում էինք տուն, պառկում և երկար զրուցում: Շուտով ես նկատեցի, որ Չարենցն ամենայն լրջությամբ ուսումնասիրում է ինձ՝ որպես նոր մարդու՝ իր նոր հոգեբանությամբ, համարելով իրեն, նույնպես ամենայն լրջությամբ, անհամեմատ հին մարդ:

Մի անգամ նա ինձ հարցրեց.

— Դու սիրային ստիխներ ունե՞ս գրած:

— Ունեմ,— ասացի ես՝ մի փոքր քաշվելով:

— Որտե՞ղ են:

— Լենինականում, տանը:

— Վաղը կամ մյուս օրը գնա և բեր: Բոլորը, ինչ որ ունես գրած՝ բեր…

— Լավ, կբերեմ մի օր:

— Ոչ թե մի օր, այլ՝ վաղը: Գուցե ճանապարհի դրամ չունե՞ս:

— Ունեմ: Ռոճիկ եմ ստացել: Եվ հոնորար:

Չարենցը համարյա ամեն օր վերադառնում էր այս խոսակցությանը, մինչև որ, իրոք, ինձ հարկադրեց գնալ Լենինական և բերել իմ արխիվը:

Աղքատիկ և թախծոտ իմ պատանեկություն... Քո պատկերը նորից վերակենդանանում է իմ աչքի առաջ, երբ ես հիշում եմ իմ արխիվը, ավելի շուտ՝ այն տուփը, որի մեջ պահում էի այդ արխիվը…

Բիսկվիտի թիթեղյա մեծ տուփ էր դա՝ խորանարդ, առանց կափարիչի: Չորս կողերի վրա շեղակի գրված էր գործարանի տիրոջ ազգանունը՝ Դուրյան: Մի՞թե հայ էր նա... Օդեսա: Մի սքանչելի նկար.— գծագրության պես կանոնավոր ու մաքուր փողոցում կանգնել էր բիսկվիտի Դուրյանի գործարանը Օդեսայում: Մայթերի երկայնքով շարվել էին հատիկ-հատիկ նկարված մատղաշ ծառեր՝ կլոր ու գեղեցիկ սաղարթներով…

Նկարն առնված էր կլոր շրջանակի մեջ, բայց իմ պատանեկական երևակայության համար կա՞ր արդյոք որևէ շրջանակ: Ես արդեն այդ մայթի վրա էի, քայլում էի այդ գործարանի մոտով՝ մտնելով ու ելնելով ծառերից յուրաքանչյուրի կլոր և փոքրիկ ստվերի մեջ: Ես արդեն ոտնակոխել էի շրջանակից այն կողմ և շարունակում էի քայլել անհասանելի Օդեսայով... Որքա՜ն էի լսել այդ քաղաքի անունը մեր տանը, ամենասպիտակ և ամենաընտիր ալյուրի հետ կապված.— «Ադեսու ալուր».…

Երբ մտա սենյակ՝ այդ տուփը թևիս տակ, Չարենցը զարմացած նայեց ինձ՝ առանց հասկանալու: Ես վար դրեցի իմ բեռը: Նա նայեց տուփի մեջ, ապա ինձ՝ մի այնպիսի հայացքով, կարծես միայն հիմա էր ճանաչում ինձ: Երիտասարդ գրող, «Հոկտեմբեր» միության ղեկավար, «Նոյեմբեր» միության ղեկավար կազմի եռյակի անդամ, «բայևոյ տղա» և այլն և այլն՝ դատարկ բաներ էին: Կարևորն ահա այս բիսկվիտի տուփն էր, և այն, որ իմ արխիվն այդ տուփի մեջ էր: Տխուր պատանեկություն…

— Դա մեր տանտերն է նվիրել ինձ՝ դեռ երեխա ժամանակս,— շփոթված, չգտնելով ոչինչ ասելու, կմկմացի ես,— դրա բիսկվիտից չեմ կերել…

— Ես կռահեցի...— ասաց Չարենցն ինչ-որ ոչ-սովորական, այլ կարծես գրողի ձայնով, որը համարյա երբեք հատուկ չէր նրան: Բայց և իսկույն, անհարմար զգալով իրեն, կարծես ինքն իրեն որսացել էր կեղծ ինտոնացիայի մեջ, շուռ տվեց երեսը: Թվաց, թե նա միայն հիմա տեսավ տուտուփի բովանդակությունը: Անմիջապես հարձակվելով տուփի վրա, նա սկսեց հանել այնտեղից բոլոր թղթերը մեծ դաստաներով՝ անհամբեր, հետաքրքիր…

Ոչ, Չարենցն ինքն էլ չէր գիտակցում, թե որքան համեստ էր նա: Ընդհակառակը, համոզված էր, որ երբեմն-երբեմն գոռոզամտորեն գերագնահատում է իր արժեքը: Նա այդ տպավորությունը կարող էր թողնել նաև նրան տեսնողներից ոմանց վրա— տեսնողներից և ոչ թե ճանաչողներից: Չարենցը կարող էր ամենայն կրքոտությամբ համեմատել իրեն մի երկրորդական բանաստեղծի հետ և հազար ու մի ձևերով ապացուցել, որ ինքը նրանից ավելի լավ գրող է: Դրանից ավելին նրա երևակայությունը չէր զորում: Նա չէր հավատա, եթե որևէ մեկն ասեր, որ եթե մինչև իսկ ոչինչ էլ չգրի նա այսուհետև, միևնույնն է, դեռ քսանինն տարին չբոլորած երիտասարդ, նա արդեն կանգնած է հայ ժողովրդի մեծագույն բանաստեղծների շարքում:

Մարդիկ կարող են վկայակոչել Չարենցի երկերից բազմաթիվ այսպիսի տողեր և հերքել իմ ասածը.

Ես եմ հիմա՝ մի պոետ, և իմ անունը՝ Չարենց,

Պիտի վառվի դարերում, պիտի լինի բարձր ու մեծ:

Բայց սա մասամբ Չարենցի «լիրիկական հերոսն» է և մասամբ էլ, այո, Չարենցն ինքը, բայց որպես պոետական հոխորտում և ոչ թե համոզմունք: Նա կսարսռար, եթե որևէ մեկը նրա անունը դներ Վահան Տերյանի, Ավետիք Իսահակյանի կամ Հովհաննես Թումանյանի անվան կողքին: Ինչ խոսք, երբ դա անում էին նրա քննադատներն ու կենսագիրները՝ դա հաճելի էր, ինչպես ամեն մարդու համար հաճելի է, երբ նրան գովում են և ոչ թե հայհոյում: Բայց «հաճելի»՝ դա չի նշանակում «համոզմունք»:

Ինչ խոսք, Չարենցը գիտեր, որ նա մեր լավագույն բանաստեղծն է: Բայց ոչ ավելին: Եվ այն էլ, լավագույնն է՝ այսպես ասած՝ համեմատականորեն: Իր և մյուսների միջև նա չէր տեսնում մեծ ինտերվալ:

1925 թվի վերջերին և 1926 թվի սկզբներին, թերթերում և ապա իմ «Կոմսոմոլիա» ժողովածուի մեջ, ես տպագրեցի իմ այսպես կոչված «էպիկա»-ները: Դրանք բալլադանման չափածո գրվածքներ էին՝ երիտասարդության կյանքից, գլխավորապես թերությունները ձաղկող: Ձևով դրանք անբռնազբոսիկ էին, համարյա խոսակցական, և, իհարկե, առաջին հերթին պրիմիտիվ: Կար դրանց մեջ որոշ նորություն՝ ձևի իմաստով: Եվ ահա, Չարենցը հիացմունքով հայտարարում էր բոլորին, ի թիվս այլոց նաև ինձ, որ այդ նոր ձևն առաջին անգամ ես եմ գործածում: Բարեբախտաբար, ես մեծամիտ գրող չէի այն ժամանակ և գիտակցում էի իրերի իսկական վիճակը: Ուստի և ասացի Չարենցին.

— Ախր դրանք դրված են ձեր բալլադների նմանությամբ: Ոչ թե ես, այլ դուք եք առաջին անգամ գործածել այդ ձևը…

Չարենցը ծուռ-ծուռ նայեց ինձ, առանց, իհարկե, հավատալու, և, ըստ երևույթին, մտովին ինձ մեղադրելով հաճոյախոսության մեջ:

Մի քանի օր հետո, սակայն, նա ուրախ հայտնեց ինձ.

— Երևակայիր, ուրիշներն էլ են ասում, որ քո էպիկաները գրված են իմ բալլադների նմանությամբ…

Նա երեխայի, և ոչ թե գրողի նման, ուրախ էր դրա համար: Բանից դուրս է գալիս, որ առաջինն ինքն է գործածել այդ ձևը: Մալադեց, Չարենց…

Իմ հետագա կյանքում ես շատ անգամներ եմ տեսել տարբեր համեստության տեր մարդկանց, բայց ամենաբարձր համեստությունը, իմ խորին համոզմունքով, բնածին է, ինչպես տաղանդը:

Ասացի՝ «տարբեր համեստություններ»: Հիրավի, կա, օրինակ, համեստություն, որն անհամեստության բարձրագույն ձևն է: Այսինքն թե՝ տեսեք, չնայած իմ այսքան մեծ մարդ լինելուն, որքա՛ն համեստ եմ ես... Դա ծիծաղելի է մանավանդ այն դեպքում, երբ այդ ձևի համեստ մարդը մեծ էլ չէ իսկի: Ի դեպ, համարյա միշտ է այդպես լինում: Այդպիսի դեպքերում ցանկություն ես զգում ասելու,— մի ճնշիր ինքդ քեզ, սիրելիս, դու դեռ իրավունք չես նվաճել այդքան համեստ լինելու…

Մեզ՝ երիտասարդ գրողներիս, Չարենցը սովորեցնում էր և դաստիարակում: Բայց հաճա՞խ էր դա արդյոք կրում սովորեցնելու և դաստիարակելու ձև: Նա պարզապես գրում էր, խոսում, մտածում, աշխատում, զվարճանում, ապրում քո աչքերի առաջ, քո ներկայությամբ կամ քո մասնակցությամբ՝ առանց այդ բոլորն աչքդ կոխելու, առանց այդ բոլորին ինչ-որ նշանավորություն տալու: Իսկ եթե դու աչք ունեիր՝ տեսնելու, ականջ՝ լսելու, և մի քիչ էլ գլուխ՝ հասկանալու, ապա չէիր կարող չտեսնել և չլսել նրան, չկարդալ նրան, չսովորել նրանից: Ահա թե ինչու, իր խելոք հոդվածներից և հուզական ու իմաստուն պոեզիայից բացի, Չարենցն ուսուցիչ էր նաև իր կյանքով: Եվ ահա թե ինչու երջանիկ ենք մենք, ովքեր մեր գրականության համար պատմական այդ տարիներին եղել ենք նրա մոտ և նրա հետ: Երջանիկ եմ ես, որ ապրել եմ նրա հետ մի հարկի տակ, ապա տասներկու տարի շարունակ, Չարենցը և ես եղել ենք գրական և անձնական ամենամտերիմ բարեկամներ, զինակիցներ և բախտակիցներ: Ու թեկուզ նա երբեք չի ցցել իր Չարենց լինելու հանգամանքը, բայց երբեք, ոչ մի պահ, թեկուզ միասին գժություններ անելիս կամ զվարճանալիս, ես և նրա այլ մտերիմները չենք կարողացել մոռանալ այն, որ Չարենցը մեր «թայը» չէ, որ նա հանճար է, հայ ժողովրդի այն պանծալի զավակներից, որոնք նույնիսկ հանճարներով այնքան հարուստ մեր ժողովրդի մոտ ծնվում են հարյուր տարին մի անգամ:

Մի օր, մեր ծանոթությունից շատ ժամանակ չանցած, Չարենցն ինձ առաջարկեց «բրուդերշաֆտ» խմել, որից հետո, ինչպես հայտնի է, սկսում են դու-ով խոսել իրար հետ: Այդ օրվանից նա, չդադարելով լինել իմ ուսուցիչն ու վարպետը, դարձավ իմ ընկերը: Եվ չնայած իմ ու նրա միջև ինը տարվա տարբերությանը, մենք ընկերներ էինք և մեզ չճանաչող որևէ մեկը չէր էլ կարող ենթադրել, թե մեզանից մեկը մեծ Չարենցն է, իսկ մյուսը՝ մեր գրականության վերջին մշակ Մկրտիչ Արմենը:

Չարենցի մասին գրել են բավական թվով մարդիկ: Գրել են և՛ մտերիմ ընկերները, և՛ այնպիսիք, ովքեր նրան տեսել են միայն մի մայթից մյուսը: Ընդ որում, վերջիններս գրել են «Եղիշավարի», այսինքն՝ այնպես են ձևացրել, թե իրենից ու Չարենցից ավելի մտերիմ մարդ չի եղել աշխարհում: Աստված նրանց հետ, կարելի էր նրանց ներել, եթե, բոլորովին չիմանալով Չարենցին, նրանք հորինած չլինեին նրա մասին լավ կամ վատ անեկդոտներ, լավագույն դեպքում՝ լեգենդներ:

Նրանք ի՞նչ, երբ մեր մեծ բանաստեղծի հետ այս կամ այն աստիճանի մտերմություն ունեցած մարդիկ անգամ, չեն կարողացել գոնե մոտավոր պատկերացում տալ նրա բազմակողմանի կերպարի մասին: Ոմանք ֆրագմենտար և դիպուկ կերպով գծագրել են նրա արտաքին-կենցաղային

պատկերի մի կամ մի երկու կողմը, ոմանք այդ էլ չեն արել և, ճգնելով վերակենդանացնել նրան, տասնյակ ու տասնյակ անգամներ նրա բերանը դրել են «այ տղա» արտահայտությունը և մտածել են, թե ընթերցողն արդեն պատկերացրեց կենդանի Չարենցին:

Բարեբախտաբար, իմ այս հուշերի մեջ ես հավակնություն չեմ ունեցել տալու կենդանի Չարենցի կերպարանքը: Բայց ես բարոյական պարտք եմ զգում՝ ունենալու այդ հավակնությունը, կատարելու այդ գործը երբևէ: Ո՞վ ավելի, քան ես, պարտավոր եմ անել դա: Չարենցի թողած թղթերի մեջ հաճախ կարելի է հանդիպել այսպիսի տողերի. «Մեր երիտասարդ գրողներից ես ամենից շատ սիրում ու հավանում եմ Արմենին»: «Սիմպատիաները «Նոյեմբեր»-ի կենտրոնական ուժերի միջև՝ Չարենց—Արմեն, Բակունց—Մահարի» և այդպես շարունակ Չարենցը գրել է իմ մասին.

Դու մեր մեջ ամենից կրտսերն ես

Եվ մոխիրի վրա մեր անցյալի

Ուռճանում է քո մեջ ապագայի սերմը՝

Մեր դպրության գալիքը՝ պանծալի:

Եվ եթե մեծ բանաստեղծի իմ վրա դրած հույսը ես չեմ արդարացրել իր սպասածի համաձայն, ապա արդարացրել եմ նրա մի ուրիշ պատգամը՝ ինձ տված իր անտիպ քառյակի մեջ.

Մկրտիչ Արմեն, դու լավ իմացի,

Որքան էլ չափես կյանքի ափերը,

Չկա քեզ ուղի այս ուղուց բացի,

Եվ հայրենիքն է քո Նոյեմբերը:

Եվ երբ ես հարցրի Չարենցին, թե ինչպե՞ս հասկանալ այդ Նոյեմբերը՝ որպես մեր հեղափոխությո՞ւնը, թե՞ որպես մեր գրական միությունը, նա ասաց՝ «և՛ մեկը, և՛ մյուսը»: Եվ այսօր ես կարող եմ ասել բաց ճակատով, որ հավատարիմ եմ եղել և՛ մեկին, և՛ մյուսին:

«Տասներկու տարի Չարենցի հետ» — այդպես են կոչվելու իմ հուշերը Չարենցի մասին: Կկարողանա՞մ, թե ոչ, բայց ես պարտավոր եմ փորձելու՝ ներկայացնել կենդանի Չարենցին, Չարենց-մարդուն, Չարենց-քաղաքացուն, Չարենց մտածողին — բազմաքանքար և բազմապիսի Չարենցին:

1961—1969